



Ս. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

ՀՐԱՆՏ
ԱՍԱՏՈՒՐ

8(092)
h-30

493

S. P. HAIRAPETIAN

Ս. Պ. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

HRANT
ASATUR
HIS LIFE AND WORKS

2200

ՀՐԱՆՏ

ԱՍԱՏՈՒՐ

ԿՅԱՆՔԸ ԵՎ ԳՈՐԾԸ

PRINTED BY
"GRAMARTIK" PRESS
LOS ANGELES 1979

ՀՐԱՏԱՐԿԶՈՒԹՅՈՒՆ
«ԳՐԱՄԱՐՏԻԿ» ՏՊԱՐԱՆԻ
ԼՈՍ ԱՆՋԵԼՈՍ 1979



130/18
15-1

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԿՈՄՍՅՈՒՆԱՐ

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԿՈՄՍՅՈՒՆԱՐ
ՏՄ ՄԳԲ
ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԿՈՄՍՅՈՒՆԱՐ

130/18
15-1

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԿՈՄՍՅՈՒՆԱՐ
ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԿՈՄՍՅՈՒՆԱՐ
ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԿՈՄՍՅՈՒՆԱՐ



ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԿՈՄՍՅՈՒՆԱՐ
ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԿՈՄՍՅՈՒՆԱՐ
ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԿՈՄՍՅՈՒՆԱՐ

Հեղինակը սրտագին շնորհակալություն ու երախտագիտություն է հայտնում իր բարեկամ պարոն ԳԵՂԱՄ ՔՅՈՒՍԴՆԱՆԻՆ սույն գրքի հրատարակության գործում ցուցաբերած իր բարոյական և նյութական աջակցության համար:

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԿՈՄՍՅՈՒՆԱՐ
ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԿՈՄՍՅՈՒՆԱՐ
ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԿՈՄՍՅՈՒՆԱՐ

Մենագրությունը նվիրված է Հայ նշանավոր քննադատ-հրատարակախոս Հրանտ Ասատուրի գրական և հասարակական գործունեությանը: Հանդամանորեն ուսումնասիրվում են Ասատուրի գրականագիտական, թատերադիտական, պատմագիտական գործերը, արվում է նրա հասարակական և մանկավարժական գործունեության գնահատականը:

«Մենագրությունը նվիրված է Հայ նշանավոր քննադատ-հրատարակախոս Հրանտ Ասատուրի գրական և հասարակական գործունեությանը: Հանդամանորեն ուսումնասիրվում են Ասատուրի գրականագիտական, թատերադիտական, պատմագիտական գործերը, արվում է նրա հասարակական և մանկավարժական գործունեության գնահատականը:»

Ս. Հայրապետյանը՝ Հրանտ Ասատուրին նվիրված այս աշխատությունը գրել է Երևանում, Հայկական ՍՍՀ Գիտությունների Ակադեմիայի Մանուկ Աբեղյանի անվան Գրականության ինստիտուտում աշխատելու տարիներին:

Գիրքը հրատարակության է հանձնարարված Հայկական ՍՍՀ Գիտությունների Ակադեմիայի Գիտական խորհրդի 1976 թվի որոշմամբ, թայց, հանդամանքների բերումով հրատարակվում է 1979 թվին՝ Լոս Անջելեսում:



ՀՐԱՆՏ ԱՍԱՏՈՒՐ

XIX դարի վերջերին և XX դարի առաջին քառորդում արևմտահայ գրական-մշակութային կյանքում առանձնահատուկ տեղ է գրավում անվանի բանասեր, հասարակական գործիչ և գրախնայադաս Հ. Ասատուրը:

Զարգացած, խեղճ մտնով և բազմախղճանի հետաքրքրություններով օժտված մի անձնավորություն էր նա, որն իր մտավոր կարողություններն ամբողջապես է սպաս դրեց հայաց լեզվի, գրականության ու մշակույթի ստալքնբացին՝ գրելով բազմաթիվ գրականագիտական հոդվածներ, գրախոսականներ, տեսական բնույթի աշխատություններ, դասագրքեր, բարոսների վերաբերյալ ուսումնասիրություններ և պատմագիտական գործեր:

Հ. Ասատուրի գրական, բանասիրական և հրապարակայնական գործունեությունը անմիջականորեն առնչվում է անցյալ դարի 80—90-ական թվականների արևմտահայ կյանքում տեղի ունեցող հասարակական և գեղագիտական սեղաշարժերի հետ, որոնք որոշակիորեն նշանակալից են գրական պրոցեսի նոր շրջանը՝ զարգացման իր ներքին միտումներով և իր նոր, սեպիստական ուղղությամբ:

Հանդես գալով ուրսունականների շարքերում և պաշտպանելով սեպիստական դպրոցի գեղագիտական դրույթները, Ասատուրը իր հաւոցիչ մտնով ու գրչով խրախուսեց շատ երիտասարդ գրողներին, իր գրախնայադասական հոդվածներով ու գրախոսություններով ձևավորեց նրանց գրական բնութեւնները:

Սկսած անցյալ դարի 70-ական թվականներից նա աշխատակցել է «Մանգունի էֆիբր», «Մասիս», «Արեւիչ», «Հայրենիք», «Բյուզանդիոն», «Երազիկ», «Սուրբանդակ», «Արեւիյան մամուլ», «Հանրագիտակ», «Լույս», «Նոր լուր», «Հայ կին», «Հայ իտուակ» և բազմաթիվ այլ պարբերականների ու տարեցույցերին:

Նրա գրական ժառանգությունը ցրված է ժամանակի պարբերականներին էջերում, մի մասն էլ հրատարակվել է առանձին գրքերով, որոնց մեջ հատուկ տեղ է գրավում նրա «Դիմաստվերներ» գիրքը:

1 «Պատանեկան ներշնչումներ» (1879), «Սահմանագրությունը և Հայ մտավորը» (1879), «Աղգային Հիվանդանոցի ընդարձակ օրացույց» (1900—1901), «Գործնական թերականություն» (1908) և «Թանգարան Հասրնախր» (1905) դասագրքերը:

Հ. Ասատուրի գրական վաստակի մեծագույն մասը անտիպ է: Կրանք են «Կրկնագներ և հուշեր», «Աշխարհարար մատենագրութեան պատմություն», «Կրական սեռեր», «Հեղինակ Պարոնյան» ուսումնասիրությունները, իմաստասիրական բառարանը և արևմտահայ գրողներին ու հրատարակիչներին նվիրված բազմաթիվ գրական դիմանկարներ:

Հ. Ասատուրը պատկանում էր արևմտահայ այն մտավորականների թվին, որոնք շատ վաղ, դեռևս երիտասարդության տարիներին իրենց վրա հրավիրեցին պուրստայ մտավորականության ուշադրությունը: Երա մասին գրվեցին բազմաթիվ հաղվածներ, ուր գնահատվում և խրախուսվում են իրավարան-գրականագետի լրջմիտ հյույրները, գրական երևույթների նրա նուրբ ընկալումներն ու բնորոշումները:

Բազմաթիվ ափսոսանքով Ասատուրի և նրա գրական, ինչպես նաև ազգային-կրթական գործունեության մասին արտահայտվել են Ա. Արփիարյանը, Գ. Զոհրապը, Թեոդիկը, Հ. Օշականը, Մ. Ինչոյանը, Գ. Մխիթարյանը, Ա. Ալոյանյանը, Ս. Երևանյանը, Թ. Ազատյանը, Միսիկը, Վ. Փափուգյանը և ուրիշներ: Երա գրական ժառանգության համառոտ բնութագրը տեղ է գտել նաև արևմտահայ գրականության պատմության բազմաթիվ ձեռագրիչներում: Սակայն Ասատուրին անդրադարձող գրականագիտներից շատերը հիմնվել են մամուլում կամ առանձին հրատարակված ժառանգության վրա՝ անտեսելով նրա բոլոր մտերի գործերը, որոնք կարևոր և արժեքավոր են ոչ միայն Ասատուր-գրականագետին ու բանասերին ավելի լիարժեք նախաշնչու սեսակետից, այլև պատմաբանի հուզող հարցերին ու խնդիրներին ավելի մասիկից ծանոթանալու առումով:

Ներկա ուսումնասիրության մեջ գրականագետի ձեռագիր աշխատությունների և պարբերական մամուլում գրված նրա բազմաթիվ հոդվածների հիման վրա փորձ է արվում իր ամբողջության մեջ ներկայացնել Ասատուրի գրական-բանասիրական վաստակը, նրա սզգային-հրատարակիչության, ինչպես նաև մանկավարժական գործունեությունը: Մեր նպատակն է եղել արժեքավորել ու գնահատել Ասատուրի գրական-հասարակական գործը՝ կառված ժամանակի գեղագիտական ընկալումների ու պատմա-հասարակական տեղաշարժերի հետ:

1 Բայց «Հակոբ Պարոնյան» ուսումնասիրությունից, Ասատուրի մասին ընդհանուր գործերը գտնվում են ՀՍՍՀ ԳԱ գրականության և արվեստի թանկարանի Թ. Ազատյանի ֆոնդում:

ԿՅԱՆՔԸ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Հ. Ասատուրը ծնվել է 1862 թ. օգոստոսի 10-ին, Պոլսում, Բոսֆորի Պոլսաճր դյուղում: Հայրը՝ Աստվածատուր Գևորգյանը, Ազնավուրյան Կարապետ ամիրայի հովանավորութեամբ, 1842 թ. աշխատանքի է նշանակվում Պոլսի «Անատոլա» ընկերության մեջ, իսկ 50-ական թվականներից ներգրավվում մայրաքաղաքի առևտրական ոլորտները՝ միաժամանակ կատարելով ազգային-հասարակական պարտականություններ: Հայրը, որին Ասատուրը հիշում է որպես «չուքը ծանր և բարի սրտով համակրելի» մարդու, հոգատար, ջերմ ու թրժված անձնավորություն էր, որից շուտ գրկվեց մանուկ Հրանտը (ընդամենը 6 տարեկան), տպավորելով մորեղբոր՝ Ռուբեն Գրիգորյանի խնամակալությունը:

1867 թ. Ասատուրը հաճախում է Պոլսի Մեզգուրյան վարժարանը՝ ձմռան ամիսներին, իսկ ամռանը՝ Պոլսաճր դյուղի երեց մանկանց վարժարանը: Ինը տարեկան հասակում նա դառնում է Ռուպերթյան կոլեջի սան:

Ասատուրը հուզմունքով է վերհիշում կոլեջի ուսումնասիրության տարիները, այն անձանց, որոնք հետագայում նշանավոր դարձան գիտություն և արվեստի տարրեր բնագավառներում, մեծ երախտագիտություն է հիշում վարժարանի տնօրեն դոկտոր Ուռաչըրնին: Այս մասին նա հետագայում գրում է. «Ռուպերթ ջուլեճի մեջ կար առողջ սկզբունքներ ձմեռային մը դոր լիաթոք կը շնչեինք ինչպես անապակ դասարանին մեջ, Վասիարին նեղուցին և երկու եղերքերուն բազմաբանգ կանաչներուն և կապույտներուն հանդեպ, բնության ծոցը, Պեպեքի և Ռումելի Հիսարի բարձունքի վրա: Կզգայինք բարոյական վեհությունը մեր արժանավոր

ուսուցիչներուն, որոնց գլուխը կը գանձեր վարժարանի անօրները՝ տարտար Ուոչպըրըն, հմուտ ու պերճախոս որ մեծ տպավորութիւն ձգած էր վրաս»¹:

Պատկասանքի, անկեղծ սիրտ դպացուսով է գրել Ասատուրը նաև հայոց լեզվի ուսուցիչ Հակոբոս Ճեճիդյանի մասին, որի դասավանդման առողջ սկզբունքները հմայում էին աշակերտներին և աղջային գրականութեան ու լեզվի նկատմամբ անհուն սիրով տողորում նրանց: Հ. Ճեճիդյանը, որը 1868 թ. էր ավարտել Պեպեքի ամերիկյան վարժարանը, այսինքն նույն Ռոպերթիան կոլեջը, Ասատուրի կողմից բնութագրվում է որպես «երիտասարդ ու կորովի» մեկը, որը մի հատուկ եռանդով էր ուսուցանում Գարագաշյանի «Գործնական քերականութիւնը» և աշխարհաբար լեզուն՝ հանձնարարելով գրել ընդարձակ շարադրութիւններ հայ գրողների ու պատմիչների կյանքի, նրանց ստեղծագործութիւնների մասին, ինչպես և ամենատարբեր երևույթների վերաբերյալ: «Իր դասախոսութեանց մեջ, — գրում է Ասատուրը, — ճշմարիտ հեղինակութիւն մըն էր շնորհիվ իր հմտութեան, զոր դիտարարութեամբ կարելի խորհողի ու պերճախոսի ձիրքերով»: Իսկ ավելի մտոյիկից ծանոթանալով նրա գրական-հասարակական գործունեութեանը և կարգալով «Բյուրակն» — ում տպվող նրա լրջմիտ խմբագրականները «ուր կը փայլին իր մաքուր հոգին, բարոյականի իր առողջ սկզբունքները գրագետի ճաշակով բացատրված, ինձի ազգած պատկառանքին խառնվեցան անկեղծ սիրտ և խորունկ հարգանքի ջերմ զգացում մըն ալ զոր միշտ ունեցած եմ այդ պատվական հայուն համար որ պահած է մայրենի լեզվի սերը Ռոպերթ քոլեճի հայ աշակերտական սրտին մեջ»²:

1873 թ. Հրանտը ծանր հիվանդանում է և թողնում վարժարանը, բայց հարազատների աջալուրջ խնամակալութեան տակ, տնային պայմաններում ստանում է փայլուն կրթու-

1 ԳԱԹ, Թ. Աղասյանի Փանդ, Nո 139, 2. Ասատուր, Ուսանողի Հուշերեն, էջ 1:

2 Նույն տեղում, էջ 7:

թիւն և դաստիարակութիւն: Նրան անդլերեն, Փրանսերեն և եվրոպական գրականութեան պատմութիւն էր ուսուցանում մի անդլուհի, որը նրանց տան մնայուն վարժուհին էր, իսկ հայերեն և պատմութիւն՝ ժամանակի անվանի հրապարակախոս և քաղաքական գործիչ Մինաս Չերազը: «Ժպտուն ու համակրելի» ուսուցիչը իր սրամիտ դիտողութիւններով և բովանդակային դասախոսութիւններով կարողանում էր դրավել պատանի Հրանտի միտքն ու երևակայութեանը, հատկապես պատմութեան դասերին՝ «մատնանիչ ընելով աղչերու պես պատմութեան դասերին»՝ «մատնանիչ ընելով աղչերու կյանքին այն իրողութիւնները, որոնք աղբիւր ունենին իրենց քաղաքակրթական զարգացման հետ, միշտ ի վեր հանելով, և ղեկքերուն մեջ փնտրելով միշտ միտքը ճշակող, հողին աղնվայնող, արդարութիւնը և ուղղամտութիւնը սիրցնող դասերը...»¹:

Մ. Չերազը, որը դեռևս 17 տարեկան հասակում խմբագիրը նշանակվեց Մանչեստրից Պոլիս տեղափոխված «Երկրագունք» հանդեսին, ութ ամիս հետո հետագիւց խմբագրի պաշտոնից, հանդեսի էջերում «խիզախ» մտքեր ու հայացքներ արտահայտելու համար, մի բան, որին չէր կարող ընդունալ զնալ պահպանողական Պոլիսի «ղպրոցական գրաքննութիւնը»:

Չերազի 1874-ին հրատարակած «Գրական փորձերը», որն ամփոփում էր «Երկրագունքում» տպված նրա ջանադատականներն ու բանաստեղծութիւնները, մեծ տպավորութիւն են թողնում պատանի Հրանտի վրա. «Գրական փորձերու» կարուկ, հստակ պատկերած ոճը, նյութերու զանազանութիւնը, առողջ սկզբունքները, ժողովրդասեր ոգին հրանութիւնը, իսկուց լեզվի պուրում էին զիս»², — խոստովանում է նա: Ուսուցչի լեզվի հարցում նախընտրած կողմնորոշումները, այն է, այսպես կոչված, «ընտրողական» աշխարհաբար ձևերից, անցնում է նրա պարզ, գործածական աշխարհաբար ձևերից, անցնում է նրա աշակերտին, թեև վերջինս հաճախ ընդդիմանում էր Չերազի

1 ԳԱԹ, Թ. Աղասյանի Փանդ, Nո 139, 2. Ասատուր, Ուսանողի Հուշերեն, էջ 8:

2 Նույն տեղում, էջ 11:

լեզվական քաղաքականութիւնը: «Բայց անիկա, — դրում է Ասատուրը իր «Ուսանողի հուշերում», — այնքան ճարտարութեամբ ու կուռ տրամաբանութեամբ կը հերքեր առարկութիւններս, որ հետզհետեւ ես ալ կընտելանայի իր ընդունած ձևերուն, որոնք ալիւի պարզ ու դյուրութեամբ էին»: Սա էր պատճառը, որ Ասատուրի առաջին թարգմանութիւններից մեկը (1876)՝ Վ. Հյուզոյի դամբանական ճառը Ժ. Սանդի մասին, գրված ուսուցչի հետևողութեամբ, հրատարակվում է «Մանգումեում» և ոչ թե «Մասիսում», քանի որ վերջինս չէր տպագրում այն նյութերը, որոնք գրված էին Չերազի «ընտանողական» աշխարհարարով՝:

Պատանեկան տարիների մասին գրած իր հուշերում Հրանտը մեծ արժանապատիւթեամբ է խոսում նաև իր ուսուցիչ Բյուզանդ Քեչյանի մասին, որը նրան թուրքերեն և թվարանութիւն էր դասավանդում: Նա Բյուզանդին բնութագրում է իբրև «կորովի միտք» և «երկաթի կամք» ունեցող մի մարդու, որն «իբր կարծիքներուն վրա կը պնդեր միշտ ու դանսնք կը պաշտարաններ գործարք փաստերով...»:

Այն տանը, որտեղ ապրում էր Ասատուրը, և ուր մուտք ունեին ժամանակի արվեստասեր և գրադեպ հասարակայնութիւնը՝ հաճախ քննարկվում էին գրականութեան, արվեստի, կամ ազգային հարցերի վերաբերող բազմաթիւ խորնդիրներ: Ուշիմ պատանին մեծ լրջութեամբ և խոհեմութեամբ էր ունկնդրում դրանք և այդ միջոցառում էլ մշակվում և ձևավորվում էին պատանի Հրանտի հետաքրքրութիւններն ու նախասիրութիւնները, հղկվում նրա գեղապետական ճաշակը: Նրանց տան այցելուներից մեկն էր Տիգրան Չուխաջ-

յանը, որը միաժամանակ Ասատուրի եղբոր՝ Հակոբ Ասատուրի ուսուցիչն ու ընկերն էր և որին մոտիկից ճանաչում ու սիրում էին ընտանիքի բոլոր անդամները: Իր «Դրվագներ և հուշեր» ձեռագիր աշխատութեան մեջ Ասատուրը վերհիշում է մանկութեան տարիներին իրենց Պոյաճը գյուղի տան մեջ տեղի ունեցած երաժշտական երեկոները, երբ Չուխաջյանը մտերիմների շրջանում լսելի էր դարձնում իր տրամադրութիւններն ու հուշերը, իր դպացական աշխարհը ցույցնող մեղեդիները... Նա էր, որ առաջին խմբերգերը կազմակերպեց ազգային վարժարաններում, գրեց հայունի «Արշակ Բ» օպերան, ունեցաւ հաջողութիւններ և հուսալքման պահեր: Չուխաջյան-երգահանի մեծութեան խոր ըմբռնմամբ Ասատուրը ընտրում է նրա մարդկային կերպարը, որն իսկական արվեստագետի խառնվածք էր, վեր կանդնած սոսորջա կյանքի հանգամանքներից ու պահանջներից: «Գիտցած էր բարեկամութիւններ ներշնչել ու միանգամայն տեղի տալ նախանձոտի հակառակութեանց, — գրում է Ասատուրը նրա մասին, — որոնք դեմ չէր կրցած թումբ կանդնել և անճրկիւմ մնացեր էր իր միամիտ արվեստագետի բնավորութեան պատճառով: Չուխաջյան կյանքի ըմբռնում մը ունեւր որ ազահովարար գործնական մտքի տեւ մարդոց կյանքի ըմբռնումը չէր»:

Այդ տարիներին, 70-ական թվականների վերջերին, Պոլսի Թաքսիմ կոչվող այգին հավաքատեղի էր դարձել Բերայի, Օրթադոլուղի և Գատը գյուղի արվեստասեր հասարակայնութեան համար: Այստեղ էին հավաքվում արվեստի նշանաւոր գործիչներ, գրողներ, հրատարակիչներ և ժամանակակից առաջադեմ մտավորականութիւնը: Երուն մշակութային կի առաջադեմ մտավորականութիւնը: Ասատուրը ծանոթանում է Մալեխյանի, Ռ. Պերպերյանի, Կ. Փանոսյանի, Մ. Հեքիմյանի, Մազաքիա Օրմանյանի (Տիրայր) և ուրիշների հետ: Դեռևս պատանեկան տարիներից Ասատուրի շփումը հայ հասարակական տեղաշարժերի և գրական-մշակութային

1 Չերազը, որը 1876 թ. հրատարակված իր «Ազգային դաստիարակութիւնը» աշխատութեան մեջ պահանջում էր մշակել աշխարհարարը և ճշտել նրա քերականութիւնը՝ մեկ կողմ թողնելով դրաբարը վերականգնանքները, հետադարձում փոխեց իր ըմբռնած աշխարհարարի նեղ և արհեստական սկզբունքները, հաշիւ անելով հայոց լեզվի զարգացման բնական ընթացքը և յուրօրինակութիւնները:

2 ԳԱԹ, Թ. Աղատյանի Ֆոնդ, № 139, Է. Ասատուր, Ուսանողի հուշերն, էջ 62:

կյանքի անցուղաբձերի հետ սրում են պատանու հետաքրքրությունները հայ գրականության և պատմության նկատմամբ: Նա ջանասիրաբար կարդում և թարգմանում է հայ, եվրոպական գրողների ստեղծագործությունները, ուսումնասիրում հայ ժողովրդի պատմությունը, ծանոթանում նրա անցյալին: Նա հանդես է գալիս պարբերական մամուլում, հրատարակում հոդվածներ, իսկ 70-ական թվականների վերջերին լույս են տեսնում նրա «Պատանեկան ներշնչումներ» և «Սահմանադրությունը և հայ ժողովուրդը» գործերը:

«Պատանեկան ներշնչումները» (1879) ամփոփում է տանջոքս արձակ և չափածո դրածեր, որոնք թեև չեն փայլում արվեստի կատարելությամբ, բայց գրավում են իրենց անկեղծ, մաքուր դրացմունքների ելևէջներով: Իրանք բյուրեղային հոգու բաբախումներ են, որոնք սլանում են դեպի իդեալականը և ծուներ դնում գեղեցիկի ու ճշմարտության առջև:

Պատանեկան միտքն ու զգացումներն աշուտ քննում էին նաև կրթության ու դրահանության դերի հարցերը, դատապարտում մարդկության հոռի կողմերը՝ թշվառությունն ու սպիտակությունը, երգում Բոսֆորի զեղածիծաղ ափերի «ցընորքը», աչկերտի երախտադիտական զգացումներ հղում իր ուսուցչին, ողբում Հայաստան աշխարհը, կործանված հայրենիքը:

1879 թ. մայիսի 27-ին, Կոստանդնուպոլսի հայությունը Եկտի-Գուլեում տոնում էր Աղզային Սահմանադրության 19-րդ տարեդարձը: Հոծ բազմություն էր հավաքվել ազգային հիվանդանոցի պարտեզում. արտասանվում էին ճառեր, ողջուններ՝ նշելով հայ ժողովրդի ճակատագրում Աղզային Սահմանադրության ունեցած դերն ու նշանակությունը: Եվ ահա Իզմիրլյան Սրբազանի ատենարանությունից հետո, բեմ է բարձրանում 18-ամյա հուզված մի պատանի՝ Հ. Ասատուրը, հասարակության տաջ հրապարակորեն ասելու իր խոսքը հայ ժողովրդի համար պատմական նշանակություն ունեցող այդ կարևոր իրադարձության վերաբերյալ: Մի զարմանալի ողջախոհությամբ նա ներկայացնում է այն մեծ, կարև-

որ դերը, որ եվրոպական ժողովուրդների կյանքում ունեցավ Փրանսիական հեղափոխությունը: «Այն արյունի մեջ, որ կը հոսեր իբր հարձանք, իբր հեղեղ, անցյալն կը խեղդվեր համակ յուր նախապաշարումներով, յուր անիրավություններով և յուր անարդար դատակարգումներով:

Այդ օրե մի նոր դարազլուխ կը սկսի մարդկային աղվի համար»:

Ասատուրը Փրանսիական հեղափոխության անմիջական արձագանք էր դիտում 1860 թ., այնքան երկարատև պայքարով ձեռք բերված Աղզային Սահմանադրությունը, որք նա բռնադատական Թուրքիայում բնակվող ժողովուրդների հասարակական Թուրքիայում բնակվող ժողովուրդների համար մեծ նվաճում էր համարում, որքան էլ սուլթանական պետությունը սեղմեր կանանադրության իրագործման շրջանակները: Պոլսահայ մտավորականության համառ ջանքերի արդյունքն էր այն, որ սահմանադրության հաղթանակի ճառագայտն էր ներդրել, մտքեր ու կրքեր բարբոթել: «Այո, — համազված դրում է Ասատուրը, — 60-ի Սահմանադրությունն ծրագրող և զործադրող վեհոգի հեղափոխականները Միսապոսի թոռներն էին. նոքա կը պաշտեին սպասությունն, նոքա կը պաշտեին հովասարությունն, նոքա կը պաշտեին եզրայությունն»:

Այսպես, 1789-ի հեղափոխության նշանաբանով բարձրացվում էր արեւմտահայերի օրինականացված իրավունքներին «ճանաչումը», որը բերելու էր քաղաքակրթության ու լուսավորության տաջընթացի հեռանկարներ: 60-ական թվականներից հետո էր միայն, նկատում է Ասատուրը, որ սահմանափակվեցին ոչ միայն կրոնական-եկեղեցական իշխանություններին դերը, այն ազգային տերերի՝ ամիրանների իրավունքներն ու զործունեությունը:

Սակայն Աղզային Սահմանադրության խոստացած անկրկնակալությունների իրագործման անհնարինությունը այլևս զազանիք չէր երիտասարդ հրապարակախոսի համար: Եվ նա,

1 Հ. Ասատուր, Սահմանադրությունը և հայ ժողովուրդը, Պոլիս, 1879, էջ 14:
2 Նույն տեղում, էջ 15:

կարծեք, ալիլի հակված է «կենսական բարեփոխումների»
անկատարութիւնը բացատրել սահմանադրութեան վարչա-
կան օրգաններէ՝ Ազգային վարչութեան, Ռուսմանական խոր-
հրդի կամ կրօնական պաշտօնականների ու եկեղեցու անբա-
րեխիղճ և բարձրագոյն գործունեութեամբ, քան խորանալու և-
րևույթի իրական-պատմական պատճառների մեջ: Այսպէս թե
այնպէս, Ասատուրի ուշադրութեան կենտրոնում իր ժողովրդի
ծանր կացութեան, նրա կրթա-ուսումնական վիճակի
բարձրքման խնդիրներն են, «լուսամիտ և ուսյալ» կրօնա-
կաններ պատրաստելու հարցերը: Նա ցավով է նկատում
նաև, որ վերջին քսան տարիների ընթացքում աննշան բարե-
փոխումներ միայն կատարվեցին դավաճներում: «Այսօր, ա-
վա՛ղ, դավաճարնակ հայ սերունդը հուշ տխուր կացութեան
ունի, — նա աղետ է և նախապաշարձ: նա չէ գիտեր, թե
ի՞նչ է աղբութիւն, ի՞նչ է բարոյականութիւն, ի՞նչ է քաղա-
քակրթութիւն: նա մի կույր էակ է, պ՛ղ, որ չէ տեսներ արեւն
և կը թարթափի աղջամուղջի մեջ»:

Վերաքննել դավաճի վիճակը, դպրոցների ու դաստիարա-
կութեան առաջ ծառայած դժվարին խնդիրները, բաղձացնել
մամուլը, տարածել լուսավոր պաշտօնները և «վերաքննել
մեր Սահմանադրութիւնը, որ, ինչպէս կը վկայի մի 19-ամյա
փորձառութիւն, պետք ունի հիմնական բարեփոխումի» —
սհա Ասատուրի եզրակացութիւնը:

Ընկենելով հասարակական կյանքի եռուղեօրի մեջ և, միա-
ժամանակ, խոր ըմբռնելով մամուլի և զրականութեան դերը
ազգութեան առաջնիքացի գործում, պատանի Հրանտը ժողո-
վրդին ծառայելու անկեղծ ցանկութեամբ ու խանդավառու-
թեամբ նետվում է հասարակական գործունեութեան ասպա-
րեղ, անդամակցում մի շարք ընկերութիւններին, որոնք կոչ-
ված էին դարգացնելու ոչ միայն ազգային մշակույթը, այլև
հասարակական-կրթական աշխատանք ծավալելու պոլսահայ
չրջաններում: Նրա առաջին հոդվածը, որը տպագրվում է
«Մանդուկում» (1877), «Հայ զրական ընկերութիւն» վեր-

նագրով, պատմում էր ընկերութեան հիմնադրման հանգա-
մանքների, նրա կազմակերպիչներին՝ Եղիշե Գուրյանի, Ռե-
թեոս Պերպերյանի, Հակոբ Կյուլյանի մասին, որոնց նպատա-
կըն էր հրատարակել զրական-գիտական մի հանդես, որտեղ
պետք է տպագրվեին հայ գրողների ու մտածողների գործերը:
Նա գրում է նաև իր սպավորութիւնները Գալոցասիրաց-Ս-
րեկեյան ընկերութեան ընդհանուր ժողովի մասին, որին ներ-
կա էր Խրիմյան Հայրենիք և, ինչպէս ինքն է գրում, 70-ական
թվականներին արեւմտահայ մտավորականներից «ամենն
փայլուն ներկայացուցիչներն շատերը»: Նա հոգիվածն այս
անգամ ներկայացնում է ոչ թե «Մանդուկում», այլ «գոթվա-
րահած» «Մասիսի» խմբագիր Կ. Ութուճյանին: «Երբ հոգ-
վածս ներկայացուցի, — գրում է Ասատուրը, — արհամարհող
աչքերը ակնարկ մը պտըտցուցին ձեռագրիս վրա: Իր խոսա-
պահանջ մարդու համբավը գիտեի՝ մանավանդ սկսնակներու
և դպրոցական տարիք ունեցողներու մասին: Սակայն կերևա
թե զրկածքին լեղուն և ոճը բոլորովին անհաճո չեղան իրեն,
և հետո, նյութը այժմեութեան շուրջը կը դառնար, ինչ-որ
չվրիպեցավ փորձված խմբագրին աչքերին: — Աղե՛կ, ըստվ,
կը հրատարակվի»: Եվ այդ օրվանից Ասատուրը նվաճում
է խոստահած խմբագրի համակրանքը և հանդես գալիս արդեն
«Մասիսի» էջերում:

Ասատուրը դառնում է նաև Կիլիկյան ընկերութեան հիմ-
նադիրներից մեկը: Մինաս Զերաղը, Հովհաննես Արշակունին,
Հարութիւն Մասիսյանը, Հովհաննես Ենոքեյանը և Ասա-
տուրը դիմում են Ներսես պատրիարքին և ստանալով նրա օգ-
նութիւնն ու աջակցութիւնը, 1879 թ. կազմում մի ընկերու-
թիւն, որը նպատակ ունի Կիլիկիայում հիմնել վարժարան-
ներ և խթան դառնալ լեռնային այդ երկրամասի ուսումնա-
կրթական վիճակի բարեկարգմանը: Հենց այստեղ էլ, ընկե-
րութեան առաջին նիստում, Ասատուրը լսում և ճանաչում է
«Գրոց և բրոցի» հեղինակին՝ Գարեգին Սրվանձոյանին, որի

երկերն այնքան խանդավառութեամբ և հաճույքով կարդացել էր նա :

80-ական թվականների սկզբներին Ասատուրը մասնակցում է նաև մի քանի թատերական ներկայացումներին, որոնք տեղի էին ունենում սուլթանական սասակացած ռեակցիայի ու հարածանքների ծանր պայմաններում : Ի նպաստ Պոլսաճը գյուղի ազգային վարժարանի, բեմադրվող «Անկումն Արշակունի հարստութեան» պիեսում (Պ. Գուրյան) նա կատարում էր Արտաշիբի դերը, իսկ 1881 թ. ներկայացված Վ. Հյուզոյի «Էդանիի» մեջ՝ Էդանիի դերը :

Աղջային Հասարակական եռանդուն աշխատանքները չէին խանդարում երիտասարդ Հրանտին ներանձնանայու իր զգացմունքների աշխարհում և գրեցու պարզ ու անկեղծ բանաստեղծություններ, որոնցից մի քանիսը տպագրվեցին ժամանակի պարբերականներում : Բայց Ասատուրի կոչումն, այնուամենայնիվ, ո՛չ ազգային գործիչ դատնայու հեռանկարներն էին և ո՛չ էլ քերթողական արվեստի հոգեղմայլ խորհուրդներին հետևելը : Ասատուրի պրպոզոզ միտքը ձգտում էր յուրացնել և ճանաչել ալեյին, որն անհնար էր ձեռք բերել պոլսահայ միջավայրում : Այդ նպատակով էլ 1881 թ. նա մեկնում է Փարիզ և հաջողությամբ հանձնելով քննությունները (քննությունների 750 մասնակիցներից միայն վեցին է վիճակվում այդ բախտը) բնդունվում է Փարիզի իրավագիտության ուսումնարանը : «Աստուն կանուխ, — պատմում է Ասատուրը, — մութն ու լուսուն կը վազեինք վարժարանին ամփրթատրոնը, ուր ամենեն ժրաջան աշակերտները կը հավաքվին, ունկնդրելու հոսմեական օրենքի և քաղաքական օրենքի դասերուն :

Երեք հայ էինք տասնյակ օտարականներու մեջ» :

Մայրաքաղաքի ետուն ու բազմաբովանդակ կյանքը և արվեստի ու դրականություն հրաշակերտների հետ ալելի մոտիկից ծանոթացումը սրում և խորացնում են Ասատուրի միտքը, նրա ընկալումները, պատկերացումները : Հայացք-

1 «Մատ», 1898, № 11 :

ների ու տեսակետների իմաստավորման, եվրոպական քաղաքակրթության ճանաչման ու դնահատման մի ժամանակաշրջան էր դա, երբ Ասատուրը Ֆրանսիայի մայրաքաղաքում լայն կապերի ու առնչությունների մեջ էր մտնում ոչ միայն աշխուղ ապաստանած հայ մտավորականության հետ, այլև Ֆրանսիացի նշանավոր հայագետների՝ Դյուլարիեի և նրա հաջորդ՝ Օ. Կարրիերի հետ : Փարիզում նա ծանոթանում է նաև (1882) Գրիգոր Օսյանի հետ, որի բնակարանն այդ տարիներին հայրենիքից հեռու գտնվող վարսանդի հայերի ցանկալի վայրն էր : Այստեղ հավաքվում էին նրանք, վերլուծում հայ և եվրոպական մշակույթի բազմաթիվ հարցեր, ընթերցում նշանավոր գրողների գործերից, խոսում թարգմանական գրականության հարցերի շուրջ : Գրիգոր Օսյանը, որը 80-ական կանության հարցերի շուրջ : Գրիգոր Օսյանը, որը 80-ական թվականների ազգային գործունեության ետուն տարիներից հետո ապրում էր Ֆրանսիայի մայրաքաղաքում, մեծ ազդեցություն է թողնում երիտասարդ Հրանտի վրա, աղջային հասարակական վսեմ գաղափարներով համակում նրան : Օսյանը հատկապես օգնում է Ասատուրին բժբանելու արդեն քաղաքացիություն ստացած աշխարհաբարի լեզվական սկզբունքները՝ պահանջելով հետևել լեզվի «բնահանուր սովորութեամբ նվիրաբործված ձևերուն», նախանշելով աշխարհաբարի զարգացման ճիշտ ուղղությունը :

Ասատուրը հիացմունքով է խոսում նաև փարիզյան տարիների իր մյուս բարեկամի և մտերմի՝ Հովհ. Այվազյանի մասին : «... Իր երկար հասակով, — գրում է նա իր հուշերում, — առույգ երևույթով, ցից իրանով ու լայն ուսերով, ծովի օդը չնչած աշխույժ նավաղետի մը կը նմաներ : Այնվական կեցվածք մը և դիմազծերու անուշ արտահայտություն մը ուներ, որը գրավիչ էր և միանգամայն պատկառանք կազդեր» : Աստուրը, որը նրա մեծ արվեստի երկրպագուներից էր, մոտիկից ծանոթ էր նրան և սիրով ու հուզմունքով է վերհիշում միասին անցկացրած սքանչելի օրերը : Իր «Հրապարակագրի հու-

1 ԳԱԹ, Թ. Աղաթանի Փոնդ, № 139, 2. Ասատուր, Հրապարակագրի հուշերն :



չերեն» ձեռագիր աշխատութեան մեջ նա մի առանձին գործովանքով է պատմում այդ տարիների նրա կյանքի, Գեղարվեստի ձեռագրանկանի նրա Հաջողութունների, Վենետիկ-Հոսոմ—Փարիզ՝ նրա տաղանդի ու համբավի տարածման մասին:

Այդ տարիներին փարիզացի հայերի, գլխավորապես այստեղ ուսանող հայ երիտասարդութեան կենտրոնն էր 1879 թ. հիմնադրված Հայկական ուսումնասիրաց ընկերությունը, որի նպատակն էր բարձրագույն կրթություն տալ հայ չքավոր պատանիներին և դորձնական գիտություններ ավանդել նրանց: Ասատուրը ևս անդամակցում էր այս կողմակերպությունը, օգտվում ընկերության հարուստ դրաղարանից, որը լրացվում էր Պոլսից և Կովկասից ստացվող դրականություններ: Ասատուրի համատեղ ջանքերով այստեղ, 1882 թ. կազմակերպվում է «Փարիզի հայ ուսանողական միությունը», որը կարևոր նշանակություն է ունենում փարիզացի հայ երիտասարդության համար: Նպատակ ունենալով ավելի մտախիղճ աննաչել եվրոպական ժողովուրդներին կյանքն ու արվեստը, Ասատուրը ճանապարհորդում է Ֆրանսիայում, Հոլանդիայում և Անգլիայում, իսկ 1884 թ. նոյեմբերին, ավարտելով իրավաբանական ուսումնարանը, վերադառնում է Պոլս:

Դեռևս Փարիզում, Ասատուրի ձեռքն են անցնում «Արևելքի» առաջին համարները, որոնք նա ընդունում է իբրև մի մեծ «հայտնություն»: ուշիմ երիտասարդն անմիջապես կուսում է գրական մի նոր շարժման սկզբնավորման փաստը, որը «նոր կորով կը բերեր մեր գրականության արյունե զուրկ երակներուն»: Գրական նոր ուղղության թելադրանքով աշխարհաբար լեզվի և գրականության ժողովրդականացման խնդիրները առօրյա քննարկման հարցեր էին դարձել, որի լուծման ուղիներն էր սրնում «Արևելքի» շուրջ բոլորած արևմտահայ մտավորականությունը: «Արևելքի» վարչության խորհրդի անդամները, — գրում է նա, — թեև տարբեր միջավայրերու մեջ դաստիարակված, ոմանք հոս, ոմանք Ֆրան-

սա, Գերմանիա և Իտալիա, թեև կարգ մը խնդիրներու մեջ հաճախ տարակարծիք, սակայն միշտ համերաշխ կը մնային սկզբունքի խնդիրներու վրա: Թերթին ուղղությունը, էթե երբեք ազդեցավ Պատրիարքարանի ժողովրդականության պաշտոններե վրա երբեմն կը վարենին վարչական խորհրդի անդամներն ոմանք, սակայն երբեք «Արևելք» չպաշտպանեց դատ մը, որ օգտակար չըլլար հանրային շահերուն ու հակասության մեջ դնել խմբագրությունը»:

Շարժման պարագլուխը Ա. Արփիարյանն էր, որը ելնելով նորի հաստատման կենսական անհրաժեշտությունից, խրախուսում էր գրական նոր ուղղության մասնակիցներին՝ Լ. Բաշալյանին, Տ. Կամսարականին, Գ. Զահրապին և մյուսներին, լուսարանում երևույթի նշանակությունը հայ կյանքին, լուսարանում երևույթի նշանակությունը հայ կյանքում, արժեքավորում գրական նորահայտ գործերը, բացառում հայտում թերությունները: Ասատուրը, որը դեռևս Փարիզում դանդաղ տարիներին եվրոպական ժողովուրդների, նրանց արվեստի ու բարքերի վերաբերյալ հոգիվածներով աշխատակցում էր «Մասիսին», մեծ համակրանք և ընդունելություն էր դառնել պոլսահայ գրական շրջաններում: Սակայն Արփիարյանն առաջինն էր, որ քաջալերեց Ասատուրի գրական շնորհը և ներգրավեց նրան մտավոր նոր շարժման ոլորտները: «Արաքս» ծածկանունով «Արևելքում» տպագրված «Քառասորյա բնակություն ի Լոնտոն» հոդվածաշարքը (1884 թ. № 29), «Կյանքն ի Ֆրանսա» թղթակցությունները (1885 թ. համարներում) թարգմանվեցին և տպագրվեցին նույնիսկ թուրքական մամուլում: Տպավորությունների անմիջական ներշնչումով ու պարզ լեզվով գրված հոդվածների այս շարքն այնքան մեծ տպավորություն էր թողել, որ շատ մտավորականներ «Արաքս» ծածկանվան տակ փնտրել էին «մեծ տարողիք» Գ. Օտյանին: «Շատ չանցած, — գրում է Արփիարյանը այդ տարիների մասին, — Հրանտ Ասատուրը սկսավ վայելել համբավ

1 «Արևելք», 1898, № 3771:

մը, որ կը տարածվեր մինչև Կովկաս ալ, ուր լսելիքները ընդ-
հանրապես կը խլանան սոցաճարհան անուններու գեմ՝¹ :

Ասատուրը, որը պարբերական մամուլի էջերում հանդես
էր գալիս գրական-պատմական, իրավագիտական բազմա-
թիվ հոդվածներով, գրախոսականներով և աղջային հասա-
րակական կյանքը պատկերող քրոնիկներով, միամտամանակ
աղջային գանազան մարմինների և խորհուրդների անդամ էր
(կուսակց, ուսումնական, խնամակալական), ինչպես նաև ե-
րեսփոխան ու ատենապետ :

Ասատուրը Պոլսում ձեռք է բերում նաև «առաջնակարգ և
ճարտար» փաստաբանի համբավ՝ 1885 թ. հիմնելով իրավա-
բանական դրասենյակ : Այնուհանդերձ, իրավաբան-օրենսդե-
տի իր նախասիրությունները միշտ տեղի էին տալիս հրատա-
րակախոս-մտածողի գրական հետաքրքրություններին, և նա,
գրեթե ամբողջապես, նվիրվում է ժամանակի առաջադրած
գրական-հասարակական խնդիրների իրագործման նպատակ-
ներին :

1887 թ. Ա. Արփիարյանը ստանձնում է «Մասիս» խմ-
բագրությունը և առաջարկում Ասատուրին աշխատակցել շա-
բաթաթերթին : Այդ ամիսներին Արփիարյանը և Ասատուրը
բնակվում էին Պոլսում գյուղում և բարեկամական սերտ հա-
րաբերությունների մեջ էին : Գրականության հարցերի շուրջ
պտտվող երկարատև զրույցները նրանց հետաքրքրություն-
ներն ու հայացքները ուղղում էին եվրոպական իրադաշտ
ուղղության գեղարվեստական դրսևորումների, հատկապես
Ալֆոնս Դոդեի, Ֆլորբերի և Մոպասանի ստեղծագործություն-
ների վրա : Եվ այստեղ էր, որ Արփիարյանը դրսևորում էր իր
սկզբունքայնությունը և կողմնորոշումները գրական նոր դըպ-
րոցի հիմնավորման խնդրում՝ անողոք վերաբերմունք ցույցա-
բերելով ուսմանախղձի հանդեպ : Սրանով էլ նրանց մտավոր
որոնումները միաձուլվում էին և աղջային գրականության
զարգացման հետանկարների պարզարանման միևնույն մտա-

հոգություններով տողորում նրանց : Ասատուրը ճիշտ էր ըն-
կալում իր դադափարակից ընկերոջ զղաստ դատումներն ու
ճշմարիտ կողմնորոշումը գրական նոր շարժման ուղղության
ու բովանդակության հարցերը քննելիս : Պոլսում գյուղում
անցկացրած ամիսների ընթացքում ձեռք բերած մտերմու-
թյունը հնարավորություն է տալիս Ասատուրին ճանաչելու ոչ
թյունը հնարավորություն է տալիս Ասատուրին ճանաչելու ոչ
միայն Արփիարյան-մտածողին, այլև Արփիար-մարդուն : «Իր
խելքը, — գրում է Ասատուրը, — իր մեծագույն հրատալը կը
կազմեր, բայց ես ճանչցած եմ իր մեջ սրտի տեր մարդն ալ,
մտքը, եղբայրներուն և սրտակից բարեկամներուն համար
հարգանքով լեցուն : Շարժուն գիմագիծերը զվարթություն
չէին արտահայտեր բնավ և ժպիտին մեջ անդամ, որ հեղնող
բան մը ուներ, թախճագին արտահայտություն մը կար : Ամեն
բան հասկցող, ամեն բան միտքը պահող, շուտ տպավոր-
վող, շուտ զրգոյվող, արտակարգորեն գործունյա ուղեղ մըն էր :
Կծու քննադատ մըն էր, հանդուպ հարձակող մը, անպոթ
ճայթող մը, ոչ սպաննալիքներ և կլախնար, ոչ բամբասանք :
Օրվան աղճեցիկ մարդոց դեմ գրելը հաճույք մը, հոգիի ան-
զիմադրելի պետք մըն էր իրեն համար, բավական է, որ
անոնց արարքներուն մեջ անիրավ, քննադատելի բան մը
գտներ» :

1891 թ., Գ. Զոհրապը, Հ. Ասատուրը և Տ. Կամսարականը
որոշեցին հրատարակել «Մասիս» գրական հանդեսը : Զոհրա-
պը խմբադիրն էր, Ասատուրը՝ հանդեսի տնօրենը : «Մասիսը»
թեև պետք է խմբադրվեր ու տարվեր «Արևելքի» խմբագրա-
թանը, բայց «Արևելքի» վարչական խորհուրդը չպետք է մի-
ջամտեր հանդեսի ուղղությանը և, ընդհանրապես, ոչ մի կառ-
չպետք է ունենար նրա հետ : «Մասիսի» խմբագրական կազմը
չպետք է ունենար նրա հետ : «Մասիսի» խմբագրական կազմը
նախորդար նվիրվում պարբերականի հրատարակությանը,
որը լույս է տեսնում սկզբում՝ 1892 թ. երեք շաբաթ մեկ
անդամ, իսկ 1893 թ. հունվարից՝ դասնում շաբաթաթերթ :

¹ Ա. Արփիարյան, Պատմություն ԺԹ դարու թուրքիս հայաց գրակա-
նության, Գահերե, 1944, էջ 229 :

¹ ԳԱԹ, Թ. Աղաաթյանի ֆոնդ, № 139, Հ. Ասատուր, Հրատարակագրի
հուշերեն :

Այստեղ է, որ հրատարակվում է Գ. Չոհրապի «Մանութ դեմ-
քերք», Տ. Կամսարահանի «Հարո» և «Հովհուլը» նորավեպերը,
Ա. Չոպանյանի քննադատական հոդվածները և Հրանտ Ասա-
տուրի «Մեր վանքերը» աշխատությունը, «Ռուսումնասիրու-
թյանց պահար մեր նոր գրականություն մեջ», «Մեղուն»
Պարոնյանի խմբագրություն օրով», «Մեր կյանքին» հոդված-
ների շարքը և այլն: Պարբերականը, որի էջերում հրատարակ-
վեցին ժամանակի ամենաառաջագեմ գրողների ու մտավորա-
կանների գործերը, դառնում է Պոլսի հետաքրքիր ու բովան-
դակալից հանդեսներից մեկը, քննելով արևմտահայ գրակա-
նության զարգացման հեռանկարները: «Մասիսը» փորձում
էր լուսարանել գրական կյանքի շարժումները, վեր հանել ար-
վեստի աշխարհի նորույթները, երաժշտության, նկարչության
և արևմտահայ թատրոնի ընթացիկ շարքերը, արժեքավորել
նորահայտ գրական երկերն ու գիտական ուսումնասիրու-
թյունները: Ինչպես 80-ական, այնպես էլ 90-ական թվական-
ներին Ասատուրին գրազեցնող պիսավոր խնդիրները գրակա-
նության հասարակական դերի և ուսուցիչական դպրոցի ու
գրականության արդիականության, գաղափարականության
հարցերն էին: Այս տարիներին էր նաև, որ Ասատուրը համա-
ռորեն և ջանասիրաբար արևմտահայ գրական հասարակա-
յան նույն էր մատուցում իր կողմից մշակված աշխարհա-
բարի քերականության գրույթները, բանավիճում, մերժում
լեզվի ինքնահնար ձևերը՝ պաշտպանելով իր առաջագեմ բմ-
բունումները լեզվի հասարակական դերի վերաբերյալ:

Այդ տարիներին հրատարակած իր քրոնիկներում Ասա-
տուրը քննում էր գրական աշխարհի նորույթները, քանդա-
կում ժամանակակից գրողների փոքրիկ դիմանկարներ (Ա-
զամյան, Մ. Աճեմյան, Հ. Պարոնյան, Ս. Ոսկանյան), հետա-
քրքիր մանրամասնում պատմում իր ծանոթությունը Մերենցի
և Մամուրյանի հետ և այլն: Ազգային, մշակութային կյանքի
հետաքրքրություններով ապրող Ասատուրին մտահոգում էր
գրական այն սերունդի ճակատագիրը, որը հեռացել էր աս-
պարեղից: «Ինչո՞ւ Հիսարյան, Կարապետ Գարազաշ, Հակոբ
Ոսկան, — գրում է նա, — չերգեին նորին և չգրեին նոր տաղեր,

հող չէ թե հին լեզվին գրողը կրեն անոնք և խրթին դաշնա-
կություններ թվին ոմանց. ինչո՞ւ Սրվանձտյանց չը խոսեր
մեզ հայրենի բարբերու վրա, չը պատմեր մեզ հեքիաթներ
մշեցի կամ վանեցի հայ մշակին նկարագրել բարբառովը...
Ինչո՞ւ Հ. Սուքիաս Պարոնյան, Նորայր կամ Մատաթիա Գա-
րազաշյան մեր հին կյանքին ու լեզվին վրա չը գրեին ուսում-
նասիրություններ և իրենց բազմամյա քննությունց արդյունքը
չը հաղորդեին մեզ»:

«Մասիս» հրատարակության ընդհատումից հետո
(1893 թ. օգոստոս) Ասատուրն այլևս չի երևում պարբերա-
կան մամուլի էջերում: 1895—1896 թթ. քաղաքական ծանր
իրադեպերը, որոնք ալեկոծեցին ողջ արևմտահայությունը,
ցրեցին Ա. Արփիարյանի «Հայրենիքի» և «Արևելքի» շուրջը
բոլորված գրողներին ու մտավորականներին: Համիդյան ջար-
դերի և սարսափների ահավոր իրադարձությունները կասեց-
րին դարավերջին տասնամյակի գրական-մշակութային աշ-
խույժ կյանքը, արյան մեջ հեղելով ազգային և մտավոր ինք-
նության արտահայտման ամեն մի փորձ: Մանր ու վտանգա-
նույթյան արտահայտման ամեն մի փորձ: Մանր ու վտանգա-
նույթյան օրհասական վիճակն ու ազգային անհեռանկա-
րությունը մտահոգում էր նրանց՝ ստիպելով ուղիներ որոնել
դուրս գալու համար մտավոր կյանքի այս դժվարին փակու-
ղուց: Գիտակցելով պարբերական մամուլի գործոն դերը հայ
հասարակական կյանքի տարուբերումների այս շրջանում,
Ասատուրը, Չոհրապի և Սիպիլի հետ միասին, 1898 թ. ստանձ-
նում է «Մասիս» վերահրատարակումը:

Գալուստ Տեր-Անդրեասյանը, որը արևմտահայ իրակա-
նության մեջ հայտնի էր 1895 թ. «Հայրենիքում» հրատարա-
կած «ձամբուն երկայնքեն» հոդվածների շարքով, ուր նկարա-
գրում էր իր ուղեորությունը Մուշից—Տրապիզոն՝ հարստաց-
նելով իր հուշերը դավառական կյանքի հարազատ պատկեր-
ներով և տեղագրական ծանոթություններով, ընդգրկվեց պար-
բերականի խմբագրական կազմում, իսկ Արամ Անտոնյանը

1 «Մասիս», 1892, № 3965:

ընտրվեց որպէս օղնական-խմբադիր: «Մասիսին» սկսեցին աշխատակցել դավառի դրեթե բոլոր շնորհալի գրադեաները՝ Թլկատինցին, որն ուղարկեց «Այգիիս փշենին» ուշագրավ դործը, իսկ Ռ. Զարգարյանը, Հովհաննես Գազանճյանը, Ռուբեն Որբերյանը հրատարակեցին գրական-բանասիրական արժեք ունեցող բազմաթիվ հոդվածներ:

Օրաթերթին իրենց մասնակցութիւնը բերին նաև Տիգրան Կամսարականը, Հարություն Մըրմըրյանը, Արտաշես Հարությունյանը, Վահան Մայեղյանը, Միքայել Ծամտունճյանը և «այն բոլոր նորերը, որոնք 20-րդ դարու գրականութեան առաջին քառորդին դիմադրող դրողները պիտի ըլլային»: Այս դրողների ու աշխատակիցների խումբը շարունակեց գրել նաև 1898 թ. Ասատուրի խմբագրութեամբ հրատարակվող «Արևելք» մեջ, հատկապես Տ. Կամսարականը, որն «Անցորդ» ստորագրութեամբ բազմաթիվ հոդվածներ հրատարակեց «Պատիկ ստուսեր» վերնադրով:

Ասատուրի համար գրական-հասարակական գործունեութեան մի նոր ու ետուն շրջան է դառնում «Մասիս» և «Արևելք» հրատարակութեան տարիները: Պարբերականի գրեթե ամեն մի էջում երևում է նրա անունը՝ մեկ իբրև ջրանիկադիր, մեկ իբրև դիմանկարիչ. նա գրում է բազմաթիվ հոդվածներ ամենատարբեր հարցերի ու խնդիրների շուրջ: Այս շրջանում են երևան դալիս նրա գրական-քննադատական և հրապարակախոսական լավագույն հոդվածները. «Աղջկանց վարժարանները», «Չուխալյան», «Կրթական ծրարիր», «Գալուստ Կոստանդյան», «Գրականութեանը թրջահայց մեջ», «Լեզվական խնդիրներ», «Գրական Փոստը», «Հորելյանի մը առթիվ», «Գեղարվեստի ետեան» և ուրիշ շատ հոդվածներ, որոնց ընդհանուր մտահոգութիւնն էր ժողովրդի բարոյական կյանքի առաջադիմութեան միջոցների հայտնաբերումը:

«Մեր կյանքն» խորագիրը կրող ջրանիկները սիրով էին ընդունվում ընթերցող հասարակայնութեան կողմից: Հոդվածի բազմաբնույթ ամփոփումը ծանոթացնում, հաճախ նույնիսկ վերլուծում էր մտավոր-գրական և մշակութային կյանքի նո-

բույթներն ու իրադարձերը, իսկ երբեմն միացնում ամենատարբեր հետաքրքրութիւնների չձուլվող ծայրերը:

1898 թ. Ասատուրը ճանապարհորդում է երկրում. լինում տերութեան հայաշատ դյուղերում ու քաղաքներում՝ գեղանկարչի գրչով պատկերելով դյուղական բնաշխարհը, դյուղական բարձրի ու կենցաղի անարատ զեղեցկութիւնները, գալաուացի հայի ավանդութիւններն ու սովորութիւնները: Նա լինում է նաև իր մանկութեան վայրերում, վերապրում անցած օրերի ու հարազատ միջավայրի անմոռանալի հուշերը: «Հոս օրն քանի մը հետիոտն ու ձիավոր ճամբորդներ, — գրում է նա Պրուսայի շրջանների մասին, — պատիկ դյուղեր, ուր կյանքը բնութեան ծոցի մեջ կսահի՝ աշխարհի նուրբ վայելքներուն և հոգերուն օտար»:

Գսանութ տարի ետ կը դառնամ կյանքիս մեջ, մինչև 1870, ուր եկած և ամիսը մը անցուցած եմ այդ ջերմուկը՝ մանկիկ դեռ: Ինչ խորունկ անջրպետ այդ քառորդ գալը. մտածումներու, դպցումների ինչ անհուն ալլափոխումներ, ինչ պատրանքներ, ինչ հրաշխարհութիւններ անկե ի վեր: Ու կմտածեմ այն ժամերուն զորս հոն անցուցած եմ, անհոգ, անդիտակից կյանքին, խաղալով մարդերուն վրա, ժպտելով ամենուն, հավասարով ամենուն»¹:

Կյանքը, հատկապես 96-ի դեպքերը զգաստացրին նրան, և գործունեութեան մի ներքին թափ հազարդեցին Ասատուր-խմբագրին: 1895 թ. սկսած, նա թողնում է նույնիսկ Ասատուրի փաստարանական գրասենյակը և մինչև 900-ական թվականները ամբողջապես կլանվում գրական-հասարակական ետուն գործունեութեամբ, միշտ մտալով դադարախախտ առաջավոր քննադատ: Դեռևս 1888 թ. Ասատուրը հոգաբարտառում էր ընտրված Պոլսի Կենտրոնական վարժարանում, և մինչև 1896 թ. նա վարում է այդ պաշտոնը մեծ նվիրումով: «Կենտրոնական վարժարանի ամենափայլուն շրջանն էր դա, — գրում է նա այդ տարիների մասին, — և խնամակալութեան մեջ էին նաև Հովսեփ Թուրուֆյանը, Հարություն Նորատունկ-

1 «Մասիս», 1898, № 35:

յանը, Արիկ Ուենճյանը, Մկրտիչ Էսայանը, Հովհաննես Թորոսյանը և Անտոն Հաճյանը»:

Կենտրոնական վարժարանը, որը հիմնադրվել էր 1886 թ., Ներսես Վարժապետյանի ջանքերով, Պոլսի հայ մանուկների Գլխավոր ուսումնալսարան էր և հավասար աստիճանի վրա էր կանգնած մայրաքաղաքի մյուս միջնակարգ դպրոցների հետ, իսկ ուսուցչական-մանկավարժական կազմում կային անուններ, որոնք հեղինակութուններ էին տարբեր բնագավառներում: 1898 թ. Ասատուրը ստանձնում է Կենտրոնական վարժարանի բարձր դասարանի հայ դրահանության և աշխարհարար լեզվի դասավանդումը և տասը տարի անընդմեջ, մինչև Օսմանյան սահմանադրության հռչակումը, դասախոսում վարժարանում: Երկարամյա իր մանկավարժական աշխատանքի ընթացքում Ասատուրը անեցնում է բազմաթիվ ուսումնական արձանագրություններ, ծավալում կրթա-դաստիարակչական հատուկ դործունեություն: «Մենք նորերս մանավանդ, — գրում է նրա սաներից մեկը, — շատ բան կը ստանանք իրենց, Պոլսո միակ աղջկին կրթական բարձրագույն հաստատության մեջ տարիներ ամբողջ իր դրաված բեմը եզով արգարև օգտակար, արդյունավոր ու մանավանդ դաստիարակող բեմ մը»:

1900 թ. մինչև 1908 թ. Ասատուրը միաժամանակ ուսումնական խորհրդի անդամ էր՝ զարգացնելով ինքնուրույն մանկավարժական և կրթադաստիարակչական իր հայացքները: Գլխավորը մանկավարժի համար աշխարհարար լեզվի ուսուցման խնդիրն էր, մայրենի լեզվի տիրապետումը: Այս տեսակետից Ասատուրի մանկավարժական դործունեություն մեջ նշանավոր են տարրական և միջնակարգ դպրոցի համար նրա կազմած «Գործնական քերականության» և «Թանգարանի» դասընթացները:

1899 թ. Օրմանյանն առաջարկում է Ասատուրին խմբադրել 1900 թ. «Աղջկին հիվանդանոցի բնդարձակ օրացույցի» հավելվածը: Ասատուրը, որը ստիպված էր կարճ ժամանակամիջոցում պատրաստել օրացույցի այս բաժինը, հարկազրկված



Սեդիկ ԵՎ ՀՐԱՆՏ ԱՍՏՏՈՒՐ

1 «Հայ խոսնակ», 1924, № 1, էջ 16:

է լինում մասամբ կրճատել իր լսմբադրական դործունեությունը՝ թողնելով այն Տիգրան Արփիարյանի և Արամ Անտոնյանի հոգացությանը: Իսկ երբ 1899 թ. վերջերին Տ. Արփիարյանը բուրբովին հեռանում է «Արևելքից»՝ «Մասիս» շաբաթաթերթը հրատարակելու համար, Ասատուրն էլ 1900-ական թվականների սկզբներին դադարում է պարբերականում հանդես դառնալ՝ «Արևելքի» ողջ հոդան ու ծանուցությունը ընկում է Ա. Անտոնյանի և Չ. Յուսուֆյանի ուսերին:

Երանդով ու խնամքով Ասատուրը պատրաստում է XVIII—XIX դարերի տարեգրությունը՝ փորձելով պատկերել արևմտահայ և արևելահայ մտավորականության մեջ նշանավոր եկեղեցական, դպրոցական, տպագրական երևույթները, գրական դեմքերն ու գեպքերը: Սա հիմք դարձավ նրա «Թուրքիո հայերը և իրենց պատրիարքները» ուսումնասիրության համար: «Պետք է խոստովանել, — գրում է նա, — թե այս աշխատությունը թեև քիչ մը մասնագիտական, մեծ հաճույք պատճառեց ինձի, որովհետև գիտություն մը սորված ըլլալու և սորվածս անմիջապես ընթերցողներուն օգտակար ըրած ըլլալու գիտակցությունը ունեի»:

1901 թ. Ասատուրն ու Սիպիլը ամուսնանում են՝ համատեղելով գրական-մանկավարժական աշխատանքի իրենց նախասիրությունները՝ ավրելով ազդային հասարակական միջավայրի նույն հոդսերով ու հետաքրքրություններով: «Ավելի ներգաշնակ միություն կարելի է երևակայել» — գրում է Տ. Կամսարականը Ասատուրին ուղղված իր նամակում: Այդ տարիներից սկսած Ասատուրը նորից վերադառնում է Ասատյանի փաստաբանական դրասենյակը և ընկերությամբ աշխատում մինչև 1909 թվականը:

1903 թ. Ասատուրին հրավիրում են աշխատակցելու Պոլսի անդլիական դեսպանատան քարտուղար George Young-ի «Corps de droit Ottoman» գործին, ուր նա կատարում է բազմաթիվ թարգմանություններ և գրում ուսումնասիրու-

1 ԳԱԹ, Թ. Ազատյանի ֆոնդ, № 139, Հ. Ասատուր, Հրատարակողին հուշերեն:

թյուններ օսմանյան իրավադիտության վերաբերյալ: 1905 թ. նա հրավիրվում է իրավադիտության դասավանդելու անդլիական դեպարտամենտն և Հյուսիսատոսարանի թարգմանիչներին: Այս առթիվ Ասատուրը գրում է մի քանի ուսումնասիրություններ օսմանյան քաղաքացին դասավարության, առևտրական, հողային, ժառանգական, ծովային և այլ օրենքների վերաբերյալ: Մահձանդրության հուշակումից հետո, 1909 թ. Ասատուրը պետական պաշտոնավարության է կանչվում և բնորոշվում Առևտրական ծովային դատարանի կազմում, իսկ 1910-ին՝ պետական բարձրատիճան պաշտոններ բնորոշ հանձնարում:

1914 թ. ապրիլին Ասատուրը նշանակվում է պետական խորհրդում, իսկ 1915 թվականին՝ ծովային գրավումների վերաբերիչ առյանի անգամ:

Աշխատանքային ծանր պարտականությունները ստիպում են Ասատուրին աստիճանաբար հեռանալ գրական աշխարհից: Դարասկզբի առաջին տասնամյակում, թեև շարունակվում էին հրատարակվել նրա և Սիպիլի կողմից կազմված «Թանգարանները», Հ. Պարոնյանի կյանքն ու գործը ուսումնասիրող մի քանի հոդվածներ, աշխարհաբար լեզվին վերաբերող նյութեր, թարգմանություններ և այլն, բայց զնայով ավելի ու ավելի սակավ էր երևում Ասատուրի անունը պարբերականների էջերում:

Յրգել էր երբեմնի 80-ականների խումբը, Ասատուրին մոտ կանգնած մարդիկ: Արևմտահայ կյանքն ալեկոծող նոր իրադեպերն ու աղբյային կուսակցությունների առաջադրած դադափարները չէին հուզում Ասատուրին: Եվ թվում է, թե հրապարակախոս-գրականադետը սպրում էր միայն անցյալի հուշերով, անցած դեպքերով և միայն 80-ականներին դրադեցնող գրական հարցերով ու խնդիրներով: Ըստ երևույթին, Ասատուրը չցանկացավ ըմբռնել աղբյային գաղափարաբանության նոր բովանդակությունը, գրական շարժման նոր հետաքրքրություններն ու զարգացման ուղղությունը: Սրանով էլ նա ինքնաբերաբար դուրս էր մնում արևմտահայ իրադարձների հորձանքից: Հ. Ասատուրի պակասը, — գրում է Ա. Պատավ-

յանը, — զղալի դարձած է այսօր մեր պոլսահայ գրականության մեջ: Ինք, առանց տարակույսի, հայ աղբյին ավելի մեծ և սրու օգտակարություն մը մատուցած պիտի բլլար, եթե Աղբյային ժողովին համար վստանած ժամանակի մեկ մասը գրականության հատկացներ»¹:

Ասատուրը շուկուրվեց երիտթուրքերի հեղափոխության խանդավառությամբ, նրանց խոստացած ազգային ինքնավարության խոստումներով: Թերևս դա նրանից էր, որ նա բմբրանում էր, կանխազուում դրության խարեությունը ու կեղծությունը՝ մի ներքին տաղնապով սպասելով ծավալվող արյունոտ դեպքերին:

Պաշտոնական ծանր պարտականությունները և մշտապես լարված աշխատանքը, ի վերջո, քայքայում են Ասատուրի առողջությունը, և նա, 1914 թ. ծանր հիվանդանում է և տեղափոխվում Պոլսից ոչ հեռու գտնվող Գնալը կղզին: Ի թիթի-հատների աշխուժացած բարբարոսությունները ցնցում են նրան, որից էլ ավելի է ծանրանում նրա վիճակը: 1919 թ. նա երկրորդ անգամ կաթված է ստանում և մեկընդմիջտ հեռանում Պոլսից՝ կորցրած մտերիմների արյունոտ հուշերն իր ցաված հոգում պահելով: Եվ մինչև 1928 թ., մինչև իր մահը, Ասատուրն ապրում է այտեղ, Գնալը կղզում, հեռու հասարակական և պետական դործունեությունից: Այս տասնամյակում էլ Ասատուրը ամբողջապես նվիրվում է բանասիրությանը՝ գրելով բազմաթիվ հոդվածներ և արժեքավոր ուսումնասիրություններ: Դրանք են՝ «Դիմաստվերներ», «Արևելյան թատրոնի պատմությունը», «Դիվայներ և հուշեր» աշխատությունները և շատ ուրիշ գործեր: Նրա իմաստասիրական բառարանը, գրված այլ շրջանում, սովորաբար մի աշխատություն է, որտեղ հեղինակը խնդիր է ունեցել փիլիսոփայական տերմինները՝ Փրանսերենից հայերեն թարգմանությամբ ու բացատրությամբ, ծանոթացնել հայերին համաշխարհային իմաստասիրական մտքին, XIX դարում այդ բնագավառում ծաղած նոր ուղղություններին, գրանց ծաղման պայմաններ

1 «Գրական և դեղարվեստական հանդես», 1912, № 27, էջ 42:

րին ու պատճառներին: Աղղության մտավոր կյանքում փիլիսոփայական մտքի կարևորությունը հասկանալի էր Ասատուրի համար, որը և տեղ էր բացում զործի ձեռնարկմանը և առանձին հատվածների հրատարակության նախաձեռնմանը¹:

Ասատուրը պատրաստվում էր գրելու «Իրիմաստվենների» երկրորդ մասը, ամբողջացնելու «Իրվազներ և հուշեր» աշխատությունը, ավարտելու «Իրական սեպերը»: «Ընդարձակ տարեցույց», «Նոր լույս», «Հայ կին», «Հայ խոսնակ» և այլ պարբերականներում, 20-ական թվականներին, մեկը մյուսի ետևից լույս են տեսնում նրա հոդվածներն ու տպագրվում առանձին հատվածներ նրա ուսումնասիրություններից: Եսանդուն բանասերի պրպտող միտքը, հակառակ հիվանդ ու տկար մարմնի, գործում էր օր օր գիշեր, և ուկեսրությամբ ու «զմայլելի պայծառությամբ», ինչպես դրում էր Թ. Աղասյան, շարունակում աշխատել՝ ծառայելով հայ մշակույթին և արհամարհելով կյանքի դառնությունները²:

«Իր հոգիին ամենամեծ սերն էր դրականությունը, — դրում է Սիպիլը նրա մասին, — մինչև իր կյանքի վերջին օրերը անով ապրեցավ, անոր նվիրեց իր նվազուն օրերուն բոլոր ժամերը, գիշերն ի բուն գրելով, կարդալով, թարգմանելով: Եվ այնքան վստահություն ուներ իր փափաքները գործադրելու մեր կյանքի նկատմամբ, որ ոչ մեկ կտակ ոչ մեկ կամք...»³:

1 Ըստ կազմության, աշխատանքը բաղկացած է երեք բաժիններից. իմաստասիրական բառեր, գիտական բառեր և գրական բառեր: Ասատուրը նախ տալիս է փիլիսոփայական տերմինի պատմական բացատրությունը, անցյալի փիլիսոփաների ըմբռնումով և հասնում նույնի պարզարանմանը՝ իր օրերի տարրեր և հակառակ սկզբունքներ ունեցող իմաստասիրների ներկայացմամբ: Սա Փրոմսերներից կատարված լուր բառացի թարգմանությունն է: Ասատուրը ընտրել է տերմիններից ամենակարևորները և հանրահայտները: Բացի այդ, տերմինի բացատրությունը սեղմել է ու տվել ավելի մտաշեղի կերպարանք՝ հենվելով բառի փիլիսոփայական և տրամաբանական աղբյուրների վրա: Տրվում է տերմինի պատմական զարգացումը, երանդները:

2 Թ. Աղասյան, Ժամանակակից դեմքեր, Ստամբուլ, 1937, էջ 41—55:

3 ԳԱԹ, Թ. Աղասյանի Փոնդ, № 157, Սիպիլ, Հրանտ Ասատուր:

Համառ աշխատասիրությամբ Ասատուրը փորձում էր մոռանալ իր առապանքը, չհիշել կատարվածը, մխիթարություն գտնել անթիվ ու բազմատեսակ դրականությունների մեջ: «Ներկան մոռնալու համար, — խոստովանում է Ասատուրը, — ամեն ատեն ինքդինքս կը փոխադրեմ անցյալի լավագույն օրերուն մեջ, զորս ապրած եմ և ատիկա կը պարտիմ իմ զորավոր հիշողությունս»:

Թեև Ասատուրը փրկվեց արյունոտ սպանդից, բայց նրա հոգին ընդմիշտ խռովվեց և նա օտարված դրաց իրեն մարդկանցից ու աշխարհից, անընդհատ կրկնելով «Ինչո՞ւ բոլորն ալ ելան գնացին և ինձ պատներես մինակ թողուցին»: «Եվ վիրավորված կարծես անբացատրելի անտեսումից, — գրում է Վահրամ Փափազյանը իր հուշերում, — որին ենթարկվել էր նա, իր բախտակիցներին շնորհված արյունոտ դափնեպսանա, իր բախտակից շողջողուն փառքից, Հրանտն ապրեց իր բակից, նահատակի շողջողուն փառքից, սրգոզած իր ժամանակից, իր ժին հասած մութ տարիները, սրգոզած իր ժամանակից, իր կնոջ՝ Սիպիլի անանուն անձնագրհույսության ու գուրգուրանքի մեջ գտնելով հոգեկան հիվանդի արցունքոտ սփոփանք...»:

Հրանտ Ասատուրը վախճանվում է 1928 թ. հունիսի 5-ին:

1 Թ. Աղասյան, Ժամանակակից դեմքեր, Ստամբուլ, 1937, էջ 51:

2 Վ. Փափազյան, Սրտի պարտքը, Երևան, 1959, էջ 166:

ՀՐԱՊԱՐԱԿԱՆՈՍՐ

1877—78 թթ. ուսու-թուրքական պատերազմը չլուծեց հայկական հարցը: Բեալինի կոնդուստը, որը Սան-Ստեֆանոյի դաշնագրի 16-րդ հոդվածը փոխարինեց 61-րդ հոդվածով, ոչ միայն չպարզեց հայ ժողովրդի քաղաքական ինքնորոշման խնդիրը, այլև դրա լուծումը հանձնելով միջազգային գիվանագիտությանը՝ թողեց անլուծելի և օդից կախված:

90-ական թվականների առաջին տարիներից սկսած Սուլթանական Թուրքիայի քաղաքականությունը հայերի նկատմամբ առավել սրվում է: Վասպուրականում, Էրզրումում, Արշակերտում, Ազանայում տեղի ունեցող կոտորածները, որոնք նպատակ ունեին իրազործելու համիդյան հայաջինջ ծրարները՝ քուրդ զորագնդերի անմիջական օգնությամբ, օրավուր ավելի ու ավելի անտանելի էին դարձնում արևմտահայության առանց այդ էլ ծանր վիճակը: Սրան հաջորդում է Հայաստանի գավառներում մոլեգնող սովը և դաշթականության լայն հոտը դեպի հեռավոր ափեր: «Պարսիկ և Բաղնջի վերլայեթներում տեղի ունեցած այս երկու տարվա սովից, — դրում է Արփիարյանը, — հողարավոր ընտանիքներ գաղթեցին աշխարհիս այլ և այլ կողմեր, թողնելով իրենց սեփական անշարժ կալվածները, հայրենի հողը և բնությունը. շատեր ջրտեն ու քաղցին մեռան, շատերը կորան և գրեթե բոլոր բնակիչները մեծ թշվառությունների և անբախտությունների մատնվեցան»:

Եվ այստեղ էր, որ «ինքնօգնություն» բառը մի առանձին նշանակություն և ուժ էր ձեռք բերում. «Մենք, որ համոզված ենք թե ինքնօգնությամբ պարտինք առաջանալ, ի՞նչ պիտի ընենք», — հարցնում է «Արևելքը»:

Ազգապահպանման դիտակցությունն արդեն դնում էր ժողովրդի հոգևոր դոյություն հաստատման և ամրապնդման խնդիրը. զինվել զարաշլջանի «լուսավորական դենքերով», «գիտություն զորանալ» և, որ ամենակարևորն է, միանալ, կազմել մեկ ամբողջություն՝ ի ցույց աշխարհի ցուցադրելով մեր ազգային-պատմական արժեքները:

«Բարոյական կազդուրման» այս պահանջն էր հենց, որ շնայած սուլթանական պետություն կողմից հետզհետե աճող արհավիրքներին և հայ հասարակական կյանքի սահմանափակումներին (գրաքննություն հաստատում, հայրենասիրական թեմաներով ստեղծադրությունները տպագրման, հայոց պատմության ավանդման արգելում), այնուամենայնիվ առաջադրում էր ժամանակաշրջանի բովանդակությունը կազմող խնդիրներ, նոր տեսանկյունից դիտում կնոջ ազատագրություն, ընտանիքի, դպրոցի և ընկերության հարցերը:

Քաղաքական և տնտեսական արբապետող իրավիճակը խիստ անհանգստացնում էր արևմտահայ մտավորականությունը, քանի որ այդ տարիներին անասելի սեղմվել էին հայ մշակույթի և հասարակական գործունեության շրջանակները: 90-ական թվականների սկզբներին, «Արևելյան մամուլի» խմբագրության հանձնարարությամբ հանդես գալով պարբերականի էջերում, Ասատուրը «Սեթ» ստորագրությամբ գրում է թղթակցություններ՝ մայրաքաղաքի ազգային և գրական խնդիրների շուրջ, հանրագումարի բերելով վերջին տարիների հայ կյանքը, տեղեկություններ տալով հայաբնակ դավառներին, ուսումնական վիճակի և հայ իրականության նշանավոր իրադարձությունները մասին: Հրապարակախոսն այստեղ նկատում է Պոլսի հայ ազգաբնակչության թվի քչացման, ամուսնությունների նվազման մասին, այս ամենը դիտելով

1 «Արևելք», 1894, № 29:
2 ՏՄՍ «Արևելյան մամուլ», 1902, № 21, էջ 909:

որպես տնտեսական ոչ բարենպաստ հարաբերութիւններ արդշունք, միաժամանակ նշելով, որ արեւմտահայութեան կյանքի «այս տխուր երևույթները կարժե որ խորունկ ուսումնասիրութեան մը առարկա ըլլան»¹ :

Հրապարակախոսի հայեցութիւնը թեև չէր խորանում սոցիալական ու ազգային հարցերի քննութեան մեջ, այսուհանդերձ փորձում էր ազդի գործնական միտքը ուղղել տնտեսական, «նյութական կողմին, այն հանդամանքների վրա», որոնք արդեն դրսևորվում էին դարդացող բուրժուական հարաբերութիւններում: Դրա համար հրապարակախոսն առաջարկում էր ծանոթանալ եվրոպական տնտեսադիտական մտքի նվաճումներին ու հասարակական զարգացման ծրագրերին, քանի որ, ըստ նրա, գրանց իմացութեամբ և օգնութեամբ միայն պետք է իրագործվեր աղքատիւնն տնտեսական և մշակութային առաջընթացը:

Փորձելով պարզել նոր սերնդի մտահայեցութիւնը և ուղղութիւնը տալ նրա գործնական նախագծումներին, Ասատուրը խիստ քննադատում է այդ սերնդի «կիսատ կրթութիւնը» և «հավանոտ գրադումները», որոնք խաչընդատում էին հասարակութեան տնտեսական վերաշինութեան ծրագրերի իրագործման նպատակին: Այս առիթով նա գրում է. «Մեր պապերուն պապերը մեզմե ավելի խելացի և գործնական մարդիկ էին, և իրենց ազիտութիւնը շատ մը տեսակետներով այնքան վնասակար չէր ըլլար իրենց, որքան մեր արդի թերատ ուսումնականութիւնը»: Ասատուրը պահանջում էր ստեղծել ոչ միայն զարգացած ու գործունյա կազմեր և պայքարել ամբողջական տնտեսաձևերի դեմ, այլև առաջարկում էր տնտեսական վերակառուցման ավելի կոնկրետ ու գործնական միջոցներ: «Մեր նոր սերունդը պետք չէ բավականանա այն գործերով, — հիշեցնում էր նա, — որոնք դպրոցեն ելլող սոցիալ մտաախպարը կը կազմեն, եթե չուզեր մատուցումի և խրնդրանքի անողոք օրենքին դո՛ւ երթալով անդործ մնալ: Պետք է

չքալած ճամբաներ գտնել, դրամ շահելու նոր ստղարեղներ, ամենեն խոնարհներն ալ շարձամարձելով»: Այս իմաստով, Ասատուրը մեծ կարևորութիւն էր տալիս արհեստներին և առևտրին, որոնք նրա համոզմամբ «երբեմնի հայոց մենաչնորհն էին» եղել:

Դարավերջի արեւմտահայ կյանքը գտնվում էր պատմահասարակական մի այնպիսի ժամանակաշրջանում, երբ ժողովրդի քաղաքական անկախութեան կործանման հուշերը ամուր կառչում էին ազգային փրկութեան հողեր միջոցներից: Բարոյական կյանքի դարդացումը պահանջում էր ուսումնարաններ, կրթութեան առաջադեմ դրվածք, գրականութեան և մամուլի օրգաններ ու լուսամիտ մտավորականութիւն: Մրանք պատմահասարակական նշանակութիւն ունեցող այնպիսի գործոններ էին, առանց որոնց Ասատուրը անիրաւոր չէր համարում առաջադիմութիւնը: Մյուս կողմից՝ հրապարակախոսը քննում և վերլուծում էր հասարակական վերաշինութեան ուղիները, փորձում հայտնաբերել այն խոչընդոտները, որոնք ընկած էին գրականութեան արվեստի և հասարակական կրթութեան զարգացման ճանապարհին: 1887 թվականին գրած «Արդի հայ գրականութիւնն ի թուրքիւ» հոդվածում Ասատուրը նկատում է, որ պատմական այս ժամանակահատվածում հրապարակի վրա չէին երևում այլևս այնպիսի գրողներ ու հասարակական գործիչներ, ինչպիսիք էին Մ. Ոսկանը, Մ. Երենցը, Տեր-Սարգսենցը, Ս. Հեքիմյանը, Հ. Հեյարյանը, Թ. Թերղյանը, Մ. Չերազը, Գ. Չիլինկիրյանը, Գ. Կոստանդյանը և ուրիշներ: Սակավաթիվ էին նոր գրիչները, ստեղծ էին գրական նախկին հետաքրքրութիւններն ու եռանստեղ: «Հայ գրականութեան զարգացման կասումն ի թուրքիւ, — հայտարարում է հրապարակախոսը, — ունի բազմազան պատճառներ, որք կարժեն ուսումնասիրվի»: Առաջինը, որ

1 «Արևելյան մտուր», 1903, № 1, էջ 9:

2 «Արևելք», 1890, № 3972:

1 Նույն տեղում:

2 «Մասիս», 1887, № 3872:

ուսմանը կարևորութունը, Ասատուրը Հանդամանորեն բա-
ցահայտում էր զրա ունեցած նշանակութունը, գրողի հասա-
րակական դերի բարձրացման և գրականության զարգացման
գործում: Այս առումով նա նշում էր Պ. Պոսոլյանի, Մ. Իմինի
և Ս. Շահապիդյանի հոբելյանները, երբ այդ կապակցությամբ
ուսումնասիրվեց և ներկայացվեց վերահիշյալ դեմքերի
գրական-հասարակական գաստակը:

Ազգի մշակութային հարստության ստեղծման ճանապար-
հին հրապարակախոսը հատուկ տեղ էր հատկացնում դրքին՝
գրականությանը: Այս նպատակով էլ նա առաջարկում էր բա-
րեկարգել Ազգային մատենադարանի անմխիթար վիճակը՝
հետևողականորեն լրացնելով գրքերի Փոնդերը: Մատենադա-
րանում պետք է տեղ դնեն հայ ձեռագրերը, բոլոր հայա-
տառ գրքերը՝ սկսած Սաղմոսարանից մինչև վերջին հրատա-
րակութունը, ինչպես նաև օտար լեզուներով հրատարակված
հայագիտական գրականութունը: Բացի այդ, պետք է կազմ-
վեր նաև վանքերում գտնվող ձեռագրերի ցուցակը, միաժա-
մանակ ցարդ հրատարակված հայ գրքի մատենագիտական
ցանկը: Այս տեսակետից Ասատուրը անկատար և թերի էր
համարում մխիթարյան վարդապետի՝ Գ. Զարրհանայանի,
1883 թ. հրատարակած «Հայկական մատենագիտութունը» և
առաջարկում էր ավելի ամբողջական և կատարյալ հրատա-
րակութուն:

Հրապարակախոսը հանգամանորեն քննում էր ազգային
մշակութային կարիքների վերացման միջոցները, պահանջում
չբավարարվել նվիրատվութուններով, այլ նաև զնել անհրա-
ժեշտ գրքերն ու պարբերականները, պահանջվող գումարի
հայթայթման խնդիրը զննելով Արշալյան վարչության և
պատրիարքարանի վրա: «Հայ մատյաններու կատարյալ հա-
վաքածո մ'ունենալ այնքան կարևոր է մեր մատենադրության
համար, որ ինչ գոհողութուն ալ այդ մասին կատարվի քիչ
է»՝ — գրում է նա:

1 «Մասիս», 1892, № 3971:

Ամեն ինչ ենթարկելով ազգային դրականության դար-
գացման նպատակին՝ Ասատուրն առաջարկում էր գրական
մրցանակ սահմանել լավագույն վեպի, քերթվածի և դիպուկ
քննադատության համար՝ բոլոր այն ճյուղերի վրա, — գրում
է նա, — որոնք ճշմարիտ գրականութունը կը ներկայացնեն,
ինչպես նաև ընկերաբանական, տնտեսագիտական երկերը,
որոնք այնքան կակն կարևորութուն ունին ժողովրդի ա-
ռօրյա կյանքին և գործունեության համար»¹:

Բոլոր դեպքերում այս առաջարկների ընդհանուր միտումը
ուղղված էր արևմտահայ մշակութային կյանքի առաջխա-
ղացման նպատակին: Այստեղ հրապարակախոսին օրինակ
էին ծառայում արևելահայ իրականության մեջ գործող նման
կարգի հիմնարկութուններն ու ընկերութունները՝ Արտվյան-
նապարյան դրական Փոնդը, Թեֆլիսի հայոց հրատարակչա-
կան ընկերութունը և այլն²:

Մտավոր-հասարակական շարժման մյուս կարևոր գոր-
ծոնը Ասատուրը մամուլն էր համարում: Բազմիցս անդրա-
դառնալով լրագրի դերի ու նշանակության հարցերին, Ա-
սատուրը գաղափարական ուրույն հազեցվածութուն էր թե-
լադրում ամենօրյա մամուլի օրգաններին՝ ելնելով ժողովրդի
առաջադիմության և ազգային-դրական իրավիճակի մտահո-
գություններից: Հատկապես մի այնպիսի իրականության մեջ,
ինչպիսին արևմտահայ իրականութունն էր, մամուլն համա-
կողմանի դեր ուներ կատարելու՝ թափանցելով կյանքի ետ-
նախորդները, արտացոլելով ժողովրդի մտորումներն ու պա-
հանջները: Մրանով էլ այն մերձենում էր կյանքին, վերլուծում
և առաջադրում խնդիրներ, որոնք կենսական նշանակութուն
ունենին ժողովրդի համար: Ծոշափվող հարցերի կենսականու-
թյամբ էլ Հենց Ասատուրը որոշում էր սվյալ պարբերականի
դադարաբանութունը և քննադատում այն պարբերական-
ները, որոնք, անձնական նկատառումներից ելնելով, չեն նը-
պատում հասարակական մտքի առաջընթացին, չեն ծառա-

1 «Մասիս», 1898, № 17:

2 «Արևելի», 1899, № 3978:

յում հանրօգուտ նպատակները: «Կուսակցական ոգին, իր բոլոր անիրավություններովը և չարություններովը կը տիրե անոնց մեջ, հաճախ արժանիքներ կոխտակելով և ոչնչություններ փաստարանելով», — գրում է նա «Լրագրողի կոչումը» հոդվածում: Մինչդեռ պարբերական հրատարակություններն են, որ հետագայում վավերագրական աղբյուր պետք է դառնան պատմության համար: Սրանք պետք է յուսարանեն անցած տասնամյակների մեր հասարակական, տնտեսական և մտավոր իրադրությունը:

Գրա փոխարեն, անցյալի հայ մամուլի էջերում, բացառությամբ Սվաճյանի «Մեղու»-ի և Պարոնյանի «Թատրոն»-ի, որոնց մեջ հարադատորեն արտացոլվել են իրական կյանքի երևույթները, Ասատուրը մտքի զարմանալի աղբատուլյուն է տեսնում, «սիքուսույց ճամարտակություններ», որտեղ միանգամայն բացառվում էր գրական-հասարակական կյանքի հետ առնչություն ունեցող խնդիրների շոշափումը: «Նկեղեցականի, թաղականի, հոգարարձուի, վարժապետի պայքարներն են որ առաջին տեղ կը գրավեն և ծնունդ կու տան հախուռն հոդվածներու, որոնք զեթ սրամտությամբ դրված ըլլալու արդարացումն ալ չունին», — նկատում է նա:

Ժամանակներն այժմ փոխվել էին: Զարգացած և պահանջկոտ նոր սերունդը իր մտավոր պետքերին դոհացում էր պահանջում, ժամանակակից քաղաքակրթության երևույթների յուսարանում, բարձրի ուսումնասիրություն և հետամնացության ու նախապաշարունակների քննադատություն: «Ժողովրդին և գրականության դորդացման ծառայել» — այս էր լինելու նոր լրագրության ջանքը: Իսկ դա իրագործելու համար հրապարակախոսը առաջադրում էր «ուղղամիտ» քննադատության պահանջը, որը պետք է պայքարի դուրս գար հոգևոր-ազգային հետամնացության ու սրանց համապատասխանող մտածողության ձևերի դեմ: «Ամեն անկեղծ գիտողություն իր օգուտը ունի», — գրում է Ասատուրը, — նույնիսկ երբ ցավ պատճառելու

հանգամանք ունենա... — ուստի եղբակացնում է հրապարակախոսը, — քննադատությունները որքան ալ սուր ու խիստ, պետք է վերավորեն զմեզ, բավական է որ անկեղծության շեշտը և օգտակար ըլլալու ձգտումը դանեա անոնց մեջ:

Յտվոք, այդպես էլ հայ իրականության մեջ: Ասատուրը նկատում է, որ բավական է հանրային կամ թաղային գործերում մտանանիչ արվեն թերություններ, որպեսզի աղմուկ և դժգոհություններ բարձրանան հակառակ կողմում. «Պետք է վերացնել մեր տոհմային բարձրեն այս անտեղի նկատումները, որոնք տկար նկարագիր ունեցող մարդոց հատկանիշներ են», — պահանջում է նա:

Պարբերականների հասարակական դերի և բովանդակության խնդիրներից զատ Ասատուրը անդրադարձել է նաև արևմտահայ մամուլի պատմության հարցերին: «Հիսուն տարի առաջ թրքահայ մամուլը Կ. Պոլսո և Իդիբի մեջ» և «Մեր կյանքեն» հոդվածներում, «Արևելյան մամուլում» հրատարակվող թղթակցություններում ներկայացվում էին արևմտահայ մամուլի օրգաններն իրենց բովանդակությամբ, հարցադրումներով, կյանքի նկատմամբ ունեցած հայացքներով ու պահանջներով: Հանդես էին գալիս Դ. Պալղաղարյանի «Արշալույս Արարատյանը», Կ. Ութուճյանի «Մասիսը», Մ. Մամուրյանի «Արևելյան մամուլը», Կ. Փանոսյանի «Մանդուխի էֆրիարը», Գ. Ալեաթճյանի «Պեղասյան թուչնիկը», Ե. Տեմիրճիպաչյանի «Երկրադունդը» և «Գրական իմաստասիրական շարժումը», Հ. Ալաճաճյանի «Փունջը», Օ. Խոճասարյանի «Օրագիրը», Ն. Թյուլպենտճյանի «Լրագիրը», Հ. Պարոնյանի «Թատրոնը» և բազմաթիվ այլ անուններ, որոնցից յուրաքանչյուրի բովանդակության և ուղղության հարցերը քննելիս, Ասատուրը փորձում է հայտարարել հասարակական այն կովանները, որոնք, ըստ էության, ձևավորում էին սովալ պարբերականի դադափարական հայեցողությունը: Հրապարակախոսը հետաքրքիր տեղեկություններ է հաղորդում խմբա-

1 «Արևելք», 1898, № 3855:

2 Նույն տեղում:

1 «Մասիս», 1898, № 9:

2 Նույն տեղում:

դիրներ Կ. Փանոսյանի, Ե. Տեմիրճիազյանի, Բ. Քեչյանի, Ղ. Պալղազարյանի, Հ. Պարոնյանի, Կ. Ութուճյանի, Հ. Վարդանյանի մասին՝ ներկայացնելով նրանց ազգային-հասարակական դործունեությունը և գրական նախասիրությունները: Ուշադրով են նաև արևմտահայ առաջին լրագրող Գևորգ Գրիգորյանի մասին հրատարակության հաղորդած տվյալները, որը 1882 թ. Պոլսում հրատարակել է «Լրս գիր» թերթը՝ Ասատուրը առանձնահատուկ գործանքով է գրում ուսուցիչ Բ. Քեչյանի մասին, երբ նա, 70-ական թվականների վերջերից Ութուճյանի «Մասիս» օգնական-խմբագիրն էր, 1884-ից՝ «Արևելք», իսկ 1896-ից՝ «Բյուզանդիոնի» խմբագիրը: Ասատուրը վեր է հանում արևմտահայ այդ անվանի դործչի 50-ամյա ազգային-հասարակական դործունեությունը, մատնանշում նրա դործնական գաղափարների կարևորությունը Հայ ժողովրդի տնտեսական և մտավոր կյանքի սլորաններում:

* * *

Հոգևոր մշակույթի բնագավառում դարավերջի տասնամյակներին գաղափարական մի ուրույն նշանադիժ էր արտահայտվում, որը բարոյական և հոգևոր կրթություն պահանջները քննում էր սոցիալ-փիլիսոփայական և հասարակագիտական մտայնության տեսանկյուններից: «Ձարգացնել ինքնաճանաչությունը, ցուցնել թե բոլոր թերությունները կուզան գիտակցություն չգոյութենեն, զգացնել թե փրկություն մեծագույն լծակը բարոյական կրթությունն է՝ զոր լուրջ հիմերու վրա հաստատված զպրոցը և ուսումնասիրությունը ու խանգով շինված գրականությունը միայն կրնան տալ մեզի, հարստացնել Հայ միտքը՝ մաքուր, կենսայիր, դեղեցիկ տարբերով», — գրում էր Ա. Չոպանյանը՝ իսկ զրա համար հարկավոր էր դուրս գալ հետամնաց ու ազետ մտածողություն ձևերի ու դրանք սաստարող ազգային հաստատու-

1 «Արևելք», 1898, № 3873:

2 «Նսահա», 1898, № 1, էջ 5:

թյունների դեմ, պետք էր քննել, ուսումնասիրել շրջապատող միջավայրը և կրթությունը պատշաճեցնել ազգային պետքերին ու պահանջներին: Լուսավորական գաղափարաբանությունը, որն այժմ յուրացրել էր ավելի իրական ու գործնական բովանդակություն, առաջընթաց քայլեր էր անում ժողովրդի բարոյական կյանքի առաջագիժություն խնդիրը լուծելու ուղղությամբ: «Ազգային փրկություն ամեն ծրագիր, — հայտաբարում էր «Մասիսը», — ավելի կամ նվազ տարբերություններով էր հետևողական դատողարարված է, եթե ազգային անհատից կրթական բարձրագույն փիճակն յուրեանց հիմ չունենա: ... Մենք Հայերս, որևէ կերպով չեմք կարող մեր ապագան բարվոքել, եթե ներկային մեջ փուլթ տարած չլինեմք մեր կրթական վեճակը բարվոքելու, թե զլխավոր քաղաքաց և թե գյուղորբից Հայ ժողովրդյան մեջ լույս ծագալելու: ...»: Անշուշտ, այս հարցում մեծ դեր էր հատկացվում զպրոցներին՝ այստեղ մշակվող կրթական սիստեմի, կանոնադրություն ու դաստիարակություն հանգամանքներին:

80-ական թվականների կեսերից արևմտահայ իրականության մեջ զբաղվում են մանկավարժական դործի ուսումնասիրման հարցերով: Գիտական աշխարհն ընդունել էր արդեն զրա կարևորությունը և բոլոր կրթական հաստատությունները հետաքրքրվում էին այդ հարցով: Տրվում էր մանկավարժությունը զիտական սահմանումը, ուսումնասիրվում էր նրա, որպես դիտություն, առնչակցությունները հոգևորության և փիլիսոփայական նորմերի հետ: Մանկավարժությունը, որպես դիտություն մի առանձին բնադավառ, առաջմղիչ և կարևոր խթան էր դիտվում կրթության դերի նշանակություն մեծացման դործում՝ կապվելով ազգային վերածննդի հեռանկարներ խոստացող լուսավորություն հետ:

Դարավերջի տասնամյակներին արևմտահայ մանկավարժական միտքը գնում էր հատկապես ուսուցման սիստեմի և դաստիարակություն դիտական հիմքերի որոնման խնդիրը: Հարցն այնքան կարևոր էր, որ զբաղեցնում էր ոչ միայն ման-

1 «Մասիս», 1881, № 2794:

կազմարձներին, այլև հրատարակախոսներին ու ռեալիստ գրողներին: Մամուլի էջերում առաջ էին քաշվում կրթության և դաստիարակության մեթոդների, ուսումնական ծրագրերի, դասագրքերի, օտար լեզուների դասավանդման, մանկավարժական կադրերի պատրաստման և բազմաթիվ այլ հարցերի վերաբերող խնդիրներ: Պատմա-հասարակական նոր պայմանները և առաջավոր մտավորականության պահանջները հիմնավոր փոփոխություններ էին պահանջում այս սուպրեզում և գրական ու հասարակական նորոգյա խնդիրներին համապատասխան՝ մշակում մանկավարժական դեմոկրատական սկզբունքներ և զբաղված: «Մեր կրթական բոլոր դրուժյունը բարձրժաման կարող է, վերեն ի վար փոփոխության ու շրջամի...», — գրում է Գ. Չուրապը «Մասխում»: Դրա համար հետազոտվում էին ոչ միայն արևելահայ դպրոցն ու մանկավարժական միտքը, այլև եվրոպական մանկավարժների հայացքներն ու կրթության սխեմներ: Այդ մասին հրատարակվում են նույնիսկ առանձին ուսումնասիրություններ:

1876 թ. հրատարակվում է Մ. Չուրապի «Ազգային դաստիարակությունը», որտեղ հեղինակն արձարձում էր գլխավորապես ազգային դաստիարակության համար սկզբունքային նշանակություն ունեցող աշխարհաբար լեզվի դասավանդման հույժ կարևոր խնդիրը: Իսկ արևմտահայ նշանավոր մանկավարժ Ռ. Պերպիլյանը իր «Մարդիկ և իրք» (1884), ապա «Դաստիարակի մը խոսքերը» (1901) և «Դպրոց և դպրություն» (1907) աշխատություններում քննադատելով ավանդապահ և դողմատիկ ուսուցումը, մանկավարժական առաջավոր ընկերունքների մի ամբողջական սխեմ էր մշակում՝ ուսումնասիրելով կրթության ու դաստիարակության հոգեբանական և փիլիսոփայական հիմքերը:

Գրական ասպարեզ մտնելու առաջին տարիներից Ասատուրի ուշադրության կենտրոնում են եղել ազգային կրթության և տոհմիկ դաստիարակության զարգացման հարցերը: Նա «Արևելքում» գրում է Փարիզի Մուրադյան և Պուսի դե-

ղարվեստական վարժարանների, տեղի ուսանողների առաջադիմության, նախակրթական վարժարանների քննությունների, կրթական գործի արդյունքների, տարեվերջյան քննությունների, հանդեսների և շատ հարցերի շուրջ:

Հանդես դառնալով պարբերական մամուլի էջերում, Ասատուրը բարձրացնում էր արևմտահայ դպրոցի դասավանդման սկզբունքները, կրթական ծրագրի մշակման ու ինքնաշարժման, մանկավարժական կադրերի պատրաստման վերաբերյալ խնդիրներ, հրատարակում դասագրքեր ու մշակում դպրոցական կանոններ: Ամենակարևորը, որը նա դնում էր հայ ժողովրդի իմացական և հողևոր աշխարհի զարգացման հիմքում, դպրոցն էր, որը հրատարակախոսը ազգային կրթության և տոհմիկ դաստիարակության օջախ էր համարում: Արևմտահայ դպրոցներում իշխող կրթական և դասավանդման ցածր մակարդակը չէր բավարարում Ասատուր-մանկավարժի պահանջները, և նա առաջ էր քաշում կրթական սխեմներ արմատապես վերակառուցելու խնդիրը՝ հօգուտ դեմոկրատական խավերի և հատկապես զավառահայ բնակչության:

80-ական թվականների վերջում և 90-ական թվականների սկզբներին զբվում էր դավառի կրթության հարցը: Բուն Հայաստանի, տերություն արևելյան խորքերի հայ ազգաբնակչության վիճակի անտեսական և կրթության բարելավման հարցերը դրսևում էին մտավորականության ուշադրությունը, որը ձեռնամուխ էր լինում այդ հարցերի լուծման մեջոցների և ուղիների որոնման խնդրին: Գավառական դպրոցների ուսումնակրթական կարգը քննության առարկա էր դառնում, դավառահայի թշվառ ու անօղնական վիճակը բացատրվում էր արևմտահայ կյանքի պահանջներին բնդառաջող դպրոց չլինելու պատճառներով: «Տեղական ավելորդապաշտությունները, — գրում էր «Մասխում» — նախապաշարումները, ժողովրդի բնազանցությունը չի կրնար գիտական մեթոդով մը վերլուծել, որպեսզի աշակերտին մեջ ուսումնասիրելու կարողությունը զարգանա: Վերջապես չի կրնար դիտել սայ տերողությունը զարգանա: Վերջապես չի կրնար դիտել տարամադրողացի ժողովրդին մտավորական ու հողեկան տրամադրությունները, որպեսզի սրե աշակերտին մեջ քննադատելու և

1 «Մասխում» 1893, № 3996:

հետևաբար սահմանափակ զաղափարներն դուրս ելնելու կարողութիւնները»¹։ Եթե մայրաքաղաքի ազգային վարժարանների վիճակով շատ թե քիչ չափով գրադպում էին պոլսահայ մամուլն ու ուսումնական խորհուրդը, ապա, սրան հակառակ, զավաստահայ դպրոցը ամենևին գուրկ էր ամեն մի օժանդակութիւնից ու հսկողութիւնից։ Աստուրը ցավով էր նշում, որ պոլսահայ բնակչութիւնն ու ժողովուրդը ամենևին տեղյակ չեն դաժառնների հայ աղաքանակչութեան կրթական վիճակին։ Դու մի խնդիր էր, որը պետք է հուզեր և զրազեցներ Ռուսումնական խորհրդին, որը պարտավոր էր կարգավորել և ղեկավարել զավաստահայ կրթարանները։ Դրա համար Ասատուրն առաջարկում էր, որ դավառի հայկական դպրոցների հողաբարձութիւնը կամ տեսչութիւնը հաշվետու դառնա Պոսի ազգային վարժարանների Ռուսումնական խորհրդին. «Ահա գործելու նոր ասպարեզ մը, — դրում է նա, — մեր Ռուսումնական խորհրդի համար, և, հավատացե՛ք հողաբ անգամ ավելի կարեւոր և օգտակար քան վարժապետանոցի հիմնադրութեան պէս մեծազորով խնդիրներ, որոնք դժբախտաբար զատապարտված են մեռելածին արդյունքներու»²։

Ասատուրը համոզված էր, որ քաղաքներում և կայսրութեան հայաշատ կենտրոններում առաջավոր և կայուն հիմքերի վրա ստեղծված դպրոցը մեծ խթան պետք է դառնար ազգային քաղաքակրթութեան ու լուսավորութեան առաջընթացին։ Իսկ սա արդեն նրա դավանած «կրթութիւնն է, որ փրկութիւն պիտի տա մեր ազգին» լուսավորական պոստդամի ամենակարեւոր խնդիրն էր, որը պետք է նոր բովանդակութիւն և թափ հաղորդեր ազգային-կրթական գործին։ Քաղաքական-հասարակական կյանքի նման պայմաններում չպետք է ոչինչ խնայել ազգին նյութական և բարոյական օգնութիւն ցույց տալու համար, «մանավանդ մի այնպիսի ժամանակի մեջ, — դրում էր նա, — ուր ամեն ատենն ավելի կը զգացվի այն կարեւորութիւնը՝ զոր պիտութիւնն ունի մեզ համար և այն

1 «Մասիս», 1897, № 174:

2 «Մասիս», 1898, № 136:

մեծ գերը՝ զոր կը կատարե զաստիարակութիւնն մի սարուկ ազգի ճակատագրին մեջ»³։

Կրթական խնդիրների դործնական իրագործման հարցերում Ասատուրը մեծ հույսեր էր կապում նաև այդ նպատակներով կազմակերպվող ընկերութիւնների հետ։ Այս առթիվ նա ողջունում է Տարսնում, Վասպուրականում և Կիլիկիայում կազմակերպված «Արարապան», «Դպրոցատեր-արեւելյան», ինչպես նաև «Կիլիկյան» ընկերութիւնները, «որք կը դան կրթութիւնն սփռել անդ և նոր կյանք ավետել անհույս Հաստանցիին»⁴։

Հայ դպրոցներին օգնելու Ասատուրի ջանքերն այնքան ետանդուն էին, որ նա շրջում է հայկական գյուղերում ու գաղտնիքում, լինում Խարբերգում, այցելում Պրուսա, Պարտիզակ, լինում Նիկոմեդիայում, ծանոթանում տեղի վարժարաններին։ Սմեմուր նյութական աննպաստ պայմաններ, աչքաթող արված վարժարաններ... Հանդամանքն ավելի վհատեցուցիչ էր հատկապես այն տեսակետից, որ դավառի անմխիթար դրսերոցների կողքին բաղձանում էին բարեկարգ միսիոներական կրթական հաստատութիւններ, ուր հաճախում էին քաղաքական մեծ թվով հայ մանուկներ՝ ստանալով օտար կրթութիւն և դաստիարակութիւն։ Եվ Ասատուրն այստեղ, որպես «հավիտենական դանդաղ», բարձրացնում է հայ մանուկների՝ ոչ հայկական վարժարաններում ուսանելու խնդիրը։ Ինչո՞ւ ծնողները գերադասում են օտար ուսուցումը, ինչո՞ւ այն նախընտրում են հայկականից։ Ասատուրը հանդամանորեն ջննում է հարցը և նկատում հետևանքները։ Այս առթիվ հանդես գալով բազմաթիվ հոդվածներով՝ «Աղջկանց վարժարանները» («Մասիս», 1898, № 3), «Մայրենի լեզվի դեմ» («Արեւիկը», 1898, № 3780), «Օտար վարժուհիներ» («Մասիս», 1898, № 88) և այլն, նա հրապարակախոսորեն դատապարտում է ազգային-հասարակական կյանքում արժատափորվող այս երևույթը և արդար զայրույթով այն ներկայացնում հանրային պարսավանքի։

1 «Մասիս», 1879, № 2164:

2 Նույն տեղում:

«Ամեն ազգ իրեն հատուկ ազդեցութեամբ եղանակ մը և անոր համեմատական դաստիարակութիւն մը ունի, — գրում է նա, — մենք ալ պետք է մերը ունենանք: Անդիւրացվոց դաստիարակութիւնը իրենց ազդին և երկրին համար սքանչելի, բայց ապարդշուն և նույնիսկ վնասակար է մերինն համար, ինչպէս Փրանսացիինը, գերմանացիինը»: Դա «բարեխոյնյան կրթութիւնն» է, որ տարածվում է արևմտահայ շրջաններում: Մինչդեռ պետք է կրթել այնպիսի մանուկներ, որոնք սիրեն հայ կյանքը, հայ վանքն ու բարքը. որոնով է միայն հնարավոր պահպանել «մեր սոհմային նկարագիրը»: Եւ տեղով ազգային ավանդույթների պահպանման և սոհմիկ դաստիարակութեան զարգացման անհրաժեշտութիւնը, Ասատուրը կասկածի տակ է դնում օտար կրթութեան տեր անձանց աշխարհաքաղաքացիական պատկանելիութիւնը. «Այսպիսիք, հայ մտավոր և դրական կյանքին վրա այնչափ բան միայն գիտեն որչափ մենք գիտենք Կուադեմալայի կամ Գուինդեանտի բնակիչներուն գրական կամ կրթական վիճակի վրա»:

«Անոնք դիտական հարեանցի տեղեկութիւններով միայն կը մանեն հայ ընկերութեան մեջ, ուր պիտի ապրին, առանց ճանաչելու իրենց սոհմին անցյալը, կյանքը և շատ անգամ լեզուն ալ»:

Նոր սերնդի կրթութեանն ու դաստիարակութեանը ոչ միայն իր բնույթով պետք է լինի ազգային, այլև պետք է հիմնված լինի մտավոր-դիտակցական կրթութեան առաջավոր սկզբունքների վրա: 80—90-ական թվականների ազգային զագափաբարանութեան պահանջները կրթութեան հարցերը քննելիս, քննադատական կողմնորոշում էին ցուցաբերում դաստիարակութեան և ուսուցման համեմտի ձևերի և առարկաների նկատմամբ: Գործնական վերափոխման պահանջներն առաջարկում էին աշակերտներին դուրս բերել «բանաստեղծական ու վերացական հիմնուղ դադարարներու», «մտավոր մանկութեան» այն ոլորտներից, որի մեջ քարացել էր արևմտահայ

դպրոցը տասնամյակներ ի վեր: Պոլսում և զավատներում գործող դպրոցները, արևմտահայ ազգային մարմինները՝ Պատրիարքարանի և Ուսումնական խորհրդի անփութութեան հետևանքով զանվում էին անմխիթար վիճակում: Դպրոցներում կիրառվում էին այնպիսի մանկավարժական մեթոդներ, որոնք խիստ աղղում էին աշակերտի մտավոր զարգացման վրա, սահմանափակում նրա մտահորիզոնը և կաշկանդում միտքն ու արամարանութիւնը:

Ութ-տաս արեկան մանուկին կրոնի վարդապետութեան ուսանելը, — գրում է Ասատուրը, — ոչ միայն «անտեղի է... վնասակար», այլև «աններելի արարք մըն է», հատկապես, վերջին ժամանակներում, երբ եռանդագին աշխատանք է տարվում աշակերտի իմացականութեանը մատչելի դարձնելու ավանդվող առարկաները, երբ մանկավարժական նոր բակը բունքների համաձայն, բազմաթիվ դյուրուսույց դասադրքեր են հրատարակվում: Ասատուրն ամենին դեմ չէ կրոնի դասավանդմանը դպրոցներում: Մնդիրն այն է, որ նա վաղ էր համարում քրիստոնեութեան ուսուցումը ցածր դասարաններում, իսկ բարձր դասարանների համար առաջարկում է սովելի հանրամատչելի ձեռնարկի պատրաստումը: Այս առումով նա շատ հարմար է դիտում գեռես հիսուն տարի առաջ Նիկ. Զորայանի գրած «Վարք Հիսուսի» գիրքը (1849), որը ժամանակին խոտիվ արգելվեց և այրվեց պատրիարքարանի կողմից:

Քննադատելով կրթական ծրարները, Ասատուր-մանկավարժը գտնում էր, որ խիստ կարևոր էր մայրենի լեզվի և գրականութեան տիրապետող մեթոդների ու ընդհանուր վիճակի վերանայումը: Դպրոցական ուսուցման գործում նա անհրաժեշտ է համարում յուրաքանչյուր առարկայի ձևական և գործնական նշանակութեան բացահայտումը և առարկայի ծավալի սահմանումը ըստ աշակերտների տարիքային առանձնահատկութեան: Նա խելամիտ չի համարում տարրական նախակրթարաններում գրաբարի քերականութեան դասավանդումը: Ամենից ծայրահեղ գրաբարամոլները տեղի տվեցին իրականութեան առջև, դրում է նա, իսկ գրաբար գրելու հավանութիւնը «գարձալ մեծաստանների» առանձնաշորհը

1 «Մասիս», 1898, № 3:

2 «Արևիկ», 1898, № 3780:

3 «Մասիս», 1898, № 3:

միայն: Բայց, ցավոք, նկատում է Ասատուրը, դեռ կան մը-
տածողներ, որոնք կարծում են՝ առանց գրաբարի քերականու-
թյուն գիտենալու մարդ չի կարող աշխարհաբար դրել, թե հին
լեզվի օրենքները սովորելով է միայն մարդ կարողանում նոր
լեզվին տիրապետել: Ահա այս սխալ համոզումն է, որի դեմ
նա հարկ է համարում ձայն բարձրացնել: Իրականում, հա-
մոզված պնդում է նա, աշխարհաբար գրելու համար, գրա-
բարի քերականությունը օգտակար լինել չի կարող դպրոցա-
կան երեխաների համար, որովհետև մատղաշ մտքերում
ստեղծվում է բարեխոսյան խառնուրդ՝ գրաբար հոլովումների,
խոնարհումների և քերականական այլ ձևերի միջև: Այդ տա-
րիքում երեխան պետք ունի նոր գաղափարներով մշակելու իր
միտքը, տիրապետելու այն նախնական ծանոթություններին
և ուսանելու այն լեզուն, որոնք անհրաժեշտ են իրեն կյան-
քում: «Տարրական նախակրթարանն էլլող տղա մը պետք է
լավ գիտնա աշխարհաբարը. ահա ստոր միայն ձգտելու է
կրթական ծրագիրը», — հայտարարում է նա: Գրաբարի
դասավանդումը Ասատուրը հարմար է դնում բարձր դասա-
րաններում՝ պահանջ, որը գեռես 1876 թ. Մ. Ձերագր սուս-
ջադրում էր իր «Ազգային դաստիարակության» մեջ: Առա-
ջադիմության ձգտումը Ասատուրի մոտ երևան էր բերում
դորձնական առաջարկների մի ծրագիր: Ազգային կենտրո-
նական վարչության առաջարկությամբ Ասատուրը կազմում է
Ուսումնական խորհրդի նոր ծրագիր-նախագիծը, որտեղ նա
մեծ ուշադրություն է դարձնում դասացուցակի, աշակերտների
ստույգական պայմանների և հնարավոր այլ բարեփոխումների
վրա:

Հետևելով եվրոպական մանկավարժության առաջավոր
մեթոդներին, Ասատուրը ընդգիմանում է արևմտահայ դրու-
րացիների սխոլաստիկ սղուն, նրա որդեգրած քարացած քո-
կլըրունքներին և առաջ է քաշում աշակերտների Փիզիկական
դաստիարակության, դպրոցական ծրագրում երգի ու պարի
դասավանդման անհրաժեշտության խնդիրը: Մյուս կողմից

Ասատուրը գտնում էր, որ հանրակրթական ընդհանուր պատ-
շատականությունից բացի, ուսուցումը աշակերտի մոտ պետք
է դարդացնի գործնական աշխատանքի ունակություններ,
զինի նրան փաստական գիտելիքների պաշարով: Մինչդեռ,
ազգային վարժարաններից դուրս եկող նոր սերունդը զրկված
էր իր ստացած կրթությունը օգտագործելու հնարավորությու-
նից, որովհետև այդ կրթությունն կոչվածը չէր նախատեսված
կյանքում գործադրվելու կոնկրետ նպատակների համար: «Մինչ
օգուտ այնքան հողաբարձունք, տնօրեններ, ուսուցիչներ,
այնքան զպրոցական շենքեր, ծախքեր, երբ այս ողորմելի
արդյունքին կը հասնինք», — մտահոլ դրում է նա: Ո՞րն է
այդ դեպքում ուսուցման ողջ նպատակը, եթե ոչ պատրաստել
անհատներ, որոնք կյանքի պայքարում ամեն բանից առաջ
իրենց դոյությունը կապահովեն: Ո՞վ է պատասխանատուն,
հարցնում է նա: Եթե այստեղ գեր ունեն միջավայրի սահմա-
նափակությունը ու բարքերի հետամնացությունը, ապա
«աներկբայ սրված կրթությունը» Ասատուրի համոզմամբ,
չարիքի զլխավոր աղբյուրն է:

«Աշակերտներուն մտքին մշակությունը, — դրում է նա, —
վնասակար հետևանքներ կունենա, երբ սխալ կը մնա ան-
մշակ, երբ անիկա վարժարանն դուրս կելլն անգիտակից այն
կոչման դոր ունի իբր ընտանիքի զավակ, իբր քաղաքացի,
իբր մարդ: Այդ կետին ահա պետք է ձգտինք հարատև, այդ
պետք է ըլլա մեր դաստիարակներուն մտատիպաբը, երբ
իրենց կը հանձնվի ամբողջ սերունդներու ճակատագիրը»:
Այստեղ արդեն մեծ դեր ունեւ կատարելու ուսուցիչը, որին
հանձնարարվում էր սերնդի մտավոր և հոգևոր դաստիարա-
կությունը: Իրվատելով ուսուցչի բարձր կոչումը, Ասատուրը,
միաժամանակ նկատում է, որ, այնուամենայնիվ, սակավա-
թիվ են այն ուսուցիչները, որոնք օժտված են իսկական ման-
կավարժի բարոյական և զիտական բարեմասնություններով:
Անտեղյակ ժամանակի առաջադրած մանկավարժության գի-

1 «Մասիս», 1898, № 52:

1 «Արևիկ», 1898, № 3861:

2 Նույն տեղում:

դակտիկ պահանջներին, սրանցից շատերը չունեն կրթական և մեթոդական անհրաժեշտ պատրաստականություն և խարխափում են տղիտուլթյան ու հետամնացութեան մեջ: Այդ նպատակով Ասատուրն առաջարկում է «ուսյալ դասատուներ» պատրաստելու գործը, որը «ընդհանուր և մասնավոր մեթոդիկ» սկզբունքներով պետք է դիտական նոր աստիճանի բարձրացնել մանկավարժական գիտություններն ու կրթական խնդիրները՝ արևմտահայ շրջաններում:

Ուսուցիչներին կատարած շնորհակալ և դժվարին աշխատանքի և ստացած վարձատրություն հարցերը շոշափելիս, Ասատուրին մտահոգում է դասատուների վատթար և ծանր դրությունը արևմտահայ իրականության մեջ: Դիմելով թաղական խորհուրդներին, նա պահանջում է, որ հասակավոր ուսուցիչներին, որոնք իրենց ողջ կյանքը նվիրել են մանուկ սերնդի կրթության և դաստիարակության դժվարին գործին, հատկացնել «հանգստյան թոշակ»: «Այնպիսի ժամանակ մը, — դրում է նա, — ուր կրթական գործը այնքան կը դրադեցնե միտքերը, դպրոցական ծրագիրներու, դասադիրքերու պատրաստության հետ՝ կարժե որ ուշադրություն դարձվի նաև ուսուցիչներուն ապագային ապահովության այս խնդրին՝ որուն այժմեություն կուտա Թիֆլիսի ներսիսյան վարժարանի հոգաբարձության պահանջարկի նախաձեռնությունը»:

Գոհացուցիչ է է ոչ միայն ուսուցիչներին, այլև գոյություն ունեցող ղեկավար ուսումնական մարմիններին՝ դպրոցական հոգաբարձությունների և դավառական ուսումնական խորհուրդների վիճակը, որոնք միանգամայն անտարբեր են ենթակա ուսումնական օջախների ղեկավարման և բարեկարգման հարցերի հանդեպ: Բացի այդ, Ասատուրն անհանդուրժելի և դասավանդման տեսակետից վնասակար է համարում Ուսումնական խորհրդի կողմից վավերացված կրթական ծրագրի աղավաղումը տեղերում: Պոլսում և զավառի դպրոցներում պետք է գործադրվի ուսման մեկ ընդհանուր, միասնական սխեման՝ դասավանդման համընդհանուր մեթոդներով,

1 «Արևելք», 1899, № 3939:

հաստատված դասադիրքերով և կրթական ողջ ծրագրով: «Ցավալի է, — դրում է նա, — որ դեռ հարկ եղած discipline-ը մուտ գտած է մեր թաղական խորհուրդներու բարքերուն մեջ: Թաղական խորհուրդներ և հոգաբարձություններ դիտանք, որոնց համար ուսումնական խորհուրդը որևէ նշանակություն մը չունի: Նախակրթարաններ ալ ունինք դեռ որոնք բուլբուլին չեն գործադրեք կրթական ծրագիրը և տեղ մը մուտ գտած են Ուսումնական խորհուրդին չվավերացած դասադիրքեր և չվավաված անկարող ուսուցիչներ...»:

Մտահոգված սերնդի բաղձակողմանի և լիարժեք կրթության հարցերով, Ասատուր-մանկավարժը առաջ է քաշում միջնակարգ, ինչպես նաև բարձրագույն կրթություն ստանալու խնդիրը: Նրան չի բավարարում տարրական նախակրթարանների ուսման մակարդակը, երբ պատանին 11—12 տարեկան հասակից, երբուն դիտելիքներով նետվում է ասպարեղ՝ կյանքում տեղ գրավելու մտադրությամբ: Ամեն կերպ պետք է ձգտել շարունակել ուսումը, եթե ոչ բարձրագույն, գեթ միջնակարգ կրթության սահմաններում, քանզի բարձր իմացականությամբ հասուն տարիքում է միայն հնարավոր կողմնորոշվել կյանքում և աշխատանքում:

Կրթական սխեմեմի բարեկարգման աշխատանքներում մեծ տեղ և նշանակություն էր հատկացվում դասադիրքերի հրատարակությանը: «Մեր դպրոցական մատենադրությունը շատ աղքատ է այսօր, հակասակ այն բաղձաթիվ հրատարակություններուն, որոնք երևան կուզան հետզհետե», — դրում էր «Ծայրիկը»:

Թեև լույս էին տեսնում մեծ թվով դասադիրքեր, քերականական ձեռնարկներ (Տ. Ղևոնդյան, Ս. Դավթյան, Պետիկյան և այլն), բայց բոլորն էլ գրված էին եվրոպական դասադիրքերի նմանությամբ և հետևություններով: Օտար գրականության աղգեցություն տակ երևան էին գալիս այնպիսի դասադիրքեր, որոնք իրենց արծարծած դադարներով և ողով հետև էին

1 «Արևելք», 1899, № 4069:

2 «Ծայրիկ», 1887, № 5:

Հայ իրականությունից՝ անոգ սերնդին սնուցելով իր ճաշահին ու միջավայրին «անհարմար նյութերով»: Հատկապես լեզվի ասպարեզում տիրապետում էր անավար խրթնաբանություն, դրաբարյան ձևերի ու ոճերի մի խառնուրդ, որը տանջում և հուշեցնում էր մանուկ մտքերը:

«Քերականներ», որոնք անցած դարին կտակված են մեզ, «ընթերցարաններ», որոնք ոչ միայն Պուսո և գավառի բարբառները, այլ նույնիսկ արևելյան և արևմտյան աշխարհաբարները իրարու խառնած են, առանց լեզվական որոշ սկզբունքներու», — դրում է Ասատուրը: Սաստապահանջություն ցուցաբերելով դասադրերի մշակման դորձում, մանկավարժ դանում էր, որ հարկավոր է մանուկների տարիքին ու ճաշահին համապատասխան դրքեր հրատարակել, որովհետև ամեն հասակ ունի իր համար՝ ինչպես լեզուն և ոճը, այնպես էլ՝ բժրոնումի իր աստիճանը: Այլ թե դիմել թարգմանական նյութերի, այլ գտնել այնպիսի թեմաներ, որոնք հետաքրքրեն մանուկներին, նրա միջավայրին, զգացումներին՝ գաղափարներին համապատասխան ներկայացնելով մեր ազգային բարքերը, անցյալն ու ներկան:

Հաշվի առնելով մայրենի լեզվի ուսուցման անբավարար գրվածքը դպրոցներում, Հ. Ասատուրը Սիպիլի հետ միասին, 1905 թ. հրատարակում է «Թանգարան հատընտիր հատվածներու» վերնադրով դասագիրքը, որը վերահրատարակվում է մի քանի անգամ՝ մեծ տարածում գտնելով արևմտահայ զբոսորոցներում: Հեղինակներն անուշա նպատակ են ունեցել հեշտացնել մայրենի լեզվի ուսուցումը, աշակերտներին հանձնելով այնպիսի մի ընթերցարան, որը ոչ միայն աշխարհաբար լեզվի և քերականության տեսակետով էր օգտակար, այլև նրպաստում էր աշակերտի մտքի ընդհանուր զարգացմանը: «Թանգարանը» պատկերադարդ է ու բաղկացած 230 էջից, աշխարհաբարով գրված արձակ և չափածո հատվածներից, բարոյախոսական գրույցներից ու առակներից, բնագիտական ու կրոնական ընթերցանության նյութերից ու առանձին բառերի ու գրական ոճերի բացատրություններից:

Ընտրված նյութերի բազմազանությունը անուշա մեծ առավելություն էր, թեև դրանց մեծ մասը օտար հեղինակներից կատարված թարգմանություններ էին: Այդ մասին հեղինակները նախօրոք հայտնում էին ընթերցարանի առաջաբանում՝ պատճառաբանելով, որ հայ դրոզներն ու բանաստեղծները շատ քիչ բան ունեն դրած մանուկների համար: Դասադրում տեղ են գտել նաև կենսագրական համառոտ ծանոթություններ հայ և օտարազգի այն գրողների և արվեստագետների մասին, որոնց դործերից հատվածներ են արտատպված: «Թանգարանի» մեջ հեղինակները ջանացել են հնարավորին չափ լեզվի միօրինակություն պահպանել և՛ հայ, և՛ օտար հեղինակներից ընտրված ստեղծագործություններում: «Թանգարանը» — դրում է դասադրի դրախոսներից մեկը՝ Հ. Գաղանձյանը, — նյութերի պետպիսություն, գասալորություն, բացատրություններու հստակության և ճշտության, լեզվի մաքրության և այլ տեսակետներով ծայրեծայր կը կրե հեղինակներուն ծանոթ բժախնդիր հոգածությունը որոշմը և նախաիրթարաններուն համար կրնա ըլլալ խիստ նպատակահարմար դասադրք մը գիտակից ուսուցիչներու ձեռքին մեջ...»:

* * *

Ասատուրը բազմիցս հանգես է եկել նաև իրական սեռի կրթության հարցերին վերաբերող հոդվածներով: Կողմնակից կանանց համակողմանի և հետևողական կրթության, Ասատուրը խստորեն քննադատում է արևմտահայ բարքերում ընդունված այն օտարամոլ դաստիարակությունը, որը հարմար էր զիտվում այս միջավայրում՝ կնոջ բարոյական և հոգևոր հասկանիչների ձևավորման տեսակետներից: Դա թերի դաստիարակություն է, որ «բնավ չի համապատասխաներ մեր նյութական և բարոյական պետքերուն», — նկատում էր նա՝

1 «Մասիս», 1898, № 17:

1 «Արևելյան մամուլ», 1907, № 42, էջ 1043:

2 «Մասիս», 1898, № 3:

Մինչդեռ աղջիկները իմացական աշխարհի բովանդակութիւնը և խորութիւնը պետք է սլալանամալորվէր ազգային մշակութի և ամանները քաջատեղյակ յուրացմամբ, միջավայրի այն հողհարազատութեամբ, որը նրանց կըարձնէր ազգային-հասարակական և ընտանեկան հարաբերութիւնները լիբրավանդամներ: Ընդգծելով կանանց ուսման իրավունքն ու անհրաժեշտութիւնը, Ասատուրը ցավով է նշում, որ 90-ական թվականների վերջերին, ազգային հալածանքների այդ ծանր տարիներին, փակվեցին Պոլսի հայ վարժարանները, այդ թվում նաև Ս. Սաչի, Հոփուսիմյան, Մեղպուրյան և Դպրոցասեր տիկնանց վարժարանները, որոնք տվել էին շատ շնորհալի և խելոք շրջանավարտ կանայք: Արյունոտ դեպքերի և ազգային մշակութային այդ շրջանում անգամ, Ասատուրը խիստ անհետաձգելի էր համարում իզական սեռի համար միջնակարգ դպրոցների բացումը և կից արհեստանոցների հիմնումը, որոնք պիտի սատարէին դարդացնելու նուրբ սեռի կրթութիւնն ու ներքին կարողութիւնները, գործնական հնարավորութիւններ ընձեռնէին նրան հասարակական կյանքում և ընտանիքում:

Բացի կանանց կրթութիւնը և դաստիարակութիւնը վերաբերող հարցերից, Ասատուրը ուշադրութիւն է դարձրել նաև կնոջ հասարակական դերի, տեղի և իրավունքների խնդիրներին: «Ճեմինիզմ» ընդհանուր անվան տակ կատարվող շարժումը, որը նպատակ ուներ լուծելու կնոջ ազատագրութիւն հարցերը, լայն տարածում էր դառնում արևմտահայ շրջաններում՝ ծեծվելով ոչ միայն պարբերական մամուլի էջերում, այլև թափանցելով դեղարվեստական արձակի շրջանակները: Այս առումով էլ Ասատուրը դնահատում էր Ս. Տյուսաբի վեպերը և Գ. Սունդուկյանի «Ամուսիններ» դրաման: Հրապարակախոսի պահանջով կինը պետք է ստանա հասարակական իրավունքներ, լիարժեք դաստիարակութիւն և սեփական կամքով տնօրինի իր հակառակը: Արևմտահայութիւն քարացած

բարոյական նորմերի քննադատութիւնը կնոջ դատի պաշտպանութեան հարցերում, Ասատուրի կարծիքով, պետք է բացահայտեր նուրբ սեռի մտավոր և հոգեւոր կարողութիւնների հարստութիւնը և դատապարտեր այն դաժան և անարդարացի վերաբերմունքը, որը ստրկական կապանքների մեջ էր դրել կնոջը՝ մերժելով նրա հասարակական իրավունքները: «Եվ եթէ հայերը, — գրում է հրապարակախոսը, — դեռ հասած չեն քաղաքակրթութեան այն վիճակին, որ Փեմինիզմի հարցը իրենց համար ունենա մեծ կարեւորութիւն ընկերարանական տեսակետով, գեթ ընտանեկան տեսակետով պետք է բացատրել կնոջ դիրքը, տալով իրեն այն տեղը, որուն իրավունք ունի և երբ կնոջ անիրավի ալը՝ ճանչան կնոջ իրավունքները զորս ունի իր սիրտը և արժանապատիւթիւնը պաշտպանելու համար»:

Հարցի քննութիւնը հրապարակախոսին ուղղում էր դեպի ընտանիքի և ամուսնութեան հաստատված օրենքների վերանայմանը՝ կնոջ ազատագրութեան ավելի կոնկրետ միջոցների և ուղիների որոնման խնդիրներին: «Ամուսնութիւն միջադպիսի տեսակետով» (1887) հոդվածում, որն արտատպից նաև «Մշակում», ինչպես նաև «Պատգամներ» (1898), «Ձեռնորոշ բարքեր» (1898), «Պսակը եկեղեցիին մեջ» (1898) հոդվածներում խնդիրը քննարկվում էր իր մի շարք կողմերով: Ամուսնութիւնը դիտելով իբրև «մարդկային ցեղին դարդացման հիմք», հրապարակախոսը սկսելով դեռևս հին ժամանակներից, նշում էր դրա կատարած հասարակական մեծ դերը, որպես «կարևորագույն տարրն անտեսական գործունեութեան», «հզորագույն պաշտպան ժողովրդային բարոյանեութեան» և դիտավոր ապահովութիւնն ցեղերու պահպանման և ազնվացման»¹: Ժամանակների հետ փոխվում են նաև ամուսնութեան վավերացման օրդանները, դրա հետ կապված հանդամանքները՝ կրոնականից դեպի քաղաքական, ըստ որում Ասատուրը նշում էր, որ Փրանսիական հեղափոխու-

1 «Մասիս», 1898, № 18:

2 «Երկրադունդ», 1887, էջ 307:

թյունից հետո միայն քաղաքականը դարձավ պարտադիր, իսկ կրոնականը՝ կամավոր: Նա բերում էր նույնիսկ տարբեր երկրներում ամուսնութեան կնքման սահմանված կարգը:

Ամուսնութեան խնդիրների ուսումնասիրումը և կարգափոխումը Ասատուրը կարևոր էր համարում հատկապես Թուրքիայում բնակվող հպատակ ազգութեանների համար: Հրապարակախոսը առաջարկում էր սուլթանական պետութեան մեջ աղբյուր տարբեր ազգերին ամուսնական խնդիրներում համաձայնութեան դալ, քանի որ հասարակական-քաղաքական միևնույն իրադրութեան մեջ գտնվող հպատակների կյանքում այն կարող էր ունենալ մեծ նշանակություն, որովհետև խնդրի իրականացումը, Ասատուրի կարծիքով, ենթադրում էր համեմատել և մարզկային հարաբերություններ հարևան ժողովուրդների միջև: Հրապարակախոսը խնդր էր դնում կազմել մի օրենսգիրք՝ ամուսնական կանոնների վերաբերյալ, դանելով, որ հայ եկեղեցու հաստատած հիմունքներն ամուսնութեան հասարակական օրենսդրութեան մասին, իբրև վերափոխման կարիք ունեն: Չարդացման այն ուղին, որ այս առթիվ ընտրել էին եվրոպական ժողովուրդները, հրապարակախոսն անհրաժեշտ և կենսական էր համարում հայ կյանքի համար, հատկապես ժողովրդի մտավոր առաջընթացի և նորօրյա բարձրի պայմաններում, երբ, ինչպես ինքն է վկայում, «հայ ընտանիքին ճակատագիրն այլևս չենք կրնար թողուլ մեր եկեղեցիներու քմահաճ պատգամներուն»¹:

Դատապարտելով ամեն մի բնութեան, Ասատուրը մերժում է տղամարդու բնութեանը կնոջ հանդեպ, քննադատում ասիական հետամնաց բարձրն ու կրոնական իշխող օրենսդրութեանը, որի օրինականացրած բարոյականութեանը արդարացնում էր կնոջ անազատ և սարկական վիճակը: Ասատուրը, հակադրվելով եկեղեցուն, պաշտպանում էր կնոջ ամուսնալուծութեան իրավունքը, մի խնդիր, որը վաղուց լուծում էր ստացել Եվրոպայում: «Միջոցներ պետք են մեր բար-

քերուն մեջ արմատացած այս ծանր ախտերուն դեմ», — եզրուհանդում էր նա²:

Հասարակական կյանքի նման իրադրութեան մեջ մի անանձին նշանակություն էր վերադասվում եկեղեցուն և կրոնականների կատարելիք դերին: Կյանքի հանդամանքների, կրթութեան ու գաստիարակութեան նկատմամբ առաջադեմ գիշերայրջման հարկը պահանջում էր կրթված ու զարգացած կրոնականներ, որոնք կրոնն ու եկեղեցին պետք է ծառայեցնեն արևմտահայութեան ազգային-քաղաքական կյանքի առաջադրութեանը: Մինչդեռ հոգևոր կոչման արժանացած այս դասը, նկատում է Ասատուրը, տպես է և «չէ ըմբռնած եկեղեցիի պաշտանեային կաշումը»: Ոտնակոխելով հոգևոր «պանի և անձնազուհ» մղումները, կրոնավորը դարձել է աշխարհիկ վայելքներին հետամուտ մի անձնավորութեան, ճանաչելով «կյանքը սիրողներուն բոլոր քմահաճությունները»³: Տոկոսով փող տալ ծիսերին, հաշվով կատարել ծնունդն ու թաղման արարողությունը՝ բառ ծիսի կարողութեան չափի, կնքել ամուսնութեաններ, դանձանակի դրամահավաք, ափսեի անվերջանալի կոխիներ և այլն և այլն:

«Մեր քահանաները» հողվածում հրապարակախոսը պահանջում էր, որ պատմական մեծ կոչում ունեցող այս կասանս դուրս գար իր նեղ ու սահմանափակ ոլորտներից և ազգային օգտաշատ գործունեության ավելի լայն առարկեղ ընտրեր: «Քահանացուները», «Նորերը» և «Երկրիկի կաթողիկոսութեանը» թղթակցութեաններում հրապարակախոսն արդեն շարադրում էր լուսավորչական եկեղեցու կուսակրոնութեան վերափոխման առաջարկները, ընդդրում հոգևոր դասի գործունեության իսկական բովանդակությունը: Նկատելի է սակայն, որ Ասատուրը արմատական պահանջներ չունեի այս հարցում և հակված չէր մերժելու հոգևորականութեանը կամ նեղացնելու նրա ներգործութեան ոլորտները: Անչուշտ նա գիտակ էր որ XIX դարի հասարակական տեղաշարժերի նոր պայ-

1 «Արևելք», 1898, № 3823:

1 Նույն տեղում, № 3793:

2 «Մասիս», 1898, № 94:

մաններում եկեղեցին կորցրել էր իր դասային հեղեմունիան ժողովրդի ազգային-մտավոր կյանքում: Բայց և այնպես, նա գեռես սպասելիքներ ունեւ հողեոր դասից՝ գլխավորապես արեւմտահայութեան ազգային դաստիարակութեան ասպարեզում: Իսկ զբա համար հարկավոր էր, որ նախ և առաջ հենց ինքը գառնար կրթված և զարգացած կասաս, որպէսզի իր վրա վերցնէր կրթութեան, ազգային ողու սերմանման, ինչպես նաև ժողովրդի հողեոր պահանջների կազմակերպման դործը: Միայն այս կերպ էր հնարավոր, որ հողեորականութեանը կարողանար «բարոյական ավելի մեծ ազդեցութեան մը ունենալ այն հոտին վրա, զոր հովվել կոչված էր»¹: «Այլևս պետք չեն մեզի, — զրում է Ասատուրը, — միբառով, պսակով, թաղող անգիտակից կրոնականներ, վեղարավորներ, որոնք աղթքներ կը մըրթմըրթան շատ անկամ անոնց իմաստը չհասկանալով, այլ ճշմարիտ վարդապետներ, որոնք ոչ միայն իրենց եկեղեցիին անցյալն ու ներկան ուսումնասիրած ըլլան, այլ բովանկան մտքի պաշար ունենան վարելու համար իրենց հոտը և բովանկան սիրտ՝ հասկանալու համար անոր հողեկան մարմանները»²:

Գալառահայութեանը կործանվում է ոչ միայն անտեսական ծանր պայմանների հետևանքով, այլև ենթարկվում է ասիմիլացիայի: Մինչդեռ, հայ եկեղեցիներն ու վանքերը միջոց և հնարավորութեան ունենին գլխավորելու ազգութեան լուսավորութեան գործը: Գործնականորեն նախադեմով եկեղեցու մեծ պարտավորութեանը սերնդի կրթական դործի ղեկավարման մեջ, հրապարակախոսն առաջարկում էր կղերականներին և եկեղեցական միարանութեաններին հայարնակ շրջաններում և դուրեղերում հիմնադրել դպրոցներ, ուսումնարաններ և նախանձախնդիր լինել ազգային վիճակի բարեկարգմանը: «Աճած», «բազմացած» հողեոր դասը փոխանակ խորվելու Բոսֆորի դեղածիժաղ արիերին և հետամուտ լինելու անձնական շահախնդրութեաններին՝ հարկավոր էր որ մեկներ տերութեան խորքերը և նեցուկ գառնար ժողովրդի հողեոր-նյութական

զրութեանը: Թասելով Կիլիկիայի նորընտիր կաթողիկոսի մասին, Ասատուրը զործունեութեան ընդարձակ ասպարեզ է ուղեներում նրան, դռնելով, որ առաջին գործը, որ պետք է ձեռնարկի նա, դա Սիսի վանքի «նյութական» և «բարոյական» վերաշինութեանն է և «ժառանգավորաց» վարժարանի հիմնադրումը, որովհետև «Կիլիկիա աթոսը ամեն բանն առաջ, — զրում է նա, — պետք ունի ուսնալ եկեղեցականներում»³:

Ազգային առաջընթացի տեսանկյունից ըննադատելով կղերականութեանը, Ասատուրն անխախտ և սրբազան էր դիտում եկեղեցին ու կրոնը: Բացի այն, որ համազգային կրթական խնդիրներում եկեղեցին պետք է ստանձներ պարտավորութեաններ և նպաստեր լուսավորութեան ու մշակութի կարգացմանը քաղաքներում ու ծայրամասերում, նա միաժամանակ ավելի մեծ խնդիր ուներ կատարելու: «Բոլոր այն ժողովուրդները, — զրում էր նա, — որք մեղ նման, չունին քաղաքական և զինվորական իշխանութեան, պետք է կրոնն պաշտեն իբր միակ միեթար, իբր միակ ապովեն յուրյանց ազաբախտ կյանքի: Այո, մեր ճակատագրի մեջ մի կենսական տարր է դա. մի վահան է դա, որ արիութեան կը տա և, առանց դժա, անհնար է մեզ անվհատ ընթանալ առաջադիմական ասպարեզին մեջ»⁴:

Փոթորիկա, եռուն դարաշրջանում, երբ սոցիալական և ազգային ցնցումներն ու արյունոտ պատերազմները, փոքր ազգերի անպաշտպան իրավիճակն ու անխնա շահագործումը հարցականի տակ էին դնում ժողովրդի գոյութեան ապագան, Ասատուրը, որպես փրկութեան գրոշ բարձրացնում էր կրոնի գաղափարը, որը պետք է միաձուլեր ազգը և կյանքի ուղեցույց դառնար նրա համար: Այս տեսակետից հասկանալի է, որ խոսելով Քրիստոսի իգեալիտ փրկիչութեան Բ. Կարոյի «հողեպաշտական» սկզբունքների մասին, որը «թերահավատներու և անհավատներու երկրին մեջ», այսինքն Քրիստոսի մարմնավորում էր աստծո դաղափարը, և «ցուցադրելով» Լ.

1 «Արևելք», 1899, № 3954:

2 «Արևելք», 1898, № 3807:

3 «Արևելք», 1898, № 4084:

4 Հ. Ասատուր, Մահամարութեանը և հայ ժողովուրդը, Պոլիս, 1879,

Բյուսններէ, է. Լիտուերի և Հ. Սպենսերի հայացքների թույլ
կողմերը, հրատարակատար առաջարկում է ուսուցանել կա-
րոյի գրույթները, քանզի այն հաստատում էր աստ՝ ու-
յության և անմահության փաստը:

«Պ. Գառո զիտուն իմաստասեր էր, — գրում է նա, սր-
պես եղբորակացութեան, — որ զազոտիարներն կրնան մեծապես
օգտակար լինել այն ազգաց, որք մեզ նման գերազույն շա-
հեր ունին իրենց կրոնի պահպանման մեջ: Փափաքելի էր, որ
հայ երիտասարդութեանն ձանձնար ու կարգար Գառո, փոխա-
նակ անհոգարար ծծելու այն հեղինակաց գործերն, որք կո-
մանդակեն անկրոնութեան ծավալման, խախտելով ժողովրդ-
յան սրտին մեջ զգացմանց վեհագույնն Հովատքն»:

Լինելով քրիստոնյա-լուսավորչական և որոշակի հետա-
նկարներ կազմելով կրոնի ազգայնացանման դադարներն,
Ասատուրը երբեմն արտահայտում էր նաև մտքեր, որոնք
բացահայտում էին նրա չափավոր, բարոյախոսական հայացք-
ները: Արքան էլ գիտական նորահայտ նվաճումներն ու բնագի-
տութեան մեջ կատարված հայտնագործութունները փորձեն
հեղաշրջել կարծրացած և ավանդական դարձած դատկերա-
ցումներն աշխարհի վարարելոյ, այնուհանդերձ «մարդոց
ամենաստվար մեծամասնութեանն, և այս անհերքելի իրո-
գութեան մ'է, — համոզված գրում է նա, — մի անգամ, սր
թոթափեն կրոնական համոզումներն ու գողերին նախախնա-
մութեան հավատալե, ալ սահման չեն տեսներ յուրեանց առջև,
և ահա կը պակսի անձնվիրութեան, ընտանիքի սերն, շահն ու
կիրքն... կաճին շարութեանք և մոլութեանք ծավալ կը գրա-
նեն»¹:

Այսպիսով, հրատարակագրի գիտակցութեան մեջ կրոնը
դառնում է բարոյա-էթիկական ըմբռումների աղբյուր և
կրոնի բարոյախոսութեան սերմանող թեզերը զխափում օգտա-
կար և ոչ հնացած:

Սակայն եվրոպական փիլիսոփայական ուսմունքներին
գիտակ այս մտավորականի հասարակահայեցութեանը այսու-
հանդերձ չէր սեղմվում ավետարանական ըմբռումների շր-
ջանակներում: Դեռևս պատանեկան տարիներին ծանոթանա-
լով Վ. Բուշենի փիլիսոփայութեանը ու նրա էկլեկտիկ-իդեա-
լիստական հայացքներին, Ասատուրը ինքնաբերաբար կառ-
չում էր հողևոյալ մտայնութեան սկզբունքներին: Սակայն
գիտական հեղաշրջումների այս դարաշրջանում հրատարակա-
խոսի միտքը երբեմն երկվութեան է ապրում և կրոնական
վարդապետութեան պատգամները հաճախ են ճեղքվում ինչ-որ
կասկածող մտայնութեամբ: Տաղավարյանի «Տիեզերքը և իր
կազմութեանը» Ֆրանսերեն հրատարակված գրքի մասին
գրած իր գրախոսականում, որը նպատակ ուներ ընթերցողնե-
րին ծանոթացնելու մոլորակներին և, ընդհանրապես, տիե-
զերքի կազմութեանը, Ասատուրը կարծեք համոզված է, որ
մարդկային ճանաչողութեանը առաջ է անցել կրոնական ինք-
նավստահ հավատախցումներից: Գրքի հեղինակի կողմից
տիեզերագիտութեան վերաբերյալ բացատրութունները և նյու-
թին տրվող մեկնութեանը ամբողջապես հիմնված էին երե-
վույթների ծագման ու դարդացման ֆիզիկական և քիմիական
լուծման եղանակների վրա՝ հետու լինելով այդ ամենին կրո-
նական, աստվածաբանական երանդներ տալուց: Այս իմաս-
տով, մեկնարանելով Տաղավարյանի գրքում առաջ քաշված
հարցերը, Ասատուրը գրում է. «Այս խնդիրներուն վրա գրված-
ները կարդալով, ջանալով թափանցել Տիեզերքի կազմութեան
դադանիքին, կյանքի Թորհրդին ահեղ հարցականի նշանը
ակամա կու դա, կը ներկայանայ մեր մտքին:

Գիտութեանը հուսահատեցուցիչ միօրինակութեան մը
գուշակել կու տա ամեն կողմ, Տիեզերքի ամեն խավերուն մեջ,
ամենուրեք նույն տարրերը, և թերևս նույն կյանքը և նույն
մահն ալ անբաժան կյանքեն...»²:

Առեղծվածներին տրվող գիտական պատասխանները,
որոնք կարծեք դառնութեամբ էին լցնում հրատարակախոսի

1 Արևելք, 1885, № 2:

2 «Մասիս», 1882, № 3265:

1 «Մասիս», 1898, № 82:

հողին, ի վերջո հարցականի տակ էին դնում անմահութեան հանդրվանի գաղափարը և ավետարանական ճշմարտությունները կասկածի ենթարկում: Այլև ոչինչ էլ որ մնում հավերժության ճանապարհին, իսկ նյութական աշխարհն իր հաստատվող օրինաչափություններով հառնում էր հրապարակախոսի առջև՝ վեր ի վայր չըջելով այն բուրբը, ինչը որ նա կցանկանար թողնել անաղարտ: «Գիտությունը կու դա կը տանի մեր բուրբ հավատները, — գրում է նա տխրութեամբ, — ու կը թողու զմեզ առանձին՝ նյութին ու շարժումին հանդեպ. բայց Մտածումը և Ձգացումը կը մնան միշտ մեզի՝ դերագույն մխիթարանք ամեն հուսախարութեանց»¹:

Ուսումնասիրելով եվրոպական իմաստասիրական մաքի մի շարք ուղղությունները, Ասատուրը, ինչպես նաև արևմտահայ մտավորականներից շատերը, որպես հայանություն է ընդունում Օ. Կոնտի պոզիտիվիստական ուսմունքը և առավել ևս Լ. Բյուխների վուլգար-մատերիալիզմը: Այն հանդամանքը, որ Կոնտի փիլիսոփայությունը փորձում էր հաստատել գիտության զարգացման անվերջ հնարավորությունները և արտահայտվում էր ընդդեմ կրոնի և մետաֆիզիկայի, արևմտահայ մտավոր շրջաններում ընկալվում էր ոչ իր իսկական բովանդակությամբ՝ չգիտակցելով, որ իմացության պոզիտիվիստական տեսությունը հարում էր ոչ թե փիլիսոփայության մատերիալիստական ակունքներին, այլ վերածվում ու դառնում նրա աղնոստիկական և սկեպտիկական տարատեսակներից մեկը՝ բնություն և հասարակական հարաբերությունների ճանաչման հիմք դիտելով կրոնը և ոչ թե գիտությունը: Մրա կողքին վուլգար-մատերիալիզմը նույնպես իր մի շարք դրույթներով մոտենում էր պոզիտիվիզմին և իդեալիզմին:

Ասատուրը խոստովանում է, որ ինքը միշտ «հիացող» է եղել «բանապաշտ (raisonnisme) վարդապետությունց հանդեպ» և միշտ տարակուսել «ի հառաչագունն ընդունված ստալին սկզբունքներու» նկատմամբ: «Հուպ և Պյուխներ, և Օկյուսթ Գոնդի դրապաշտությունը, հրապուրեք և մանավանդ

յանավորութենեք (raison) դուրի էլ ինձի համար, — գրում է նա, 1922 թ., Տ. Կամարականին ուղղված նամակում, — ևս որ քեզի պես բարեկամներու հետ, գրականության մեջ դրապաշտ սիրող մը և հետևող մըն էի եղած»²: Բայց և այնպես, Լ. Բյուխների «Ուժ և մատերիան», ինչպես նաև Օ. Կոնտի «դրապաշտ դպրոցին անհավատալի քարոզությունները» արևիցնում են նրան և նա փորձում է գտնել մի ապավին, որն իրեն կապեր իր մանկության աստծուն և հոգեկան սպեղանի գառնար իր էությունը: Սա էր պատճառը, որ գրական-հասարակական դործունեության վերջին շրջանում Ասատուրի մոտ մի առանձին փիլիսոփայական իմաստ է ստանում է. Բուլտրուի կրոնական-մխիթելիզմը և նրա «Բնության օրենքների պատահականությունների մասին» աշխատությունը, որտեղ Բուլտրուն ժխտում էր բնության մեջ գոյություն ունեցող օրենքի վրա գործող «համաշխարհային բանականությունը»³: Մրա կողքին հայանվող Ա. Բերգսոնի իդեալիստական փիլիսոփայությունը, որը դարգացնում էր իր նախորդի իմաստասիրական դրույթները և ինտուիցիան ու բնազդը հակադրում բանականությանը, ներկայացվում էր XIX դարի էմպիրիկ փիլիսոփայության և պրագմատիզմի հիմնադիրներից մեկի՝ ամերիկացի փիլիսոփա Ու. Ջեյմսի հետ մեկտեղ՝ հեռացնելով Ասատուր-մտածողին բանական իմաստասիրության առողջ դատումներից:

«Ճշմարիտ հրճվանքով մըն է, որ կողջունեմ այս նոր տեսությունները, — գրում է նա այդ մասին, — և անոնց առջև զմայլանքով կը խորհրդածեմ: Կը վերանամ ու կաղնվանամ: Մարդը, — շարունակում է նա, — միայն նյութե բազկացած չի կրնար ըլլալ: Հիշողությունը նյութե վեր բան մըն է և սխալ է կարծել, թե նյութին մեջ քանդակված լուսանկար պատկերներ են հիշատակները»⁴:

1 «Անահիտ», 1931, № 5—6:

2 Նույն տեղում:

3 Նույն տեղում:

ԱՍՏՏՈՒՐԻ ԳՐԱԿԱՆ-ՔՆՆԱԴԱՏԱԿԱՆ ՀԱՅԱՑՔՆԵՐԸ

Անցյալ դարի 80—90-ական թվականների արևմտահայ գրաքննադատության մեջ Հ. Ասատուրը դրավում է յուրահատուկ տեղ: Նրա առաջին հոդվածները վերաբերում են 70-ական թվականների վերջերին, 80-ական թվականների սկզբներին և զուգահեռում են դրական այն նոր տեղաշարժերին, որոնցով բնորոշվում էր արևմտահայ իրականությունն այդ տարիներին: Ժամանակի պարբերականներում հրատարակված նրա հոդվածները ցույց են տալիս Աստուրի գրական հայացքների զարգացման ուղին, դավանած սկզբունքների կայունացման ընթացքը, թեև նկատելի է մի բան, որ Աստուրը քննադատն ու բանասերը, ընդհանրապես, չի ունեցել բարդ ու հակասական անցումներ, գաղափարական տարբերումներ: Նա հենց սկզբից, ինչ-որ մի ներքին հավասարակշռությամբ, հարցերի բարդ և դեռևս չտարբորչված պայմաններում կարողանում է գտնել այնպիսի ուղղություններ, որոնք ձերբազատում են նրան խնդիրների հակասական և սուր դրվածքից:

Ասատուրի գրաքննադատական ժառանգությունն ամփոփում են գրականագիտական հոդվածներ, գրախոսականներ, արևմտահայ դրող-գործիչների դիմանկարներ, տեսական բնույթի ուսումնասիրություններ, դասախոսություններ, ինչպես նաև թատրոնի, արվեստի վերաբերող գործեր:

Գրական-գեղագիտական նորոքյա ըմբռնումների արմատավորման հարցը, որը ժողովրդի բարոյական առաջադիմության կարևոր խթան պետք է դառնար, մտահոգում և գրազեցնում էր Աստուրին՝ գրական ասպարեզ մտնելու առաջին խիղճից: Եվ նկատելի է, որ Աստուր-քննադատի գեղագիտական չափանիշները բոլոր դեպքերում թելադրվում են Աստուր-հրապարակախոսի հասարակական կողմնորո-

շումով, սեպտիմի ժողովրդականության այն ըմբռնումով, որոնք արևմտահայ ութսունականների գեղարվեստական ծրագրերի հիմք էին կազմում:

Ավարտվել էր ուսու-թուրքական պատերազմը, ազատագրության հույսերին հաջորդած դառն հիասթափությունը զղաստացրել ու կենտրոնացրել էր մտքերը՝ յուրահատուկ բովանդակության հաղորդելով ժամանակաշրջանի գաղափարախոսությունն ու գրականությունը: Ղ. Ալիշանի, Մ. Պեշիկ-թաշլյանի ավանդույթներով առաջնորդվող 70-ական թվականների գրողները՝ Մ. Աճեմյանը, Խ. Պերպերյանը, Հ. Փեյիկյանը, Տ. Սեթյանը և ուրիշներ, չհարստացրին արևմտահայ գրականությունը, և դրեթե, շատեղծեցին գեղարվեստական մնայուն արժեքներ: Անշուշտ սրանցից ոչ բոլորն էին զուրկ գրական շնորհից ու գեղագիտական ճաշակից, բայց մի բան դրեթե բոլորին էր հատուկ՝ դա հույսերի ու արամազրությունների այն նեղ ու սահմանափակ արասնայություն էր, «զուտ ազգայնական նեղ շրջանակի մը մեջ», որը բխում էր իրադրության, կյանքի ներքին կազակցությունների անբավարար և ոչ խոր ըմբռնումից:

Ահա ինչ է դրում արևմտահայ քննադատ Մ. Շամտանճյանը այս շրջանի գրականության մասին:

«60-ական թվականների գրական հոսանքը խաթարված է 70-ական թվականին, արվեստի և գրականության բոլորովին նոր ըմբռնում մը սկսած է ամեն կողմ ծայր տալ: Վենետիկյան դպրոցի գրական սերունդը Մ. Աճեմյան, Խ. Պերպերյան և ուրիշներ մեկ կողմեն տանց ու Փրանսական գրական արտադրությանց ազգեցությունց ներքև, մյուս կողմեն դրական նոր հոսանք մը առաջ բերած են: Այս հոսանքի մեջ բունվողները իրենց աշխարհագրացողությունը եղած են գեղապաշտներ, իսկ իրենց խառնվածքով բանաստեղծներ, որոնք ոչ թե համոզումներն է, որ կը վարվին, այլ ներքին հոգեկան տրամադրությունն:

70-ական թվականների այս գրականությունը, որքան արդյունավոր արտաքինով այնքան եղած է ապարդյուն ներքինով: Ընտապաշտ գրականություն մը եղած է ան ուր սիթմը

ու հեյտունը ամենեն ավելի դրողեցուցած են զրական աշխատավորները»¹ :

Այս շրջանում հատկապես, երբ ավելի էին ծանրանում սուլիթանի քաղաքականութեան դատան օճիմի հետեանքները, շարունակվում էին հրատարակվել «ցուրտ, անկենդան ու սրուռոս» բանաստեղծութուններ և ելբոսպական ոտմանտիկ վիպերի բազմապիսի թարգմանութուններ, որոնք ոչ մի կապ չունենալով հայ իրականութեան հետ, փշացնում էին զրական ճաշակը և ապակողմնորոշում՝ նախասիրութունները: ԴՕ-ական թվականներ զրականութեան թույլ զարկերը և ընդդրելման նեղ սահմանները այլևս անհարիր էին աղգային և սոցիալական մեծ իրադարձութունների բովով անցած հաջորդ տասնամյակի գրական պահանջներին: «Ձկա որոշ ուղղութուն մը,— գրում է Ասատուրը,— այս շրջանի զրականութեան մասին,— տեսութեանց ներդաշնակութուն ու միութուն, դժված ծրագիր մը սրուն հետեին գրողները: Այս ամենուն տեղը՝ երևակայութեան խողեր միայն, բանաստեղծի վերացումներ, և շատ մըն ալ վեճեր՝ աննշան խնդիրներու վրա»²: Ըստ ամենայնի հարկավոր էր բարձրացնել զրականութեան հասարակական միտվածութունը, ընդլայնել թեմատիկան, ժողովրդին հուզող կենսունակ մտքերով տողորելով այն: Այս տեսակետից մեծ նշանակութուն է ձևք բերում զրական այն շարժումը, որը «ամենի թափով մը կը խորտակե հինը՝ անոր տեղ նորը կերտելու խոստումով» և որը ծավալվում էր հիմնականում «Արևելք» և «Մասիս» պարբերականների շուրջ՝ ընդգրկելով ժամանակի երիտասարդ գրիչներին, խոհուն և եռանդոտ մարդկանց, որոնք կազմեցին 80-ականների յայտնի խումբը: «Բնադանցասեր գրողներու սերունդը,— նկատում է Ասատուրը,— հետզհետե տեղի կուտա զրական լուրջ ձրդատումներով տողորված նորերուն և նորագոյններուն»³: Գ. Չոհրապը, Ա. Արիխարյանը, Լ. Բաշալյանը, Սիպիլը, Ա. Չոպանյանը, Հ. Ասատուրը, Տ. Կամսարականը, Մ. Կյուրճյանը

(Հրանդ), Տիգրան և Հովսեփ Յուսեֆյանները, Տ. Արիխարյանը և ուրիշներ, գիտակցում էին, որ քաղաքական և հասարակական կյանքի նոր իրադրութունը պահանջում էր կյանքի կոչել ժողովրդի թարմ ու կենսունակ ուժերը՝ ժամանակի կապակցութուններում դրսևորվող բազմաթիվ իրողութուններին նորովի պատասխանելու համար:

«Մասիս» և «Արևելք» համասեղ գաշինքը 1884 թ., միացնում էր այս պարբերականների շուրջ հավաքված երիտասարդ ուժերին, արևմտահայ ամենատաղաքեմ մարդկանց, որոնք ջանք ու եռանդ չէին խնայում ազգային-հուզեր բոլոր բնագավառներում՝ դպրոցի, կրթական ու մշակութային ընկերութունների, մամուլի, զրականութեան, գեղարվեստի և այլ հարցերի շուրջ ծավալելու լայն, աղքատահաս գործունեութուն: Դրա կարևորութունը շատ խորն էին գիտակցում նորընտիր պարբերականների միացյալ վարչութեան անդամները, որոնք «ուժերին միացուցած, միևնույն ուղղութեամբ, միևնույն վարչութեամբ, բայց ոչ միևնույն պարունակութեամբ պիտի ծառայեն տարածել ազդին մեջ այն ամեն դադափարներն՝ որք առողջ և փրկավետ համարված են այդ թերթերու խմբագրութեանց կողմանե»⁴:

Ութսունականները, որոնք նպատակ ունեին կրթել ժողովուրդը և «իբ քաղաքական ահարկու վիճակին վերահասու ընել», փորձում էին ամեն կերպ ամրացնել ազգութեան գոյութեան սյուները՝ լեզուն, դպրոցը, զրականութունը...: Արթնացած դիտակցութունը փորձում էր սրտապնդել «վշտաբեկ և վհատված» ժողովրդին, և ազգային ողու հարատևութունը պահպանելու համար առաջարկում էր քննութեան առարկա դարձնել կյանքը, հայ իրականութունը:

Մի առանձին ջանասիրութեամբ ութսունականները ձեռնամուխ եղան վերանայելու և վերաքննելու գեղարվեստի նորորյա նպատակներն ու խնդիրները: Իսկ գեղարվեստական նոր սկզբունքների յուրացման դժվարութունը արևմտահայ մտավորականութեան ուշադրութունը ուղղում է դեպի արևելահայ հասարակական միտքն ու շարժումը: Այս տեսակետից

1 «Ծաղիկ», 1903, № 11, էջ 123:

2 «Արևելք», 1899, № 4099:

3 Նույն տեղում, № 4087:

1 «Մասիս», 1884, № 3729:

նշանակալից է, որ 80-ական թվականներին աշխուժացան հետաքրքրութունները հայության երկու հատվածների միջև՝ ինչպես գրական-մշակութային, այնպես էլ հասարակական կյանքի ոլորտում: «Հայ երիտասարդութայն թերթը»՝ «Արև-վելքը», ինչպես նաև «Մասիսը» ծանոթացնում էին Ռուսաստանի հայ վարժարաններին, արևելահայ մամուլի օրդաններին, դրական աշխարհի նարույթներին, նշանավոր դրողներին և հասարակական գործիչներին:

Ասատուրը նկատում է, որ «Արևելքի» հիմնադրումից առաջ արևմտահայերը շատ քիչ տեղեկություններ էին ստանում արևելահայերի կյանքից: Աղբյուրյան երկու մեծ հատվածների մտերմութայն և մշակութային կապերի ընդարձակման գործում նա մեծ դեր է հատկացնում 1876 թ., Հայաստանում, կրթութայն տարածելու նպատակներով կազմակերպված ընկերություններին, որոնց ջանքերով էլ հետագայում ստեղծվեց «Արևելք» օրաթերթը՝ Այս թվականից հետո է միայն, որ կանոնավոր հարարերություններ են ստեղծվում արևելահայերի և արևմտահայերի միջև: «Նորահաստատ կապերը, — գրում է նա, — հղորակես պիտի ազդեին ազգային կյանքին և Պոլս օրագրութայն վրա: Ազգային ամեն խնդիր թե «Մշակի» և թե «Արևելքի» մեջ գաղափարներու կոտորյալ համերաշխությամբ կը քննվին: Զգացումներու և մտածություններու համանմանությունը երևան կու գա հանրային և ուրիշ գործերու մեջ ալ»:

Այս հարցում ութսունականների շարժման պարադոքսը՝ Արվիլարյանը մեծ տեղ էր հատկացնում «Մշակին» և իր երախտագիտական խոսքն ուղղում Գ. Արծրունուն:

«Մշակ» մեծ գործ կատարեց պ. Գրիգոր Արծրունիի առաջնորդությամբ, — գրում է նա: — Աղբյուրյան, փիլիսոփայություն, կրոնք, գրականություն, ամեն ինչ նոր տեսակներով հայ ժողովուրդի խորին ուշադրության և խոկմանց առարկա ըրավ: Յուր ընդարձակ թղթակցություններով և խմբագրական

հոգիվածներով օրվան մեծ խնդրոց չափ կարևորություն ընծայեց ժողովրդի կյանքին:

Թուրքիո Հայք, — շարունակում է նա, — մասնավոր շնորհակալությանց պարտականություններ ունին առ «Մշակ»:

Պ. Գրիգոր Արծրունի առաջինը եղավ, որ մեր կրթական ընկերություններն արժանացուց Ռուսիո Հայոց վստահության»:

Ուշագրավ է նաև, որ երբ Ասատուրը «Արևելքում» ամփոփում էր 1884 թ. արդյունքները՝ արևմտահայ գրականության և ազգային ու կրթական բազմաթիվ խնդիրների վերաբարյալ, ներկայացնում է նաև սույն տարվա գրական իրագործներն ու երևույթները՝ արևելահայ իրականության մեջ:

Գրական-մշակութային տարբեր երևույթների ու խնդիրների վերաբարյալ հարցերն ու բանալիները, որոնցով այնքան հարուստ էր արևելահայ գրական առօրյան, քննարկվում էին նաև պոլսահայերի մոտ: Արևմտահայերի համար հատկապես կենսական նշանակություն էր ստանում արևելահայ սեպարատիստական գրականության և դեղադիտական սկզբունքների յուրացման հարցը: Որովհետև, եթե ութսունականները հետևելով եվրոպական սեպարատիստական դպրոցի մեծերին և ժողովրդական բովանդակությամբ հագեցած արևելահայ գրողների երկերին, դեռ նոր էին փորձում ձեռք բերել «առաջավոր իրապաշտության սկզբունքները» և պարզորոշել, այսպես կոչված, «զուտ» (նկատի ունեն ժողովրդական) գրականության ակունքները, արևելահայ հատվածում Պառչյանի, Մունդուկյանի, Աղայանի և մյուսների ստեղծած գեղարվեստական արժեքները վաղուց արդեն կանխորոշել էին արևելահայ սեպարատիստական գրականության զարգացման ուղին: Այդ գրականության ժողովրդական ոգին, կյանքի խոր ճանաչողության և բազմակողմանի վերապատկերման ուժն էլ հենց գրավում էր արևմտահայ ութսունականների մտքերը և տոգորում նրանց այդ ամենին ծանոթանալու, յուրացնելու, ըմբռնելու ցանկություն:

Տ. Կամարականը Ա. Շիրվանզադեի «Արամբի» վկայի

1 ԳԱԹ, Թ. Աղայանի Փոնդ, № 139, Հ. Ասատուր, Հրատարակողներն էլերեն:

2 Նույն տեղում:

1 «Արևելք», № 183:

գրախոսականում նշում էր, որ եթե արևմտահայերը Հետևեին «Կովկասյան» գրական շարժմանը՝ ուսումնասիրելով նրանց ուղղութիւնը, ապա «Պոլսահայքս» պիտի բարեշրջեինք մեր գրական հնամանդ ու ծաղրելի ձևերն»։ Նա գտնում էր, որ գրական «մեկ արժեքավոր ուսումնասիրութիւն ուստահայ և տաճկահայ» գրականութեան մասին մեծապէս պիտի նպաստեր հայ գրականութեան ընդհանուր զարգացմանը՝ վեր հանելով «երկրքին գրականութեանց ուրույն բնույթը... այն սկզբնապատճառները, որք հառաջ բերած են սոյն կրկին գրականութեանց հայտնի խորութիւնն, ինչպես բարուց վիճակը, մտաց զարգացումը, սերունդը, կլիման, միջավայրն և այլն, ըստ այս ճամբարութեան թե «արվեստին առարկան կենթարկի յուր միջավայրին բարուց ու մտաց ընդհանուր վիճակին ազդեցութեան»։ Ասատուրը «պատմական իմաստասիրութեան» թելադրանք էր դիտում սեպուխական գեղագիտութեան յուրացման անհրաժեշտութիւնը և պաշտպանում էր այն միտքը, որ արևելահայ գրական-տեսական խնդիրները պետք է դառնան քննարկման առարկա, ուսումնասիրվեն դրանց կոնկրետ բովանդակութիւնը և դրսևորման ձևերը, վեր հանվեն նոր ուղղութեան առանձնահատկութիւնները։ Նա խոսելով արևելահայ արձակի մասին, ամենից առաջ նշում էր նրա ժողովրդական ուղին, կյանքը խորազնին հայացքով ընկալելու կորողութիւնը, որն, ինչպես քննադատն է գտնում, սոցիալ-հասարակական իր նշանակութեամբ այնքան կենսական խորնդիր էր, որ անխուսափելիորեն իր վրա պետք է հրավիրեր արևմտահայ գրողների ուշադրութիւնը։ Նա գտնում էր, որ Սունդուկյանը, Պոռչյանը, Ծիրվանզադեն, Լեոն և ուրիշներ զննում և ուսումնասիրում են հասարակական տարրեր խավերի կյանքը՝ «իրենց ժամանակակից ընկերութիւնը, ապագա հայ սերունդներուն թողլով իրենց միջավայրին ու ժամանակին վրա կարևոր վավերագիրներ»։

Քննադատը այդ գրականութեան նպատակը չի համարում

1 «Արևելք», 1889, № 1657:

2 «Արևելք», 1890, № 4009:

գրադեցնել մտքերը հաճելի կամ տխուր դեպքերով, այլ նա ավելի բարձր նպատակ է վերադրում դրան՝ գտնելով, որ այդ գրականութիւնը պետք է ներգործի «ընկերական» կյանքի վրա, բարեփոխի այն, ստեղծելով նոր բարքեր, ներշնչելով նոր գաղափարներ։ Այս առումով Ասատուրը հաստատում էր, որ այդ գրականութիւնը պետք է «բարոյական ուժ» դառնա արևմտահայերի համար և նպաստի իրականութեան վերափոխմանը։ Եվ որպէսզի հասկանալի դառնար «ուստահայոց» կյանքի յուրահատկութիւններն ու գրական հարցերի բնույթը, Ասատուրը պահանջում էր պատմական հայացքի տակ դնել արևելահայ գրականութեան զարգացման ընթացքը՝ հայտնաբերելով ներքին այն գործոններն ու կրած ազդեցութիւնները, որոնց հնէքի վրա բարձրանում էր այդ գրականութիւնը՝ իր գաղափարական շոտավիզներով, գեղարվեստական առանձնահատկութիւններով և գրական նոր շարժման դեմոկրատական ձգտումներով։ Այս տեսակետից նրա հայացքը կանգ էր առնում ուստ գրականութեան վրա։ Ասատուրը անհրաժեշտ էր համարում ուսումնասիրել ուստ գրականութիւնը, «հետազոտել այդ գրականութեան «ուղղութիւնն ու սկզբունքները», որպէսզի գրանով ավելի պարզ դառնան արևելահայ գրականութեան զարգացման ուղիները։ Նա ցափով էր նկատում, որ տակավին թաղավորում և կարգացվում էին Փրանսիական երկրորդական կարգի Հեղինակներ, իսկ ուստական դասական գործերը դեռևս անհայտ էին պոլսահայ շրջաններում։

Գաղտնիք չէր այն հանգամանքը, որ արևմտահայ գրականութիւնը տաանամյակներ շարունակ կրել էր եվրոպական գրականութեան ազդեցութիւնը։ Եվ մի կողմից գրական այս Հետևողութիւնը, իսկ մյուս կողմից ազդութեան երկու հատվածների գրականութեան համեմատումը, երբեմն հուսահատ եզրահանգումների էր բերում արևմտահայ մտավորականութեանը, որը խիստ քննադատութեան էր ենթարկում տիւրապետող գրական ըմբռնումները և թերազնահատում կամ բոլորովին ժխտում արևմտահայ գրականութեան ողջ վաստակը, հաճախ համարելով այն օտար ազդեցութեան արդյունք։

«...Մենք երբեք չենք ունեցած ճշմարտապես հայ գրականու-
թյուն մը, — դրու՞մ էր Ա. Չոպանյանը: — Ոսկեդարու հեղինակը
հետևող եղած են Հունաց և Ասորվոց. անկեղծ գարուց մա-
տենադրաց մեջ կը անսնկի ավելի հզոր ազդեցութիւնն Հու-
նաց, Լատինաց, Արաբացվոց. իսկ այս դարուն մեջ, ուր մեր
գրականութիւնն ամենն ավելի ծաղկեցաւ, ամեն տարր ու
սնունդ օտարէն առին գրողները, նախ դասականաց, հետո
նոմանթիկներու և այժմ իրապաշտ ազդեցութեան»: Չո-
պանյանը չի անտեսու՞մ այն հանդամանքը, որ այդ ազ-
դեցութիւնը «մեծապես օգտակար է» եղել արեւմտահայ գրա-
կանութեան համար, և սակայն, նույնիսկ սակավաթիվ գրա-
կան այն արժեքները, որոնք պատիվ են բերում «մեր գրակա-
նութեանը»՝ օտար գրականութեան ազդեցութեան արդիւնք է
համարում: Նա գտնում է, որ այդ «ծովածափալ ու բազմա-
տարր» գրականութեան ազդեցութիւնը այնպէս է առողջել
մտքերը, որ վտարել է բնիկ-ազգային ու տեղային տարրը, ոչ
միայն ձեռի, այլև բովանդակութեան տեսակետից: «Ամեն ինչ,
առաջին դուրսդնեղութենէն ու առաջին ողբերգութենէն մին-
չև վերջին նորակեղծ ու վերջին քրոնիկը եվրոպական գրա-
կանութեան ուղղակի ծնունդն են...»: — Հայտարարում է նա՞:
Սրա պատճառը գրականագետը համարում էր պոլսահայ տե-
ղային պայմանները, ուր ազգային գույնը անհետանում էր
բազմաթիվ ազդերի, բարբերի ու գաղափարների այլազանու-
թեան մեջ: Սրան ավելանում էր նաև «աշխարհաբաղաբացիա-
կան» այն կրթութիւնը, որն օտանում էր պոլսահայը: Հայ-
կական, հարագատ բնակատեղին դամված ժողովուրդը միայն
կարող է ստեղծել զուտ ազգային գրու՞մով ինքնատիպ գրա-
կանութիւն: Այս տեսակետից, Չոպանյանն ունէր արևելա-
հայերի օրինակը, որոնց ստեղծած բարձրարժեք օրինա-
տական գործերն ինքնին այս թեզի ամենահետևողական հաս-
տատումն էին:

1 «Հայրենիք», 1891, № 8:

2 Նույն տեղում:

Տ. Կամսարականը «Հայ գրականութեան ձգտումը» հոդ-
վածում, քննելով ազգային գրականութեան «ամբողջական»
պատճառները, նա ի վերջո հանգում էր այն եզրակացութեան,
թե Փրանսիական գրականութիւնն ու ռոմանտիկական գրա-
րոցն է ստեղծել «տարտած ու անկերպարան» գրականու-
թեան հիմնական պատճառը: Քննադատը ռոմանտիկական
մեթոդի, ինչպէս և ամեն մի գրական ուղղութեան առաջացումը
գիտում էր որպէս իր ժամանակի բարբերի և գրական-հասա-
րակական միջավայրի «համապատասխան արտահայտութիւն»:
Հիմնավորելով գրական դպրոցների ձևավորման հիմքում ըն-
կած օբյեկտիվ-պատմական գործոնների անհրաժեշտութիւնը,
Կամսարականը դրու՞մ էր. «բայց անհերքելի է թե՛, անպա-
շտ ու անհեթեթ էր մեր գրականութեան մեջ այդ դպրոցին
ուղղութիւնը, զոր ո՛չ մեր ազրելու, ո՛չ մեր խորհելու, և ո՛չ
մեր զգալու եղանակը կարգարացնէին»:

Պետք է հավատալ, որ ռոմանթիք դպրոցն մուրեցուց
մեր գրականութեան բնականոն ընթացքը և թե՛ առանց այդ
դպրոցին հետևելու հավանութեան, մեր գրականութեան
բնագոյն ավելի աղեկ պիտի զարգանար:

Մեր ազգային գրականութիւնը ռոմանթիք դպրոցին ան-
բասաւոր հիման վրա, չէր կրնար զարգանալ ու չը զարգա-
ցաւ»: Նա դտնում էր, որ ռոմանտիկական գրականութիւնը,
որը արեւմտահայ գրականութեան մեջ չունէր իր արժանավոր
ներկայացուցիչը, նախ առաջ բերեց «պատճառների ու շողոմ
գրականութիւն մը» և ապա աշխարհաբար լեզուն «սակաւ»
զարգացրեց՝: Այստեղ Կամսարականը, որքան էլ տարօրի-
նակ, ընկնում էր ծայրահեղութեան մեջ՝ ժխտելով մի ամբողջ
գրական ուղղութեան առկայութիւնը արեւմտահայ գրականու-
թեան մեջ: Մերժվում էր ռոմանտիկական-բաղաբական վի-
ղագրութիւնը, Մերենցն ու Տյուսաբը, ազգային ռոմանտի-
կական երգը:

Այս նույն տեսակետն էր պաշտպանում նաև Ա. Հարու-

1 «Հայրենիք», 1891, № 13:

2 Նույն տեղում: № 17:

Թյունյանը՝ Կամսարականից մեկ տասնամյակ հետո: «Եվ ստուգիվ Փրանսական ուսմանթիզմն է, — գրում է նա, — որ կը տիրեր մտքերու վրա: Մեր բանախոսները Կամպեթիստներու կամ Թիեռներու վարի քովիններն էին, մեր բանաստեղծները՝ մեծ մասով Լամառթիին կամ Հյուկոյին խեղաթյուրված ու կեղծ վաստանթներն էին:

Ռումանթիզմ, կամ նաթուռալիզմ, իրենց բացարձակ իսկուլթյան մեջ, մանավանդ Փրանսական կրնային ըլլալ: Հայ գրականութեան մը ուրույն դոյությունը՝ օտար դպրոցի մը կեղծ պիտակովը չպիտի կրնար փրկվիլ»¹:

Վերջին հաշիւով դրական այս մտայնությունը, ոչ թե եվրոպական ուսմանտիզմի դադափարական-դեղազիտական դրութեան սոսկ ազդեցութեանն էր փնտրում արեւմտահայ գրականութեան վրա, այլ հակված էր գրական այդ ուղղութեանը՝ ուղղութեան, որն իր բովանական խոր արտահայտութեանը գտալ հայութեան այս հատվածի գրականութեան մեջ, ամբողջապես դիտելու ոչ որպէս ձեւավորված հասարակական դադափարարնութեան, այլ զուտ ներմուծված սկզբունքներ հետևանք:

Քննադատական զգաստ մի հայեցութեամբ, սակայն, նույն 90-ական թվականներին և դարասկզբին, մեկնաբանվում էին վերոհիշյալ մտայնութեան ոչ ճիշտ կամ թերի կողմերը, և գրական երևութեանը դիտվում իրենց բնականոն տեսքով:

«Մասիսի» էջերում 1891 թ. արեւմտահայ գրականութեանն ամբողջապես մերժող Ա. Չոպանյանը, 1892 թ. գրում էր. «Մեր գրականութեանը ոչ միայն իր դոյութեան իրավունքն ունի այսօր, այլև ամբողջ պատմութեան մը արդէն»²: Նա նշում էր Մամուրյանին, որն իր ինքնուրույն և թարգմանական գործերով կոեց և կոփեց աշխարհարար լեզուն, Պարոնյանին, որը դիտում և քննում էր կյանքը իր աստին և հանրային «անման» ծագրանկարներով... «Արևելքի» քրոնիկագրին

(Արփիարյան), որն այնքան խիզախորեն պաշտպանում էր ռեալիզմի դատը...

Դադափարական միեւնույն ելակետերից խոսք է բացում նաև Հ. Ասատուրը և այն ուղղում հենց Չոպանյանի դեմ, որն 1891 թ. խոսելով գրականութեան և հատկապես «բանաստեղծութեան հոգեւարքի» մասին, նկատում էր, թե «քերթութեան բողոքաւ խարույկներեն հիմա խանձողները միայն կը տեսնվին և արդի ընթացքով, քսաներորդ դարուն, մոխիր ու փոշի միայն պիտի մնար անոնցմե»¹: «Նս պիտի գոհանամ իրողութեան մը հաստատելով միայն, — գրում է Ասատուրը հակադրվելով Չոպանյանին, — բացահայտ իրողութեան մը, սա թե մեր գրականութեան մեջ հիմա ամեն ժամանակե ավելի կը մշակվի բանաստեղծութեանն ու ուսանալորը, և Չոպանյան շատ պէշ ընտրած էր իր ժամանակը բանաստեղծութեան վախճանին վրա խոսելու մեր մեջ այն պահուն իսկ, ուր քերթելու հրայրքը կը վարակեր մեր գրողները»²: Նա Չոպանյանին հիշեցնում է Սիպիլի «Մենաստանի կույսը» և «Ժանյակները» բանաստեղծութեանները, Ա. Փանոսյանի «Հանդապատումները», որոնք «Հայրենիքի» հրատարակչը դարձան. Թերզյանին ու Սեթյանին, որոնք շարունակեցին քերթել. Մ. Ա. ճեմյանին, որը մամուլին հանձնեց «Գարնան հովեր» խորապըրով բանաստեղծութեանները, իրեն իսկ Ա. Չոպանյանին, որը հրատարակեց «Արշալույսի ձայներն» ու «Թրթռումները», Հովհաննիսյանին, որն իր բանաստեղծութեանների նոր հաստորում «իրական կյանքի նվազներ» երգեց, Եանթին, Մուշեղյանին և եկող նորերին...

Հ. Ասատուրը անխուսափելի էր համարում այն հանդամանքը, որ արեւմտահայ գրականութեանը «համադրային ու եվրոպական ձայն մը ունեցած» է, բայց ամենին չի նշանակում, որ այդ գրականութեանը դուրի է ինքնատիպութեանից և եվրոպականի «կույս» հետևութեանն է միայն: Ոչ ոք չի կարող ուրանալ, գրում էր նա, «թե մեր նոր գրականութեանն

1 «Մուրհանգակ», 1901, № 723:

2 «Մասիս», 1892, № 3959:

1 «Մասիս», 1892, № 3963:

2 նույն տեղում:

ավելի կենդանութուն ունի, ավելի շատ գաղտնիքներ կը հուզի», քան երբևիցէ: «Գեղագիտական բնագոյներով օժտու- ված գրական նոր տաղանդներ կարտադրեն քերթվածներ, նո- րավեպեր, քննադատութուններ, նուրբ խաղերով ու շնորհալի քմայքներով, մտքին նազանքները գլխիսիչ հրապույրով մը ի հայտ կուզան քանի մը գրողներու քով, և երևակայութեան թուխըը թերևս առաջին անգամ այդչափ ճախրուն թափ մը կառնե մեր աշխարհիկ գրականութեան արտադրութեան մեջ...»¹: Մի՞թե Մերենցի, Մամուրյանի, Տյուսաբի, Չոչրապի և մյուսների ստեղծած գեղարվեստական արժեքները հայ իրականութեան ծնունդ չէին, նկատում է Ասատուրը, որոնք արտահայտում էին հայ ազգային կյանքն զբաղեցնող բոլոր- մասի իմ բարդ ու կնճոռոտ խնդիրներ:

«Պոլսահայ գրականութեանը եղալ այն ինչ—որ պիտի ըլլար» — հայտարարում է Պերսերյանը: Անմիջական շփման մեջ լինելով բազմաթիվ ազգերի հետ, պոլսահայը պետք է յուրացներ օտարամուտ գաղափարներ և սովորութիւններ, որոնք պետք է ազդեին իր ազգային նկարագրի վրա և փո- խեին այն: Բնական է, որ այս ամենը պետք է թափանցեր նաև նրա գեղարվեստական ընկալումների շրջանակները, յուրահատուկ դուրս հաղորդելով դրան: «Բայց այս բան է թե արդարև օտարահամ, օտարահոս, օտարածև եղած է բո- լորովին պոլսահայ գրականութեանը, — իրավացիորեն հարց- նում է նա: — Կարելի բան է, սովորաթիվ հասարակութուն մը, որ միշտ սնած է դավառին շարունակ տված տուտ տար- րերովն, որ միշտ հարաբերութեան մեջ եղած է իր տոհմակից եղբայր հետ, որ իր միջավայրին մեջ՝ առանձնահատուկ կրո- նական—տոհմային կյանք մ'ունեցած է և նույն իսկ այդ տեսա- կետով կեղծոն մ'եղած զավասական վիճակներում, կրնա՞ իր ցեղային հատկութիւնները կորուսած ու զխափին օտարացած հատված մը համարվիլ»²:

Գրական ազդեցութեան վերաբերյալ վերը հիշված միա- կողմանի ըմբռնումները, որոնք հիմնվում էին արևմտահայ

80—ականներից մի քանիսի (Չոչրապ, Կամսարական) կար- ծիքների վրա, իրականում ոչ այլ ինչ էին, եթե ոչ հիացմունք Քրանսիական ռեալիստական գրականութեան նկատմամբ: Պարզապես ինչ—որ ծայրահեղորեն էր ընկալվում ազդեցու- թեան գործոնի դերը: Պոլսահայ գրականութեանը «հետևողու- թեան» անվանող և ոչ մեկը հակված չէր Պարոնյանի, Մերեն- ցիի, Չոչրապի կամ Կամսարականի գործերը համարելու օտար միջավայրի արդյունք: Որոչ քննադատներ հանգամանորեն քննարկում էին գրական ազդեցութեան խնդիրը, բայց երբեք արևմտահայ գրականութեանը չէին դիտում որպէս եվրոպա- կան գրականութեան հետևողութիւն:

Գրական փոխազդեցութեան խնդրի այսօրինակ դրվածքն ու պատկերացումները, որոնք թեև հաճախ հանդեպում էին սխալ ենթադրութիւնների, հիմնականում արևմտահայ գրա- կան կյանքի բարեփոխման և գրականութեանը նոր ուղիների վրա դնելու շահախնդրութիւններից էին բխում: Երիտասարդ գրողները փորձում էին որոնել, գտնել արևմտահայ գրա- կանութեան ետ մնալու պատճառները, հայտնաբերել այն գործոնները, որոնք խոչընդոտում էին գեղարվեստի ազգային նկարագրի դրսևորմանն ու առաջընթացին: Այս տեսակետից զարգացող քննադատութեանը հետապնդում էր նոր և հստակ նպատակներ: «Ոչ ինչ թերևս պիտի նպաստե այնչափ մեր արդի գրականութեան զարգացման, — դրում էր «Երկրագուն- դը», — լեզվի մաքրութեան, ճաշակի աղնվացման և կատարյալ երկոց արտադրութեան, որչափ գրագատութիւնն, լուրջ՝ հմտալից՝ արդար գրագատութիւնն: Բաղմակողմանի ընդար- ձակ հմտութիւններ, զղայնութիւն, երևակայութիւն, նուրբ ճաշակ, անկեղծ, անկախ, իմաստասեր... ահալասիկ զլխա- վոր հանգամանք մի ճամբրիս և կատարյալ գրագատի»³:

Գրական քննադատութեանը, որն արևմտահայ իրակա- նութեան մեջ գոյութեան իրավունք էր նվաճել գեղև տասնամ- յակներ առաջ, միայն 80—ական թվականների կեսերից հետո, երբ հաղթանակել էին արդեն ռեալիստական գեղարվեստութեան

1 «Մասիս», 1882, № 3971:

2 «Մասիս», 1901, № 10:

1 «Երկրագունդ», 1886, № 79:

սկզբունքները, ստացալ իր իսկական իմաստն ու նշանակու-
թյունը:

90-ական թվականների քննադատության բովանդակու-
թյունն են կազմում Հիմնականում 80-ականների սերնդի
առաջադրած դադարաբաժանի ու գեղարվեստական դրույթները,
որոնք այս տասնամյակում ստանում են ավելի խոր և բազ-
մակողմանի իմաստավորում: Կարևորն այստեղ այն էր, որ
քննադատությունը աստիճանաբար գեղարվեստական ստեղ-
ծագործություններին արվող իր դնահատումներով և դրական
երևույթների օբյեկտիվ ընկալմամբ հաստատում էր չափա-
նիչներ ու սկզբունքներ, որոնք բովանդակային սրություն էին պա-
հանջում ստեղծագործության գնահատականի և արժեքի ճշ-
մարիտ ընդդրումները տալիս: Այն չափով, ինչ չափով հա-
սարակական գիտակցության մեջ տեղի էին ունենում փոփո-
խություններ՝ կապված ուսու և եվրոպական գեղարվեստական
մտքի յուրացման, ժամանակի էսթետիկական և գրականա-
գիտական նորահայտ տեսությունների ծանոթացման հետ,
այդ չափով փոխվում էին նաև քննադատության գերի ու բո-
վանդակության խնդիրները:

«Հավակնոտները» հոդվածում Ասատուրը նկատում էր,
որ թարգմանական դրբերի լայն հոսքը և գրականության բաց
դռների քաղաքականությունը նպաստեց այն բանին, որ գրա-
կան ասպարեզում երևան եկան գործեր՝ վերացական դադա-
րաբաներով և կասկածելի գեղարվեստական արժեքներով: Ի
հակադրություն սրան, արևելահայ դրականությունը դարձա-
նում էր այնպիսի մի աչալուրջ քննադատության ուղեկցու-
թյամբ, որը քննության էր ենթարկում ոչ միայն դրական ար-
ժեքները, այլև դպրոցը, թատրոնը, գեղարվեստը: Հենց այս
էլ Ասատուրը համարում էր նրանց արվեստի դարձացման
բարձր մակարդակն ապահովող ամենամեծ գրավակներ:
Գրականության նկատմամբ «Նսկողության» պակասը սկիզբ
էր դնում ապաշնորհ գրիչների հորձանքին, որն ինչպես
քննադատն է դառնում, հեղեղում էր գրական հրապարակը:

Չոպանյանը քննադատության պակասին և գրական երե-
վույթների նկատմամբ տիրապետող անփութությանն էր վե-

րագրում այն փաստը, որ հրատարակվում էին գեղարվես-
տական արժեքից բոլորովին զուրկ գործեր: Որպես օրինակ
նա բերում է Ստ. Փափաղյանի «Գրական շիթեր» բանաստեղ-
ծությունների տեսարկը և խիստ քննադատում անիմաստ
լեզվով գրված և տաղաչափության անհամար սխալներով
լեցուն նրա բանաստեղծությունները: Քննադատը գրում է.
«Ինչո՞ւ և այդ պատանին չէ նախընտրեք իր ուժերն ուրիշ բանի
մը ծառայեցնել, ինչո՞ւ չէ դիտեր որ իր շուրջ դրական շարժում
մը և ուղղություն մը կա, զոր պետք է հասկնալ կամ իսպառ
ետ քաշվիլ...»: Եվ որպեսզի գրական հրապարակը երբևիցե
մուտ չդործեն նման ապաշնորհ գրիչներ, Չոպանյանը առա-
ջարկում է ստեղծել մի այնպիսի կենսունակ քննադատություն,
մի տեսակ «գրական ոստիկանություն», որ «մասնանիչ ընե
միջակությունը, դատապարտե իմաստակությունը, վատրե
սկարությունը...»

Ամեն անկեղծ գիտողություն իր օգուտը ունի, — հիշեց-
նում էր Ասատուրը, — նույն իսկ երբ ցավ պատճառելու հան-
գամանք ունենա...

Ուստի քննադատությունները որքան ալ սուր ու խիստ,
պետք է վիրավորեն զմեզ, բավական է որ անկեղծության
չեղոր և օգտակար ըլլալու ձգտումը դառնա անոնց մեջ»:

Գրական քննադատությունը առաջնորդող գիտություն
դարձնելու մտահոգությամբ, Ասատուրը առաջ էր քաշում
համաշխարհային արվեստի տեսության և գեղարվեստի խըն-
դիրներին հասու լինելու պահանջը: Այստեղից էլ քննադատը
«խնամված գրադատականներու» երևումը «պոլսահայոց»
մեջ՝ գրված արևմտահայ ու թատնականներ Ա. Արփիարյանի,
Լ. Բաչալյանի, Ա. Չոպանյանի, Գ. Ֆեռզլյանի և մյուսների
կողմից, համարում է եվրոպական գեղարվեստական մտքի, փի-
լիսոփայության և Ֆրանսիայի նշանավոր քննադատների «տե-
սության և գրելու եղանակին ընտելացած» գործեր, որոնք

1 «Հայրենիք», 1892, № 254:

2 «Մասիս», 1898, № 9:

առաջավոր քննադատութեան «հիմերը դրին» արևմտահայ
զրահանութեան մեջ¹ :

Քննադատութեանը ներկայացված նման պահանջները
ենթադրում էին զրահանութեան այս անհրաժեշտ մասնա-
ճյուղի հասարակական դերին ու նրա բնույթին վերաբերող
խնդիրներին նոր իմաստավորում : Քննադատութեանը պետք է
ուչ թե սեղմված մնա զրահան-վեղադիտական հարցերի քննու-
թեան, ստեղծագործութեան դուրս դեղարվեստական չափանիշ-
ների վերլուծման և գնահատման սահմաններում այլ պետք է
ձեռք բերի հասարակական հնչեղութեան և զրահան երևույթ-
ների արժեքավորման հնարավորութեան : Դրանից ելնելով ու-
տիլիտար գեղագիտութեամբ գինված զրահան քննադա-
տութեանը, որն ավելի երկրորդական էր դիտում վեղար-
վեստի հարցերը՝ ընդառաջում էր իրականութեան առաջադրած
խնդիրներին ծառայելու գործնական նպատակին : Հարկավոր
է ճանաչել կյանքը, արտացոլել մարդկային և հասարակա-
կան ճշմարիտ հարաբերութեանները, բայց և «պետք է ղլա-
նալ զազափարներ հայտնելու իրավունքը», — գրում է Ասա-
տուրը՝ առաջ քաշելով զրահանութեան զազափարականու-
թեան անհրաժեշտութեանը և օգտակարի ու գործնականի բա-
ցահայտման խնդիրը² : Արևմտահայ հեղինակները, հաստա-
տում էր քննադատը, իրենց ստեղծագործութեաններով ըն-
դառաջում էին գեղագիտական այս սկզբունքի իրադործմանը,
թեև նկատելի էր, որ նրանք այնպես էլ հեշտութեամբ չէին
հրաժարվում գեղարվեստի հավիտենական իդեալներից :

Ամփոփելով «Մասիսի» մեկ տարվա զրահան արդյունք-
ները, Չոհրապը պարբերականի արժանիքը դիտում էր այն,
որ շարաթաթերթը առաջնորդվելով միայն գործնական-առա-
ջադիմական նպատակներից անխնա մտրակել և խարազա-
նել է այն ամենը, ինչը սր հին էր, հետագեմ և, ամենակարե-
վորը, ոչ գործնական : «Իեղեցիկի գազափարին զուգընթաց, —
գրում է նա, — պահպանեցինք օգտակարի, պիտանիի գազա-

փարը՝ միշտ դրական տեսակետով, որ սպաքեն «Մասիսին»
միակ տեսակետն էր»³ : Եվ դրանից ելնելով էլ քննադատը
դատապարտում է բոլոր նրանց, «որոնք հանրութեան դեմ
որևէ պարտավորութեան չունենալու գազափարը ունին, որոնք
սղորմելի են ասամոլներ են, աննշան ու անօգուտ մարդիկ...» :
Սա նույնիսկ դառնում էր պահանջ, որն ընթանում էր «...կյան-
քի իրական պատկերներ ներկայացնելով մեր ընկերական
բազմապիսի խնդրոց լուծումը հրապարակ հանել...» ընդհա-
նուր գազափարի տակ : Այստեղից էլ, տրամաբանորեն, ակըն-
հայտ է դառնում այն վերաբերմունքը, որը դրսևորվեց ար-
վեստի օբյեկտիվ բովանդակութեանը ժխտող Գ. Օտյանի գրա-
կան հայացքների նկատմամբ :

Գրահանութեան հասարակական դերի ըմբռնումը, որը
դրսևորվում էր իբրև գեղարվեստականութեան չափանիշ,
ուղիղ գծով կապվում էր ժամանակի ողու առաջադրած խըն-
դիրների և պահանջների հետ : Ուտի և այն ամենը, ինչ որ
հանդես էր գալիս այս ընդունված թեզին հակառակ, մերժվում
էր զրահան քննադատութեան կողմից՝ դիտվելով որպես ժա-
մանակավրեպ կամ ոչ առաջագեմ երևույթ : «Գեղարվեստի
վերին շրջաններում» մեջ թափառող բանաստեղծի հույզերը,
քննադատ-Ասատուրին անիմաստ էին թվում մի այնպիսի
ժամանակ, երբ «Հանրութեան առաջադիմութեան հոգը» «կըր-
ծում» էր առաջավոր մտավորականութեան մտքերը, երբ բո-
լորը տոգորված էին «գործնական առաջադրութեան» տա-
րածման հոգսերով : «Մեր համայնքի շրջանակին մեջ, — հի-
շեցնում էր նա, — գրելու, պատմելու այնքան տարօրինակ
երևույթներ կը տեսնեմ, նկարելու այնքան պատկերներ...»⁴ :
Քննադատին այլևս չեն բավարարում ընդհանուր չափանիշ-
ներով ներկայացված զրահան երևույթներն ու դրանց տրված
գնահատականը, որովհետև գազափարական ու գեղարվես-
տական այլ պահանջներ էր նա վերապահում մտավոր-գրա-
կան նոր շարժմանը :

Հրանտ Ասատուրի՝ 80-ականների թեժ դրապայքարի

1 ԳԱԹ, Թ. Աղստյանի ֆոնդ, № 139, Հ. Ասատուր, Հրապարակագրի
էջերն :

2 «Մասիս», 1898, № 9 :

1 «Մասիս», 1892, № 3973 :

2 Արևելյան մամուլ, 1902, № 21, էջ 909 :

բովում ձևավորված և ավելի քան կեսդարյա ստեղծագործական փորձով կայունացած գրական-գեղագիտական հայացքների համակարգը՝ գրականության հասարակական գերի ժողովրդական աշխարհագրություն գիրքերից, խոր վերլուծական հայացք էր պարտադրում գրական երևույթների ուսումնասիրմանը, հաշվի առնելով արդիականության պահանջները: Հետադուրս մոտեցումը աչքի էր ընկնում ոչ միայն երևույթների ժամանակակից ընկալման սրույթյամբ, այլև իսկական պատմականությամբ՝ կասկածելին և անցուղիկը տարբերելու մնայուն ու կենսական արժեքներից:

Գնահատի գաղափարական հասունացումը, Ֆրանսիական գրականության խորիմաց ծանոթությունը և եվրոպական գրական մտայնության հետ նրա ունեցած անմիջական շփումը՝ կանգնեցրին նրան ռեալիստական գեղագիտության գիրքերի վրա. «Եվրոպա անցուցած երեք տարիներ, — գրում էր նա տարիներ անց, — իհարկե շատ փոխած էին համոզումներս գրականության մասին: Պատանեկության ստալին ներշնչումները, բանաստեղծական հավանոր ձգտումները, բուն խանդավառությունը տեղի տված էին ավելի գրական մտածումներու: Հզոր միտքերու դրացությունը, գրական հսկա գործերու միջավայրը զղացնել տված էին ինձի ոչնչությունը բոլոր այն ճամարտակի դրվածներուն որոնց բողբոջումին հանդիսատես ու քիչ մըն ալ մասնակից եղած էի»:

«Արևելքի» շուրջ ձևավորվող գրական հոսանքը, որին Ասատուրը ակնառես էր հեռվից, առաջին հերթին արժեքավորվում էր հենց այս տեսակետից: Դեռևս Փարիզում դանդաղ տարիներին նրա վրա մեծ ազավորություն էին թողնում նորաշրջան «Արևելքի» առաջին համարները, որոնք արևմտահայության մեջ կատարվող գրական հեղաբեկումների առաջին ազդու շարժումներն էին բերում: Ասատուրը ողջունում էր այս հայտնությունը, պարբերականի շուրջ բոլորած երիտասարդներին, որոնք նոր համոզումներով ու սկզբունքներով ապագայի էին նետվում մարտնչելու հին տիրացուական ձգտումների դեմ՝ «հայ լրագրությանը տալու այն ազնվությունը և արժա-

նապատվությունը, զոր հին լրագրողներեն շատերը արհամարհած էին...»: Եվ այս վերափոխությունը, որը շրջում էր ինչպես մամուլի, այնպես էլ գրականության դիմադրակները, Ասատուրը կապում էր այն փաստի հետ, որ 80-ական թվականներին արևմտահայ իրականության մեջ տեղի ունեցող գեղագիտական հին դեռևս հասարակական նոր հարաբերությունների ու մտածողության՝ փոխելով այդ իրականության գեղարվեստական ընկալման նորմերը՝ ռեալիզմի վերջնական հաղթանակի համար ստեղծելով զարգացման օրյակտիվ հնարավորություններ: Անշուշտ, գրական հին մեթոդի փոփոխման օրյակտիվ հիմքը արտաքին՝ սոցիալ-պատմական միջավայրն էր, բայց և այնպես, անհրաժեշտ էր, որ այդ փոփոխությունը գրեթե վեր ուղղվեց գրականության ներքին օրինաչափությունների զարգացման հետևանք: Երբ ռեալիզմի վերջնական հաղթանակի համար առկա էին արդեն այս երկու կարևոր նախադրյալներն էլ, ռոմանտիզմի գեղագիտությանը ապավինած ռեալիզմը զգում էր արդեն նրանից սահմանադրվելու հարկը: Ռոմանտիզմն արդեն կատարել էր իր պատմական գերը գրական իր իրավունքները հանձնել նոր զարգացող գեղարվեստական ուղղությունը՝ ռեալիզմին: Այստեղից էլ սկիզբ էր առնում նոր ուղղության և ռոմանտիզմի փոխհարաբերության հարցը, որը քննվում էր պատմականության տեսակետից:

Ասատուրը նշում էր, որ «ռոմանտիկ դարոցը» իր գաղափարաբանությամբ, իր արտասովոր սյուժեներով ու հերոսներով, և, ընդհանրապես, ռոմանտիկական արվեստն իր վերջին թվով, ժամանակին մեծապես նպաստել էր գրականության զարգացմանը: Բայց վերափոխված իրադրության մեջ, գրական նոր պահանջներն տեսակետից, ակնառու էին դառնում ռոմանտիզմի գաղափարական և գեղագիտական սահմանափակություններն ու թերությունները:

Գրական հեղեմունիան անցնում էր ռեալիզմին, որը ինչպես նկատում է քննադատը, կոչված էր քննելու և հետադուրս տելու կյանքի առօրյա ու տխուր կողմերը, վերլուծելու կյանքը

1 «Արևելք», 1898, № 3771:

1 «Արևելք», 1898, № 3771:

իր հակասութիւններով, վեր հանելու իրականութեան ճշմարիտ հարաբերութիւնները, տալու կյանքի իրական պատկերը՝ հակառակ «սովանտիկ» դպրոցի առաջադրած «գազափարներու և իդէալներու»:

Ընդհանուր նշանաբան դարձած «ժողովրդայնութեան խնդիրը», արեւմտահայ գրական միտքը դուրս էր բերում «մեղկացած խճուղուն» ուղիներից՝ դեպի կյանքի ճանաչման, վերլուծման և ժողովրդի հոգսերին ու հուշերին մասնակից լինելու լայն սլորաները: Ասատուրը նկատում էր, որ կյանքի, մարդկային հարաբերութիւնների նոր ընկալումները «կաղ-դույր կը բերեն մեր գրականութեան արեւնադիրի երակներուն», և նորովի բովանդակութիւն են հաղորդում գրականութեանը, ոչ միայն գողափարական, այլև լեզվա-ոճական տեսակետներից: «Հին ուսուցիչի գրականութիւնը, — գրում էր նա, — աթոռ չունի ար այս նոր կաճառին մեջ. «հոգի»-ի, «վարդ»-ի, «սոխակ»-ի բոսորացած նանրաբանութիւնները, դպրոցականի հավակնոր ճառերը, պատվելիական քնարեր դրվածքները, բացառանջութեան այն հավաքածուները բոլոր, որոնք վերացական սերունդի մը հոգեկան գլխավոր սնունդը կը կազմեն այն տան և ազատ մուտք ունեն հին հայ լրագրութեան մեջ, կը վտարվեն անկե»: Միմիայն սուորյա կյանքի ու ժողովրդական բարքերի պատկերներ, ազգային միջավայրից մանրամասներ, քրոնիկներ և նորավեպեր, որոնք «առողջ ու նուրբ գրականութեան մը նախախայրիքը կը բերեն», հենվելով՝ «գիտութիւնը ժողովրդական ընելու» ջանքերի վրա:

«Արևելքի» գրական առաջընթացը Ասատուրը բացատրում էր ոչ միայն հասարակական կյանքի նոր իրադրութեան պահանջներով, այլև այն հանգամանքով, որ խմբադիր Կ. Ութուճյանից հետո, պարբերականի հրատարակութիւնը իր ձեռքն էր վերցնում դործելու եռանդով լեցուն գրական առաջադեմ երիտասարդների կազմակերպած խմբագրական նոր կազմը, որը գլխավորում էր Ս. Արփիարյանը: Ասատուրը խորապես ըմբռնում էր «Արևելքի» և ապա «Մասիս» պարբերականների շուրջ համախմբված ութուճյանականների կատարած

դերը արեւմտահայ գրականութեան մեջ, հատկապես մի այնպիսի ժամանակաշրջանում, երբ բազմաթիվ «տափակ դրվածքներ, որոնք ճաշակները կապականեն», ամբողջապես լցրել էին գրական հրապարակը՝ խղելով կյանքի ու գրականութեան կենսունակ կապերը: Այս սերնդի գրական մտածողութիւնը, ճաշակը, և գրականութիւնը կյանքին մոտեցնելու ձգտումը, որը ձեռք էր բերում հասարակական մեծ հնչեղութիւն, քննադատն ամենակարևորն էր դիտում ութուճյանականների վստահը պնահատելիս: Իդուր չէ, որ Ասատուրը նրանց համարում էր մեր գրականութեան ապագայի «գեղաճիճաղ հույսերը», որոնք «թարմ, կենդանի գրոշմ մը ունին», իրականի և անկեղծութեան գրոշմը: «...Գրականութեան համար, դաստիարակութեան համար իրենց հատուկ տեսութիւնները ունին, — գրում էր նա, — քիչ մը արմատական, բայց խոհուն տեսութիւններ, որոնք մտածել կուտան իրենց անդրանիկները: Եվ իրենց գրականութիւնն ալ շանդրադարձներ բնավ 60-ի սերունդին վերջոյուսուց ճամարտակութիւնները այլ հիմ մը ունի, բան մը կուզե սորվեցնել, օգտակար ըլլալ»: Իրականութեան օրինաչափութիւնների արտացոլման պահանջը դառնում էր օրակարգի հարց, և կյանքի օրյեկտիվ ճշմարտութեան լույսի տակ խամբում էին սովանտիկ պատրանքները ու երողները՝ մեջտեղ բերելով հասարակական հարաբերութիւնների իրական պատկերը:

Այս տեսակետից, Արփիարյանի քննադատական գործունեութիւնը Ասատուրի համոզմամբ մեծ արանդ ունի ուսուցիչական մեթոդի դրույթների հաստատման դործում: Արփիարյանն առաջիններից էր, որ հանդես եկավ գրականութեան մեջ ռեալիզմի դպրոցի գեղարվեստական սկզբունքների հրապարակային սրաշարանութեամբ: «Արփիար կը ջանար, — գրում էր Ասատուրը, — իր ուղղութեամբ գրողներ գտնել, կը խոսեր, կը համոզեր, անողոք էր սովանտիկներու դեմ, կը ծաղրեր շարունակ: Արդարև, — շարունակում է քննադատը, — հյուսիսայտալութիւնը դեռ սովորութեան մնացած էր ամեն անոնց մոտ, որոնք 70-ական թվականներուն Հյուսիսի,

Պայտրնի, Լամարթինի և Մյուսի անունով երգվող հայ գրողներուն դործերով սնած էին»։ Այսպիսի միջնորոտում Արփիրայանի պայքարը հիմնականում ծավալվում էր կյանքի և դրականութեան կապի ամրապնդման, դրանց փոխհարարութեան խնդիրներին շուրջ, որոնք նպատակու էին ութսունականների դրական-տեսական հայացքների ամրապնդմանը։ «... Հետզհետե ավելցան իրապաշտութեան հետևողները, նկատում է Ասատուրը։— Գրողները ավելի սակավապետ և ավելի դրական դարձան։ 1887-են 1893-ի զանազան խմբագրութեանները հրատարակած «Մասիսները» և 1891-ի «Հայրենիք»՝ այս ողին ավելի շեշտեցին և առողջ դրականութեան մը սկստով մշակվել որուն ազդակներն եղան Արփիրայանի զատ Գ. Զոհրապ, Լ. Բաշայան, Տ. Կամսարական, Գ. Չնտղյան, Ե. Օտյան, Ա. Զոպանյան և ուրիշներ»։

Ռեալիստական արվեստի տեսական դրույթների պաշտպանութեամբ հանդես եկան նաև Տ. Կամսարականը, Լ. Բաշայանը և արևմտահայ ութսունականներից շատերը։ Կամսարականը նոր արվեստի նշանաբանն էր համարում իրապաշտութունը, որ պահանջում էր «զգալ բնութեանը և արտահայտել զայն այնպես, ինչպես որ է»։ Իսկ Եր. Օտյանը նկատում էր, որ թեև նոր մեթոդով գրված ստեղծագործութեանները դեռևս լիարժեք դործեր չեն, բայց այդ գրականութեանը «իբր այս սաղմուկան միջակին մեջ՝ դարձյալ շատ ավելի կարժե քան հինը»։ Նշելով իրապաշտութեան գտած համակողմանի արտահայտութեանը գեղարվեստի բոլոր ճյուղերում և դրականութեան մեջ, նա ներկայացնում էր բնապաշտական (իրապաշտական) դպրոցի դրույթները և հասարակութեան գեղարվեստական զարգացման տեսանկյունով, ձեռնարկով մեթոդը դիտում որպես մի նոր «զարագլուխ» արվեստի աշխարհում։

1 ԳԱԹ, Թ. Ազատյանի Փոնդ, № 139, Է. Ասատուր, Հրապարակագրին հուշերն։

2 «Արևիկ», 1890, № 4087։

3 Նույն տեղում, № 1657։

4 «Մասիս», 1893, № 3991։

Իրականութեան սոցիալ-հասարակական հանգամանքների ճշմարտացի արտացոլման խնդիրը արևմտահայ քննադատներն ամենազլխավոր հատկանիշն էին դիտում՝ դրական նոր դպրոցի դերը պահանջելու։ «Ճշմարտութեանը՝ ուրեմն, — գրում էր Զոհրապը, — ամեն բանն ստաջ, մանավանդ թե ամեն բանն վեր, ահա դրականութեան արդի բանաձևը», որը նա համարում էր Զոպայի ավանդը։ Հանդես գալով բարբերի և դրական անցած նորմերի քննադատութեամբ՝ Տ. Քելեկյանը «Հին կյանքի կեղծ պարկեշտութեան տեղ՝ դիտակցված «անձնաճանաչութեան» խնդիր էր առաջ քաշում՝ ոտմանտիկ «խնկարույր» դարձվածքների փոխարեն անհրաժեշտ համարելով «ճշմարտութեան ճշգրիտ արտահայտութեանը»։

Նրանք գտնում էին, որ սչ թե պետք է ընդդէմ հերոսականը և դրանով ազդել սրտերի ու մտքերի վրա, այլ պետք է ցույց տալ ուսուցիչ իրականութեանը, մարդուն իր իսկական դրույթամբ, իր ողբերգական միջակի օբյեկտիվ բացահայտմամբ։ Իսկ հնարավորութեան կտար ճանաչել այն իրականութեանը որտեղ սպրում էր մարդը, տոկալ այն բոլոր դժգոհութեանների դեմ, որ հարուցում էր կյանքը, ծանր իրադրութեան վերապրումով՝ պահանջել մարդկային բարձր արժանիքներն ու դատապարտել այն իրականութեանը, որը ոտնահարում էր ազնիվ ու անկաշառ մարդկային իրավունքը։

Ասատուրը պահանջում էր, որ իրականութեան ոտմանտիկական պատկերավորումը փոխված հասարակական իրադրութեան մեջ տեղի տար կյանքի ձեռք և օբյեկտիվ ճանաչողութեան խնդիրն։ Սրանից էլ հետևում է, գտնում էր Ասատուրը, որ դրականութեանը պետք է ցույց տա, թե որն է կյանքի իսկական պատկերը, բուն բովանդակութեանը և դրանով իսկ հանդիսանալ անհրաժեշտ հետևութեան՝ կյանքի վերափոխման ուղիները նշելու իմաստով։ Միայն ճշմարիտը, միայն այն, ինչ որ իրականում տիրապետող է, որովհետև ի վերջո, հենց կյանքի իսկ հաստատմամբ, այդ է կարևորը, «ազդեցիկը, օգտակարը»։ Իրույթը գտնում էր արևմտահայ գրողներին դրական դավանանքը, որոնք իրենց ստեղծագործութեաններով դալիս, հաստատում էին այն։

Հասարակական կյանքի նկատմամբ քննադատական միտումը խոր արտացոլում էր գտնում ամենից առաջ դրահանութեան և հրապարակախոսութեան մեջ: Եվ այս առումով, Ասատուրը մեծ դեր էր վերապահում գրականութեանը՝ արտացոլելու կյանքը, խորամուխ լինելու նրա ներքին հակասությունների մեջ, մերձենալու ժողովրդին, ուսումնասիրելու իրականութեան բազմակողմանի երևույթները: Ուսիրիտաբիզմի փիլիսոփայութեանը, որը հասարակական մտքին պարտադրում էր վերլուծող քննադատական ոգի, Ասատուրի համար տեսական հիմք էր դառնում քննելու ազգային ինքնաճանաչութեան հարցերը:

Ասատուրը պահանջում էր ճանաչել կյանքը, ուսումնասիրել մարդկային հարաբերություններն ու միջավայրի ետնախորշերը: Նա հաստատում էր, որ դրականութեանը պետք է ձեռք բերի հասարակական բովանդակություն և պատասխանի ազգային ու սոցիալական հրատապ խնդիրներին: «Հայ կյանքն ուսումնասիրելու հարկը», որն իր տեսական արդարացումն էր գտնում կյանքի ու դրականութեան փոխհարաբերություններում, գրականութեան հասարակական դերի ընդհանուր դրույթներում, Ասատուրը հիմնականն էր համարում ժողովրդային, աեախոսական գրականութեան ստեղծելու ճանապարհին:

«Պետք է՛ ժամանակ կորցնել, — գրում էր նա, — թող ամեն գրող ճյուղ մը ընտրե իրեն, թող ուսումնասիրե զայն խուզարկութեանն իր կատարե, ուղածին չափ ժամանակ դնե իր ուսումնասիրութեան, բայց վերջապես երևան հանե աշխատութեան մը որ մնա, որ լույս սփռե ժամանակակից պատմութեան վրա, որ բան սորվեցնե ժողովուրդին, մտքին հաճույք առթի և անոր սնունդ տա միանգամայն»¹:

Հայկական իրականությունն ուսումնասիրելու պահանջը պետք է ցուցադրեր հենց իր՝ ժողովրդի ներքին խոցերն ու թուլությունները և, միաժամանակ, այս ամենի վերացման ուղիներ որոներ: Հենց սրանով էլ Ասատուրը ժխտում էր

ինքնանորոտակ արվեստի տեսութեանը և հանդես գալիս դատաւարական նոր շափանիչների պահանջով: Այս առումով քննադատը մեծ դեր էր հատկացնում վեպին, որն ավելի ընդարձակ սահմաններ էր ներառում ազգային ժողովրդական կյանքի ընդգրկման տեսակետից: «...Որքան գործ կա դեռ կատարելիք թրքահայ վիպագրին համար», — հիշեցնում էր նա: Մեկ կողմ թողնելով զավառի կյանքը, Ասատուրը միայն պուրսահայ իրականութեան մեջ տեսնում էր բազմաթիվ ուշագրավ դեմքեր, յուրահատուկ բարքեր, սովորություններ, հայ «ընտանեկան-ընկերական կյանքի երևույթներ», որոնք կարող էին ուսումնասիրություն: Նա գտնում էր, որ եվրոպական դրական մեծությունները և նրանց ստեղծագործությունները, որքան էլ բարձրարժեք լինեն արվեստի իրենց մակարդակով և հասարակական կենսունակութեամբ, այնուհանդերձ, հասարակական այլ հարաբերությունների ծնունդ էին և դրանով իսկ, ոչ հարմար հայ ժողովրդի ազգային պետքերին: Որքան էլ քննադատը հանդես էր գալիս որպես եվրոպական արվեստի և դրականութեան երկրպագու, նա սեպիտատական, իսկական ժողովրդական գրականություն ստեղծելու գործում, շեշտը դնում էր միմիայն խոր ազգային առաջնություն և բովանդակությամբ հիմնավորված գրականութեան վրա, որը պետք է ենթարկվեր հայ մշակութի և հասարակական կյանքի կոնկրետ պահանջներին ծառայելու նպատակին: Այստեղից էլ, իսկական ժողովրդական բովանդակությամբ գրված վեպերը, գրում է նա «Արդի հայ գրականությունն ի թուրքի» հոդվածում, «մեծագույն օգուտ կը հայթայթեն ժողովրդյան, քան եվրոպական վեպեր, որք նկարագրած իրերն ու բարքերը չեն համաձայնի մեր սովորությունից: Անձնյուր միջավայր յուր մասնավոր կենցաղն ունի: Ի՞նչ օգուտ երբ վեպն, դոր հայն կընթեանու, մասնանիչ ընե եվրոպական մոլորություննքն ու մոլությունքն. հարկ է որ հայ ժողովրդյան ներկայացվին ու նշովակվին յուր իսկ նախապաշարումներն, յուր իսկ բարոյական արտերն, յուր իսկ ընկերական անխրափություններն: Եվ հետո վեպերն կօգնեն պատմութեան, ապագային կտակելով ներկայի ընտանեկան

1 «Մասի», 1892, № 3971:

վիճակն, ընկերական վիճակն, ժողովրդյան ձգտումներն ու բարքերն»¹ :

Ասատուրի համոզմամբ, գրական երկի ուժն ու նշանակությունը նրանում էր, թե հեղինակը իր ստեղծագործությունում ի՞նչ խնդիրներ էր բարձրացնում, ինչպիսի՞ արդիական հարցեր էր շոշափում : Եվ իրապաշտական ուղղությունը իր մեթոդի ուժն էր ցուցադրում հենց այնտեղ՝ գրականությանն ընձեռնելով մի կողմից կյանքի, շրջապատող իրականության պատկերների հարստություն, մյուս կողմից՝ դադափարներ ու իդեալներ : Այս տեսակետից Ասատուրը գնահատում էր արևմտահայ ութսունականներից՝ Բաշայանի, Արփիարյանի և Չոհրապի գործերը : Բայց որքան էլ նա անհրաժեշտ և կարևոր էր համարում գրականության բովանդակության ժողովրդայնացման խնդիրը, այնուամենայնիվ, գրականության հարցերը քննելիս, ընդհանուր-գործնական տեսանկյուններից էր մոռանում այնպիսի ծանրակշիռ խնդիրների, ինչպիսիք էին գրականության ու կյանքի փոխհարաբերությունը, գրականության հասարակական դերին ու ժողովրդայնությունը, գրականության արդիականությանն ու գաղափարայնությունը վերաբերող հարցերը : Նա չէր խորանում, օրինակ, գրականության ու իրականության փոխադարձ կապի, գրականության ներքին օրինաչափություններին վերաբերող հարցերի քննության մեջ : Տվյալ դեպքում, նրան բավարարում էին ընդհանուր գեղարվեստական այն մտահանդումները, որ նա մշակել էր կյանքի ու գրականության, զրոյի ու իրականության փոխհարաբերությունների շուրջ՝ հետազննելով գրականության և կյանքի անհրաժեշտ կապի ամրապնդման նպատակներ :

Վերլուծելով 80-ական թվականների արևմտահայ գրականության ձևը բերած նվաճումները, Ասատուրը ընդդժուր էր, որ ակադեմիական ուղղության բերած գաղափարական և ղեղարվեստական թարմությունը, «նոր կորով ու թափ» էր հաղորդում արևմտահայ գրականությանը : Նույնիսկ նրանք, ովքեր հակառակ դիրքերից հանդես էին գալիս իրապաշտա-

կան ուղղության դեմ, նշում էր քննադատը, չէին կարող ժխտել, որ արևմտահայ նոր գրականությունը, նոր ու անձանոթ երանդներով պատկերելով մարդկանց ու հասարակական հարաբերությունները, «ընկերական ու հոգեբանական նոր երևույթներ կը պարզե և ավելի զորություն կը կատարե իր սնուցիչ և կաղաչողիչ դերը»¹ : Անշուշտ, Ասատուրին հայտնի էր, որ շրջապատող իրականության օբյեկտիվ վերարտագրության խնդիրը քննադատական վերաբերմունք էր մշակում այդ նույն իրականության հանդեպ, որով և դրսևորվում էր դրականության միտումնավորության գեղարվեստական սկզբունքը : Այստեղից էլ գրականության և դադափարականության հարցերը սերտորեն միանում էին Ասատուրի գրական հայացքների սխտեմում, և նա «գեղարվեստական բնազդներով օժտված» գրական նոր տաղանդների մոտ, որոնք ստեղծում էին իսկական արվեստի գործեր՝ բարձրարժեք քերթվածներ և նորավեպեր, առավել կենսական ու արժեքավոր էր համարում այն «խորին իմաստասիրությունը», որ «կը կաթկթե դրված տողերեն, հայ ընկերության գեղձումններուն դեմ» մի «ընդվզող իմաստասիրություն»², որն «իր սկեպտիկ ու հուսահատ արամադրությանց մեջ, բարոյական նկարագրի անկումը մատնանիչ կընե, դժուր հաշիվներե վեր հանրային օգտին միայն կը ձգտի, և եթե հաճախ կը թարթաի ծայրահեղ նկատումներու մեջ, կը ջանա սակայն տալու մեր կյանքին ազնվազույն, վեհագույն գործունեություն մը»³ :

Որ կյանքի ակադեմիական արտացոլման պահանջը «իմաստասիրական խնդիր» ուներ իր հիմքում ընկած՝ դա առավել քան հայտնի էր Ասատուրին : Ռեալիզմի տեսաբանները հաստատում էին, որ հակառակ բոմանտիզմի ուղղակի զաղափարայնության, նոր ուղղությունը իր դադափարական միտումները դրսևորում էր գեղարվեստական երկի հիմքում ընկած փաստերի ընդհանուր ուղղվածությունից, և, որպես այդպիսին, միտումը դրսևորվում էր իրեն ավելի հասարակարգի սոցիալական օրինաչափություններից բխող անխու-

1 «Մասիս», 1887, № 3872 :

1 «Մասիս», 1892, № 3971 :

2 Նույն տեղում :

սահելի հետեանք: «Կը կարծե՞ք որ գործ մը ազրի տոանց իբնն հիմ ունենայու մարդկային զգացում մը,— գրում էր Չուպանյանը: ... Մեր նկարագրութունները կը պահանջեն, մեր պատկերները կը խորհին, և գանսնք գծելու համար մեր վրձինը արցունքի, արյունի մեջ կը թափիենք»¹: Եվ այս տեսակետից, ժողովրդի կյանքի ճշմարիտ պատկերումը, որը մեջտեղ էր բերում այդ կյանքի ներքին «տղեղ» կողմերն ու անհատ-թյունները, ըստ Ասատուրի, հետապնդում էր այս ամենի վերափոխման և վերականգնման համար նոր ուղիներ՝ դրանով իսկ թելազերելով պատմականորեն աստիճանները: Այստեղից էլ Ասատուրը օգտակար և բարձրագույնը ստեղծագործութուններ էր համարում այն բոլոր գործերը, որոնք բացահայտում էին ժողովրդական բարքերը, շրջապատող միջավայրը՝ իրենց բարգ ու խճողված կապակցութուններում:

* * *

80—90—ական թվականներին, երբ արևմտահայ քննադատական միտքը այնքան հեռուդականորեն յուրացնում էր սեպուխտական դեղագիտութան տեսական գրությունները, գրական հրատարակում իշխում էր Չոլան՝ իր նատուրալիստական ուսմունքով, որ տեսական վեճերի ընթացքում հաճախ էր շփոթվում սեպուխտի հետ: Իսրավելի գրական-քննադատութան մեջ մեծ մասամբ անհետանում էին նատուրալիզմի և սեպուխտի սկզբունքային տարբերութունները և նատուրալիստ Չոլան դուրս էր բերվում Բալզակի ու Մտենդալի սեպուխտական դպրոցի անմիջական հետևորդ: Այստեղից էլ Չոլանի նորահայտ բնագաղտական (նատուրալիստական) դպրոցը կամ դրվում և ընդունվում էր իբրև «ճշմարտութունը երևան հանող» ուղղութուն, որը հաստատում էր սեպուխտական դեղագիտութան սկզբունքները, կամ քննադատվում և մերժվում էր որպես սղղութան բարոյական նկարագիրն աղարատ ուղղութուն, որը «բարոյացուցիչ

տպավորութուն մը չի կրնար թողուլ մանավանդ երիտասարդութան վրա»¹: Նատուրալիզմի և սեպուխտի այս բանավեճը, ըստ հուլիանի, սկզբունքային նշանակութուն ունեցող արևմտահայ գրականութան հետագա զարգացման համար: Այս կարևորութունն անշուշտ հայտնի էր գրական շրջաններում, և գրողներից ու քննադատներից յուրաքանչյուրը հարցի տեսական մեկնարանութանը մտածում էր իր հասկացած տեսական տարակարծութունների աղբյուր էր դառնում իրականութան կոնկրետ-պատմական արտացոլման գրությունը, որը ոչ միայն սեպուխտի, այլև նատուրալիզմի տեսական հիմքերից էր: Հենց այս կետից էր բխում երկու ուղղութունների բանավեճը: Եվ քանի որ արևմտահայ քննադատները այնքան էլ չէին խորանում երկու միանգամայն տարբեր սկզբունքային ու գաղափարական դիրքեր գրված գրական մեթոդների գրությունների քննարկման մեջ, ուստի և բնական էր դիտվում բնագաղտութան և իրապաշտութան նույնացումը: Եվ քանի որ, Չոլան համարվում էր Բալզակի, Մտենդալի, Ֆլորբերի և Փրանսիական մյուս սեպուխտների անմիջական հետևորդը, այստեղից էլ Չոլանի ստեղծագործութունը առավել քան ընդունելի և արդիական պիտի լիներ, քանի որ Փրանսիացի մեծ գրողը հենվում էր միմիայն բնական դիտութունների գործնական նվաճումների վրա, ինչպիսին էր «միջավայրի ազդեցութան» վարդապետութունը՝ կապված ժառանգականութան և բնախոսութան դիտական եզրակացութունների հետ:

Պողտիվիզմը, որն այս ուղղութան փոխստիպական հիմքն էր, արևմտահայ գրողներին ու քննադատներին վստահութուն էր ներշնչում դեպի իրականութան ճանաչողութան դիտական մեթոդները և բնութան մեջ գործող օրենքներն ու պատճառական կապերը ակամայից տարածում հասարակական կյանքի և հարաբերութունների վրա՝ «ընդարձակելով գրական հետազոտութուններու դաշտը»: «Բնութան բոլոր

1 «Մասիս», 1892, № 3959:

1 «Արևելք», 1889, № 1661:

օրենքներու և երևույթներու մտեն ու մանրամասն հետա-
դոտութիւնը,— դրում էր Շամտանճյանը,— դոյացուցին արգի-
րնական գիտութիւնները, որոնք ազդեցին ընդհանուր մտա-
վորականութեան վրա:

Բնական գիտութեանց, ընդհանուր մտավորականութեան
վրա տիրակալ դառնալովը գեղարվեստներն այ մտան այն
տեսակ հոսանքի մը մեջ, ուր փայտաշատութիւնը շատ ան-
բավական պիտի ըլլար: Բնապաշտութիւնը բնական գիտու-
թեանց արձագանքն էր գեղարվեստներու մեջ¹: Անկտակած,
հենց սա էր, որ արևմտահայ բնադատներին հիմք էր տա-
լիս նույնացնելու նատուրալիզմը ևեալիզմի հետ, դիտելով
այն նույնիսկ որպէս ևեալիզմի զարգացման մի ավելի բարձր
աստիճան: Եր. Օտյանը «Ահնարի մը բնապաշտ զպրոցին
վրա» հոդվածում, հիմք ունենալով Չոլայի «Ճննական գոր-
ծերը», գրում է, որ «բնապաշտ վեպը լոկ ճննութիւն մըն է
ընտելան, մարդներու և իրերու վրա»: Բնապաշտութիւնն
ամենեւին նպատակ չունի «հանճարեղ առասպել» հնարելու
կամ երևակայութիւն դործ դնելու: «Ինճիտը կարևորութիւնը
կորսնցուցած է վիպապոէզին համար, որ ոչ առաջադիմութիւն,
ոչ հանդուցիցին, ոչ ալ լուծման համար կը մտածէ, իրականու-
թեան վրա ոչ բան մը կապելցնէ ոչ ալ կը պակսեցնէ: Բնու-
թեանը բավ է և պետք է ընդունել զանի ինչպէս որ է, առանց
բարեփոխելու կամ հասպաղելու... — Համոզված գրում էր
նա»: Եվ այս ամենից հետո Օտյանը գեղարվեստական
ստեղծագործութիւնը հարկ է համարում դառնալու «կյանքի
մը տեղեկագիրը» միայն և ոչ ավելին, որի արժանիքն է հա-
մարվում «կյանքի ճշգրիտ զննութիւնը»:

Այս նույն ըմբռնումն է նկատվում նաև արևմտահայ
այնպիսի խոշոր մտավորականների հայացքներում, ինչպի-
սիք էին Չոհրապէր, Բաշալյանը, Արփիարյանը, Զոպանյանը,
Ասատուրը և ուրիշներ:

Համոզման պատճառը հենց ինքը՝ Չոլան էր, նատուրա-

լիստական ուղղութեան հիմնադիրը, որն իրեն համարում էր
Փրանսիական ևեալիստական զպրոցի ավանդների շարունա-
կողը՝ նվաճելով գրականութեան, հատկապէս վեպի զարգաց-
ման մի նոր ավելի բարձր մակարդակ:

Վերահիշյալ ուղղութիւնների տարբերութիւնների և ընդ-
հանրութիւնների շուրջ տարվող բանավեճերը առավել սրվե-
ցին, երբ 80-ական թվականների վերջերին հրատարակվեց
Տ. Կամսարականի «Վարժապետին աղջիկը» վեպը: Հայտնի
է, թե ինչպիսի գրական վեճերի ու հակամետ կարծիքների
տեղիք ավելց կամսարականի վեպը, իր հետամտած ուղղու-
թեամբ ու իր քննադատական ոգով: Բանավեճերը սուր էին
հատկապէս վեպի յուրացրած գրական ուղղութեան, հերոս-
ների տիպականացման, իրականութեան գեղարվեստական
արտացոլման և լեզվական հարցերի շուրջը: Այս առթիվ,
1888 թ., Հ. Ասատուրը հանդես է գալիս «Վարժապետին աղ-
ջիկը» վեպին նվիրված մի ընդարձակ գրախոսականով, որը
նրան, որպէս լրջմիտ գրականագետի, հանճարարվել էր
գրելու «Արևելքի» կողմից: Ասատուրը նկատում էր, որ վեպի
շուրջն ընթացող այդ վեճերը և քննադատական այն վերաբեր-
մունքը, որով ընդունից վեպն արևմտահայ գրական շրջան-
ներում, ըստ էութեան, ոչ թե արժեքազրկում էին գործը, այլ
անուղղակի ձևով հաստատում վեպի կարևորութիւնը՝ հեղի-
նակի կողմից իրականութեան ճշմարտացի վերարտադրման և
պատմականորեն առաջադեմ դիրքերից կատարված քննա-
դատութեան շնորհիվ:

«Արհամարհանքն ու լուռութիւնն է որ կը սպաննէ գրագե-
տին երկն», — հիշեցնում էր նա և նկատում, որ նույնիսկ
նրանք, ովքեր «ամենեն անողորք» էին եղել վեպի նկատմամբ,
հետադարձում զնահատեցին կամսարականի աշխատութիւնը.
«տեսան թե որքան սիրտ, խանդադատանք, նրբութիւն ունի
այդ երիտասարդը, մտքի և հոգվի ինչ սրատեսութիւն, ի՞նչ
ճշմարիտ դատողութիւններ մեր ազրած միջավայրին վրա.
մեր բարուց վրա և մարդկային սրտին վրա...»²: Այս-

1 «Ծաղիկ», 1903, № 23:

2 «Մասիս», 1893, № 4003:

1 «Արևելք», 1888, № 1500:

տեղից քննադատը կամսարականին համարում է այն խի-
զախ հեղինակը, որը ավեց առաջին իրապաշտական վեպի
օրինակը արևմտահայ գրականության մեջ: Հավանություն
տալով վեպի յուրացրած գրական ուղղության, Ասատուրը
նշում էր, որ թեև «իրապաշտ կամ բնապաշտ» դպրոցը վա-
ղուց արդեն իշխում էր Ֆրանսիայում, բայց հայ իրականու-
թյան մեջ թարգմանվել էին միայն այնպիսի գործեր, որոնք
պատկանում էին գրական նախորդ դպրոցին՝ սոմանոթիզմին:
Իսկ ռեալիստական մեթոդի ամենախոշոր գեմքերը, ինչպիսիք
էին՝ Բալզակն ու Ստենդալը, Ֆլորենսն ու Դոդեն, հայ թարգ-
մանիչներ չէին ունեցել: Ասատուրը սրանց կողքին էր գնում
նաև Զուլային, որի «փորձառական վեպը» դասնում էր հիմք՝
ժանոթանալու «իրատաշտական կամ բնապաշտական» դպրոցի
սկզբունքներին: Տեսնելով նատուրալիզմի և ռեալիզմի
տարբերությունները և կամսարականի վեպը սրակելով մեկ
սրվեստ ռեալիստական, մեկ՝ նատուրալիստական ստեղծա-
գործություն, Ասատուրը շարադրում էր Զուլայի նատուրալիս-
տական դպրոցի դրույթները: Ըստ Զուլայի, գրում էր քննա-
դատը, «քանի որ փորձառական մեթոսն ամենուրեք մտած է
բնալուծություն մեջ, բնագիտություն մեջ, բնախոսություն մեջ,
իրը հետևանք դարուս գիտական բարեշրջություն, պետք է
տիրե նաև վեպին մեջ»: Այստեղից էլ, շարունակում է քննա-
դատը, վերաբաղելով Զուլայի տեսությունը, վիպասանը
պետք է քննի և ուսումնասիրի մարդուն, նրան շրջապատող
կյանքը. «պետք է դիտե, պետք է տեսնե, պետք է հասկանա
և ապա նկարե»: Բնություն օրենքների համաձայն, պետք է
վերլուծման ենթարկվեն մարդկային հոգին և կրքերը: Այնու-
հետև վիպասանը պարտավոր է նկարագրել միայն ճշմարիտ
և բնական իրադարձեր՝ հետև երևակայական խորհուրդներից.
«այժմ դիտողությունը, փորձառականությունը ամեն ինչ է»,
հիշեցնում էր նա: Որքան գրական ստեղծագործության մեջ
հեղինակը հարադատորեն է վերաբաղում հասարակական
օրինաչափություններն ու թափանցում կյանքի ամախորհրդերը,

այնքան ավելի է նպաստում մարդկային «հոգեբանություն
դարձացմանը», հասարակական կյանքի առաջընթացին: Վեպը
կրում է նաև «բարոյացուցիչ դեր», քանի որ, ուսումնասիրե-
լով կյանքն ու երևույթները առաջացման պատճառները,
որոնում և դոնում է նաև այն ուղիներն ու միջոցները, որոնք
պետք է նպաստեն կյանքի վերափոխման նպատակներին:
Ասատուրը նշում է, որ հակառակ սոմանոթիկական վիպա-
գիրների, «որք ազնիվին ու զեղեցիկին» հետամուտ նախընտ-
րում են վերացականը, բնապաշտ վիպասանները ներկայաց-
նում են միայն այն, ինչ որ ճշմարիտ է, այն ինչ որ առկա
է կյանքում, «որքան ալ տղեղ, որքան էլ ժահահոտ լինի այն»:
Ըստ էություն շարադրելով է. Զուլայի «փորձառական վեպի»
սկզբունքները, Ասատուրը հայտարարում է. «Աստիք են ահա
վիպասանության իրապաշտ կամ բնապաշտ դպրոցին ըսկըղ-
րունքները» և ապա՝ «ահա այս դպրոցին է որ աշակերտած է
կամսարականն ալ»:

Չտարբերելով նատուրալիստական և ռեալիստական ուղ-
ղությունները, Ասատուրը գտնում է, որ իրապաշտ դրողի հա-
մար անպատճառ անհրաժեշտ չէ «կենսաց տղեղ կողմերն ու
գողիք միջավայրերը» նկարագրել: Կամսարականը հետևելով
իրապաշտական մեթոդին, ամենեին չի պակասում ժողո-
վրդական բարքերը, այլ պատկերում է միայն «իրական դեմ-
քեր և իրական դեպքեր...»: Եվ այս տեսակետից, ցանկանալով
պաշտպանել իրապաշտներին ու կամսարականին, նա նկա-
տում է, որ «իրապաշտությունը կրնա ի հայտ գալ նաև
այնպիսի երկերու մեջ, որք չի պարունակեն պիղծ տեսարան-
ներ, սպացույց Ալֆոնս Տոստի սքանչելի վեպերն, ուր
զգայալից հրապուրիչ հեղինակն «իր բարեկամ կը չընի
մարդկային բնկերություն մեջ» և «չը սուղիք երբեք ի խորս
մարդկային մորալին»: Ինչպես նկատելի է, քննադատի մոտ
վերանում են նատուրալիզմի ու ռեալիզմի սկզբունքային
տարբերությունները և Զուլայի ու Դոդեի ստեղծագործությու-
նները հանգեցվում են իրապաշտ գրական ուղղությանը:

Ռեալիզմի անվան տակ վերաբաղելով նատուրալիզմի
դրույթները, Ասատուրը անցնում է կամսարականի վեպում

1 Նույն տեղում:

հանդես եկող գլխավոր դեմքերին, պատկերվող իրազարձերի մանրամասն քննությանը: Պատմելով «Վարժապետին աղջիկը» վեպի բովանդակությունը, Ասատուր-քննադատը ցույց է տալիս, թե ինչպես են սյուժեում արտացոլվել հասարակական կյանքի օրինաչափությունները, մարդկային հարաբերությունները, դրանով իսկ, բացահայտելով իրականությունը ըմբռնման հեղինակային իր մտադրությամբ: Վեպում պատկերված դեպքերի, դորժողությունների և մարդկային կապերի ամրոգջությունը դիտելով որպես կյանքի օբյեկտիվ-ճշմարիտ պատկերներ, Ասատուրը գրում է: «Այսպես բացահայտ կը տեսնվի թե կամասրականը ջանացած է ճշմարտությունն յուր երկի մեջ ընել գերիշխան, և ներկայել ընթերցողաց իրական կյանքի պատկերներ»¹:

Քննադատի համար դրական երկի զեղարվեստականությունն ամենախրեոք չափանիշն է դառնում իրականություն արտացոլման ճշմարտացիությունը: Այստեղից էլ կյանքի ճշմարիտ պատկերման պահանջին տալով հասարակական նշանակություն, Ասատուրը զեղարվեստական ստեղծագործությունը դիտում էր որպես իրականության, կյանքի օրինաչափությունների օբյեկտիվ վերարտադրման և ճանաչման կարևոր միջոց: Ճիշտ է, նատուրալիզմի տեսությունը ևս պահանջում էր բացարձակ օբյեկտիվություն՝ կյանքի երևույթներին արտացոլման մեջ: Բայց հակառակ այն բանին, որ Ասատուրը տեսական հիմք էր դարձնում նատուրալիզմի գրությունները, այսուհանդերձ, վեպի կոնկրետ վերլուծություն մեջ, կերպարների և դորժողությունների բնութագրման հարցերում, նրա տեսական ելակետերը հենվում էին միայն ռեալիստական մեթոդի տիպաբանության վրա: Քննադատի կողմից կյանքի ճշմարիտ արտացոլման պահանջը հանդուս էր ոչ թե նատուրալիստական օբյեկտիվիզմի պատիվ սկզբունքին, լուսանկարչական նկարագրությունը, այլ իրականության օբյեկտիվ պատկերներին, մարդկային ու հասարակական երևույթներին նկարագրությունը տիպական, սոցիալական բո-

վանդակություն տալուն: Ոչ միայն ճշմարտացիորեն վերարտադրել կյանքը, այլև ստեղծել անհատականացված կերպարներ, որոնք ընդհանրացնող ուժ ունեն իրենց մեջ: Վերլուծելով վեպի գլխավոր հերոսներին՝ Ասատուրը մասնանշում էր տիպականության մեծ նշանակությունը՝ մարդկային կերպարների ու նրանց միջավայրի պատկերման մեջ: «Վարժապետին աղջիկը» վեպի գլխավոր հերոսներից՝ Արամի կերպարը քննելիս, քննադատը սոցիալ-հոգեբանական տրամաբանություն խախտում է նկատում այնտեղ, երբ նա՝ Արամը, «մին այն հարուստ, աշխարհիկ ընկերության մեջ հարգանք վայելուց սրիկաններն, այց նմաններուն ամեն օր կը հանդիպինք իրական կյանքին մեջ», որչու է ամուսնանալ Աստղիկի հետ: Ասատուրը գտնում է, որ հերոսի սոցիալական էությունը անհարիր պետք է լիներ անկեղծ ու ջերմ սիրո զգացմունքը: «Այդ կիներեն հափրացած երիտասարդն է որ Աստղիկը տեսածին պես կը հարի անոր, կը սիրե ինչպես պիտի սիրեր քսան տարվան անիորձ պատանի մը և երեք օրվան մեջ կորոշե ամուսնանալ անոր հետ...»: Կամասրականը ինքը ևս, նկատում է Ասատուրը, զղալով «իր նկարագրած կացություն անբնականությունը», փորձում է արդարացնել Արամի այդ քայլը: Հեղինակը պատճառաբանում է, որ Արամը իրազեկ լինելով իր սիրուհու անհավատարմությունը, և, այդ, մի քանի օր ատաջ ստանալով մերժում՝ մեկ ուրիշ աղջկա կողմից, որչու է ամուսնանալ Աստղիկի հետ: «Նվ սակայն այս ամենը կը բավե՞ն Արամի այս հանկարծակուն որոշումն արդարացնելու համար, — տարակուսում է քննադատը: — Գիտե՞ք ինչ պիտի ընեի այդ նկարազիրը և դերքն ունեցող երիտասարդ մը իրական կյանքին մեջ, — շարունակում է նա, — ամուսնությունն առաջին գաղափարը չի պիտի լիներ որ ներկայանար յուր մտքին, այլ հրտապարանքն: Արամն Աստղիկի ետևե պիտի իյնար և ամեն զոհողություն աչքն առած պիտի ջանար վայելել զայն: Իսկ եթե անառիկ բերդ մ'ըլլար Աստղիկ, եթե անոր մերժումներն ևս առայիլ դրդոեին Արամի սերն, այնժամ գուցե Արամ — ի հարկե ստիպյալ, մտածեր ամուսնություն մասին»: Այս նույն կարծիքն է հայտնել նաև «Վարժապետին

1 «Արևիկ», 1888, № 1500:

աղջիկը» վեպի քննադատներից՝ Հ. Մեղակյանը¹։ Ի վերջո կերպարի հասարակական և սոցիալական կյանքը բացահայտելու միջոց է դառնում ոչ թե նատուրալիստների տառադրած ֆիզիոլոգիայի ու ժառանգականության օրենքները, այլ մարդկային բնավորության և միջավայրի սոցիալական պայմանավորվածությունը։ Գրական կերպարին բնորոշ հատկությունների ընթացիկ ինքնազգացում էր կյանքի օրինաչափությունների սոցիալական հարաբերությունների բովանդակությունից։ Քննադատը դեղարվեստական տիպական կերպար ստեղծելու համար անհրաժեշտ էր համարում բացահայտել ոչ միայն ավելի անհասին, այլև սոցիալական այն միջավայրը, որի մեջ գործում է նա և որի արդյունքն է ինքը։ Ընդգծելով կերպարի սոցիալ-հասարակական բովանդակությունը, ինչպես Ասատուրը, այնպես էլ Հ. Մեղակյանը անտեսում էին նույն կերպարին բնորոշ կոնկրետ-անհատական գծերը, որոնք միաժամանակ կենսական-հասարակական բովանդակությունն ընդհանրացնելու ուժ էին կրում իրենց մեջ։ Գեղարվեստական կերպարի և շրջապատող իրականության փոխադարձ պայմանավորվածության աեալիստական սկզբունքը քննելով, Ասատուրը հերոսի անձնական և սոցիալական վարքողիժը պատճառաբանում է ամենից առաջ օբյեկտիվ իրականության տնտեսական աղղեցույթից։ Բայց, ի վերջո, նա հաշվի չէր առնում այն հանգամանքը, որ աեալիստական կերպարը իր դասի էությունը բնութագրող ընդհանուր կողմերից բացի, կրում է նաև մասնավոր հատկություններ, որոնք, որպես կոնկրետ մարդկային անհատականություն, բնորոշ են միայն ավելի հերոսին։

Եթե վեպի հերոսներից Արամի և Աստղիկի վարքացիժի որոշ կողմերը անհամոզիչ են Ասատուրի համար, ապա վարժապետի կերպարը, ըստ քննադատի «ունի բոլորովին տեղական գույն»։ Դեպքերի զարգացման բնական ընթացքի մեջ այս կերպարը գրեթե օրվում է որպես որոշակի դասի և աղղա-

յին միջավայրի հատուկ մարմնավորում, որը պայմանավորում է նրա բնավորության անհատական գծերը։ Հետամուտ կերպարների սոցիալ-հոդերանական ճշմարիտ բովանդակության բացահայտման աեալիստական սկզբունքին, Ասատուրը ուսմանտիզմին հատուկ գույնների չափազանցություն է նկատում Գարեգինի և Թորոս Բեյի կերպարներում, որոնցից մեկը «առաքինության մտատիպար» է ներկայանում, մյուսը՝ «մուլտան, կեղծավորության»։ «Այս երկու տիպարները, — գրում է նա, — բոլորովին վիպական հղացումներ են, և իրապաշտ ճղտուններ ունեցող վեպի մը մեջ մանավանդ, շատ զղալի կըլլա թե անոնց ստեղծման աստեա կրեակայությունը վարած է մեծ դեր»¹։

Ռոմանտիկական մեթոդի դիրքերից վերլուծելով «Վարժապետին աղջիկը» վեպի գլխավոր կերպարները, քննադատը հաստատում է, որ Կամսարականին հիմնականում հաջողվել է բացահայտել անհատի և հասարակության, բնավորության և գործողությունների իրական, փոխադարձ կապը։ «Իրապաշտ վեպերու մեջ, — հիշեցնում է նա, — ինչպես որ անձերն պետք է լինին մտացածին, նույնպես ալ դեպքերը պետք է լինին տեսական»²։ Քննադատն ըմբռնում էր որ առանց սոցիալական միջավայրի ու հանգամանքների օբյեկտիվ պատկերման, գրական կերպարը չի կարող բացահայտվել ու տիպականացվել։ Կարևորն ի վերջո, այն միջավայրն է, որից գուրս անհատը գոյություն ունենալ չի կարող։ Այս տեսակետից էլ, Ասատուրը մատնանշում է, որ Կամսարականը մեծ հմտությամբ է պատկերել պոլսահայ վերնախավերի և չքավոր դասի կյանքը, ըմբռնումները, սովորությունները։ «Աստ անդ սփռյալ ինչ իրական պատկերներ», — հիացած գրում է նա։ Աստղիկի նշանադրության, օժիտի դիտելու տեսարանները, տունդարձի մտայն պատկերները, հիվանդության ծանր օրերը... բայց քննադատը վեպում նշում է նաև այնպիսի իրադարձեր,

¹ «Արևելք», 1888, № 1500:
Նույն տեղում։

¹ «Արևելք» 1888, № 1449:

որոնք չունեն իրականության դրոշմ: «Այդ աններելի տկարություն մ'է հեղինակի համար, այնու մանավանդ զի իրապաշտ դպրոցին հետևող մ'է ինք», — նկատում է նա¹:

Ասատուր քննադատի համար, ի վերջո, հակաճիչ հասարակական կյանքի վերարտադրություն հարցում դառնում է այն հանգամանքը, թե վիպասանը իրականության պատկերման ինչպիսի կարևոր երևույթների վրա է դարձրել իր ուշադրությունը և կյանքի ո՞ր կողմերն են դառնում քննարկման առարկա: «Կյանքի գլխավոր գիծերուն» արտացոլումը և այդ ամենի հանդեպ Կամսարականի քննական ու ճշմարիտ մոտեցումն էլ հենց Ասատուրը համարում էր վիպասանի ամենամեծ նվաճումը: Եվ հենց այստեղ էր, որ նաստուրալիզմի գեղագիտությունը իր անկարողությունն էր ցուցաբերում տեսնելու և գտնելու կերպարի կամ իրականության այն հիմնական կողմերը, որոնք այնքան բացահայտորեն դրսևորվում էին ռեալիստական արվեստում: «Նաստուրալիզմը նմանվում է ռեալիզմին — գրում է ռեալիզմի տեսաբան Բ. Սուչկովը, — բայց տարբերվում է նրանից ոչ միայն սոցիալական վերլուծության բացակայությամբ և տիպականացման ունակությամբ, այլև նրանով, որ հավասարեցնում է իր նկարագրություններում իրականության մեջ իրենց օբյեկտիվ բովանդակությամբ տարբեր նշանակություն ունեցող երևույթները»:

Այսպիսով, Հ. Ասատուրը քայլ առ քայլ հետևում էր կյանքի ճշմարիտ վերարտադրությանը, դեպքերի զարգացման իրական ընթացքին և կերպարի կերտման ռեալիստական դրույթներին: Փաստերի օբյեկտիվ տրամաբանությամբ հաստատելով իր գրական սկզբունքներն ու համոզումները, քննադատը դրանով արտահայտում էր նոր սերնդի գաղափարական-գեղարվեստական այն դրույթները, որոնք արևմտահայ ռեալիստական գրականության զարգացման ուղիներն էին հատկանշում: Մի քանի տարի անց արդեն, քննելով ռեալիզմի տեսության հարցերը, Ասատուրը պատմական հայացքի տակ

դնելով գրականության զարգացման ընթացքը, որոշակի տարբերակման էր ենթարկում ռեալիզմի և նաստուրալիզմի գեղարվեստական մեթոդները: «Իրապաշտ վեպին ձգտումն է, — գրում էր նա, — իրական կյանքի նկարագրությունը և ճշգրիտ պատկերացումը, մինչդեռ ընապաշտ վեպին մեջ վիպասանը իր դատողությունները կընտրե ընկերության մասսային մեջնեն, անոնց խոսակցության կուշտ սճը և սպեղ բարքերը կը ներկայացնե և կը նախընտրե ներկայացնել մարդկային հոգույն նյութական բողոքները և բերտ բարքերը»:

Պետք է նշել, որ զարավերջի գրական-տեսական միտքը, որը թվում է՝ չէր տարբերում ընապաշտությունը իրապաշտությունից, վերջին հաշիվով նաստուրալիզմի դրույթները շարադրելիս ելնում էր միմիայն ռեալիստական մեթոդի ամրապնդման և հաստատման շահերից: Գրական հարցերի գիտական մեկնաբանությունը ի վերջո հանգում էր ռեալիզմի պատմական դերի ու անհրաժեշտության հաստատման հանդուցային խնդիրներին: Սխալ կլիներ ասել, որ արևմտահայ շրջաններում չէին նկատում նաստուրալիզմի սահմանափակությունները՝ նրա բացարձակ-առարկայական օբյեկտիվիզմը ու կերպարի կերտման ոչ խոր, հոգեբանական զրվածքը: Տ. Կամսարականը իր «Ո՞րն է իրական վեպը» հոդվածում, ելնելով ժամանակի եվրոպական գրական-գեղարվեստական մտքի նվաճումներից, մատնացույց էր անում Զոլայի մեթոդի անկատար կողմերը և մերժում նաստուրալիզմի որոշ դրույթները՝ Իսկ Տ. Քելեկյանը քննելով ռեալիզմի և ռոմանտիզմի հարցերը, իր «Թատեականը և իրականը» հոդվածում հայտնաբերում էր, որ «կյանքը ինչպես որ է» դրույթի նաստուրալիզմի գերբերից հասկացված ենթիմաստը, ի վերջո գրականությունը կրկնում է գեղարվեստականության չափանիշներից ու կոտլում կյանքի լուսանկարչական արտացոլման ոչ գեղարվեստական սկզբունքին: «Ու մինչդեռ, — գրում է նա, — մեկ կողմից մեր բարոյական համոզումները կը փոխվեն նեղ

1 «Արևելք», 1888, 1500:

2 Б. Сучков, Исторические судьбы реализма, М., 1967, с. 183.

1 ԳՍԹ, Թ. Ազատյանի ֆոնդ, բաժին 1, № 11, Հ. Ասատուր, Գրական ստեղծ, էջ 85:

2 «Արևելք», 1888, № 1297:

հաշվո մը արգելեցութեան տակ, մյուս կողմէ իրական դրահանութեան գաղաթնակետը հասնիլ կարծեցի՞ք, ոսմիկին հայճոյութեանը ամբողջ տառերով գրելով ու դռնհիկ կնկան խոսակցութեանը ճշտութեամբ մը կեղծելով»¹:

Արեւմտահայ մյուս գրողները նույնպես համակողմանի քննելով երևութիւնը և տարրերելով հիմնականը երկրորդականից, հաստատում էին դրուժներ, որոնք հանդես էին գալիս ի պաշտպանութեան իրապաշտութեան, որը դրսևորվում էր որպէս դարավերջի գրականութեան հիմնական օրինաչափութեան և դիտակցված գեղարվեստական մեթոդ: Այստեղից էլ կարևոր նշանակութեան էր ձեռք բերում գրականութեան գեղարվեստական-գեղագիտական մակարդակի բարձրացման խնդիրը: Հասարակ ու դռնհիկ հասկացված ռեալիզմի ըմբռնումները արեւմտահայ մտավորականութեան կողմից մերժվում էին: Զարգանում և իմաստավորվում էին իրապաշտութեան գեղագիտական բարձր սկզբունքները, որոնք ավելի մտա էին նրանց գիտակցութեանն ու ճաշակին: Ս. Արփիարյանը «Վառ» և «Բռնի ամուսնութեան» թերթում-վեպերի մասին գրած գրախոսականում, քննադատելով այդ վեպերը, պահանջում էր «միմիայն ընդհանուր տիպարներ, հոգեբանական ուսումնասիրութեաններ, մեղի հատուկ դադարներ, բարբերու ճշդիւտ նկարագրութեաններ» փնտրել: «Վեպ գրողը,— գրում է նա,— եթէ իրապիցն կուզէ գեղարվեստական, իմաստասիրական աշխատութեան մը ընել, պետք է քիչ մը վեր բարձրանա կյանքի եթերին մեջ և անկէ դիտէ գեմքերը, սրտերը, մտքերը...»²: Բաշայանը նկատում է, որ գրականութեան որդեգրած «ժողովրդականութեանը, որ ուզած է ներկայացնել ժողովրդին սովորութեանները, զգացումները, բարբառը, դիտելու և իմաստավորելու եղանակը», չի հասնում գեղարվեստականութեան մակարդակին: Նա ոչինչ հիշարժան չի գտնում այդ կարգի գրական ստեղծագործութեանների մեջ, որովհետեւ, ըստ նրա, «այդ սեռին (այսինքն՝ ժողովրդականութեան—Ս. Հ.) արժանիքն այն ատեն մեջտեղ կուզա, երբոր

գրողը պարզ ընդօրինակիչ մը ըլլալէ ավելի, կրնա իր ներկայացուցած տեսարաններուն բոլոր ներքին բանաստեղծութեան ու իմաստասիրութեան թափանցել. գուրս ցատկեցնել ինչ որ անոնց մեջ կա իսկատիպ, կարենալ հաջող ու խելացի ընտրութեան մը ընել...»:

90-ական թվականների հասարակական կյանքի բարդ իրադրութեան պայմաններում արփիարյանական ըմբռնումով ռեալիզմի սկզբունքային դրուժները, որոնք բնութագրում էին կյանքի ու գրականութեան վերաբերյալ 80-ական թվականների նախնական պատկերացումները, ըստ էութեան, խիստ պարզունակ էին: Ել քանի որ գրականութեան պատմութեանը գրական օրյակալի օրինաչափութեանների զարգացման անընդհատ պրոցես է, այստեղից հետևում է, որ ռեալիզմի նախորդ շրջանին փոխարինելու էր նոր շրջանը, որը, ազգային կյանքի թելադրանքով, պահանջում էր ընդլայնել իրականութեան գեղարվեստական ընդգրկման շրջանակները, խորացնել և նրբացնել արփիարյանական իրապաշտութեան սկզբունքները: «...Այդ ձգտումը,— հավաստում էր Զուպանյանը,— մարդկային միտքը նորեն դեպի դադարի բարձունքներ հանել, դեպի հոգեկան խորութեաններ իջեցնել, ներքին կյանքի խնդիրներու մեջ պտտցնել է: Եվ այսպիսի գրականութեանը այս ջանքերն պիտի ելլեն»,— նկատում էր նա³:

Ութսունականներն առաջադրում էին արդեն ռեալիզմի մի ավելի նոր ու բարձր մակարդակ՝ Իրսենի, Տոլստոյի և Վազների յուրացման խնդիրը ու գրվատում այդ արվեստի առավելութեանները: Սա նշվում էր ի հակադրութեան ընդհանրական դարոցի, բայց և չէր նույնացվում իրապաշտութեան հետ, այլ դիմում էր որպէս արվեստի իր մի նոր աստիճան, որն ավելի շուտ մի հետագարձ հայացքով էկլիկատիկ մոտեցում էր ենթադրում գեպի սոմանտիզմի, քան թէ ռեալիզմի դիրքերը:

Զույան արդեն անցած դարոց էր դիմում և քննադատական միտքը պահանջում էր դուրս գալ ներ-ազգային հետաքրքրութեանների շրջանակներից, ձանաչել համաշխարհային

1 «Մտեր», 1893, № 4002:

2 «Հայրենիք», 1894, № 803:

1 «Հայրենիք», 1893, № 663:

մշակույթի արժեքները, հատկապես, անդր-դերմանական նշանավոր սեպուխտ արվեստագետների ստեղծագործությունները (Վազներ, Անդերսեն), ուսումնասիրել այդ ժողովուրդների պոետիկան և յուրացնել դրա բարոյա-խմաստասիրական կողմը: Քննադատությունը նույն էր, որ գեղարվեստի այն սկզբունքները, որոնք տիրապետող էին այս ժողովուրդների ուսուցողական ստեղծագործություններում, արվեստի իրենց ուժով և ընդդրկումների համապարփակություններում ավելի խորն էին, քան Փրանսիական և դրանով իսկ ավելի մոտ հայ հոգուն ու նկարագրին:

Քննադատությունն այնպիսի կրքոտությունը էր հակադրվում Փրանսիական դրականության հետևողությունը, որ հասնում էր նույնիսկ ծայրահեղություն՝ ընդհանրապես «ավելորդ» համարելով անկամ Փրանսերենի ուսուցումը հայկական դպրոցներում: Արհիտորջանը զավառաբնակ ժողովրդի՝ ազգության ամենահոծ մասսայի միտքը զարգացնելու, գաղափարներն ընդլայնելու անհրաժեշտ պայման էր դիտում եվրոպական մի որևէ լեզվի ուսուցումը: «Ըլլա կամ գերմաներենը կամ անգլերենը, բայց ոչ Փրանսերենը», — գրում էր նա: Քննադատը հասնում էր այն բանին, որ գրեթե մերժում էր Փրանսիական ժամանակակից դրականությունը, պանելով, որ այն «հաղթի թե կը ներկայացնե մի քանի դործեր որք արժանի ըլլան կարդացվելու, նունիսկ իբր գրական դործ, առանց նկատողության առնելու բարոյական, իմաստասիրական ու ընկերական գաղափարները»: Չոգանմանը նկատում էր, որ Փրանսիան, հակառակ, «ամենաչքնող» ազգանդների «հոծ բոլի մը» այլևս այն երկիրը չէր, որն իր ազդեցությունն էր տարածում ամբողջ իմացական աշխարհի վրա: «Գերմանիա իբ ձեռքը կառնե փիլիսոփայություն, գիտություն ու երաժշտություն մականը, Իսպրն ամենեն ահավոր անդունդները երևան կը հանե, և Տոլստոյ ժժ դարու ավետարան կը դրե...» — գրում էր նա:

Աստուրի յուրացրած գրական սկզբունքների ու տեսակետների զարգացումն ըմբռնելու համար մեծ նշանակություն ունի հայտնաբերել նրա կապն ու առնչությունները եվրոպական գրողների ու մտավոր գործիչների հետ, նրա հետաքրքրություններն ու արձագանքները գրական այս կամ այն երևույթի նկատմամբ: Հանդամանքն անշուշտ ավելի պարզ և հասկանալի է դարձնում Աստուր-քննադատի հայացքները, նրա ինքնատիպ մտածողությունը և գրական-դեկլարատիվ սկզբունքների ակունքները, բացահայտում ինչպես նրա վերաբերմունքը, այնպես էլ իմացությունը եվրոպական գրականության մասին:

Գրական գործունեության առաջին տարիներից սկսած, Աստուրը մեծ հետաքրքրություն է ձեռք բերել եվրոպական գրականության ու արվեստի նկատմամբ, շեշտելով այդ գրականության առաջնությունը կենսունակությունը, նրա խորությունն ու համաշխարհային արժեքը: Դեռևս 70-ական թվականներին, Ժ. Սանդի և Վ. Հյուգոյի մասին գրած իր առաջին հոդվածում, զգացվում էր խոր համակրանք Փրանսիայի այս նշանավոր գրողների նկատմամբ, հիացմունք և հարգանք արվեստի այս մեծերի հանդեպ: «Մասինում» և «Արևելքում» հրատարակվող իր քրոնիկներում Աստուրը հայ հասարակությանը պարբերաբար ծանոթացնում էր ոչ միայն եվրոպական նշանավոր գրողներին ու արվեստագետներին, այլև քաղաքական խոշոր դեմքերին ու իրադարձներին, որոնք, ի վերջո, բնորոշում էին Աստուրին, որպես հետաքրքրությունների լայն շրջանակներ ունեցող եռանդուն ու խոհուն գրական մի գործիչ: Խորապես ծանոթ լինելով եվրոպական գրականությանը, Աստուրը ներկայացնում է Փրանսիական, գերմանական ու անգլիական հեղինակներին, գրողներին, որ «անոնք ամբողջ սերունդներու վրա կազդեն և ոչ միայն հաճույքի անուշ ժամեր կուտան մեզ իրենց դրվածներով, այլև մտածելու ու կյանքը հասկնալու համար կօգնեն մեզի»:

1 «Մասին», 1890, № 19—20:

2 «Մասին», 1890, № 3949:

3 «Հայրենիք», 1893, № 668:

1 «Արևելք», 1898, № 772:

Այս տեսակետից Ասատուրը նկատում է, որ 60—70-ական թվականներին արևմտահայ իրականությունը մեջ թեև բազմաքանակ դրականություն թարգմանվեց, այնուամենայնիվ, այդ շրջանում խիստ անբավարար էր դասական խոշոր գործերի թիվը: Թարգմանչի նդատակը պետք է լինի ոչ թե «զվարճալին և հանելին», ոչ միայն է. Սյուրի, Ա. Դյուամայի կամ Ք. Մոնտերենի, այլ համաշխարհային գեղարվեստական մտքի նվաճումներով և խոր համամարդկային գաղափարներով հաղեցված դասական ստեղծագործությունների թարգմանությունը: Դանտե, Տաստ, Շեքսպիր, Միլտոն, Բայրոն, Կոստեյլ — անուններ, որոնք անձանոթ էին նոր սերնդին: Մոլիերից, Գյոթեից և Շիլլերից կտարված մի քանի թարգմանություններ միայն, որոնք, այնուամենայնիվ, չեն պահպանում ժամանակակից ընթերցողի պահանջները, իսկ Միխիթարյանների կողմից հայերեն թարգմանված Հոմերոսը, Վիրգիլիոսը և Միլտոնը՝ գրարար էին:

Գարավերջի արևմտահայ կյանքում զդացվում էր ընդհանրապես առաջադիմական գաղափարների, գլխավորապես, դասական մտքին ծանոթանալու մի ներքին մղում, որից էլ համաշխարհային գեղարվեստական դրականության նվաճումների յուրացման պետքը պակաս կարևոր էր դիտվում, քան փիլիսոփայական և գիտական արժեք ներկայացնող գործերի թարգմանությունը: Պահանջվում էր հայերենի վերածել և մեկնաբանել Վոլտերի, Ռասինի, Ռուսոյի, Ռենանի և Սպենսերի ուսմունքները՝ հայ հասարակական միտքը հարստացնելով համաշխարհային փիլիսոփայության տեսական նվաճումներով:

1885 թ. «Արևելքում» պարբերաբար հրատարակվող «Կյանքն ի Ֆրանսա» թղթակցություններում, Ասատուրը Ֆրանսիայի մշակութային և հասարակական տեղաշարժերի ոլորտներում փորձում էր հայտնաբերել հայ կյանքի զարգացման հեռանկարները: Վոլտերի հայրենիքը հոգևոր մշակութի մի համապարփակ աշխարհ էր հայտնվում, որը գեղարվեստի անփոխարինելի գանձեր էր ամփոփում իր մեջ, ինչպես նաև բարձրի ու կենցաղի, սոցիալական հարաբերությունների

ուսումնասիրման կարևորություն ստանում՝ առաջադրելով բազմակողմանի և ըննախույզ հայացք այս ամենի հանդեպ. «Ռոպես Ֆրանսիայի դրականությունը, նույնպես և նորա տեսական, կրթական, ընկերական, քաղաքական վիճակն ունի յուր կարևորություն մեր ժողովրդյան համար, — համոզված դրում է Ասատուրը: — Այն ազգեր որք, հանդույն հայ ազգին, քաղաքակիրթ աշխարհին մեջ առաջնակարգ դեր չեն վարեր այսօր, պարտին ճանչնալ քաղաքակրթության ռահահորդ ժողովրդոց ներքին կացությունն, նոցա բարձրն ու ձգտումներն, նոցա առաջադիմության պատմությունն, նոցա անցյալն ու ներկան, թափանցելու համար նոցա զարգացման գաղտնեաց մեջ և հետևելու համար նոցա շավղին»¹: Այստեղից էլ մի առանձին նշանակություն էր ձևաք բերում Ֆրանսիայի, Անգլիայի, Գերմանիայի և մյուս քաղաքակիրթ ժողովուրդների ներքին ու արտաքին կյանքի վերհանումը՝ հիմնավորելով այս երկրների սոցիալ-քաղաքական, ինչպես և հոգևոր կյանքի առաջնորդ գործունեությունը, հասարակության զարգացման ընթացքը: Թուսելով էլզմոնդ Աբուի «Ժամանակակից Հունաստանը» աշխատության մասին, որը մեծ արձագանք և ընդունելություն գտավ Ֆրանսիայում, Ասատուրը ցանկություն է հայտնում, որ այն թարգմանվի հայերեն, քանի որ, դրում է նա, «մեր մեջ թարգմանված գրքերն ընդհանրապես վեպեր են և հանախ այնպիսի վեպեր, որք կղբոսցնեն առանց կրթելու: Յովայի է, — շարունակում է նա, — որ պատմական դորձեր, մեծ մարդոց կենսագրությունք, ճամբորդությունք նկարագրությունք, ժողովուրդներու ներքին վիճակին վրա գրված ուսումնասիրությունք չեն փորձեր հայ թարգմանիչներն»²:

Բայց, այնուամենայնիվ, որքան կտրևոր է XVIII—XIX դարերի եվրոպական դասական գրականության յուրացման անհրաժեշտությունը և գիտական, փիլիսոփայական մտքի ծանոթացումը, նույնքան և հարկավոր է ճանաչել զարավերջի, այսինքն՝ ժամանակակից եվրոպական հեղինակներին՝ նոր

1 «Արևելք», 1885, № 2:

2 Նույն տեղում:

ժամանակներին հատուկ իրենց գրական մտայնությամբ, նոր խնդիրներով, ընդգրկման խորությամբ և պրոբլեմների սրությամբ: Անատոլ Ծրանս, Մարսել Պրեվո, Պոլ Բուրժե, Պոլ Աղան և ուրիշներ:

«Յոյր այս հեղինակները, — գրում է Ասատուրը, — անծանոթ են հայ ընթերցողներուն, բայց կարժեր, որ անոնցմե մեյ մեկ դորձ թարգմանվեր հայերենի»: Թող որ այդ գրականութունը մի այլ իրականության զեմքեր վերհաներ, անցքեր պատկերեր, թող որ այդ գրականութունը հետու լիներ մեր աղջային կյանքից ու բարքերից, այսուհանդերձ, այդ դորձում, «այնքան իրական կյանք կա, այնքան կենդանութուն, այնքան նուրբ դիտողություններ և այնքան հմայք ոճի»¹, որ խիստ անհրաժեշտ են դառնում այսօրինակ զբքերի թարգմանությունները: Արևմտահայ մի ընթերցող ծանոթ է Վ. Հյուգոյին, Համարտինին, Մյուսելին, բայց ամենևին չի ճանաչում Ծրանսիայի ժամանակակից գրողներին, որոնք «արտազբեցին անմոռաց երկեր»: «Իրապաշտ վիպասանութունը որ ժամանակակից Ծրանսայի նոր վիպագիրներուն նախընտրած վիպագրական դպրոցն է, անծանոթ մնացած է մեր մեջ», — գրում է նա, ցանկութուն հայտնելով թարգմանված տեսնել Բալզակին, Ստենդալին և Ծլորերին:

«Պետք է դոնել հեղինակ մը, որով կարելի ըլլա ժողովրդին մեջ տարածել զանազան գրականությանց նշանավոր ներկայացուցիչներուն հրաշակերտները, ինչպես նաև դիտական ժողովրդային գրվածներից այս ամենը մեր արդի լեզվին թարգմանված կարող գրիչներն: Ժողովրդական աժան տպագրությամբ մը ջանալու է որ այդ գրքերը ամեն դասակարգի մեջ կարենան մուտ դոնել: Անոնք պետք է թարգմանված ըլլան պարզ լեզվով մը, ընդհանրության մտքի մակարդակին մոտեցնելով դիտությունները և ժողովրդականացնելով մեծ հանճարներուն մեծ երկերը»²:

Համայնարհային գրականության նշանավոր դեմքերի ստեղծագործությունները թարգմանաբար մատուցելով հայ ժողովրդին, մեր գրողները գրանով իսկ գրելու արվեստ մեղք կրեն, կառնորեն քննել ու վերլուծել երևույթները և կկարողանան կողմնորոշվել հասարակական կյանքի բարդ ելևէջներում: Բացի դրանից այդ գրականությունը զարգացնում էր ընթերցողի ճաշակը, նյութ տալիս ժողովրդին և զբաղեցնում մտքերը առաջավոր ու թարմ գաղափարներով: Օտար գրականությունը ոչ միայն չէր խանգարի աղջայինի զարգացմանն ու առաջընթացին, գտնում էր Ասատուրը, այլև գրական սերնդին կհաղորդեր զեղարվեստական նոր սկզբունքներ, նոր գաղափարներ ու նոր աշխարհընկալում: Կարևոր էին անշուշտ թարգմանության որակի, թարգմանական արվեստի հարցերը: Պահանջվում էր տալ բնագրին հոգեհարազատ թարգմանություններ՝ կատարված «անազարտ ոճով և մաքուր լեզվով»: Այս առումով Ասատուրը օրինակելի է համարում Գ. Օսյանի կատարած Հալիվի «Արբա Քոնսթանթինի» թարգմանությունը, Համարտինի «Ռաֆայելը», Պելլիթայանի կատարած Վ. Հյուգոյի «Ուրվականների» թարգմանությունը: Արամ՝ Վ. Հյուգոյի «Ուրվականների» էր համարում նաև Ասատուրը «խնամքով և խղճամիտ գործ» էր համարում նաև Գ. Փափազյանի կողմից Երեւոյի «Համլետի» և Լ. Պայոզյանի «Վենետիկի վաճառականը» կատակերգության թարգմանությունները: Հետաքրքիր է, որ գրականադեպո շատ ավելի խրախուսելի է համարում անգլիական դասական գրողների գործերի թարգմանությունը, «որոնք այնքան անտեսված են մեր Ֆրանսամոլ գրականության մեջ»: Մյուս կողմից՝ թարգմանական գրականությունը մշակում և կատարելագործում էր նաև դեղարվեստական արձակի լեզուն, հարբատացնում բառապաշարը: «Պետք է դիտնալ, — հիշեցնում էր նա, — թե լեզվի մը մշակումը մանավանդ թարգմանությանց շնորհիվ տեղի կրնա ունենալ: Թարգմանիչը հեղինակի մը ավելի կրնա նոր բառերով օժտել լեզուն, նոր սճեր, նոր

1 «Արևելք», 1885, № 2:
2 «Արևելք», 1898, № 3772:
3 «Արևելք», 1899, № 4182:

1 «Արևելք», 1899, № 4105:


բացատրություններ փնտրել, գտնել և այսպես մեր լեզվին տալ հարուստ լեզուներուն ճկունությունն ու զարդացումը¹։

Բացահայտելով թարգմանական գրականության անհրաժեշտությունը, Ասատուրը ինքը ևս կատարել է բաղձաթիվ թարգմանություններ, դրսևորելով դեղարվեստական ստեղծագործության ու ընդհանրապես արվեստի էության մեջ թափանցելու կարողություն և նուրբ ճաշակ. նա բանաստեղծություններ է թարգմանել Վ. Հյուգոյից, Պ. Վեռլենից, Ա. Սամսոնից, Ժ. Ռիլքեից, Լ. Կոնա դը Լիլից, Ֆ. Կոսլովից, որոնք հրատարակվել են արևմտահայ տարբեր ամսագրերում ու թերթերում²։

* * *

Գրական-հասարակական մտքի դեղադիտական նոր պահանջները 80—90-ական թվականներին դնում էին արձակի ժանրերի զարգացման խնդիրը։ Ինքորոշվում էին դեղարվեստական արձակի ժանրային նոր տարատեսակներ՝ քրոնիկն ու նորավեպը, բարձր կատարելության հասցվում վեպն ու պատմվածքը։ Արևմտահայ ութսունականների համար նախընտրելի էին փոքր կտավի ժանրերը, հատկապես նորավեպն ու քրոնիկը։ Այս երկուսն առավել կարևորություն էին ստանում այն տեսակետից, որ հրատարակվելով մամուլի էջերում, ազնիվ արագ և շուտափուլի կերպով էին քացահայտում կյանքի երևույթները, չբնապատող միջավայրի ու անցողաբար արդյունք հանդիսացող՝ գրողի անմիջական մտորումներն ու խոհերը։

Հ. Ասատուրը իր «Արդի գրականությունն ի Թուրքիա» հոդվածում քննելով 80-ական թվականների արևմտահայ գրական-մշակութային կյանքի բնորոշ կողմերը, նկատում էր, որ վերջին տարիներին մամուլի էջերում մեծ տեղ էր զբաղում քրոնիկը, մի ժանր, որը նշանակալից դեր էր կատարում Փրանսիական ժամանակակից դրականության մեջ՝ շնորհիվ Օ. Շոլի, Ա. Ուոլֆի և Ռոչֆորի պես ականավոր քրոնիկագիրների։ Ասատուրը դտնում էր, որ արևմտահայ գրականության առաջին քրոնիկագիրը Մ. Մամուրյանն էր, որը «Շահնուբ»



ԱՐՓԻԱՐ ԱՐՓԻԱՐՅԱՆ

1 Նույն տեղում, № 4182։

2 «Ծագիկ», 1903—1906, «Լույս», 1908 և այլն։

ծածկանվամբ «Արևելյան մամուլում» հրատարակեց բազմաթիվ քրոնիկներ, որոնք քննադատի համոզմամբ «Տշմարիտ հրաշակերաններ են գոյտը ու զվարթ ոճի»։ Այս ժանրի հետևիություններ են ստեղծված նաև, նշում է Ասատուրը, Արփիարյանի «տրամադրությունները և ղեկեցիկ սճով» գրված «Օրվան կյանքերը», որոնք ընթերցվում են մեծ հետաքրքրությամբ, և Պերպերյանի «Մարդիկ և իրք» խորագրերը կրող հոդվածները։

Եթե քրոնիկն իր կենսական ճշմարտացիությամբ ներկայացվող դադափարի անմիջականությամբ և ղեկարվեստական խոսքի ուժով ընթերցողին ներշնչում էր որևէ զգացմունք, ապա նորավեպում արտացոլվում էին իրականության ավելի խոր և զեղարվեստորեն ավելի մեծ ընդգրկում ունեցող պատկերներ՝ զարդացող սյուժեով և պատկերներով։ Այս անսակեցի հիշելով «Ապուշի» «սրախոս և սրամիտ» հեղինակին, Ասատուրը գրում է. «Արփիարյանին է որ է յուր «Օրվան կյանքեր» քրոնիկներուն մեջ, չէ նույն յուր նորավեպերուն մեջ։ Յուր քրոնիկներու մեջ կը դանենք զինք զվարթ, բմահաճո, չաբատես, խայթիչ և մերթ անդութ իսկ... Յուր վեպերուն մեջ պարզ է նա, բնական, զգայուն և գիտե հրապուրել ընթերցողն ինչ դասի ալ պատկանի»։

Արփիարյանն էր, հիշում է Ասատուրը, որ դրեց առաջին իրապաշտ նորավեպը «Կատակ մը» վերնագրով, որին հետևեցին «Դատապարտյալը» և «Մեղամոլիկ ազջիկը» նորավեպերը։ Արփիարյանից զատ, արևմտահայ գրականության մեջ նորավեպի մշակման դարձում իրենց զեղարվեստական ներդրումն ունեն նաև Կամսարականը, Հրանդը, Բաշալյանը, իսկ ժամանակի հայտնի հրապարակախոս և իրավարան Գ. Զահրապը ճանաչվեց այդ ժանրի չգերազանցված վարպետը։ «Երկաթե նիարագիր» ունեցող «Իսիզախ և անվահեր դրող» Զահրապին Ասատուրը «փառավոր հայտնություն» էր համարում արևմտահայ գրականության համար, որն իր նորավեպերում «զերադրապես ի հայտ կամե իրականին զգացումն, ինքնատիպ ոճ, համակ գորություն և կարող»¹։

1 «Մասիս», 1887, № 3872:

2 «Արևելք», 1888, № 1500:

Պոլսահայ գրական շրջաններում այնքան մեծ էր այս ժանրի գայթակղությունը, որ լուրջ բանասերի համբավ վայելող Ասատուրն անգամ փորձում է գրել նորավեպ՝ «Պարահանդես» վերնագրով: Բայց որքան էլ հրապուրիչ լինեք նորավեպեր և քրոնիկներ գրելու ցանկությունը, այնուամենայնիվ, ութսունականները ամեն կերպ փորձում էին դուրս գալ ժանրային այդ սահմանափակությունից: Նրանք ձգտում էին ընդլայնել կյանքի երևույթների գեղարվեստական ընկալման սահմանները, արտացոլել միջնադարի ավելի համապարփակ երևույթներ, որը և նրանց ժանրային որոնումները ի վերջո կենտրոնացնում էր սեփական վեպ ստեղծելու խնդրի վրա: «Նորավեպերն կոչված չեն մեծ ազդեցություն մը ունենալ, բայց այդ կոչումը վիպասանության պահված է», — գուշակում էր Արսիխարյանը և շարունակում. «Մեր կարծեոք գրական գանազան ճյուղերու մեջ վիպական ճյուղն է, որ ամենեն ավելի գրավական ունի զարգանալու»:

Հարցի մեկնաբանմանը նույն դիրքերից էր մտանում նաև Հ. Ասատուրը: Նա նկատում էր, որ օրը-օրին գրված հատվածների կյանքը խիստ կարճատև է. «մնայուն» ու ավելի խոր գեղարվեստական ստեղծագործությունների պետքն է, որ հետզհետե զգալի է դառնում: Այս տեսակետից Ասատուրը խիստ տեղին էր գտնում ռուսահայերի հանդիմանությունը ուղղված «Քրքահայ» գրադեղների ստեղծած գրական արժեքներին՝ «հարևանցի և թեթև» համարելով դրանք: Հարկավոր էր ավելի կորով ու շրջահայեցություն հանդես բերել գրական ավելի ծավալուն կտավներում ամփոփելու ժամանակի գեղարվեստական փիլիսոփայությունը, կյանքի երեվույթները՝ իր բոլոր կողմերով ու հակասություններով: Եվ այս կարևոր ու անհրաժեշտ խնդրի իրականացման համար ելակետ էր դառնում վիպասանությունը, որն «այնքան խուպան հողեր ու կույս անտառներ» էր պարզում արևմտահայ գրողների առաջ: Գրականագետը հիշեցնում էր, որ Եվրոպայում վեպը սակավ առ սակավ դուրս էր մղում գրական մյուս ժանրերը, որովհետև ժամանակի գեղարվեստական մտածո-

ղություն համակարգում այն դիտվում էր «միակ հարմարագույն ձևն ընկերական ուսումնասիրությունից համար»: «Վեպն ամենեն նորն ու ամենեն ժողովրդայինն է գրական ձևերու», — հայտարարում էր Ասատուրը:

Գրողը միայն վիպասանության մեջ է, որ աղստ ասպարեզ է գտնում ջննելու հասարակական և ընկերական կյանքը, մարդկային հոգեբանության խորախորհուրդ ծալքերը: Այն առաջատար դերը, որ նոր պայմաններում կատարում է վեպը, Ասատուրը համարում էր այն, որ վեպը դառնում էր ժամանակի սոցիալ-բարոյական խնդիրների գեղարվեստական արտացոլման ձևերից մեկը: Ընդգրկելով «մարդկային ծանոթության բոլոր ճյուղերը, վեպն այսօր եղած է դարուն գործին, մեծատարած ջննություն մը մարդու և բնության վրա», — գրում էր գրականագետը, մեջ բերելով Չոլայի հայտնի տեսական դրույթներից մեկը: Ասատուրը հասարակական և անհատական կյանքի բազմակողմանի ճանաչման և բացահայտման՝ վեպի ունեցած հնարավորությամբ էր բացատրում ժանրի այդքան մեծ տարածումը գտնելու փաստը: Գեղարվեստական բոլոր ժանրերից միայն վեպն էր, որ ձևի իր անկաշկանդ ազատությամբ «կը խորաքննե զգայնությունն ու կրքերն, որք անհունն կը փոփոխին, կը քննադատե, կը վերլուծե, կը պարզե իրողություններ, խորհուրդներ և հողեկան հուզումներ: Այս պատճառով ահա վիպական ձևն կը դառնա նախամեծար ձևն քաղաքակիրթ աշխարհին դրագիրտաց», — գրում է նա: Ասատուրը նկատում էր, որ Եվրոպական գրականությունից թարգմանված վեպերը մեծ ազդեցություն են թողել արևմտահայ գրականության և գեղարվեստական մտքի զարգացման վրա: Վիպելու ճաշակը արևմտահայերի մոտ մշակվել է հատկապես Փրանսիական վեպերի անմիջական ազդեցության տակ: Այնպիսի շնորհալի թարգմանիչներ, ինչպիսիք էին Ռեթուճյանը, Մամուրյանը, Զիլինկիբյանը՝ արևմտահայ գրա-

1 «Մասիս», 1884, № 3739:

1 «Մասիս», 1887, № 3872:

2 Արևելք», 1888, № 1500:

3 Նույն տեղում:

կան մտավորականութեանը ծանոթացրին «եվրոպական վիպական դպրոցին հրաշակերտներու հետ», ժանրի արդեն իսկ մշակված գրական ըմբռնումներին, որը, ինչպես դատում էր գրականագետը, նպաստեց ազգային ատաղձի, հասկապես վեպի կազմավորմանն ու զարգացմանը:

Պ. Պառչյանի 40-ամյա դրական դործունեութեան հորերյանի առիթով Ասատուրը բաղդատում է արևելահայ և արևմտահայ վիպագրութեանը: Արևելահայ վեպի հիմնադիր համարելով Խ. Աբովյանին, ու նրա «Վերք Հայաստանին» դնելով 1851 թ. Պառչյանը հրատարակված Հ. Հիսարյանի արևմտահայ առաջին «Պոստով և Մաքրուհի» վեպի կոպիտ, գրականագետը դառնորեն նկատում է «երկուստեք հետևած ուղղութեանները» տարբերութեանները: «Հիսարյան փոխանակ մեր կյանքը, մեր բարքերը ուսումնասիրելու, սիրո հովիտները մեր կրքեր, որ չունենք բնավ տեղային տարազ», — գրում է նա: Ասատուրը նկատում էր, որ արևելահայ իրականության մեջ գեղարվեստական արձակի զարգացումը ավելի ազգային բնույթ ունենալու, որովհետև գրական ըմբռնումներն ու սկզբունքները այստեղ ձեռք բերվեցին ինքնուրույն զարգացման ուղիով և իրենց բովանդակությամբ խորապես ազգային էին: Թե՛ Հիսարյանի «Պոստով և Մաքրուհի», և թե՛ դրան հաջորդող Ա. Հայկունու «Էլիզա» վեպը շատ հեռու էին հայ ազգային միջավայրի արտացոլում լինելուց: Մինչդեռ «Պառչյանի և ուրիշներ, — շարունակում է նա, — Կովկասի մեջ կը սկսեին գրել հայ տեղական կյանքի վեպեր, բարքի վեպեր, հողերանական վեպեր և կը նկարեին իրենց ժամանակակից ընկերութեանը, ապագա հայ սերունդներուն թողելով իրենց միջավայրին ու ժամանակին վրա կտրուր վավերագրները»: Եթե արևելահայ իրականության մեջ այդ ժամանակաշրջանում ստեղծված վեպերը արժարժում էին կենսական նշանակություն ունեցող սոցիալական, ազգային խնդիրներ և այդ հիման վրա մշակում գրականության ժողովրդայնության դեղագիտական սկզբունքները, ապա արևմտահայ կյանքում,

թարգմանականի հետևութեամբ գրված արձակում բացակայում էր ազգային հոգեբանության ու միջավայրի, հայ հողավոր կյանքի խոր և բազմակողմանի պատկերումը. «Եվ երբ Ռուսահայոց մեջ, — գրում էր քննադատը, — հետզհետե ինքնուրույն դրոշներ կը ծլեին, ժողովրդական վիպագրութեան մը մշակողներ, մեր պոլսեցի գրողները, եվրոպացի հեղինակներուն ազդեցութեանը տակ կարտադրեին միջազգային վեպեր, որոնք կրնային գրված բլալ, Պոլիս, Փարիզ կամ Նյու-Յորք, առանց բան մը կորսնցնելու իրենց ձգտումներեն»:

Ասատուրը մերժում էր ֆրանսիական առմանտիկական վեպերի մակերեսային հետևութեամբ ստեղծված արևմտահայ վեպերը, որոնք դրական ճաշակ էին դաստիարակում ու գալթակղում ընթերցող հասարակության մտքերը: Հայկական իրականության սոցիալական խորքերը թափանցելու փոխարեն մեջտեղ էին բերվում խճճված ու խորհրդավոր սյուժեների ֆանտաստիկ պատմություններ, որոնք իրենց ոչ ազգային խորքով, ի վերջո, կառուցում էին ինչ-որ բարոյախոսութեան: Ասատուրը փորձում էր հիմնավորել այդ բարոյախոսութեան սնանկությունը, հասարակական հիմքերից զուրկ լինելը, նրա սենտիմենտալ անբնականությունն ու վնասակարությունը և հենց այստեղ էլ սահմանում էր ժանրին ազգային բովանդակություն հաղորդելու գաղափարական գրույթը: Այս առումով նա վիպագրից պահանջում էր ուսումնասիրել «հայ ընտանկան-ընկերական կյանքի երևույթները» և միմիայն «սեղանի վեպեր արտադրել»: Քննադատը նկատում էր, որ միայն 80-ական թվականների կեսերից հետո էր, որ արևմտահայ գրականության մեջ հանդես եկան վեպեր, որոնք ձգտում ունեին «տեղային դույնով պատկերացնելու վեպին անձերը, միջավայրը նկարելով բնականին վրա»: Այստեղ նա նշում է Օր. Ալիսի «Աղջկան մը սիրար», Կամսարականի «Վարժապետին ազլիկը», Ջոհրայի «Անհետացած սերունդ մը» և Անարդիկը (անավարտ) վեպերը, որոնք ըստ քննադատի «վիպական դպրոցի մը հիմերը գրին»: Ասատուրը «խնդուրույն»

1 «Արևելք», 1899, № 4009:

2 Նույն տեղում:

1 «Արևելք», 1899, № 4009:

2 Նույն տեղում:

դրականութեան արժանի փորձեր էր համարում նաև դավա-
ռական գրողների գործերը, որոնք «ներկայացուցին մեզ
դավառի կյանքը, սովորութեանները. Հայաստանի հայն յուր
հովվերգութեաններով, յուր ասածանքներով, յուր խորթ լեզ-
վով և բիրտ բարքերով»¹:

Սոսկելով սղգային բովանդակութեամբ արձակ ստեղծելու
անհրաժեշտութեան մասին, Ասատուրը գրում է. «Գծաբխատ-
բար Տեր-Սարգսենցի «Շահենի Միսիլը»-ն որ դավառական
կյանքի մեկ ճշմարիտ պատկերն հանդես կածե, մնաց կըզ-
գիացյալ և Հայաստանի ժողովրդայն կենաց վրա վեպին
ձեռն ներքև նոր ուսումնասիրութեանները չը տեսանք: Յովսիփ
է նաև որ առջոտը Շիշմանյան (Մերենց) մի քանի պատմա-
կան ընտիր վեպերու հրատարակութենեն հետո կանգ առավ,
և Մամուրյան ալ չկրցավ ավարտել «Սև լեռին մարդը»²:
Համառոտակի վերլուծելով Ս. Տյուսարի «Մայրա», «Միրա-
նույշ» և «Արաքսիա» վեպերը, քննադատը նկատում է, որ
վիզապատմուհին «հույժ հազվադուր» արիւթյամբ իր վեպե-
րում հանդես է բերում «սուրբ կրքեր, արդար դայրույթ ըն-
կերական անիրավութեանց դեմ, անզուսպ տենչ մ'աշխարհի
դեղձմանց հաղթանակին համար»³: Այնուհանդերձ, իր մեկ
ուրիշ հոգվածում, Ասատուրը նկատում էր Տյուսարի ուսման-
արժի թույլ կողմերը, որոնք խստորեն քննադատվեցին
ժամանակին: Որքան էլ Տյուսարի վեպերում արտահայտված
զաղափարները Ասատուրը համարում էր առաջադեմ ու կեն-
սական, բայց, այնուամենայնիվ, ուսմանտիպական վեպի գե-
ղարվեստական սահմանափակութեանները քննադատին նկա-
տելի էին: Գործող դեմքերն ու ներկայացված միջավայրը, ըստ
Ասատուրի, հեռու էին հայկական հողեբանութեան ու մթնո-
լորտի հոգեհարադատութեանից: Ասատուրը մատնանշում էր,
որ դարավերջի տասնամյակներին արևմտահայ գրականու-
թեան մեջ թեև գրվեցին մի շարք վեպեր, բայց այսուհան-
դերձ, այս ժանրը հարատև զարգացում չտեսցավ. «մինչդեռ, -

գրում էր Ասատուրը, — ուստի հայերը ունեցան Շիրվանդադե,
Լեոն, Մուրացյանը, Ասրուհյանը, Վ. Փափազյանը, Շահինը և
ուրիշներ, որոնք բաղմամբիվ կրկեր արտագրեցին և կարտա-
դրեն շարունակ, մերկաները քանի մը մեկուսացյալ փորձերով
միայն դժհացան»⁴:

* * *

Գրականութեան տեսութեան հարցերին Ասատուրն ավելի
հանդամանորեն անդրադառնում է «Գրական սեուեր» աշխա-
տութեան մեջ (ձեռագիր է), որտեղ նա տեսական հարցա-
դրումների շրջանակում լուսարանում է գրական ժանրերի
առանձնահատկութեանները և շոշափում լեզվի ու տաղաչա-
փութեան առանձին հարցեր: Այստեղ նա փորձում է տալ
գեղարվեստական սեուի գիտական լուսարանութեանը, պատ-
մական ու տեսական քննութեան ենթարկելով դրանք:

Ասատուրը գրական ժանրերը բաժանում է երեք մեծ
խմբերի՝ արձակ, բանաստեղծութեան և թատերական: «Բա-
նաստեղծական սեու» խմբում մտնում են հետևալ ժան-
րերը՝ քնարերգական, դյուցազներգական, ողբերգական,
իմաստասիրական և հովվերգական: Իսկ «Թատերական
սեու» կազմված է ողբերգութեան, կատակերգութեան և
դրամա ժանրերից: «Պատմական», «Վարդապետական», «Վի-
պական» և «Նամակապրական» սեուերը աշխատութեան
մեջ ամփոփում են արձակի բաժինը: Ինչպես նկատելի է,
արձակի ժանրերի տարբերակման հիմք են դարձել առավե-
լապես այդ տեսակետներին բնորոշ թեմատիկ առանձնահատ-
կութեաններն ու բովանդակութեան ընդհանուր բնույթը: Գրա-
կանութեան տեսարանը արձակի սեուի ընդհանուր հասկացու-
թեան տակ է դնում փիլիսոփայութեանը, հրապարակախոսու-
թեանը, տնտեսագիտութեանը և այլն: Յուրաքանչյուր ժան-
րային տեսակ քննելիս, Ասատուրը հանդամանորեն ներկայաց-
նում է տվյալ ժանրի յուրացրած ձևերը, ժամանակի ընթաց-
քում կրած փոփոխութեանները՝ այսինքն նշում ժանրերի
զարգացման պատմական ընթացքը, օրինակներով հիմնա-

1 «Արևելք», 1888, № 1500:

2 «Մասիս», 1887, № 3872:

3 Նույն տեղում:

4 «Արևելք», 1899, № 4009:

վորելով դրանք: Օրինակ. «Վիպական սեռ» բաժնում նշում է կրեք տեսակ՝ «բուն վեպեր», որոնց մեջ մտնում են պատմական, դիտական, հոգեբանական, իմաստասիրական վեպերը, ապա նորավեպ և հեքիաթ:

«Վեպը իբր անջառ գրական սեռ զարդացավ նոր գրականութանց մեջ», — գրում է նա՝: Բայց այս չի խանգարում որ տեսարանը մի հետադարձ հայացքով պարզարանի անտիկ շրջանում և միջնադարում ստեղծված եվրոպական վիպական արժեքները՝ ասպետական վեպերից հասնելով 19-րդ դարի սոցիալ-քարոյական հարցերի գեղարվեստական արտացոլումը հանգիսացող դասական վեպին:

«Քրուպատուրներու ու թրուվերներուն երկերը հաճախ ուրիշ բան չեն բայց եթե վեպեր որ ասպետներու քաջագործությունները և դոյակներու մեջ բնակողներու արկածները կը պատկերացնեն», — գրում է նա՝: Յուրյ տալով ժանրի զարգացման պատմական ընթացքը, Ասատուրը նկատում է, որ այդ առաջընթացը պայմանավորված է միմիայն ժամանակի սոցիալական հարաբերություններով և դարաշրջանի գեղագիտական պահանջներով: Վերածննդի խոշորագույն վիպասաններ Ռաբլեից և Սերվանտեսից հետո, նշվում են Ա. Պրեման, Եստորրիանը, Ռուսոն, Գեֆոն, Ստենդալը, Բալզակը, Ֆլյուբերը և ուրիշներ: Ասատուրը իրավամբ վեպի զարգացման ամենարեզուն շրջանը համարում է ումանտիզմի և ռեալիզմի տիրապետության ժամանակաշրջանը:

Գրականութան տեսարանը ընդանրապես դրական ժանրերի բաժանումն ու ուսումնասիրությունը չի հենում դրական դպրոցների վրա, թեև մերթնդմերթ անդբաղաձնում է իրականութան գեղարվեստական ընկալման գլխավոր սկզբունքներին: Հեղինակը սովյալ ժանրի բնորոշումը տալուց հետո, քննելով ժանրի կոնկրետ բովանդակութան և գրականական ձևերը, ներկայացնում է դրա ծաղումնաբանական արժատները, հետևում ժանրի զարգացման եվրոպական ուղուն:

Այսպես. բնորոշելով դյուցազներգական սեռը և նշելով դրա հասկանալի կողմերը, հեղինակը համառոտակի պատմում է հնդկական «Մահաբհարատան», Հոմերոսի «Ուլիսականը», «Ոգիսականը», Վիրգիլիոսի «Էնեականը», Միլտոնի «Դրախտ կորուսյալը», Փրանսիական «Ռոյանդի երգը», իսպանական «Սիդը» և այլն: Պատմում է յուրաքանչյուրի բովանդակությունը, ոճական պատկերավորման առանձնահատկությունները, նշում լեզվի, տաղաչափության տարբերությունները և ամենակարևորը, տալիս դնահատուցյունը: Օրինակ, Տասույի «Ազատագրված Երուսաղեմի» մասին գրում է. «Բնչպես կերևա, Թասուս ներշնչված է Հոմերոսին...: Բայց եթե Թասույի դյուցազներգութան կազապարը հոմերական է, գզացումը անոր մեջ նոր է բոլորովին:

Դասական բանաստեղծը ումանտիկ կը դառնա, դրվագներու մեջ, խորքերու և դիրքերու նկարագրութան շնորհիվ: Բերթվածի բոլոր հրաշալին, մոդուլթյան հրաշքերը, ինչպես Արմիդասի հրապուրանքները վիպական դյուցազներգութան մը տղավորություն կը թողուն:

... «Երուսաղեմը» նույնքան սիրային վեպ մըն է որքան պատմական դյուցազներգություն մը՝:

Աշխատութան մեջ կարևորն այն է, որ համաշխարհային գրականութան զարգացման պատմական պրոցեսի վրա, իր կոնկրետ ժանրային գրականումներով, ցուցադրվում էր հայկականը: Հայ դյուցազներգութան օրինակ է ներկայացվում Ա. Բաղրատունու «Հայկ Դյուցազնը»: Վերլուծելով գործը, Ասատուրն ակնբախ նմանություն է գտնում հույն նշանավոր դյուցազներգակի և Բաղրատունու ստեղծագործութան միջև, ոչ միայն գործի արտաքին կողմերի, այլև նրա հիմքը կազմող զինքարանական մտածողութան մեջ: «Վսեմ ոճի նմոյշ մըն է այս դյուցազներգությունը, — գրում է գրականութան տեսարանը, — ուր կան ուժգին իրադրություններ, հակադրություններ, որոնք հոյակապ ու վեհասպան շքեղություն մը կուտան հայկական չափի այն հրաշակներին, որ եթե գրական մեծ արժեք

1 ԳԱԹ, Թ. Ազատյանի արխիվ, բաժին 1, № 11, 2. Ասատուր, Գրական սեռեր, էջ 76:

2 նույն տեղում, էջ 78:

1 ԳԱԹ, Թ. Ազատյանի արխիվ, բաժին 1, № 11, 2. Ասատուր, Գրական սեռեր, էջ 36:

մը չունի, լեզվի ճոխութեան տեսակետով պիտի մնա իբր անմտանայի հիշատակարան մը հին հայերենով գրված երկաթի թուղթի մեջ»¹ :

Ողբերգութիւնը, կատակերգութիւնը և դրաման ներկայացվում են որպէս դրամատիկական ժանրի տեսակներ, որոնք տարբերվում են միմյանցից արտացոլված նյութի, արամագրութիւնների բնույթով և կառուցվածքային առանձնահատկութիւններով: Այս բաժնում նույնպէս Ասատուրը մեկնաբանում է ժանրի ծագման ակունքները՝ կապված հին հունական դիցաբանութեան հետ՝ կանգ առնում հույն նշանավոր դրամատուրգներ Էսքիլեսի, Էվրիպիդեսի և Սոֆոկլեսի վրայ, վերլուծում որանց գործերի հիմքում ընկած դիցաբանական մոտիվները, որոնց միջոցով արտահայտվում էին ժամանակաշրջանի բարոյական ու հասարակական, ինչպէս նաև փիլիսոփայական, կենսական խնդիրները: Տալով դրամատիկական ժանրի զարգացման պատմութիւնը, գրականութեան տեսարանը ներկայացնում է XVII—XVIII դդ. դասական դրողներին (Կունեյլ, Ռասին, Վոլտեր), պարզաբանում տեղի, ժամանակի և դործողութեան միասնութեան օրենքը և հասնում մինչև Վ. Հյուգոյի նշանավոր «Կրօնի թուղթի» առաջաբանը: Ասատուրը համեմատաբար ավելի թուղթի է անդրադառնում գրամատիկական ժանրի մյուս տեսակներին՝ կատակերգութեանը, դրամային և մելոդրամային:

Ակներև է, որ աշխատութեան հեղինակը գրական սեռերի ու նրանց տեսակների իր սահմանադատումը ղեկ չի հիմնավորում գրական-գեղարվեստական փաստանյութի մանրադնին ու խոր հետազոտութեամբ, քանի որ Ասատուրի գլխավոր նպատակն է եղել ներկայացնել գրական ժանրերը՝ հետեւելով Եվրոպական գրականութեան օրինակներին: «Գրական սեռեր» աշխատութեան տեսական նշանակութիւնն էլ հենց նրանումն է, որ եվրոպական կողքին ներկայացվում է նաև հայկականը, գրական սեռերի իմացութիւնը անհրաժեշտ է գիտվում հայ գրականութեան պատմութեան գիտական ուսումնասիրման գործում:

Հ. Ասատուրին գրադեցրել են նաև գրական ոճի և տաղաչափութեան հարցերը: Գրականութեան տեսարանը յուրաքանչյուր դրողի բնորոշ լեզվամտածողութեան ինքնատիպութիւնը համարում է նրա գրական ոճը, գրելաձևը: «Ոճը այն յուրահատկութիւնն է, — գրում է նա, — որով մարդ իր դազափարը կարողանալի»²: Այսինքն զազափարական-գեղարվեստական այն ինքնատիպ գծերը, որոնք բնորոշում են միայն սովոր մարդուն կամ գրողին: Գրական ոճը՝ ուսումնասիրութեան մեջ ներկայացվում է «ընդհանուր» և «մասնավոր» հատկութիւններով: Ընդհանուր հատկութիւններն են «հատկութիւնը, ուղղախոսութիւնը, մաքրութիւնը, նորաբանութիւնը, ճշտութիւնը, ազնվութիւնը, ներդաշնակութիւնը և բնականութիւնը»: Իսկ «մասնավոր» հատկութիւններին նվիրված բաժնում նա բացատրում է «պարզ ոճը», «որ անփայլ և անզարդ է և կը հարմարի հրահանգիչ գրվածքներուն», «բարեխառն ոճը», որից պահանջվում է «վայելչութիւն, նրբութիւն» և «վսեմ ոճը», որին հատուկ է համարում «ճոխութիւն, կորով, պերճութիւն, հեղնութիւն և բուն վսեմը»: Գրականութեան տեսարանը սակայն քննադատում է «պարզ», «բարեխառն» և «վսեմ» սճերը, համարելով դրանք ձեւական: Նա գտնում է, որ «հաճախ վսեմը պարզ ոճին մեջ է որ ի հայտ կուգա»: «Հին հետաքրքրուն այս բաժնումը կանգիտանա սա պարզան, — գրում է նա, — թե որքան դանազանութիւն կա ոճին մեջ, այնքան գրական սեռերուն մեջ: Պերճախոսութեան ոճը պատմագրութեան ոճը չի կրնար ըլլալ, ոչ ալ դաւցադներգական բանաստեղծութեան ոճը, քնարերգական բանաստեղծութեան ոճին կրնա նմանիլ»³:

Քննադատելով դասական ոճի նորմատիվ սկզբունքները, Ասատուրը, այնուամենայնիվ, գրական ոճը ստեղծագործական մեթոդի մասնավոր արտահայտութիւն չի գիտում, այլ գրական ոճերի զանազանութիւնը բացահայտում՝ գրական ժանրերի բազմազանութեամբ: Նա հենվում է միայն ոճի լեզվա-

¹ Նույն տեղում, էջ 53:

² ԳԱԹ, Թ. Ազատյանի արխիվ, բաժին 1, № 14, էջ 1:

³ Նույն տեղում, էջ 15:

բանական ըմբռնման վրա, այսինքն ձևի, որի համաձայն էլ ձևավորվում էր ստեղծարարծողի լեզվի և արտահայտչական միջոցների յուրօրինակութունը: Սա, ըստ էության, հայ իրականութեան մեջ արդեն մշակված տեսական դրվածք էր, որ գալիս էր դեռևս Հյուսիսային:

Ասատուրի տաղաչափութեան հարցերին նվիրված ուսումնասիրությունը համառոտակի ներկայացնում է «Բանաստեղծական սեռի», որպես դեղարվեստական հատուկ սկզբունքներով կազմակերպված խոսքի կառուցման յուրահատուկ կողմերը՝ ելնելով չափածոյի յուրացրած ձևի ու բովանդակության մի քանի առանձնահատուկություններից: Գրականութեան տեսարանը չափածո ստեղծարարծութեանը հատուկ էր համարում «ներշնչումը», «զգայնությունը», այսինքն հուզական, զղացմունքային երանգները, որոնք կազմում են «բանաստեղծական սգին»: Բայց չափածո խոսքը, բացի ներքին հուզական շնչադրուսից «պետք ունի նաև երաժշտական ներդաշնակ լեզվի մը, — դրում է նա, — որը պրեթև միշտ չափական է: Բանաստեղծութեան լեզուն է առիկա, զոր հուսուցանել մեզ ոտանավորի արվեստը, այսինքն տաղաչափությունը, զոր բանաստեղծական լեզուն կենթարկել հանգի, դաշնավորութեան և չափի»:

«... Տաղաչափությունը, — շարունակում է Ասատուրը, — հրաշալի դործիք մըն է միայն բանաստեղծության համար, բայց բանաստեղծությունը հանճարի ծնունդ է, մեծ վարպետներու դործ: Տաղաչափությունը այդ վարպետներուն երկերին առաջ եկած դիտողութեանց ամբողջությունն է, բանաստեղծութեան հրաշակերաններն ներշնչված օրենսդիրք մըն է այն՝ որ կը կոչվի բանաստեղծական արվեստ», — եզրակացնում է նա՝ Ասատուրը հայ տաղաչափությունը բնորոշ է համարում չափական և թվական (նկատի ունի վանկական) սխոտեմները: Սկսած դողթան երգերից մինչև XVIII դար, մինչև Սալաթ-Նովա, նա քննում է տաղաչափական այդ երկու ձևերի ծագ-

ման և զարգացման ընթացքը: Հեղինակը առանձին և բավական հանգամանորեն անդրադառնում է նաև հանգի տեսակներին, վանկի և բառերի հնչյունական կազմին:

* * *

80—90-ական թվականներին, արևմտահայ մշակութային կյանքի հիմնական հարցերից մեկն էր նաև դրական լեզվի խնդիրը: Թեև արևմտահայ գրականութեան նոր մշակների կողմից լեզվի հարցը վաղուց արդեն վճռված էր հօդուտ աշխարհաբարի, այսուհանգերձ, դրական նոր լեզվի ամբալընդման և համընդհանուր քերականական կանոնների հաստատման ջանքերը խիստ նկատելի էին: Արևմտահայ գրողները, ժողովրդական պարզ ու հասկանալի լեզվով գրելու ջատագով, հանդես եկան որպես աշխարհաբարի համոզված կողմնակիցներ: Այս էր պատճառը, որ այնքան անողոք էր նրանց պայքարը 80-ական թվականներին, պոլսահայ որոշ մտավորականների կողմից՝ մի վերջին անգամ դրաբարը վերականգնելու փորձերի դեմ: Այս տեսակետից Հ. Գուրգենի, Ռ. Պերպերյանի, Մ. Գարազայանի, Թ. Թերղյանի և մյուսների ձգտումը ապարդյուն եղավ, քանի որ աշխարհաբարի դատի պաշտպանութեան համար ոտքի կանգնեց ողջ առաջավոր ու երիտասարդ մտավորականությունը: Գրաբարի կողմնակիցները, որոնք այնքան տարիներ ճաշակել էին հին լեզվի ճոխությունը, ճաշակել այդ լեզվի հարզը, դժվարությունը և զիմադրաբար էին ընդունում ու ենթարկվում աշխարհաբարի պահանջներին: Ժամանակը դործում էր հօդուտ նորերի, և նոր լեզուն գրավում էր հնի բոլոր ասպարեզները: 80-ական թվականներին դրաբարամոլները, որակելով աշխարհաբարը որպես խիստ անչառ և սոմանտիկ լեզու, մեջտեղ նետեցին իրենց վերջին պահանջը: Եթե մի քանի տասնամյակ առաջ նրանք հետամուտ էին ամեն կերպ կենդանացնելու դրաբարը՝ դրավոր և խոսակցական լեզվում, ապա 80-ական թվականներին արդեն նրանք առաջարկում էին միայն, որ դրավոր լեզուն լիներ դրաբարը: Սրա արդյունքը եղավ այն, որ

1 ԳԱԹ, Թ. Աղստյանի արխիվ, բաժին 1, № 9, էջ 42:

2 Նույն տեղում:

Մ. Գարազաշյանն ու Հ. Գուրգենը, 1886 թ., հրատարակեցին «Ճաշակ ոսկեղեն պարության» դրաբար ամսաթերթը: Գրապաշարը, որն առաջ էր ընթանում բուռն վեճերի ու հակառակությունների միջով՝ աշխարհաբարի կողմնակիցներին պարտադրում էր բարեկարգել նոր լեզուն, հիմնավորել աշխարհաբարի լեզվական սկզբունքները, ճշտել նրա քերականությունը: Արևմտաճայ դրական լեզվի հիմք դարձրեցի Պոլսի բարբառը, ութսունականները մեծազույն ջանքեր դործադրեցին մշակելու, հարստացնելու և ներբացնելու աշխարհաբարը: Ոմանք իրենց պարզ ու մաքուր լեզվով պրած գործերով հարստացրին նոր լեզուն, ոմանք նորակերթ բառերով ճոխացրին աշխարհաբարի բառապաշարը, իսկ մի քանիսն էլ ընկնելով ծայրահեղություն մեջ, անհիմն նորամուծություններ հնարեցին (Ս. Տեմիրճիպաշյան, Կ. Ութունճյան) ու դժվարացրին նոր լեզվի ըմբռնումը: Լրագրերը, ամսագրերը ինքնուրույն և թարգմանական գրականությունը, թատերական ներկայացումները, ժողովրդական երգերը՝ ութսունականների համատեղ ջանքերով, մեծապես նպաստեցին աշխարհաբար լեզվի զարգացմանը: Նրանց միջոցով էր, որ աշխարհաբարը ձեռք բերեց տեսականորեն ձևարանական միօրինակություն, ճոխացավ ու հարստացավ և բարձրանալով զարգացման մի նոր աստիճանի, ամփոփեց հայոց լեզվի բովանդակ խորությունը:

Արևմտաճայ իրականություն մեջ աշխարհաբարի տեսական ամրապնդման համար մղվող պայքարում իր գործոն մասնակցությունն է բերել նաև Հ. Ասատուրը: Իզուր չէ, որ նրա մասին Ձոհրապը գրել է. «Գրականության մեջ Հրանտը, ինչպես կանխանենք գիտե՞ք, մեր աշխարհաբարին դայեակը ու ստնտուն է... Աչալուրջ պահապանն է ան որ երեխային ձեռքը կամ ոտքը ծուռ չի ձգելու երկյուղով կը փաթթե դայե քերականության մը կապերուն մեջ...»¹:

80-90-ական թվականներին Հ. Ասատուրը հանդես է գալիս բազմաթիվ տեսական հոդվածներով ու քերականական

ձեռնարկներով, որոնցում նա անպայմանորեն աշխարհաբար լեզվի յուրացման խնդիրն էր առաջ քաշում: Այս հարցում նրա համար կարևոր նշանակություն էր ձեռք բերում նոր լեզվի մշակման ու զարգացման խնդիրը: Նա գտնում էր, որ պարզ ու դյուրհասկանալի աշխարհաբար ունենալու համար պետք է հրաժարվել դրաբարի քերականությունից և ընդունել աշխարհաբարի քերականությունը: 1892 թ. «Մասիս» էջերում Ասատուրը մեծ հոգածություն էր ցուցաբերում հոգելու և բարեհնչուն զարմնելու աշխարհաբար լեզուն. ջնջում էր դրաբարյան խորթ մնացորդները, սրբազրում լեզվական աղճատումները՝ բյուրեղացնելու համար արևմտաճայ աշխարհաբարը:

Այս նպատակով էլ նա, 1898 թ., «Արևելքում» հրատարակում է «Լեզվական խնդիրներ» խորագերը կրող հոդվածաշարը, որտեղ քննում է նոր լեզվի զարգացման մի շարք խնդիրներ: «Մեր արդի աշխարհաբարը հետզհետե կը զարդանա, կը ճշտվի, և որոշ օրենքներու ընդհանրացմամբ կը կազմակերպվի, շնորհիվ լեզվական խնդիրներու վրա կատարված ուսումնասիրությունից, որոնք կերևան պարբերականներու մեջ,— դրում է նա: — Եթե այդ ուսումնասիրությունները կը հանդիսանան արամաբանական եզրակացությունից, անօրուտ չեն մնար երբեք և հաճախ, լուսաբանելով մասից մնացած կընճիռներ, պրոզներուն ցույց կուտան ուղիղ ճամբան»¹: Այս տեսակետից, Ասատուրը կարևոր և լուրջ դիտական աշխատություն է համարում Ա. Այսնյանի 1866 թ. հրատարակած «Բընական քերականություն աշխարհաբար կամ արդի հայերեն լեզվի» ուսումնասիրությունը: Սա ոչ միայն աշխարհաբար հայերենի քերականության կանոններ էր շարադրում, այլև լուրջ լեզվաբանական աշխատություն էր, որտեղ հեղինակը, աշխարհաբարի ծագման ու զարգացման պատմության հետ դուզվեցի, ներկայացնում էր նաև լեզվի մասին ունեցած իր գրություններն ու համոզումները: Այսնյանի լեզվական սկզբունքները իրենց տեսական համոզականությամբ, ոչ միայն գիտական նշանակություն ունեին, այլև կոնկրետ գործ-

1 «Մասիս», 1901, № 6:

1 «Արևելք», 1898, № 3845:

նական նպատակ: Հմուտ հայագետի արժեքավոր ուսումնասիրութեան այս կողմը հենց նկատի ունենալով, երբ արևմտահայ մտավորականութիւնից պահանջուած էր յայտարարել աշխատութեան առաջադրած սկզբունքներն ու կանոնները՝ աշխարհաբար լեզվի վերաբերյալ: Ասատուրի համար Այտնյան-լեզվաբանի հիմնական գրույթները տեսականորեն և գիտականորեն ավարտուն, ճշմարտացի հիմունքներ էին, որոնց և հանդուած էին նրա լեզվական համոզումներն ու պահանջները: «Սակայն, դժբախտաբար, — գրում էր Ասատուրը, — մեր գրադեաններն ուսանող հրապարակ նետված են երբեմն, առանց աշխարհաբարի այդ գանձարանը ուսումնասիրելու և ստեղծած են նոր ձևեր, որոնք լեզվին մեջ մուտ գտած են և ազդեցութեամբ Այտնյանի ճշդած տրամաբանական օրենքները»¹:

Ընդունելով լեզվի հասարակական բնույթը, Ասատուրը նկատում էր, որ լեզուն ունի զարգացման ընդհանուր օրինաչափութիւններ: Իսկ այս օրինաչափութիւնների հայտնագործումը շատ լուրջ և խոր գիտական աշխատանք է և ոչ թե շուտափույթ կատարված եզրահանգում կամ ինքնաստեղծ լեզվական օրենքների հաստատում: «Տակալին մեր գրողները չհամոզվեցան, — դառնացած նկատում է նա, — թե կարելի չէ լեզվի մը մեջ ընդունել տալ նոր ձևեր, երբ այդ ձևերը բոլորովին կը հակառակին ընդհանուր գործածութեան»²:

Թուսինյանը, որի «Ուղղախոսութիւն արդի հայ լեզվին» աշխատութիւնը (1853) Պոլսում հրատարակված առաջին աշխարհաբար քերականութիւնն էր, սահմանում էր այնպիսի նոր կանոններ, չհիմնավորված օրենքներ, որոնք չէին օրինականացնում ժողովրդի կողմից օգտագործվող լեզուն: Առավել նորաձև եղաւ Մ. Չերաղի «ընտրողական հայերենը». որի սկզբունքների հետևութեամբ Ասատուրը գրեց «Պատանեկան ներշնչումները» (1879): Այդ օրենքները, որոնք հիմնված էին «անողոք» տրամաբանութեան վրա, շատ հետո

էին իրականում գործածական լինելուց և միայն բանավեճերի ու քննադատութիւնների տեղիք էին տալիս:

Ժամանակը ցույց տվեց, որ այն, ինչ չէր հաստատված զարգացման օրինաչափ տրամաբանութեամբ, դատադարձված էր անհետացման: Սրանով էլ բացատրվում էր Այտնյանի գործի «հաջիւնակը», որի «Քննական քերականութիւնը» Ասատուրի համոզմամբ, «պատրաստված է բանասիրական խոր հմտութեամբ և արդյունք է լեզվաբանական երկարամյա ուսումնասիրութեանց և մանրագնին դիտողութեանց»: Նա համոզված պնդում է, որ եթե Այտնյանի աշխատութիւնը գործնական նշանակութիւն ձեռք բերեց, ապա շնորհիվ այն բանի, որ նա նորութիւններ չփորձեց մտցնել արևմտահայ աշխարհաբարի մեջ և չհնարեց բնավ քմահաճ կանոններ: Հետևաբար, եզրակացնում է նա, «մեր արդի աշխարհաբարին միօրինակութեան տեսակետով բացարձակապէս վնասակար կը նկատենք անսովոր ձևեր ընդունել տալու փորձը, որ ուրիշ արդյունքի չէ կրնար հանգիլ, բայց եթե արդեւ զենլ արդի լեզվի կանոնափոխ մշակման զարգացման»³: Բայց Ա. Այտնյանի «Քննական քերականութիւն արդի աշխարհաբար լեզվի» գիրքը, որը հրատարակվել էր դեռևս 1866 թ., չլինելով ուսումնական դասագիրք, տարածում չգտավ հայ վարժարաններում:

Նշելով Այտնյանի գործի կարեւորութիւնը, Ասատուրը հետաքրքիր գիտումներ է կատարում աշխարհաբար լեզվի զարգացման ընթացքի վերաբերյալ: Նա նկատում է, որ 1840—60-ական թվականների դրագետ սերնդի (Ոսկան, Միսաքյան, Օտյան, Ութուճյան, Սվաճյան և ուրիշներ) օգտագործած լեզուն խիստ օրինակելի էր իր ժամանակի համար:

Ս. Ոսկանի «Արեւելք» և «Արեւուտք», Հ. Սվաճյանի «Մեղուն», ինչպէս և «Եվրոպան» ու «Բարձրագիւր» իրենց էջերում մշակում էին գրական նոր լեզվի սկզբունքները և ձևավորում մի լեզու, որը հետագայում հարստանալով պետք է դառնար արևմտահայ գրականութեան հիմքը: Իսկ թե ինչպէս զարակեցի աշխարհաբարը չհարատեւեց և «Պերպերյանի պէս

1 «Արեւելք», 1898, № 3845:

2 «Բյուզանդիոն», 1905, № 2810:

1 Նույն տեղում:

2 «Անահատ», 1931, № 5—6:

գրողներ դրաբար-աշխարհաբար hybride լեզու մը lancer բրին», — գրում է Ասատուրը Տ. Կամսարականին ուղղված նամակում, նա պատասխանում է, որ Գարազաշյանի օսկիզարյան հայերենի վերականգնման փորձերը նպատակ ունեն վերադարձնել հայոց լեզուն իր հին փառավոր անցյալին: Հ. Գուրզենի համապարժակցութեամբ հրատարակվող Գարազաշյանի «Ճաշակ սոսկեղեն դպրութեանը» առաջագրում էր լեզվական մի ուղղութեան, որը դեմքն ինքն էր գնում նոր ու կենսական աշխարհաբարի զարգացմանը: Գրաբարյան ձևերի վերականգնումն հավանորդների շարքերը հեղհետե ավելանում էին: Իսկ այս ամենը առաջին հերթին արտացոլվում էր արևմտահայ պարբերական մամուլում և դրական քարացած ոճերի ու քերականական խրթին հետևությունների տեղիք տալիս: Հակադեցուսթյունը, Ասատուրի համոզմամբ, երևան եկավ, կըր Օտյանի սրբազրած Հալիվիի «Արբա Քոնսթանթնի» թարգմանությունը, որը «հին աշխարհաբարի գլխավոր տարրերը կը նվերագործեր, իբր նախատիպ ծառայից նորերուն, որոնցմե շատեր կանդիտանային 1840-են 1860-ի առհասարակ գրված, դրական աշխարհաբարը»¹:

Գրաբարի քարոզով հանգես եկող կղերամիտ մտայնությունը, որը ի վերջո կապվում էր հասարակական հոսանքների լեզվական քաղաքականության հետ և խիստ կերպով առնչվում էր դրական ուղղությունների պայքարին, դեռևս բժշկանքի չէր Ասատուրի համար: Կլասիցիստական ուղղությունը, որը 1858 թ. ստեղծում էր այնպիսի դուրս-գործոց, ինչպիսին Ա. Բագրատունու «Հայկ Դյուցազն» էր, իրականություն նոր պահանջների տեսակետից, թեև ցուցադրում էր արդեն իր դրական սահմանափակությունը, բայց և այնպես պահպանում էր դեռևս իր գաղափարական և գեղարվեստական դիրքերը: Այստեղից էլ բնական պետք է գիտել դասական լեզվի պահպանման վերջին ճիգերը, որին հարվածելու էր գալիս գեղարվեստական ուսմանտիկական մտածողությունը և ապա, վերջնականապես, սեպտիստական դպրոցը:

«Ինչո՞ւ այդ առաջին գրողները (նկատի ունի 50—60—

ականների սերունդը) չկրցան տիրապետել և մեր շարժումը արժատ բունեց»՝ Կամսարականին ուղղված երկրորդ հարցումին Ասատուրն իրավացիորեն պատասխանում է, որ այդ շարժումը «հասարակաց էր», այսինքն ընդհանուր: Բայց լեզվական նոր մտածողություն համար մղվող համընդհանուր պայքարը, որն արդեն տարածվում էր սեպտիցի դրական մեթոդի պահանջներից ելնելով, այստեղ անստեղծ էր և վերագրվում 80-ականների «գրական տաղանդին», որը «պակաս էր 1840-են—60-ի գրողներին ամենամեծ մասին»: Սա, անշուշտ, սուրյեկտիվ կարծիք է: Ասատուրը նկատում է, որ աշխարհաբարի վերջնական հաղթանակի համար տարվող ութսունականների համառ ջանքերը իսկապես մեծ ուժեր դործադրեցին «ճկուն, գեղեցիկ ու ճոխ» գրական լեզու ստեղծելու համար՝ «կարող բացատրելու ամենեն դրական գաղափարները և ամենեն բնազանցական վերացումները...»¹:

Գրական նոր լեզվի հիմնավորման և զարգացման նպատակներով, Ասատուրը, 90-ական թվականներին, Միսիլի հետ միասին, ձեռնամուխ է լինում աշխարհաբարի քերականական օրենքների մշակմանը: Հ. Ասատուրի և Միսիլի հեղինակությունները ստեղծված «Գործնական քերականություն արդի աշխարհաբարի» ձեռնարկը վավերացվում է ուսումնական խորհրդի կողմից և հանձնարարվում բարձր դասարանի աշակերտներին: Ա, Բ, Գ գրքերից բաղկացած այս դասագիրքը ունեցել է վեց հրատարակություն և երկար տասնամյակներ եղել արևմտահայ աշակերտության՝ հայոց լեզվի քերականության դասագիրքը: «Ոչ ոք պիտի կրնա ուրանալ, — գրում է Հ. Գալանճյանը այդ գրքի մասին դրած իր գրախոսականում, — այն նշանակելի առավելությունն ու հառաջադիմությունը որը կը ներկայացնե իր նախորդներուն վրա. և այս պարտադան արդեն պիտի արժանիք մը չէ իրեն համար:

Վերջապես այս քերականության մեջ ծայրեծայր ջանք

¹ Նույն տեղում:

1 «Անահիտ», 1931, № 5—6:

իննայլած չէ հասնելին ու օգտակարը միացնելու համար դյու-
րուսույց մեթոդի մը հետ»¹ :

Հ. Ասատուրը «Իրմաստիւներուս» հանգամանորեն
պատմում է ձեռնարկի կողմնան աշխատանքների մասին :
Չանալով ճշտել Պոլսի աշխարհաբարի «նվիրագործական»
կանոնները, զրքի հեղինակները ուսումնասիրել և քննել են
աշխարհաբար «Աստվածաշնչի», սպա «Բագմավեպի», «Նվիրու-
պայի», «Հալաստանի», «Քանասերի», «Մասիսի», «Մասյաց
աղափնիի», «Մեղուի» և «Արեմուտքի» մեջ օգտագործված
լեզուն : Ուսումնասիրվել էր նաև 1850—1890 թթ. լեզվի կրած
քերականական փոփոխությունները՝ Գարաղալյանի, Պեր-
պերյանի, Գուրգենի «չափազանց դրաբարամուլ նորութուն-
ներն մինչև Ութուճյանի, Մամուրյանի, Պարոնյանի, Տե-
միրճիպալյանի ընդունած ձևերը»² :

«Գործնական քերականութան» մեջ սահմանվում են
աշխարհաբար լեզվի գործուն օրենքները (ուղղագրութուն,
կետադրութուն, ածանցներ, հոլովական և խոնարհման վեր-
ջավորութուններ և այլն) : Հետևելով լեզվական օրենքների
ուսուցման Ֆրանսիական սխոտմին, զրքի մեջ քերականական
օրենքներին զուգահեռ հանձնարարվում էր տեսական այդ
կանոնները հաստատող դրականութուն, հրահանգներ ու ա-
ռաջադրանքներ :

Մինչև «Գործնական քերականութունը», 1880-ական
թվականներին, արևմտահայ իրականութան մեջ հրատա-
րակվել էին լեզվի վերաբերյալ մի շարք դասագրքեր : Դրան-
ցից էին Գարաղալյանի, Թերզյանի, Աճեմյանի, Դավթյանի,
Պողաճյանի, Պետիկյանի գործերը : Հիմք ընդունելով Պոլսի
բարբառը և հանգամանորեն քննելով վերևում հիշատակված
ձեռնարկները, Ասատուրը և Միպիլը նախընտրում են առավել
ընդունված քերականական ձևերը : «Մեր դերը եղած է, — նշում
են նրանք, — ամփոփել, օրենքի տակ առնել ինչ որ կա լեզվի
մեջ. մենք մեզի իրավունք չենք ճանչնար ընդունված ձևերը
ջնջել, նոր ձևեր ստեղծել : Քերականութունները չեն որ կը

կողմեն լեզուները, այլ լեզուներն են, որ քերականութանց
ծնունդ կուտան»³ : Պարզելով անհատի դերը լեզվաշինարա-
բութան դործում, զրքում դյուրմբունելի կերպով ներկա-
յացվում են աշխարհաբարի այն օրենքները, որոնք առավել
ընդունելի ու ճանաչված էին օրվա առաջադեմ գրողների
կողմից : Այնուհետև աշխարհաբարի համար մղված պայքա-
րում առաջնություն էր տրվում ժողովրդի կողմից ամենա-
գործնական քերականական ձևերին, հարուստ ու կենսունակ
ժողովրդական բարբառին : «Այս «Քերականութան» կանոն-
ներն են, — նկատում է Ասատուրը, — որ գործադրվեցան
խղճամիտ կերպով 1898-ի «Մասիսին» մեջ : Զոհրայ համա-
կարծիք էր, և այդ մասին բացարձակապես աղա առ անկալ-
կանդ թողած էր զիս»⁴ :

Ասատուրը ոչ միայն փորձում է գիտականորեն հիմնա-
վորել գրական նոր լեզվի սկզբունքները, այլև շարադրում է
աշխարհաբարի դարդացման պատմությունը : Այս մասին նա
գրել է «Աշխարհաբար մատենագրութան պատմություն» ձե-
ռագիր ընդարձակ աշխատությունը և Թեոդիկի տարեցուր-
ցում հրատարակված «Աշխարհաբարը ԺԹ դարեն առաջ»
ուսումնասիրությունը :

Աշխարհաբարի սկզբնավորման ուսումնասիրությունը
սկսելով ոսկեդարյան մատենագրութան առաջին օրերից,
Ասատուրը փաստացի ավյալներով ապացուցում է, որ դեռևս
V դարում, երբ «աշխարհաբարի նվիրագործված սկզբունքները
սազմնային վիճակով կը տեսնենք տեղ-տեղ Ե դարու հեղի-
նակներու գործերուն մեջ», դասական լեզվի կողքին գոյու-
թյուն ունենին նաև մի շարք բառեր, որոնք աշխարհաբար էին,
այսինքն կրում էին ժողովրդական հայերենի որոշ տարրեր :
Նա նշում է քերականական այն առանձնահատկությունները,
որ ձեռք էր բերել V դարի աշխարհաբարը. «... հոլովմանց,
խնդրառութան, նախդիրներու ջնջման, հոդի գործածութանց,
խոնարհմանց և համաձայնական շարքի տեսակետով»⁵ :

1 «Մանդուկեի էֆեբար», 1902, № 396 :

2 Հ. Ասատուր, Դիմաստվերներ, Կ. Պոլս, 1921, էջ 239 :

1 «Սուրհանդակ», 1902, № 1045 :

2 Հ. Ասատուր, Դիմաստվերներ, Կ. Պոլս, 1921, էջ 239 :

3 ԳԱԹ, Թ. Աղապյանի Փոնդ, բաժին 1, գրք 17, էջ 5 :

Այս գործում Ասատուրը հատկապես կարևոր է համարում XIX դարից առաջ դոյութուն ունեցող պալատարարապետների ուսումնասիրության խնդիրը, պարզելու համար, թե ո՞ր դավառաբարբառն է ժամանակակից աշխարհաբարբի հիմք հանդիսացել: V դարի աշխարհաբարբի վերաբերյալ մի ընդհանուր ջննութիւններից հետո, Ասատուրը անցնում է հաջորդ դարերին և քայլ առ քայլ հետևում ժողովրդական լեզվի զարգացման ընթացքին ու գտած կիրառութիւնը՝ հայ գրականութիւն մեջ: Ասատուրը հանդում է այն եղբակացութիւն, որ «նախնեաց սամկորենի» բառագիրտութիւն և համաձայնութիւն «էական տարրերը» բացահայտ գրեւորվում են առաջին անգամ միայն VII դարում գրված գրաբար գործերում, որոնցից նա նշում է Հովհաննէս եպիսկոպոս Մամիկոնյանի «Տարոնո պատմութիւնը»: Նա նկատում է, որ միայն այս շրջանում է, որ «աշխարհաբարբ հատուկ շարադասութիւն մը գործածութիւնը ավելի հաճախ և ավելի որոշ կեպով երևան կուզա»¹:

Ասատուրը այնուհետև նշում է որ մինչև XII դարը «մեր մատենագրութիւն մեջ քչերը Հովհաննէս եպիսկոպոսի ոճ գործածած են»: XII դարում նա նշում է Մատթեոս Ռուհայեցուն, Գրիգոր Նարեկացուն, վիմաքանդակ դրաբարբառն արձանագրութիւնները, Մխիթար Հերացու «Ձերմանց մխիթարութիւնը» գործը և Ներսէս Շնորհալու հանելուկները:

«Թե ինչո՞ւ հեղինակները սկսան ուսմկորենով գրել, դուրավ կըմբռնվի, — գրում է հեղինակը, — Մխիթար Հերացիին արձակը ավելի ժողովրդական գրոշմ մը կը կրէ: Նրա արտահայտիչ ու պարզ ոճը աներկրայ շուտ դնահատվեցավ ընթերցողներին, որոնք համար գրաբարը անշուշտ դժվարիմաց էր և ժի դարեն սկսել ուսմկորենը հետզհետե ծաղկեցավ ծավալվեցավ գրականութիւն մեջ»²: Ասատուրը նկատում է, որ աշխարհաբարբ դրող հեղինակների մեծ մասը աշխարհականներ են, մինչդեռ, մինչև XII դարը գրաբար գրող գրեթե բոլոր հեղինակները եկեղեցականներ էին: Բացի այդ «ուսմկորեն» մատենագրութիւն նյութերը բազմազան են և հետա-

քրքրական, մինչդեռ գրաբար հին մատենագրութիւնը իր բովանդակութեամբ գրեթե ամբողջութեամբ կրօնական է կամ պատմական: «Այն հեղինակները կամ թարգմանիչները, որոնք երկրագործութիւն, բժշկութիւն, օրենսդատութիւն և ընդհանրապես դիտական ու դործնական խնդիրներու վրա կուղեն խոսիլ և ժողովուրդին մեջ օգտակար ծանոթութիւններ տարածել, ուսմկորեն կը գրեն: Նույնպես այդ բարբառին կը դիմեն մեր բանաստեղծները»³:

Հաջորդ դարերի ջննութիւն ժամանակ, Ասատուրը հանդանորեն ցույց է տալիս, թե ինչպես առաիճանաբար լեզուն տեղի էր տալիս զարգացող ու հետզհետե հարստացող ուսմկորենին: Աշխարհաբարբի պատմութիւնը նա հասցնում է մինչև XV—XVIII դարերը, երբ աշխարհաբարբն արդեն դառնում է տիրապետող լեզու: Այստեղ նա հետևելով Այտնյանին, «նոր լեզվի բազմաթիվ ճյուղերը» ամփոփում է չորս գլխավոր պալատարարապետների մեջ: Միջին (Վան, Մուշ), արևելյան (Ռուսաստան—Հնդկաստան), Լեհահայոց (Լեհաստան) և արևմտյան (Կ. Պոլիս, Փոքր Ասիա): Համառոտակի ներկայացնելով առաջին երեք բարբառները, Ասատուրը կանգ է առնում «Արևմտյան հայոց» աշխարհիկ գրականութիւն վրա: Այս հատվածը առավել շահեկան է XVIII—XIX դարերի արևմտահայ գրականութիւն ուսումնասիրման համար:

* * *

Իր գրական-հասարակական կյանքի առաջին օրերից թատրոնին և դրամատուրգիային վերաբերող հարցերը գրվում են Ասատուրի միտքը. նա գրում է բազմաթիվ հոգվածներ և թատերական գրախոսականներ՝ էլնելով ազգային թատրոնի ամրապնդման և զարգացման շահերից:

Դեռևս այն ժամանակ (1880—ական թթ.), երբ համիդյան ազգային դաժան քաղաքականութիւն հետևանքով դադարեցին գոյութիւն ունենալուց արևմտահայ իրականութիւն մեջ գործող մի շարք թատերախմբեր (Փասուլյաճյան, Մնակյան, Մաղաքյան, Պենկյան) և հարցականի տակ դրվեց հայ մտքի

1 ԳԱԹ, Թ. Աղաաթանի Փոնդ, բաժին 1, գործ 17, էջ 8:

2 Թեոդիկ, Ամենակ տարեցույցը, 1908, էջ 55:

1 Նույն անգում:

ու արվեստի զարգացման հեռանկարը, Ասատուրը, հանդես գալով «Մասիսի» էջերում, արևմտահայ թատրոնի պատմության հանրագումարն էր ներկայացնում՝ նշելով թատրոնի ունեցած հասարակական մեծ դերն ու բարոյական ազդեցությունը, սրն ընդունակ էր «թատերաբեմին վրայն մեր սրտին մեջ հուզել զզացմանց մրրիկն, մերթ ի ծիծաղ, մերթ արտոսր, մերթ գայրույթ շարժել ժողովուրդն. փափկացնել նորա ճաշակըն, ազնվացնել նորա զգացումներն, սուաքինացնել զայն և վսեմացնել նորա սպին»¹։ Քննելով պատմության գասերը, Ասատուրը նկատում է, որ «թատրը» մեծ դեր է խաղացել «լուսավորյալ ժողովրդոց» ճակատագրում, դառնալով սղղային առաջադիմության և քաղաքակրթության կարևոր ազդակներից մեկը։ «Ամենուրեք, — դրում է հեղինակը, — ուր թատրը բարոյականի շրջանակին մեջ մնաց, մի բաղձալարյան զպրոց եղավ ժողովրդյան համար»²։ Այս տեսակետից հայ թատերգության զարգացման գործում մեծ դեր կատարեցին սղղային ողբերգությունները, որոնց մեջ ցոլանում էր ազդի անցյալը, տեսանելի դառնում անցած փառքը, պատմության հերոսական դրվագներն ու նշանավոր անհատները։ Թատերական խաղացանկի մասին խոսելիս Ասատուրը, վերլուծելով արևմտահայ կյանքում աղղային ողբերգությունների դերն ու նշանակությունը, ընդգծում է, որ այնպիսի պայմաններում, ուր գտնվում էր արևմտահայությունը, աղղային ողբերգերը մեծ գործ կատարեցին աղղության համար, իսկ աղղությունը՝ «բաղդատելով փառքի և մեծության էջերը մեր արդի թշվառության հետ, հուզվեցավ, վրդովեցավ, զայրացավ և հայրենասեր դարձավ»³։

Իր «Իրվազներ և հուշեր» ձեռագիր աշխատության մեջ, սակայն, հանրագումարի բերելով Արևելյան թատրոնի գործունեությունը, Ասատուրը նկատում է, որ թատրոնի խաղացանկում տասնյակների հասնող պատմական ողբերգություններից շատերը զուրկ էին ընդհանրապես գրական շահեկա-

նությունից, պատմական ճշտությունից, «հին բարքերու արժեքի, ուսումնասիրութենե և նույնիսկ տարրական հոգեբանութենե»⁴։

Այս առումով նա ավելի դիպուկ է համարում աղղային ողբերգություններին աված Լեոյի բնարդումը, սրպես «մի ընդհանուր մե ու կապալար» և «մի բերանի մեջ ծամած ու համեմած» գործերի։

Արևմտահայ թատրոնի և թատերադրության զարգացման գործում պակաս դեր չկատարեցին նաև թարգմանական պիեսները, որոնք ծանոթացրին հային համաշխարհային նշանավոր թատերադիրների գործերին. «Վեհոգի էակաց և մեծ գործերի հանգիսացումն, կրից մարմնավորումն, արգարության պակասումն ու շարության պատժումն թատերաբեմին վրա», մատուցեցին եվրոպական թատերական արվեստի հրաշալիքները՝ մշակելով կիրթ ճաշակ և մարդկային հուզու և մտքի խորքը թափանցելու ունակություն։ Այս ամենն, անշուշտ, հաստատում է Հրանտը, «անօգուտ չեղան մեզ և մենք իրական բարիքներ քաղեցինք «այդ լուսաստիյուս կեդրոնեն»⁵։

Ասատուրը քննում էր նաև եվրոպական հեղինակներից թարգմանված գործերը՝ Վոլտերի դասական պիեսներից սկսած մինչև Հյուգոյի և Դյումայի ոտմանտիկ դրամաները։ Սրանցում չեն պակասում «ազնվություն, մեծություն, ուժ, վսեմ մտածումներ», բայց, ամենակարևորը, ինչպես նկատում է Ասատուրը, այդ գործերում «իրական կյանք չկար, երևակայությունն էր հոն տիրապետող տարրը»⁶։ Հեղինակն այստեղ, ընդլայնելով թատերական հարցադրումների շրջանակը, հանդես էր գալիս կլասիցիստական և սոմանտիկական դրամատուրգիայի քննադատությամբ։ Պետք էր հաղթահարել ոտմանտիկական թատերադրության թեմատիկայի սահմանները, հրաժարվել չարի և բարու բարոյախոսական քարոզներից և զեղարվեստական պատկերների ծայրահեղ բե-

1 «Մասիս», 1880, № 2762։

2 Նույն տեղում։

3 Նույն տեղում։

1 ԳԱԹ, Թ. Ազատյանի ֆոնդ, № 139, 2. Ասատուր, Իրվազներ և հուշեր, էջ 52։

2 Նույն տեղում։

3 Նույն տեղում, էջ 53։

վեռացումից. «Դառույն, թույն, մեքենայություններ, — գրում է Ասատուրը: — Հերոսական տիպարներ, սոսկում, առաքինութեան պսակում, վերջապես բոլոր հինգամ մեղեդիներու երաժշտություն, որոնք կազդեն մարդոց, տղաներու և հասնախ դժգոհ կը ձգեն մասձող միտքերը, արվեստագետները, իրական և ճշմարիտ սիրողները»¹:

Որքան էլ ուսմանտիրիչը բավականութիւն էր տալիս ժամանակաշրջանի ազգային-հայրենասիրական ձգտումներին ու տրամադրութիւններին, այսուհանդերձ փոխվել էին կյանքի դեղարվեստական արտացոլման պահանջներն ու խնդիրները: Նոր թատրոնն ու թատերգութիւնը պահանջում էին սեռալիստորեն պատկերել կյանքը, այնպես ինչպես այն կա՝ իր հասարակական կողմերով ու երևույթներով, ըստ ամենայնի յուրացնելով ժամանակակից թեմատիկան: Ինչպես Ջոհնայն էր գրում «Մասիսում», ժամանակակից թատրոնը պետք է արտացոլէր «բուն իսկ կյանքն...», ազդովածը, իրականը և ոչ թե գրված, երգված կամ նկարված կյանքը»²: Գրախոսականներից մեկում, վերլուծելով Փրանսիացի դրամատուրգ Բ. Ռիշէի «Սիրող կինը» դրաման, Ասատուրը գոհունակութեամբ նշում է, որ թատերախողի դրամա ջերմ ընդունելութիւնը պետք է բացատրել միմիայն իրական, կենդանի կյանքի արտացոլման հանգամանքով, որն ինքնին ենթադրում էր թատերգութեան հասարակական դերի ու գաղափարական բովանդակութեան նոր ուղղվածութիւն: Կարեւորը սեռալիստական թատերադրութեան ստեղծման գործում՝ Ասատուրը համարում էր դրամատիկական արվեստի արտահայտչական միջոցների և պատկերների բնականութիւնը, իրականութեանը ավելի մոտ և հարողատ լինելը: Այս տեսակետից էլ նա արժեքաւորում էր Գ. Սունդուկյանի պիեսները: «Սունդուկյանց մեր թատերագիրներուն մեջ, — գրում է նա, — կրնա առաջինը նկատվել իբր ուսումնասիրող ժողովրդական կյանքին, բարձր իմաստներ, ճոխ բարբառ է՛ որ կը գնն իր հերոսներուն բերնին մեջ, այլ թիֆլիսի ժողովուրդին խոսած ուսմիկ լեզուն սակայն իր

խաղերուն մեջ կը տեսնենք իրական դեմքեր, միս ու ջիւղ ունեցող մարդիկ, որոնք իրենց ամեն օրվա կյանքը կապրին: «Սաթարալան», «Էլի մեկ դոհ», «Պեպոն» և «Քանդած օջախը» կը ներկայացնեն մեզ թիֆլիզցի հայոց գանազան տիպերը, վաճառական, արհեստավոր, կինտո, ամենեկն մուխ խավերը ժողովրդին, ուր կը մտնէ Սունդուկյանց ի վեր հանելով անոնց անձնվեր ինքնուրույն նկարագիրը»³:

Առաջադրելով սեռալիստական դրամատուրգի ստեղծելու խնդիրը, Ասատուրը, միաժամանակ, ցավով է նկատում դարավերջին՝ թատրոնի ու թատերգութեան նկատմամբ տիրապետող անտարբերութիւնը: «Այա՛ղ, հայ գերասաններն չընթացան կամ չկրցան ընթանալ այն շավղեն, ուստի սկսած էին և այսօր հայ գերասանաց խումբն, որ հայ ներկայացումներն գրեթէ բոլորովին լքած, թրքական թատերգներ միայն ի հանդես կածն և չունի այլևս յուր առաջին հրապույցն հայ ժողովրդյան համար»⁴:

Հանդես գալով մամուլի էջերում, Ասատուրը հաճախ ընդհանուր և ամենօրյա քաղաքային նորույթների շարքում կանց էր անում գրական-թատերական անցյալի կամ ներկայի նկատումների, վերհուշերի վրա, որոնք և արժեքաւորում էին այդ թիցթակցութիւնները: Պոսելով թատերական անցած դեպքերի մասին, Ասատուրը հուզմունքով է հիշում անցյալի թատերական իրադարձերը և ցավով նկատում Արուսյակի մահը, Հրաչյայի և Երանուհի Գարագաշյանի հեռացումը բեմից: «Իայց անոնց, — գրում է նա, — որ չեն տեսած մեր թատրոնի հին փառավոր օրերը, անշուշտ չեն կրնար բմբունել թե որչափ սրտի մորմուքով կը հիշվին հիմա խլեակներն այդ գեղեցիկ տաղանդներուն. նորերուն համար պարզապես անուններ են Արուսյակ, Հրաչյա, Երանուհի Գարագաշ, բայց այդ անունները ինչ հիշատակներ կարթնցնեն հիներու մտքին մեջ...»⁵ Ասատուրը նկատում է, որ թատրոնի նկատմամբ անտարբերութիւնը սկսվեց 80-ական թվա-

1 Նույն տեղում:

2 «Մասիս», 1892, № 3972:

1 «Մասիս», 1898, № 18:

2 «Մասիս», 1880, № 2762:

3 «Արեւելյան մամուլ», 1903, № 11:

կաններէից, հատկապէս 1883-ից: «Արուսյակ Պեղիբճյան «Մաղիկում» ի գուր հրավեր կը կարգար, — գրում է նա, — Ս. Հեքիմյանին և Թերզյանին, որ թատերգեր գրեն և Գարս- գաշին, Ֆելիքին և Զորայանին որ թատերգեր թարգմա- նեն...»¹:

80-ական թվականներին արևմտահայ իրականութեան մեջ մշակվեցին գրականութեան յուրացրած նոր բովանդակ- ության սկզբունքները, նոր լեզվի հարցերը, գրական բազմա- թիվ ժանրեր, բայց «թատերական սեռը», ինչպէս Ասատուրն է գրում, «լքվեցավ բոլորովին»: Դարագերջի և դարասկզբի արևմտահայ իրականութեան մեջ նա շնորհալի թատերագիր- ներ է համարում միայն Ս. Թվլյանին և է. Մտայանին, իսկ այս վերջինը, գրում է նա, ցավոք իր վերջին «Մեծամորի ներ- շնչումներն» հետո, կրիայի մը պէս գլուխը ներս քաշեց իր խեփորին տակ»:

Ասատուրին դառնացրել է նաև դերասանի ծանր ու ան- մխիթար վիճակը, երբ իր գործին նվիրված տաղանդավոր և ջերմեռանդ արվեստագետը չբնապատու իրականութեան մեջ հաճախ կորչում էր աղքատութեան ու անհարգութեան ճիրան- ներում՝ չգտնելով կյանքում բարոյական և սոցիալական և ոչ մի նեցուկ: Նա ցավով է վերհիշում նշանավոր կատա- կերգակ Դավիթ Թրչանցին, նրա անցկացրած ծանր ու թափա- ոսական օրերը թատերական ասպարեզում և կյանքում: 1860 թ. սկսած, դառնալով արևելյան թատրոնի շնորհալի դերասան- ներից մեկը՝ Թրչանցը, 1863-ին ներդրովում է Զմյուռնիայի Վասպուրական թատրոնում, իսկ ավելի ուշ, միանում Գա- սուլյաճյանի խմբին: Արվեստագետի ոչ կայուն և անապահով սոցիալական վիճակը զնալով ծանրանում է, երբ ցրվում է այս խումբը, և Թրչանցը մնում է անօգնական ու հետին աղքատութեան մեջ: Սվ այստեղ նրան օգնութեան է գալիս վրձինը, քանզի դերասան Թրչանցը նաև նկարիչ էր: Կյանքի ծանր ու հեղհեղուկ տարուբերումները նրան ավից ավ ևն նե- տում, երկրից՝ երկիր, և նա հաճախ է թողնում բեմահար- թակն ու գրադվում ամենատարբեր գործերով: Ասատուրը

վշտացած հիշում է, որ նա դառնում է նույնիսկ դերձակի սպասավոր: Հայոց առաջին կատակերգակը, Իզմիրում մի դերձակի սենյակում, գրում էր նա, օգնում էր հաճախորդ- ներին հպնելու իրենց վերնահագուստը:

Հ. Ասատուրը գրադվել է նաև արևմտահայ թատրոնի պատմութեան հարցերով և իր արժանի տեղը գրավել թատ- ռոնի պատմարաններ՝ Շարասանի, Ս. Դավթյանի և Ս. Զո- պանյանի կողքին: Հ. Ասատուրը արևմտահայ թատրոնի պատմութեան անդրադարձել է ոչ միայն առանձին աշխատու- թյամբ, այլև այդ հարցերի վերաբերյալ գրել է «Պոլսի հայերը և պատրիարքները» պատմական ուսումնասիրութեան կէքրում և «Ուսանողի հուշերն» ձեռագիր աշխատութեան մեջ:

Հ. Ասատուրը Արևելյան թատրոնի մասին հրատարակել է երեք ընդարձակ հոդված, որոնք ամփոփում են արևմտյան իրականութեան մեջ այնքան նշանավոր այս թատրոնի դոր- ծունեութունը (1861—1874) և ներկայացնում առանձին թա- տերաչըջանների հանգամանալից պատմութունը՝ «Այս տասներեք տարվան պատմութունը, — գրում է նա, — իր հե- տաքրքրական գրվածքները ունի և կտրժե մենագրութեամբ մը պատկերացնել այդ տեսններու թարգմանած և ինքնադիր թատերախաղերը (ոգեբարդութուն, մելոդրամա, գրամա, կա- տակերգութուն, զալեչա, վոդեիլ և այլն), ճանչցնել մեր թատերադիր հեղինակները և մեր նշանավոր դերասաններն ու դերասանուհիները, որոնք ստեղծեցին, կողմակերպեցին, դարպացուցին թատերական գործը մեր մեջ: Այս գործիչներն ումանք ժժ՝ դարու վերջին քառորդին մեջ սյունները եղան թրք- քահայ թատրոնին և հիշատակելի դեր մը ունեցան թատերա-

1 «Ազդ. հիվ. ընդարձակ օրացույց», Կ. Պոլս, 1901, և ԳԱԹ, Թ. Աղատյանի Փոնդ, № 139:

2 «Բերայի Արևելյան թատրոնի առաջին ներկայացումը» (Ըն- դարձակ տարեցույց Ս. Փրկչի Ազդ. հիվանդանոցի», 1925), երկրոր- դը՝ «Բերայի Արևելյան թատրոնի առաջին երկու տարեչըջանները» (Ըն- դարձակ տարեցույց Ս. Փրկչի Ազդ. հիվանդանոցի», 1926), երրորդը՝ «Բերայի Արևելյան թատրոնը 1863-են 1874» (Ընդարձակ տարեցույց Ս. Փրկչի Ազդ. հիվանդանոցի», 1927):

1 Նույն տեղում:

կան տեսակետով Կ. Պոլսո Հայոց ի հայտ բերած արվեստագիտական ջանքերուն մեջ¹ :

Հ. Ասատուրը, նախքան առաջին պրոֆեսիոնալ թատրոնի կազմակերպման և Հիմնադրման հարցերին անցնելը, համառոտակի ներկայացնում է դարակեսի թատերական տեղաշարժերը պոլսահայ իրականության մեջ: Այստեղ թատրոնի պատմաբանը գնահատելի և արժեքավոր տեղեկություններ է հաղորդում Կ. Պոլսում, 1856 թվականից գործող թաղային թատրոնների գործունեության վերաբերյալ՝ խոսելով Օրթա-դյուզում գործող Պեշիկթաշյանի ղեկավարած թատերախմբի, ինչպես և Ա. Հայկունու թատերական գործունեության մասին: Ասատուրը կանգ է առնում Ս. Հեքիմյանի խմբի, Բերայի և Հասդյուզի թաղային թատրոնների համառոտ գործունեության վրա, և ամենակարևորը ներկայացնում այդ թատերախմբերի մասնակից անդամներին: Սրանք էլ հենց Հիմնականում կազմեցին Արևելյան թատրոնի ստեղծագործական կորիզը, որը մի քանի տարի անց, 1861 թ., ներկայացումներ պետք է տար Արևելյան թատրոնի բեմահարթակում: Այս առթիվ ուշագրավ էին Ասատուրի հաղորդած ամսալսները ազգային առաջին թատրոնի կազմակերպման հանգամանքների մասին, Ալթունայուրի եղբայրների մասին, որոնք ջանքեր չխնայեցին զլուխ բերելու այս գծվարին գործը՝ պաշտոնական արտոնագրով Բերայի Հայոց եկեղեցուն պատկանող «Քաֆե Օրեան-թալը» վերակոչելով Արևելյան թատրոն:

Արևմտահայ կյանքում իսկապես մեծ իրազարձություն է եղել նոր թատրոնի անդրանիկ ներկայացումը՝ Փրանսիացի դրամատուրգ Ռոթայի «Երկու հիսնապետներ» պիեսը, որը թարգմանել էր Թերզյանը: Երեկոյին մասնակցել են ամբիշ քան հինգհարյուր հանդիսականներ, պոլսահայ հասարակական նշանավոր դեմքեր, օտարերկրացիներ և բարձրաստիճան անձինք: Դերասանական այս խմբում էին Պետրոս Մաղաքյանը, Սերովբե Պենիկյանը, Հովհաննես Աճեմյանը, Մարտիրոս Մնակյանը, Դավիթ Թրջանյը, Մտեփան Էջլյանը, Մկրտիչ Այսոյանը, Հովհաննես Չերաչեն, Ռոմանոս Սետեֆճ-

յանը, Գալուստ Լջեցին, Աղամի ու Արուսյակ Փափաղյանները: Հանդիսավոր իրադրություն մեջ սկսվող ներկայացումը ավարտվում է տոնական տրամադրությամբ: Ողբունջ ճառով հանդես է դալիս հնդկաստանյան ուղեորության ստիժով Պոլսում գտնվող Մ. Նալբանդյանը, որի խոսքը, սրպես մի բազմախորհուրդ թատերախոսական, սրոչ լրացումներով ու խրամախորհուրդ թատերախոսական է «Մեղվում»՝ Սվաճյանի կողմից: Սա ազգային թատրոնի զարգացման մի ուրույն ծրագիր էր առաջադրում, անդրադառնալով դերասանական խաղի, կատարողական հարցերի, խաղացանկի, թատրոնի դերի ու բեմական արվեստի վերաբերյալ բազմաթիվ կարևոր ինդիքներ: Իզուր չէ, որ Ասատուրը վերլուծելով այդ հոգվածը, գրում է. «Այս թատերական քրոնիկը թեև չէր պատմած խաղին նյութը, սակայն եվրոպական լոբոնումներով զրված էր, և ոչ անկե առաջ և ոչ ոչ այ անկե ետքը մեր թերթերուն մեջ տարիներով այսպիսի մանրամասն ու գիտակից գնահատմանց չենք հանդիպեր դերասաններուն մասին»:

«Բերայի Արևելյան թատրոնին առաջին երկու տարեշրջանները» հոդվածը, որը նախորդի օրդանական շարունակություն է կազմում, ամփոփում էր Արևելյան թատրոնի 1861 թ. ղեկավարներից մինչև 1863 թ. ապրիլը ընկած ժամանակահատվածի թատերական իրադարձերը:

Առաջին թատերաշրջանի բոլոր ներկայացումները, թե՛ ինքնուրույն (Մ. Պեշիկթաշյանի «Արշակ Բ», Թ. Թերզյանի «Սանդուխտ», Հ. Աճեմյանի «Կոմիտասի ցուցակը» և Մ. Մանասյանի «Ջաղացպանին աղջիկը»), և թե՛ թարգմանական («Ռոպերտ ավագակապետը», Ս. Պեշիկասի «Ձերմուշեկա դա Ռիմինին» և Վ. Հյուզոյի «Արքայի գրտնուն»), մեծ սիրով ու ողբերգությամբ են ընդունվել պոլսահայ հասարակության կողմից: «Ամեն ներկայացման լեցուն էր թատերասրահը, — գրում էր Ասատուրը: — Սամաթիայեն, Գուս-Գարուեն, Հասպուղեն, Սկյուտարեն, Վոսֆորի գյուղերեն և Պոլսո մյուս թաղերեն, բազմաթիվ թատերասերներ կուզային, կը լեցնեին

1 Նույն տեղում, էջ 304:

1 «Ընդարձակ տարեցույց», 1925, էջ 305:

Թատրոնը և օր կրքարը, որ հանդիսականներեն սմանք Բերայի պանդոկներուն մեջ պտուկելու սենյակ չէին կրնար դանել և կստիպվեին սրճարաններու մեջ անցնել ղիշերը»¹ :

Արևմտահայ թատրոնը, ըստ ամենայնի, մտել էր զարգացման նոր շրջանակների մեջ և առաջ էր ընթանում մեծ քայլերով : Ըստ էության, այդ առաջընթացը նոր իրադրությունների մեջ անհրաժեշտություն էր և պայմանավորված էր հասարակական նոր պահանջներով : Այս պահանջները ավելի քան հայտնի էին թատրոնի պատմաբանին և նա փորձում է թատերական անցուղարձի հանդամանալից պատկերումով ցուցադրել դրանք : Այս իմաստով, մեկ առ մեկ քննվում են ներկայացված բեմագրություններից յուրաքանչյուրը, դրանց հետ կապված առանձին հարցեր, արվում են դերակատարների անունները, ներկայացվում դերասան-դերասանուհիներին, բնութագրվում և դնահատվում սրանցից յուրաքանչյուրի հատկանշական գծերը, և ամենակարևորը՝ նշվում ժամանակի մամուլում դասած արձագանքները յուրաքանչյուր բեմագրությունից վերաբերյալ : Մամուլի գրախոսականների վրա հիմնը վելով, հեղինակը ցույց է տալիս ժամանակի իրականությունից մեջ դերասաններից յուրաքանչյուրի դասած ընդունելությունը կամ քննադատությունը, դերասանական արվեստի ժամանակի մակարդակը, ընդունման կամ մերժման չափանիշները : Հեղինակային դիտումները հիմնականում հենվում են մամուլի կարծիքների, վիճակոչումների, կամ ժամանակակիցների տված բնորոշումների վրա : Սա, անշուշտ, փաստական տուժումով հարստացնում է աշխատությունը, թեև այն ավելի կշահեր, եթե դրան միանային պատմաբանի դիտողություններն ու դնահատականը՝ թատրոնն ու թատերդրությունը արևմտահայ հասարակական-քաղաքական կյանքի իրադարձերի ֆոնի վրա բացահայտելու իմաստով :

Ասատուրը այս նույն սկզբունքով ներկայացնում է նաև Արևելյան թատրոնի երկրորդ թատերաշրջանը (1862—63) : Առաջին թատերաշրջանում (1861—62) ներկայացումները

գտած մեծ ընդունելությունը թատրոնի վարչությունը և դերասանական խմբին պարտավորեցնում էր կազմակերպված ձևով սկսելու նոր թատերաշրջանը : Այս առթիվ վերակառուցվել էր շինքը, շքեղացվել թատրոնի կահավորումն ու թատերասրահը : Համալրվել էր գերասանական խումբը : Բայց և այնպես, այս թատերաշրջանը չունեցավ այն հաջողությունը, ինչպիսին ունեցավ իր նախորդը : Մտքառմասին արդեն, գրում էր Ասատուրը, նկատելի էր, որ նախկին խանդավառությունը չկար : Բեմադրվեցին ընդամենը տասնմեկ ներկայացում, որոնցից ինքնուրույնը՝ միայն Ս. Թղլյանի «Էրեանորան» էր, այն էլ օտար կյանքն ու միջավայրը պատկերող մի պիես : Այս թատերաշրջանում ընդգրկված էին եվրոպական գասական գրողների առաջնակարգ գործեր, ինչպիսիք էին Մոլիերի «Աղահը» և «ՏարալուՓը», Վոլտերի «Ալգիրը» և ուրիշ ստեղծագործություններ, բայց, այնուամենայնիվ, հասարակությունը նախկին ոգևորությունն ու ուշադրությունը չէր ցուցաբերում ներկայացումների նկատմամբ : Երևույթը հեղինակը կարծեք թե հակված է բացատրելու ավելի թատրոնի գործունեությունից անկազմակերպ բնույթով, քան որևէ ուրիշ հանգամանքով : «Արևելյան թատրոնի անօրինությունը դեմ, — գրում է նա, — հասարակության մեջ սկսած էր զժողհանք արտահայտվել, ծրագրերի հաճախակի խախտումները, և ընդհանրապես թատրոնի վարչության անուշադրությունն ու անփութությունը»՝ ազդում էր հասարակության թատերական հետաքրքրությունների վրա : Ասատուրն, անշուշտ, խաղացանկը քննելիս, նկատում էր, որ ներկայացված գործերը ընդհանրապես իտալերենից, ֆրանսերենից թարգմանված ողբերգություններ և կատակերգություններ էին, ռոմանտիկ դրամաներ կամ մեղոդրամաներ : Երախուսելի էր, անկասկած, եվրոպական բարձրարվեստ ստեղծագործությունների բեմագրությունը հայ բեմում, քաղաքակրթության նվաճումների յուրացման կարևորությունը, բայց և այնպես, աղային, հատկապես, պատմա-հայրենասիրական թեմատիկան զեռես շատ կողմ-

1 «Ընդարձակ տարեցույց», 1926, էջ 296 :

1 նույն տեղում, էջ 309 :

նակիցներ ուներ արևմտահայ շրջաններում: Ազգային-հայրենասիրական թեմաների շահարկումն այստեղ խիստ օրինաչափ էր և ցանկալի, քանի որ բռնապետական-քաղաքական պայմաններում առանցքայինը՝ ազգային-աղատադրության հարցն էր: Սրանով էլ պետք է բացատրել թատրոնի նկատմամբ համակող լայն հետաքրքրությունների պակասը, որն այնքան ետուև էր թատերական կյանքի նախորդ շրջանում, երբ բնավ էին բարձրանում ոչ միայն եվրոպական, այլև ազգային պիեսներ: Հանդամանքը մտահոգում էր Ասատուրին և նա այս կարևոր խնդրի իրականացումը կապում էր խաղադասիկ հետ:

«Բոլոր այս թատերախաղերուն մեջ, — գրում է Ասատուրը, — չկար ոչ մեկ դործ, որ պատկերացներ միջավայրին ժամանակակից իրական կյանքը և նույն ասեղնվան ընտանեկան բարքերը: Ինչ որ թատերաբեմին վրա կը ներկայացվեր, բնդհանրապես միջազգային օտար չափազանցված տիպարներ էին և թատրոնը գրոտոնքի ժամադրավայր մը եղած էր, փոխանակ չափահասաներու համար կրթական հարկի մը դերը կատարելու»¹:

Մասնանշելով թատերգության՝ ազգային-հասարակական տրամադրությունների շոշափման անհրաժեշտությունը և նրա ունեցած դերը հայ ժողովրդի ազգային ոգու և կենսունակության պահպանման ոլորտներում, Ասատուրը, դրանով իսկ, բացահայտում էր թատրոնի զարգացման հեռանկարի հարցում իր յուրացրած գաղափարական նպատակադրումը:

Աշխատության հեղինակը Արևելյան թատրոնի պատմության այս հատվածում կանգ է առել նաև Արուսյակ և Աղաֆնի Փափոզյանների, Մարիամ Մաղիկյանի, Մտեփան Էջլյանի, Պետրոս Մաղաքյանի, Հովհաննես Աճեմյանի, Մերովրե Պենկլյանի, Վարդուկյանի, Մարտիրոս Մնակյանի և Ֆասուլյանյանի դիմանկարների վրա: Տալիս է յուրաքանչյուրի կենսագրական կարճ ուրվագիծը, համառոտակի ներկայացնում թատերական գործունեությունը, խոսում առանձին գերակա-

տարումների շուրջ, պատմում հետաքրքիր մանրամասներ ու մանրագատումներ առանձին դեպքերի վերաբերյալ:

Հ. Ասատուրը աշխատության վերջին՝ «Բերայի Արևելյան թատրոնը 1863—են 1874—ը» ամենաբնագարձակ բաժնում, անդրադառնում է արևմտահայ առաջին պրոֆեսիոնալ թատրոնի մասնատման դեպքերին, երբ Արևելյան թատերախումբը, որն այնքան աշխուժություն էր մտցրել հայ հասարակական կյանքում՝ բաժանվեց մի քանի խմբերի, կազմակերպելով առանձին ընկերություններ կամ մեկնելով տարբեր քաղաքներ: Մտ. Էջլյանը, համախմբելով Արևելյան թատրոնի հիմնական ուժերին, մեկնում է Չմյուսեփա և փայլուն թատերաշրջան բոլորում (1863—64) տեղի Վասպուրականի թատրոնում: Արևելյան թատերախմբի մյուս մասը, Պ. Մաղաքյանի գլխավորությամբ, կազմակերպում է «Հայ դերասանական ընկերություն» խումբը, որի գործունեությունը, սակայն շատ չանցած դադարում է: Արևելյան թատրոնը, որը ամբապնդման ու կայունացման նոր վերելք էր ապրում Մ. Հեքիմյանի ղեկավարության տարիներին (1865—67), Մ. Նալբանդյանի հիշատակին արված «Վարդան Մամիկոնյան» ողբերգությունից հետո, վերջնականապես փակվում է: Այս մասին ժամանակի մամուլը լուրջությամբ է պահպանել, մեկընդմիջ չհիշատակելով ո՛չ Արևելյան թատրոնի, և ո՛չ էլ Մ. Հեքիմյանի անունը: Տասնամյակներ հետո միայն, 1927 թ., թուրքական գրաքննության խիստ պայմաններում, Ասատուրի հաղորդած շատ սեղմ տեղեկությունները պարզում են որոշ փաստեր, որոնցից հայտնի է դառնում, որ Մ. Նալբանդյանին նվիրված ողբերգությունը, իր արտահայտած քաղաքական միտումներով ու հոգեհարստությամբ հայրենասիրությամբ, այնքան ցնցող ընդունելություն է գտել պոլսահայ շրջաններում, որ ճակատագրական է դառնում թատրոնի գոյության համար:

«Այս ներկայացումը վերջինը կըլլա, — գրում է նա, — 1866—67-ի տարեշրջանին և վերջինը միանգամայն Հեքիմյանի վարչության տակ դրված ներկայացմանց: 1867—68-ի տարեշրջանին Սր. Մանասյան կը շարունակե վարել Փրանս-

1 Նույն տեղում, էջ 323:

սական թատրոնի վերածված «Արևելյան թատրոնի» ֆրանսական խումբին տնօրինությունը»¹։

Արևելյան թատրոնի փակվելուց հետո Ասատուրը անդրադառնում է Պոլսում դորձող տարբեր թատերախմբերի դործունեությունը։ Մրանցից էին «Հայ դերասանական ընկերությունը», Վարդուլյանի «Ասիական ընկերությունը», «Նորակազմ ընկերությունը» և Մաղաքյանի կազմած «Կամավոր ընկերությունը»։ Ասատուրը հանդամանորեն պատմում է Մաղաքյանի՝ Օրթալյուղում ծավալած թատերական գործունեության (սկսած 1869 թվականից), և ապա, նրա կողմից 1873 թ. հոկտեմբերին, Արևելյան թատրոնի վերաբացման մասին։

Գործաւնյա ու շնորհալի Մաղաքյանը ոչ միայն օժտված էր դերասանական փայլուն ձիրքով, այլև հայտնի էր որպես խմբավար-ռեժիսոր։ «Կորովի, աշխույժ, — դրուժ է Ասատուրը, — սրտանց փարած էր արհեստին, քաղաքավար ու համեստ, կրցած էր էր ընկերակիցներուն վրա հեղինակություն ձեռք բերել, մանավանդ որ չորս հինգ տարվա փորձառություն ստացած էր արդեն Սրապիոն Հեքիմյանի խումբին մեջ, որուն առաջին դերասանը կը նկատվեր»²։

Արևմտահայ թատերական շրջաններում նշանավոր այս դերասանը, ի մի հավաքելով ժամանակի ամենակարող ուժերին՝ Պետրոս Աղամյանին, Ազնիվ Հրաչյային, Դավիթ Թրյանցին և ուրիշներին, ընդլայնեց և թարմացրեց թատրոնի խաղացանկը սոցալին և թարգմանական բազմաթիվ նորանոր գործերով՝ մեծ ուշադրություն դարձնելով դերասանական կատարողության և բեմական լեզվի վրա։

Շնորհիվ համառ ջանքերի, Մաղաքյանի խումբը 1873—74 թթ. փայլուն ելույթներ է ունենում, որին մասնակցում էր նաև Թիֆլիսից Պոլիս եկած Մ. Ամերիկյանը՝ բեմադրելով մի քանի արևելահայ պիեսներ («Դալալ Ղալսն», «Պեպոն»)։

Սրանով էլ ավարտվում է արևմտահայ առաջին պրո-

ֆեսիոնալ թատրոնի գոյությունը, որը Հ. Ասատուրը հասցնում է մինչև 1874 թվականը։ Ճիշտ է, մինչև ուսու-թուրքական պատերազմի տարիները ոչ կանոնավոր կերպով բեմադրվել են ներկայացումներ, բայց արդեն ոչ «Արևելյան թատրոն» անվան տակ։ Հիմնականում սա է հաշվի առել Ասատուրը, Արևելյան թատրոնի պատմությունը հասցնելով մինչև 70-ական թվականների կեսերը։

Այս ուշադրով և փաստերով հարուստ աշխատությունը, որը լուսարանում է արևմտահայ թատրոնի պատմության շատ անհայտ էջեր, արժեքավորվում է նաև նրանով, որ ներկայացնում է մի շարք նշանավոր դերասանների, դերասանուհիների դիմանկարներ, որոնք իրենց բեմական անդրանիկ մկրտությունը ստացել են Արևելահայ թատրոնի բեմի վրա։ Պետրոս Աղամյան, Գարեգին Ռշտունի, Երանուհի Գարագաշյան, Հրաչյա, Մառի Նվարդ և Սիրանուշ։ Արևելյան թատրոնի և թատերաբուհի պատմությունը ամբողջացնելու մի աննկարագրելի ջատագով, Ասատուրը աշխատության վերջում տեղ է տվել նաև թատրոնի թատերագիրներից և թարգմանիչներից լավագույններին՝ կյանքի և ստեղծագործության պատմությամբ, զրած և թարգմանած գործերի բնութագրմամբ, դասահատությամբ և հուշերով։ Սրանք են՝ Սրապիոն Հեքիմյան, Թոմաս Թերզյան, Սրապիոն Թղլյան, Սրապիոն Մանասյան, Ռոմանոս Սեռեֆյան և Մկրտիչ Պեշիկթաշլյան։

Աշխատությանը կցված է նաև դերասանների, թատերագիրների և թարգմանիչների անվանացանկը, ծննդյան և մահվան թվականներով, ինչպես նաև թատերախաղերի ցուցակը։ Այստեղ ժամանակագրական կարգով Ասատուրը ներկայացնում է արևելյան թատրոնի խմբի կողմից ներկայացված այն թատերախաղերը, որոնց ներկայացման թվականները որոշակի ծանոթ են։ Հեղինակը վստահեցնում է ուսումնասիրության պարունակած տեղեկությունների ճշտությունը,

1 Ս. Հեքիմյանի գրական դիմանկարը հետազոտում լրացնելով և ամբողջացնելով Ասատուրը տեղագրել է իր «Թիմաստվեքներ» աշխատության մեջ։

1 «Ընդարձակ օրացույց», 1927, էջ 181։

2 Նույն տեղում, էջ 327։

որովհետև այդ ամբողջները, ըստ նրա, վավերապրերով ստուգված և «խզճամխո-քննութեամբ հաստատված են»:

Հ. Ասատուրի «Արևելյան թատրոնի պատմութեան» ուսումնասիրութեանը բարեխիղճ և համառ աշխատանքի արդյունք է՝ լեցուն փաստերով ու ամբողջությամբ, որոնք լուսարանում են արևմտահայ թատերական կյանքում այնքան նշանակալից Արևելյան թատրոնի կազմակերպման պատմութեանը և գործունեութեան ողջ ընթացքը:

* * *

XIX դարի վերջին տասնամյակի քաղաքական իրադարձութիւնները թուրքական բռնապետութեան մեջ մեծ հարված հասցրին արևմտահայ մշակութային առաջխաղացման ջանքերին, սեղմեցին հայ մտավոր կյանքի շրջանակները՝ վտանգի տակ դնելով ազգային-հասարակական առաջընթացի հեռանկարները: «Պարագաները, — գրում էր Արփիարյանը, — կը ջարջախեն մեր մտքի թռիչքը, կը հոշոտեն մեր սրտերը և ամեն գրող կը դառնա, կըլլա մի հուզական ներքինի: Հարկ է լռել...»¹:

Բայց, այնուամենայնիվ, դրականութեանը, մամուլը, հայագիտութեանը և արվեստի շատ ճյուղեր պատմական ու դիտական որոշակի նվաճումների հասան՝ ստեղծելով համադրային մշակութային թեև դանդաղ, բայց և այնպես հետևողական առաջընթացի ընդհանուր միտություն: Պատմական նոր պայմաններում մամուլը, զրկված լինելով քաղաքական-հասարակական խնդիրներ շոշափելու ամեն մի հնարավորութեանից, առավելապես զբաղված էր հայ ժողովրդին եմբողջական քաղաքակրթութեան դիտական և ղեղարվեստական նվաճումներին ծանոթացնելու խնդրով: Արևմտահայ շրջաններում մեծ էին հետաքրքրութեանները համաշխարհային գրականութեան, փիլիսոփայութեան և ընդհանրապես հասարակադիտական ուսումնեցների հանդեպ: Մյուս կողմից ազգային

1 «Մշակ», 1889, № 62:

վերելքի հեռանկարը կորցրած մտավորականութեանը փորձում էր հայ լեզվի ու գրականութեան, կրոնի ու եկեղեցու ամենազնեքի, ընդհանրապես ազգի հողեւոր արժեքների վերհանմամբ՝ մայր ժողովրդի դատը հանձնել քաղաքակրթութեան խզճին: «Վախճանի մը հանգած էին այն բոլոր մարտնչումները, — գրում է Հրպետը «Բազմալեզու», — որոնց նպատակական էր ներքին բարեդործութեան, կամ ազգային-եկեղեցական իրավունքներու պաշտպանութեան:

Վերջացեր էին նաև կրոնական հայածանքները: Աշխարհական հայրենիքի գաղափարը կը միացնէ հայ ցեղը: Հայաստանի անտեսական, բարոյական, մտավորական վիճակին հագածութեանը կը դրավէ մաքերը»:

Քննվում և ուսումնասիրվում էին հայ ժողովրդի անցյալը, բանասիրական, ազգագրական հետազոտութեաններով, վերհանվում ներկայի խնդիրները, ցուցադրվում ազգային մշակույթը՝ դարերի իր հնութեամբ ու խորքով:

Հայ ժողովրդի պատմութեանը և ընդհանրապես պատմագրութեանը դիտական խոր և բարեխիղճ ուսումնասիրութեան էր պահանջում ոչ միայն անցյալի պատմագիտական և ազգայնագիտական հուշարձանների քննութեան, այլև աշխարհով մեկ սփռված հայութեան պատմական և մշակութային կապերի հայտնագործման ընդամենով: Մեկը մյուսի հետևից հրատարակ եկան Ղ. Ալիշանը՝ «Երբեք», «Միայն», «Այրարատ», «Միասնաբեր» և ուրիշ գործերով, Հ. Քոսյանը՝ «Հայք ի Չմյուսնիս» աշխատութեամբ, Հ. Տաշյանը՝ «Այնարկ մը հայ հնագրութեան», Գ. Գալեմքյարյանը՝ «Պատմութեան հայ յրազրութեան», Գ. Չարբահանյանը՝ «Պատմութեան հայկական տպագրութեան» աշխատութեաններով և այլ հետազոտողներ: Ավելի ուշ հրատարակվեցին Չոպանյանի և Այգոյանյանի բանասիրական ուսումնասիրութեանները, Հ. Մրժրյանի «Լրագրութեանը թրքահայոց մեջ» գործը՝ «Սաչ-քնար» ծածկանունով, «Բյուզանդիոնում» հրատարակված «Փիլիսոփայական երբեքութեանը ժԹ դարու թրքահայոց պատմութեան», Ռ. Շիրմանյանի «Ուր-

1 «Բազմալեզու», 1902, № 7, էջ 322:

վաղի՞ծ հայ նկարչութեան պատմութեան», Ս. Թութունջյանի «Քրքահայ թատրոն և դերասաններու շարքը» հետազոտութեանը և այլն: «Մեր վերջին դարերուն քաղաքակրթութեանը, — վկայում է Ասատուրը, — մեր արվեստագետները, մեր լրագրիչները, մեր տպարանները, մեր կրթական հաստատութիւնները, մեր վանքերը, մեր եկեղեցիները, Պոլսո հայ պատրիարքները հետզհետեւ ատոնց պատմութեանը գրելու լուրջ փորձեր եղան և այսօր կարելի է ըսել թե 1888—են ի վեր այդ ուսումնասիրութեանց տեսակետով այնքան դժուար տեսնուի վեցով, որքան չտեսնուեցավ վիպադրութեան, թատերագրութեան և գրականութեան ու գեղագիտական ճշուդերու մեջ»¹: Իսկ պատմաքննական նմանօրինակ հետազոտութեանները, Ասատուրի համոզմամբ, պայմանավորված էին ազգային-հասարակական առաջընթացի դժուարական նպատակներով՝ պահանջելու և հաստատելու համար հայութեան հոգևոր գոյութեանը, ժողովրդի պատմութեան և հոգեբանութեան յուրահատուկ կողմերը:

900—ական թվականների սկզբներից, Ասատուրի գրական-հասարակական գործունեութեանը (դա նկատելի էր նաև ութսունականներից շատերի մոտ) չունեւ այլևս իր երբեմնի կրքոտութեանը և արևմտահայ կյանքի ու մշակութային շարժման ոլորտում բազմաթիւ խնդիրների վերաբերյալ ցուցաբերած նախկին եռանդը: 80—ականները գրեթե չխառնվեցին նոր պատմաչրջանում սկիզբ առած դրական բանավեճերին, որոնք այնքան կրքոտութեամբ ծավալվեցին «վստիման գրականութեան» հարցի շուրջը, ինչպես նաև դարասկզբի նորօրյա դրական դավանանքների վերաբերյալ: Մա բացատրվում էր դիվալորացեա ժամանակաշրջանի առաջադրած մշակութային նոր պահանջներով, որոնց դրական նախորդ սերունդը արդեն ի վիճակի չէր պատասխանելու: Ասպարեզ էր իջել նոր սերունդը, որին ավելի մոտ էին դարասկզբի գաղափարական գրողները և ավելի լավ հասկանալի՝ ժամանակի խնդիրները: Գրողների և հասարակական դժբխիչների

1 ԳԱԹ, Թ. Ազատյանի ֆոնդ, № 139, 2. Ասատուր, Հրողարակազրին հուշերն:

նոր խումբը՝ (Ա. Հարությունյան, Ռ. Սևակ, Սիամանթո, Գ. Վարուժան, Վ. Մալեղյան, Հ. Նազարյան, Ինտրա, Հ. Արշակյան և ուրիշներ), դադարաբական և դեղագիտական հարցադրումների բոլորովին այլ սահմաններ էին ընդգրկում, քան Ասատուրի ժամանակակից սերունդը: Վերջինս գրեթե նույն իրավիճակումն էր, ինչ ժամանակին ապրեցին Գ. Օսյանն ու նրա սերունդը՝ իրենց փոխարինելու եկած ութսունականների վերընթաց շարժման հանդեպ: Այստեղից էլ պատահական չպետք է դիտել Ասատուրի անցումը պատմագիտութեան ընդառնալու, մի ասպարեզ, որին նա արևմտահայ իրականութեան մեջ դիտական և պատմական բազմախորհուրդ նշանակութեան էր վերապահում՝ համոզված պնդելով, որ «մեր դարու հայ լրագրութեան, հայ թատրոնին, հայ արհեստին, հայ վաճառականութեան, հայ տպարաններուն, հայ դպրոցներուն պատմութեանը պետք է դրվի վերջապես»¹:

Ասատուր-մտավորականի սուցիայ-պատմական հայեցողութեանը, առաջադրվող պահանջը իմաստավորում էր ժողովրդի հուզեր և մտավոր ավանդների պատմական քննութեան ներքին արամարանութեամբ՝ երևույթը դիտելով ազգութեան դոյութեան հեռանկարի տեսակետից: «Ուսումնասիրութեանց պահանջ մեր նոր գրականութեան մեջ» ընդարձակ հոգվածում Ասատուրը շատ խորն էր ըմբռնում ազգային-պատմական արժեքների ուսումնասիրման խնդիրը և քննադատում պատմական փաստերի ու վավերագրերի հանդեպ ոչ խոր դիտական մոտեցումը, «քանի մը լուրջ փորձեր» գտնելով միայն կատարված հետազոտութեանների մեջ: Այս առումով նա սկզբունքային դրվածք էր սարսաղբում հարցերի դիտական մեկնաբանման խնդրին, որը շատ ուսումնասիրողների մոտ, հետևողական և մանրագին քննութեան բացակայութեան հետևանքով, հասցվում էր ոչ համոզիչ և անավարտ եզրահանգումների: «Ավետիս Պեպեյանի ծանոթ գործը, — գրում է Ասատուրը, — պարզ ժամանակադրութեան մըն է միայն, ուր կրոնական վեճերու պատմութեանը մանավանդ էական տեղ

1 «Մասիս», 1892, № 3971:

մը զբաղված է: «Հանդես ամսօրյայի» մեջ սկսված «Հայ լրագրութեան պատմութիւնը» կիսկատար կը մնա: Զարբհանայանը իր «Նոր մատենագրութեան» մեջ հարեանցի միայն կը շոշափե կարգ մը ծանոթութիւններ, որոնք վերջին զարուհայոց մտաւոր մշակման բնթացքը կուրվազեն միայն¹:

Բյուզանդ Քեչյանի «Պատմութիւն Ս. Փրկչի հիվանդանոցին հայոց» գրքի մասին գրած իր բնդարձակ դրախտականում Ասատուրը ոչ միայն գնահատում և արժեքաւորում էր ուսումնասիրութիւնը, այլև նշում նմանօրինակ աշխատութիւններ գրելու անհրաժեշտութիւնը: Գրախոսը դանում էր, որ պատմութեան ամենապատահելի և սուսյո պարբերը ոչ այնքան ավանդութիւններն ու վայելքազբաւան հիշատակութիւններն են, որքան «ժամանակակից պատմագրութիւնն է», իսկ «պատմագրական ճաշակ» հայերը մշակել են զեռես հին դարերում, երբ մեր «մեծագոյն» մատենագիրները լինելով պատմիչներ, գրի են առել իրենց ժամանակակից կյանքի իրադարձութիւնները: Ասատուրը, սակայն, ցավով է նկատում, որ «մեր պատմագիրը առավել իրողութեանց կարեւորութիւն տված են քան ժողովրդայն ներքին կյանքին, այնպես որ հայոց բարքերն և սովորութիւնքն, իրենց շատ կողմերով անծանոթ մնացած են մեզ»²: Պոլսի ազգային հիվանդանոցի հիւնամյա պատմութիւնը գրախոսի կողմից արժեքաւորվում է հատկապես նրանով, որ Քեչյանը գիտական հմտութիւն է հանդես բերել պոլսահայ այս հայտնի բարեկործական հաստատութեան պատմութիւնը շարագրելիս՝ հաշիւ առնելով ժամանակի հասարակական մասնագրութիւններն ու պատմական եզրութիւնները, շոշափելով սոցիալ-պատմական մի շարք խնդիրներ: Ազգային հիվանդանոցի հիմնադրման ու բարգաւաճման կեդարյա պատմութեան հետ կապված երկվայրերի ու հարցերի բազմակողմանի քննութիւնը բարձրացնում է անշուշտ աշխատութեան կարեւորութիւնը և վկայում ներկայացված փաստերի հավաստիութիւնը: Բայց և

այնպես, գրախոսի համոզմամբ, Քեչյանը երկար տարիներ թղթակցելով ժամանակի պարբերական մամուլին և վարժված լինելով լրագրական ոճին, զեղքերը վերարտագրել է ավելի իբր խմբագիր, քան հայացքների հետևողական սխառմ ունեցող պատմագիր: Ասատուրը նկատում է, որ Քեչյանը «քիչ անգամ երեսն հանած է իրողութեանց իմաստասիրական կողմն և չէ դրած գործին մեջ այն ընդհանուր պատմական կազակցութիւնը, որով պատմական երկի մը մասերը կը միանան, իրարմե բացատրվելով և ամբողջացնելով գիրար»³:

Ասատուրի պատմահայեցութիւնը զնում էր հատկապես ազգային-հասարակական կյանքի պարզացման անցած ուղիների քննութեան խնդիրը: Այս տեսակետից նա հույժ կարևոր հետազոտութեան ասպարեզ էր համարում դարակեսի ամիրաների կյանքին և գործին վերաբերող կողմերի վերհանումը, այն դերը, որ կատարեցին ամիրաները արևմտահայ կյանքում՝ տապալելով և հաստատելով պատրիարքներին, զերիշխող դիրք գրավելով ժողովրդական կյանքի յուր կենսական բնագավառներում: Խնդիրներ, որոնք ազգային ժամանակակից պատմութեան համար մի առանձին կարևորութիւն էին ստանում: Ամիրաների գործունեութեան ուսումնասիրման հարցը, որը Ասատուրի համար արամարանական էր, զառնում ազգային-հասարակական տեղաշարժերի ուղղութիւնը պարզելու առումով, մի առանձին նշանակութիւն էր ձեռք բերում նաև Թուրքիայի տնտեսական պատմութեան տեսակետից, քանզի «ամիրաներն իբրև սեղանաւոր մեծ ազգեցութիւն ունեցան պետութեան առևտրական և անտեսական մի շարք առաջնակարգ ճյուղերում»: Մտացութեան կորստից պետք էր փրկել այս նշանաւոր դեմքերը և հայտնաբերել նրանց ազգեցութեան սրբանները Թուրքիայի քաղաքական և տնտեսական կյանքում: Պետք էր փնտրել «պատճառներն անոնց դորացման և պատճառներն անոնց անկման», — գրում էր նա, և այդ ամենը պետք էր ուսումնասիրել «մանրամաս-

1 Նույն տեղում:

2 Նույն տեղում:

1 Նույն տեղում:

նորեն, անկողմնակալ ոգով, և կանուխ որչափ հնար է, քանզի ժամանակը կը բխացնի վիպություններն և վկաներն և կը ջնջի ապացույցները¹: Եվ ոչ միայն այս: Ասատուրը նորանոր ուսումնասիրությունների «անկոխ դաշտեր» է հայտնաբերում, հարցերի օբյեկտիվ-գիտական մեկնաբանությունը քննում պատմագիտական հետազոտությունների գլխավոր միտումները:

«Եվ որքան հետաքրքրական կրնար լինել աղղային դատարարությունից պատմությունը, հայ վարժապետաց և հայ վարժարանաց անցելը ներկայելով մեզ...»

Հայ տպագրություն, հայ բարենպատակ ընկերությունաց և հայ թատրոնի պատմություններն ալ կրնան զբվիլ և լուսաբանել ժամանակակից պատմությունը²:

Գարակեսի արևմտահայ մշակույթի նշանավոր դեմքերի և անցքերի հետազոտումը, Գ. Օսյանի և Ս. Մխաբյանի սերընդի եռանդուն գործունեություն լուսարանումը պետք է վեր հաներ 50-60-ական թվականների ազգային մեծ իրադարձերի և դրական դարթոնքի հանգամանքները, բացահայտելով ժամանակաշրջանի իրական պատկերը՝ իր հակամարտություններով և աղղային-հասարակական պայքարի բուռն վերելքով: Եվ դարակեսի տարբերաց տեղաշարժերի ու հասարակական հոսանքների հակընդդեմ շարժման հարցերն ազելի խոր բմբունելու տեսակետից, Ասատուրը կարևոր է գիտում պահպանողական կողմի հանրահայտ դեմքերից մեկի՝ Տերոյենցի (Չամուռճյան) կյանքի ու գործունեությունից վերլուծումը, որն «իր խորհուրդ իր տեսությունաց համար ուշադրավ դեմք մըն է իր ժամանակի մարդոց մեջ»³:

Փորձելով վեր հանել ժամանակաշրջանի օբյեկտիվ-պատմական գործունեությունը, Ասատուրը բոլորովին հակառակ տեսակետ է պաշտպանում, երբ հրապարակախոսներից մեկը ազել-լորդ է համարում աղանդավորի հետամնաց դադափարներով

օժտված Տերոյենցի գործի քննությունը, քանզի նա միանգամայն «վնասակար ազդեցություն ունեցած էր ժամանակին վրա»: «Տարօրինակ դատաստան,— գրում է Ասատուրը,— որ կարևոր կը նկատե բարի և օգտակար մարդոց կյանքին ուսումնասիրությունը միայն, իսկ անպես՝ ուսումնասիրությունը անոնց կյանքին, որոնք վնասակար եղած են մարդկային ընկերությունը»:

Այս հաշվով,— նկատում է նա,— պատմագետների գործը շատ կը թեթևնա⁴:

Ճիշտ է, որ Տերոյենցը իր «Հավատացյալի, Հողեպաշտի վերացումներուն մեջ» պարզել է տարօրինակ տեսություններ, հակադրվել ժամանակի առաջավոր մտայնությունը: Նա հետազեմ ու նեղ դադափարարանությունը իր ուսումնասիրություններում և «Նրեակ» ու «Չոհայ» պարբերականներում քննել է ղլխավորապես կրոնական-աստվածարանական խրնդիրներ, բոլորովին անտեսելով իր ժամանակի պահանջները, դրական-հասարակական կյանքի հանդամանքները: «Սակայն ճիշտ ատոր համար իսկ,— պնդում է Ասատուր-պատմագետը,— կարժեր որ Մլմբյանի պես դրող մը ներկայացներ մեզ դայն, անոր Հողերանությունը ըներ մեզի, ինչ որ իր ժամանակին շատ մը մարդոց ալ Հողերանությունն է»⁵:

Մյուս կողմից, իսկական, խոր և բազմազարուստ փաստերով լեցուն պատմագիտական ուսումնասիրությունները, որոնք պահանջում են ժամանակ և միջոցներ, պետք է վարձատրեն հեղինակ-հետազոտողին,— գրում է Ասատուրը: Այս նպատակով նա առաջարկում է կազմել «Աղղային պատմություն» ընկերությունը, որը կօգնի և նյութապես կնպաստի ժամանակակից և պատմական ամենատարբեր թեմաներով գիտական լուրջ աշխատությունների երևան գալուն:

Ասատուրը գրել է պատմագրական արժեք ունեցող մի շարք ուսումնասիրություններ և առանձին հոդվածներ, որոնցից կարևորագույններն են՝ «Կոստանդնուպոլսո հայ և հույն

1 Նույն տեղում:

2 Նույն տեղում:

3 «Արևելք», 1899, № 4087:

1 Նույն տեղում:

2 Նույն տեղում:

դպրոցները 1790—են առաջ» («Ծաղիկ», 1903), «Մեր վան-
քերը» («Մասիս», 1892) և «Կ. Պոլսո չայերը և իրենց պատ-
րիարքները» («Ընդարձակ տարեցույց Աղղ. Հիվանդանոցի»,
1900—1901) հետադասութունները: Նկատելի է, որ հեղի-
նակի պատմագրական հետաքրքրութունները կենտրոնանում
էին գլխավորապես արևմտահայ մշակութի և հասարակա-
կան սեղաշարժերի ուսումնասիրության վրա, որը զիտական
նախասիրութուններից դատ, արտացոլում էր նաև Ասա-
տուր—պատմագրի աղղային—քաղաքական հայացքները:

«Կոստանդնուպոլսո չայ ու հույն դպրոցները 1870—են
առաջ» ուսումնասիրութունը լույս է սփռում XVIII դարում,
Պոլսում ապրող չայերի և հույների կրթութայն, դպրոցների
և ընդհանրապես, ուսումնասիրության տիրապետող վիճակի
վրա: Որպես թուրքական տիրապետության տակ գանձող
ենթակա աղղեր և բախտակից ժողովուրդներ՝ չայերը և
հույները, ունեցել են համանման ճակատագիր՝ թե՛ մշակու-
թային և թե՛ քաղաքական կյանքում: Սկսած XVII դարի հույն
նշանավոր մտավորական և հասարակական գործիչ Ալեքսանդր
Մավրոկորգասոյից (1636—1708), որի անվան հետ էր կապ-
վում «հույն դպրութայն ճշմարիտ վերածնունդը», Ասատուրը
հանդամանորեն ներկայացնում է XVIII դարի ճանաչված
հունապետներին, ծանոթացնում արանց կատարած գերին,
թողած երկասիրութուններին, դասագրքերին, ինչպես նաև
խոսում նրանց մանկավարժական և ուսուցման եղանակների
չուրջը:

Կոստանդնուպոլսում բնակվող չայերի մեջ դպրոց հիմ-
նադրելու և կրթություն տարածելու առաջին փորձերը, ըստ
ժամանակագրութայն արձանագրած փաստերի, Ասատուրը
կապում էր XVII դարի կեսերին կաթոլիկութայն տարածման
նպատակներով Պոլսում դործող Կղեմեա Գալանոս կոչվող
հայազեռ քահանայի, իսկ ավելի ուշ Մ. Սերաստացու անվան
հետ:

Կրթական—լուսավորական կյանքի արշալույսը Ասատուրի
կարծիքով հետևանք էր XVIII դարի մշակութային կյանքի
աշխույժ անցուղարձերի՝ կապված հայ տպարանների հիմնա-

դրութայն և բաղձաթիվ գրքերի հրատարակութայն փաստի
հետ: «Կաթոլիկներու կրոնական պրոպագանդան արևմտյան
քաղաքակրթութայն հետ շփման մեջ կը դներ հայերը»¹—
այսպես է պատճառաբանում պատմագիրը, չհորձելով հայտ-
նաբերել հոգևոր—մշակութային կյանքի դարդացման ներքին
աղղակները: Զուրայեցի Աղափնի Աստվածատուր վարդա-
պետը, Պաղտասար Դպիրը, Հովհաննես Կոլոտը, Սարգիս
Դպիրը և հոգևոր ու մշակութային այլ գործիչներ Կ. Պոլսում
հիմնեցին վարժարաններ և նախակրթարաններ, պատրաստե-
ցին ուսուցիչներ: Ասատուրը այստեղ ևս հանդամանորեն
ծանոթացնում է XVIII դարում հիմնված կրթական հայտնի
օջախներին, նախակրթարաններին, շեշտելով այս բոլորի
հոգևոր—եկեղեցական բնույթը:

Պատմական հարուստ փաստեր ու տեղեկութուններ են
պարունակում XIX դարի պոլսահայ դպրոցների ու կրթարան-
ների վերաբերյալ Ասատուրի գրած ուսումնասիրութունները,
որոնք հրատարակվեցին 1900—1901 թթ. «Աղղ. Հիվանդանոցի
ընդարձակ օրացույցում»: «Եեռի—Գուլի Աղղային Հիվան-
դանոցին անցյալը և արդի վիճակը» պատմական հետադասու-
թայն մեջ հեղինակը ներկայացնում է Աղղային Հիվանդա-
նոցի, որան կից որբանոցի վարժարանի պատմութունը:
Ասատուրը թվի ու փաստի վավերագրական ավայներով պար-
զում է այն միջոցները, որոնք հայթայթվում էին պոլսահա-
յութայն կյանքում կարևոր նշանակութուն ունեցող այս հի-
վանդանոցի գոյութայն պահպանման համար, ծանոթացնում
XIX դարի 30—ական թվականներից սկսած Հիվանդանոցն ու
վարժարանը ղեկավարող անվանի դեմքերին, արանց դործու-
նեութայնը, նշում Սկյուտարի ճեմարանի և որբանոցի միաց-
ման հանդամանքները 1850 թվականին:

«Նախնական կրթությունը մեր մեջ» հետադասութունը՝
Պոլսի վարժարանների համառոտ պատմութունն է, որտեղ

1 «Ծաղիկ», 1903, № 4:
2 «Ընդարձակ օրացույց», 1900, էջ 112:
3 Նույն տեղում, էջ 200:

Ղալաթիայի կենտրոնական և Սամասայան դպրոցներին նա անդրադառնում է հանդամանորին: Ասատուրը հետաքրքիր տվյալներ է հաղորդում նաև 1884 թ., ազգային դրականության և պատմության լավագույն երկերի հեղինակներին տրբվելիք «Հովսեփ Իզմիրյանցի» անվան դրական մրցանակի սահմանման մասին, մրցանակի պայմանների և արժանացած դործերի վերաբերյալ:

Ասատուրի համար պատմաքննական հետադադարի անաբարի է դառնում նաև XIX դարում Արևելյան և Արևմտյան Հայաստանում գանձող հայոց վանքերի և տաճարների պատմությունը: Աշխատությունը գրելիս հեղինակը դիմել է դանազան հին ու նոր մատյանների, տեղագրական և ճամփորդական նյութերի, որոշակի համակարգի ենթարկելով հողեօր-մշակութային օջախների պատմությունը: Նրան մեծապես օգնել են Ղ. Ալիշանի պատմաքննական գործերը, Գ. Չարրհանյանի «Նոր հայ դպրոցի պատմությունը» և պատմական այլ գործեր ու պարբերական մամուլում հրատարակված հոդվածներ: Հենվելով փաստական այս աղբյուրների վրա, Ասատուրը ծանոթացնում է ճարտարապետական մեք հին կոթողների տեղանքին, հիմնադրմանը, կառուցած դերին և ժամանակակից կոչությունը՝ մասենագրության, երաժշտական կրթության և դպրոցի կենտրոններ դիտելով դրանք: Նկատելի է սակայն, որ հեղինակի տեսական հայեցողությունը յուրաքանչյուր վանքի պատմաքննական վերլուծությունը տալիս, կանգ է առնում ավելի վերջինիս կրոնական նշանակության ու ավանդույթների նկարագրության, քան ճարտարապետական կողմերի քննության վրա: Բայց և այնպես, պատմական կարևորություն ունեցող այս ուսումնասիրությունը արժեքավոր է հատկապես, քանի որ հեղինակը աշխատության մեջ ընդգրկել է ոչ միայն բուն Հայաստանի տարածքում, Անատոլիայում և Կիլիկիայում, այլև Եվրոպայում, Աֆրիկայում և Միջերկրական ծովի կղզիներում դանձող բազմաթիվ հայ վանքեր, որոնք տեղ չեն գտել, մինչ այդ հրա-

պարակի վրա եղած նմանօրինակ աշխատությունների մեջ: Աշխատության արժանիքներից է նաև այն, որ աղբյուրագիտական, վիճակագրական և տեղագրական բազմաթիվ արժեքավոր տվյալներ է հաղորդում պատմական այդ հինավուրց կոթողների վերաբերյալ:

Պատմական հայացքի տակ առնելով այս ամենը, հեղինակը հուշարձանների վերահսկողության և պահպանման համար միջոցներ է առաջարկում: Ողջ աղբյուրի սեփականությունը դիտելով վանքերն ու եկեղեցիները և աղբի էլ հանձնելով դրանց պահպանման հոգսը, Ասատուրը հանձնարարում է սակոծել «կենտրոնական անօրին» մի հանձնաժողով, որն անմիջական հսկողություն պետք է սահմաներ վանքերի վրա և բարեկարգեր դրանց վիճակը:

Հ. Ասատուրը Կ. Պոլսի հայոց եկեղեցիների ուսումնասիրությունը հանդես է եկել նաև «Աղղ. հիվանդանոցի ընդարձակ օրացույցում» հրատարակված մեկ ուրիշ հոդվածում ևս, ուր նա պատմական ու տեղագրական ամփոփ տվյալներով ու փաստերով ներկայացնում է Պոլսի քառասուններկու հայ եկեղեցիների պատմությունը և Արմաշի դպրեվանքի գործունեությունը:

1900 թ., «Աղղ. հիվանդանոցի ընդարձակ օրացույցում», հրատարակվում է Ասատուրի «Կ. Պոլսո հայերը և իրենց պատրիարքները» ընդարձակ ուսումնասիրությունը. «Գլխավոր նպատակս եղավ անոր մեջ ուսումնասիրել Կ. Պոլսո հայ դպրեվանդանության անցյալը, պատրիարքությունը և ամիրաները, տպագրությունը և մտավորականները, եկեղեցիներն ու դպրոցները, մամուլն ու դրականությունը, ու ջանացի անոր քաղաքակրթության երևույթները ուսումնասիրել», — գրում է հեղինակը: Դրա համար նա պրոպոստ է Ղալաթիայի եկեղեցիների արխիվները, ջրջրում Օրթոդոքսի ձեռագրերի ու մատենագիտական աղբյուրների հավաքածուն, օգտվում Երե-

1 Ղ. Ալիշան, Պատմություն եկեղեցյաց և վանքերից Եգիպտոսի, «Այբարատ», «Միսիս», Ղ. Ինժինյան, Հնախոսություն աշխարհագրական Հայաստանյայց աշխարհի, Կ. Կաստանյանց, Հայոց վանքեր և այլն:

2 «Ընդարձակ օրացույց», 1900, Կ. Պոլսո, էջ 124:

1 Նույն նուկում, էջ 217:

2 «Մարտ», 1892, № 3960—3966:

միա Ձեռնբրի 1681 թ. «Պուսյո Պոլսո մեջ» աշխատությունից և դոկր Սարգիս Հովհաննիսյանի XIX դարի սկզբներին գրած «Կ. Պոլսո տեղագրությունը» անտիպ ուսումնասիրությունից, Սիմոն կաթողիկոսի հիշատակարանից, Ի. Համմեր Պուրդ-չտալի «Օսմանյան կայսրության պատմությունը» բազմա-հատոր դրքից, բազմաթիվ հանդեսներից, հայ և օտար ճանա-պարհորդների հուշագրություններից: Հեղինակը երախտա-գիտությամբ է հիշում փաստերի փնտառուքի մեջ իրեն օգնած և նյութերի ձեռք բերման առիթներով ծանոթացած բազմա-թիվ անձանց ու հոգևոր հայրերի, որոնք ամեն ինչ ներդրել էին պետք եղածը հայթայթելու համար:

Ուսումնասիրությունը, որը հրատարակվեց «Ընդարձակ օրացույցում»՝ մեծ ընդունելություն գտավ պոլսահայ շքե-ջաններում, իսկ արևմտահայ մամուլը բազմաթիվ գրախոսա-կաններ հրատարակեց այդ առթիվ¹:

Անշուշտ, աշխատության դասած արձագանքները ամենից առաջ գործի կարևորությունն էին վկայում, թեև ժամանակի առաջադրած ազդյունադիտական և անցյալի քննական հետա-դատության պահանջը խրախուսում էր պատմագիտական ար-ժեքների ամեն մի ուսումնասիրություն: Բացի դրանից ազգա-յին ինքնաճանաչության թելադրանքը գիտական լուրջ հար-ցադրումներ էր հանձնարարում պատմաքննական գործերին:

«Վերջին դարուն մեջ, — գրում էր Ա. Այգոյաճյանը, Ասա-տուրի աշխատության մասին տպած իր գրախոսականում, — պատմությունը այլևս դադարած է լուի իրարու հաջորդող եղե-լությանց շարքն ըլլալի, այլ եղելություններուն իրենց ծնունդ-ավոզ պատճառներուն և արդյունքներուն հարաբերությամբ, բազմապատկամբ և վերլուծությամբ մարդկային սեռին զար-գացման ուղին երևան հանելու վրա կը կայանա, այնպես որ այսօր պատմությունը և պատմության իմաստասիրությունը, և կամ քաղաքակրթության պատմությունը իրարմե չեն անջա-տվիր զրեթե, այլ մեկ անգամեն իրարու հետ միասին կարտա-

հայտվին: Այսօր այնչափ ընդարձակ հանգամանք մը առած է պատմությունը, որ անդալայարար կը մխրճվի այն դպրոցի ճյուղերուն սահմաններեն ներս՝ զանոնք իրեն միացնելու հի-դեր ընելով»²:

«Պոլսո հայերը և իրենց պատրիարքները» աշխատու-թյունը, որն ընդգրկում է պատմական մի շատ ընդարձակ ժա-մանակահատված՝ Պոլսի առումից սկսած (XV դար) մինչև XIX դարի 60-ական թվականները, ներկայացնում է հայերի հաստատումը Կ. Պոլսում, ուսումնասիրում մայրաքաղաքի հայության ազգային-հասարակական կյանքի զարգացումն ու ընթացքը՝ տալով պոլսահայ համայնքը ղեկավարող ազ-գային-կրոնական կենտրոն հանդիսացող պատրիարքարանի ու պատրիարքների պատմությունը³:

Աշխատության մեջ հեղինակը ավելի մեծ տեղ և նշա-նակություն է հատկացրել պատրիարքների գործունեությունը, քան մայրաքաղաքի հայ բնակչության ունեցած դերին՝ ազ-գային հասարակական և մշակութային կյանքում: Սա չի նշանակում, որ Ասատուրը չի անգրադառնում հայ միջնադարի գրական մշակութային իրադարձերին: Յուրաքանչյուր պատ-րիարքի կյանքի հետ զուգահեռ սրվում են այլալ ժամանա-կաշրջանի գրական և եկեղեցական նշանավոր ղեկավարի մասին տեղեկություններ, նշվում այս անձանց դերը ժամանակի մտավոր շարժման մեջ: Այսպես, հայտնի հասարակական գործիչ և պատրիարք Հովհ. Կոլոտ Բագիչեցու (1715—1741)⁴ կյանքի և գործունեություն հետ մեկտեղ, հեղինակը ներկա-յացնում է պոլսահայ մտավոր տեղաշարժերը, պատմում Պոլ-սում հաստատված առաջին հայ վարժարանի մասին, թվում նրա օրոք հրատարակված գրքերը (Ձեռք Գլակ, Բուզանդ, Մեարսպ Երեց, Սիմեոն Զուղայեցու «Քերականությունն» ու

1 «Հանդես ամսօրյա», 1902, № 4, էջ 108:

2 Տրվում է 1461 թ. մինչև 1858 թ. ընդգրկող ժամանակահատվա-ծում հանդես եկած վաթսուներորդ հայ պատրիարքների կյանքն ու գործը՝ գիտված չրջանի ազգային-քաղաքական և մտավոր կյանքի առնչակցու-թյամբ, ժամանակակից բազմաթիվ այլ ղեկավարի հետ մեկտեղ:

3 «Ընդարձակ օրացույց», Կ. Պոլսո, 1901, էջ 128—138:

1 Կուրն տեղում:

2 «Հանրագիտակ», 1900, № 84, «Բազմազեպ», № 4, «Հանդես ամսօրյա», 1902, № 4 և այլն:

«Տրամարանությանը...», և Հովհ. Կոլոտի պատրիարքության ժամանակամիջոցը իբրև սկիզբ դիտում Պոլսի հայոց կրթական և գրական զարգացման հեռանկարի տեսակետից: Կամ. Հակոբ Նալբան (1752—1764)¹ պատրիարքի գործունեությունը շարադրելիս Ասատուրը անդրադառնում է «մայր դպրատան» հիմնադրման պատմությունը, խոսում Պաղատար Գյուրի մասին, նշում նրա երկհատոր «Քերականությունը», «Տաղարանը», «Համառոտ քերականությունը» և ուրիշ գրքեր, պատմում նշանավոր հասարակական գործիչ Սիմեոն Երևանցու և բանաստեղծ Պետրոս Ղափանցու մասին: Բոլոր դեպքերում Ասատուրը հոգևոր այս նշանավոր անձանց գործունեությունը ներքին գրգռումները շողկապված էր ընկալում արևմտահայ ազգային շահախնդրություններին, որից և ամեն մի գործիչ կատարած դերը նկատվում էր իբրև ազգային և մշակութային կյանքում ներգրվող որոշակի ավանդ: Աշխատություններից հեղինակը, մինչև XVIII դարը, հայ մտավոր հասարակական կյանքում կատարվող իրադարձերն արտացոլում է ավելի սեղմ ու թուուցիկ, սահմանափակվելով գրեթե միայն կրոնա-եկեղեցական հարցերի ու իրադարձությունների շրջանակներում, իսկ ավելի ուշ դարերի քննություն մեջ ներգրված են ավելի հարուստ փաստեր և եղելություններ՝ ինչպես մշակույթի, այնպես էլ հասարակական տեղաշարժերի առումով:

Անշուշտ, պատմական կարևորություն ներկայացնող հարցեր են հայ-հույն հարաբերությունների վավերագրական պատկերներն ու կաթոլիկ-հռոմեադավան կապիտի ու քարոզիչների հաստատումը հայ իրականության մեջ, XVII—XVIII դարերում: Պատմական արժեքից զուրկ չեն նաև զայրոցների, տղարանների հիմնադրման հարուստ փաստերն ու ավյալները, ինչպես նաև գրքերի հրատարակության բազմաթիվ արձանագրությունները:

Ակներև է, որ համանման հետադարձություններում, որտեղ ասպարեզ են բերվում մեր ազգային-հոգևոր դարավոր արժեք

ները և լուսարանվում հայ հասարակական կյանքի իրադարձերը, կարող էին սպրդնել սխալներ և վրիպակներ, որոնք այնքան ճանրամանություններ նկատված են Ա. Ալոյսյանյանի ընդարձակ դրախտություն մեջ²:

Ասատուրն իր ուսումնասիրությունը հասցրել է մինչև XIX դարի 60-ական թվականները՝ խուսափելով անդրադառնալուց արևմտահայ պատմահասարակական կյանքում այնքան մեծ հեղափոխումներով և իրադարձություններով լեցուն վերջին տասնամյակներին: Այս տեսակետից թերևս արդարացի է Հ. Ճ. Սիրունու կարծիքը՝ պատմարանի ունեցած նկատառումների վերաբերյալ, ընդգծելով, որ «Համիդի ամենամտալ շրջանի շարադրանքը, շատ մեղ դեպքեր և դեմքեր չեն երևար հոն իրենց հարազատ գծերով ու կանդ կանոնն Սերոբյան Հակոբ պատրիարքին հետ, որպեսզի երբեք չխոսվի Ազգային Սահմանադրության փշոտ շրջանին վրա»³:

1 «Հանդես ամսօրյա», 1902, № 4, № 6, № 9: Ա. Ալոյսյանյանը խիստ հանդամանորեն, հատված առ հատված քննադատում է աշխատությունը, նշում տեղ գտած սխալները, վրիպակները, առանձին պատրիարքների գործունեություն ոչ նիշտ արեթիվերը, պատմական փաստերի որոշ խեղումներ, ինչպես նաև ուղղում՝ գրքի հրատարակչական արեթիվերի կասկածելի գրառումները: Այս ամենն անշուշտ չեն խանգարել դրախտին գնահատելու գործի արժեքավոր կողմերը, նկատելու հատկապես պատմական ազդյունների առատությունը և XV—XIX դարերի արևմտահայության կյանքի բազմաթիվ անհայտ էջերի ու վավերագրերի ցուցադրումը: «Պատմադանցություն և ավելորդարանություն չկայ գործին մեջ, — գրում է Ալոյսյանյանը, — նյութը սեղմված է և կտրուկ, սեղմ և կուտ գտնված մրն է ամբողջ գործը, որ իր պարունակության նոխուխյան հետ համեմատելով շատ քիչ ալ թիրուխյուն կը բովանդակե... գործը պատվարեր, աշխատված, խնամյալ և օգտակար գիրք մըն է...» («Հանդես ամսօրյա», 1902, № 9, էջ 302):

2 Հ. Ճ. Սիրունի, Պոլիս և իր դերը, Կ. Պոլիս, 1965, էջ 37:

1 Նույն տեղում, էջ 141—149:

ԱՍՍՏՈՒՐԸ՝ ԴԻՄԱՆԿԱՐԻՉ ԵՎ ԿԵՆՍԱԳԻՐ

Հ. Ասատուրի գրական վաստակի ժանրային բազմազանություն մեջ առանձնահատուկ տեղ է գրավում նրա «Իմասավերներ» խորագիրը կրող աշխատությունը:

Արևմտահայ գրողների կյանքին ու ստեղծագործությանը նվիրված առանձին մենագրություններում միայն («Տիգրան Կամարական», «Գրիգոր Զոհրապ») խոսվում է գրական դիմանկարի մասին՝ կապված ավյալ Հեղինակի գրական դեզարվեստական հայացքների զարգացման ներքին օրինաչափությունների հետ: Մինչդեռ հայտնի է, որ արևմտահայ հաստատված անչափ մեծ էր դիմանկարի ժանրի գրական արտադրանքն ու նրա ստացած երանգները:

Գրական դիմանկարի ժանրը արևմտահայ գրականության մեջ ձևավորվել է դեռևս անցյալ դարի 70-ական թվականներին: Մ. Մամուրյանի «Հայկական նամականի», Հ. Պարոնյանի «Աղղային ընթերց», Գ. Զոհրապի «Մանոթ դեմքեր», Տ. Կամարականի, Սիպիլի, Ա. Չոպանյանի և Հ. Ասատուրի դիմանկարները ժանրը ձևավորեցին իրենց ամենատարբեր արտահայտություններով: Մ. Մամուրյանի «Հայկական նամականին» և Հ. Պարոնյանի «Աղղային ընթերց», որոնք թեև շատ տարբեր էին իրենց հետապնդած գաղափարական ելակետերով, բայց, այնուամենայնիվ, կարելի էր համարել ժանրի ստեղծման նախադրյալներ: Սրանք դեռևս գրական դիմանկարներ չէին, բայց հաստատում էին գրություն և պարզում որոշակի ընդգրկման չափ՝ հայտնաբերելով մի շարք ընդհանուր և կայուն առանձնահատկություններ, ներհատուկ միմիայն դիմանկարի ժանրին: Հարցադրման սլաքն այստեղ ուղղվում էր դորձվի հասարակական-քաղաքական ըմբռումների վրա, և չորձ էր արվում արացողիվ ժամանակակից կյանքն իր ամբողջությամբ

մեջ՝ քաղաքական, բարոյագիտական, մանկավարժական, դրական, հրատարակատեսական տեսակետներին: Ավելի ուշ, 90—900-ական թվականներին Հեղինակված դիմանկարներն առանձնահում էին սրպես ժանրային մի որոշակի մասնաճյուղ, որն էր ընդգրկված, ոճով, կառուցվածքով ու զարգացման օրինաչափություններով, միանգամայն հեռանում էր ժանրի նախորդներից:

Գրական դիմանկարն արևմտահայ գրականության մեջ, իր ձևավորման առաջին տասնամյակներին, ձևով ու բնույթով և նույնիսկ նպատակներով, խիստ տարբերվում էր ժանրի պատկան-եզրոպական կերպից՝: Ժամանակ, վարպետություն և փորձ էր պահանջվում լիարժեք գրական դիմանկար ստեղծելու համար, թեև պետք է նկատել, որ ավելի ուշ, 900-ականներին զբված դիմանկարներն անգամ, իրենց համադրական խորքով և պատկերային սխտանի ներքին ուժով, չհասան ժանրի եզրագրական օրինակին, սրի պատմությունը ավել էր ավանդներ, ընդգրկման չափ և յուրահատուկ բովանդակություն: Բայց և այնպես, գրական դիմանկարը, իր չափով ըմբռնված սահմաններում, տարածվում էր արևմտահայ շրջաններում՝ տալով ժանրի բազմաբնույթ արտահայտություններ: Դիմանկարի եզրագրական օրինակը, որի արժանավոր հիմնադիր համարվում էր Սենտ-Բյուրը, մասուցում

1 Եզրոպական գրականության հետ մոտիկից ծանոթացումը արևմտահայ շրջաններում բացատրելի էր գործնում հատկապես Փրանսիական գրականության մեջ լայն տարածում գտած գրական դիմանկարի ժանրի ստեղծումը՝ այդտեսայ գրական կյանքում: Տարբերությունը այստեղ նրանում էր որ եթե արևմտահայ գրականության մեջ ստեղծվում էին ոչ միայն անցյալի, այլև ժամանակակից Հեղինակների դիմանկարները՝ ավելի մեծ ազդեցություն ունենալով գրականության պատմության կամ այն ստեղծելու նպատակների հետ, այս եզրագրական գրականության մեջ գրական դիմանկարը գիտվում էր միայն իրեն գրական-քննադատական ժանր:

Սենտ-Բյուրի, Անատոլ Ծրանսի, Պոլ Բուրժեի և մյուսների դիմանկարներն իրենց ընդգրկման խորությամբ և բովանդակությամբ մոտենում էին բնորդի ուսումնասիրման մենագրական բնույթին, այսինքն, ժամանակի և անձի քննական վերլուծությունը, թեև այստեղ չեն բացակայում պատմական էքսպոզիցիաներ, հիշողություններ ու փաստեր հաղտոտող քաղվածքներ:

էր գրողի կյանքը, գործը, երկերի վերլուծութիւնը՝ իր սե- սակեալից ըմբռնված և միանգամայն ինքնատիպ գնահատում- ներով: Այստեղ էստեն մի ներքին ձգտումով միաձուլվում էր գիմանկարչի ներկայացրած կենսագրական պատմութիւնին, որից և գիմանկարային պատկերավորումը ձեռք էր բերում խոր և բազմակողմանի բնույթ: Գրողն ինքն իր մարդկային և ստեղծագործական խորքով այստեղ գրանորվում էր որպէս պատմական յուրահատուկ միջավայրով ու դարաշրջանի դրա- կան մշակութային կյանքով պայմանավորված արդյունք՝:

Այլ էր արեւմտահայ իրականութեան մեջ ժանրի սկզբուն- քային իրացումը:

Գրական գիմանկարն այստեղ, ի տարբերութիւն եվրո- պական դասական գիմանկարիչների կիրառած սկզբունք- ների, չունէր նման լայն ընդգրկում, այն չէր արտացոլում գրական երկերի մանրագին վերլուծութիւններ, դրական- պատմական իրողութիւնների խորահմուտ ուսումնասիրու- թիւններ: Դեմքն այստեղ պատկերվում էր բավական սեղմ, բայց տպավորիչ բնութագրումներով. գրողի կամ հասարա- կական գործչի կյանքի ուզուկ զուգընթաց ներկայացվում էր միջավայրը, գրական միջոցառումը, արվում գիմանկարի դրա- կան կամ հասարակական գործունեութեան դնահատականը, որը ենթադրում էր յուրահատուկ մտեցում և ինքնուրույն արժեքավորում:

Գրական գիմանկարը արեւմտահայ գրականութեան մեջ զարգացավ հիմնականում երկու ուղղութիւններով՝ գրական- քննադատական և հուշագրային-կենսագրական: Արեւմտահայ գրողներից Տ. Կամսարականի, Գ. Զոհրապի, Ա. Զապոյանի, Ա. Հարութիւնյանի գիմանկարային քննադանները ընդունված է գիտել իբրև գրաքննադատութիւն և ոչ հրապարակախո- սութիւն կամ գրականութեան պատմութեան բաղկացուցիչ մաս կազմող հետադատութիւն՝:

Խնդիրն այն է, որ այս գրողների ստեղծած գիմանկար- ների հիմնական բովանդակութիւնը ուղղվում էր սեպուխ- տական գրականութեան հիմնավորման պահանջներին կամ ծառայում գրականութեան ու լեզվի ժողովրդականացման նպատակներին: Սա թերեւս արեւմտահայ նորաստեղծ քննա- դատութեան համար մի կարևոր աստիճան էր, ժամանակի գրական-գեղարվեստական հայացքների քննութեան տեսակե- տից, որը թեև հաճախ անտեսում էր ժանրի առանձնահատ- կութիւնները, բայց սրուշակիացնում էր նրա բնույթը:

Զոհրապի «Ծանոթ դեմքեր» շարքում նշված հարցա- դրումների գաղափարական իրացումը ասարվում էր արվեստի մեծ վարպետութեամբ. ստեղծվում էր անհատի գրական- գեղարվեստական գիմանկարը: Արպես առանձնահատկութիւն, նրա կողմից ուսումնասիրվող անձինք, գիմանկարային պատ- կերի ձևավորման տեսակետից, ամբողջական են՝ կերպա- բուն քննականը, բնորոշը, առանձնահատուկը և տիպականը ճկուն միահյուսմամբ տալու ասումով:

Զոհրապի սեղմ ու պարզ սծը, գիմանկարի էութեան վստահ ըմբռնումը ու նրա մեջ թափանցելու ուժը և այս ամենը փոքրագիր ծավալում ներկայացնելու նրա հմտու- թիւնը, չափազանց առանձնահատուկ են դարձնում նրա գի- մանկարների գրական հմայքը:

«Ծանոթ դեմքեր» շարքում գիմանկարի ժանրի հատուտ- ման միտումները դրսևորում էին էպիկական սեղմութիւն, գեղարվեստական միջոցների խտացում և դրողի դեմքը երգի- ծական ուժով բացահայտելու հմտութիւն: Ժամանակակիցի մասին ունեցած իր ճշգրիտ տպավորութիւնները Զոհրապը օգտագործում էր մեծ վարպետութեամբ, խորապէս թափան- ցելով գրողի էութեան մեջ, խոսքի զարմանալի հակիրճու- թեամբ կենդանադրելով ժամանակի գրական-հասարակական կյանքի մի շարք իրողութիւններ: Այս իմաստով, մեծ նո- վելիստի գիմանկարները յուրօրինակ են իրենց էութեամբ և ձևով, ու հեռավոր նմանութիւն են գտնում Հ. Պարոնյանի աղղային «հերոսների» հետ: Սա ավելի շուտ մի գեղանկար- չական պատկեր է, որի ներքին ուժը և ինքնատիպութիւնը

1 Сент-Бев, Литературные портреты, М., 1970, 582 с.

2 Մ. Հյուսյան, Գրիգոր Զոհրապ, Երևան, 1957, էջ 273, Հ. Մարգար- յան, Տիգրան Կամսարական, Երևան, 1964, էջ 242:

թեև անցնում է սուրբյեկտիվ օլտիմերի միջով, բայց, բոլոր դեպքերում հենվում է նյութին տիրապետելու, այն զարդացնելու և դեզարվեստորեն ձևավորելու բարձր կարողություն վրա:

Ի տարբերություն Չոհրապի, որը նախապատվություն էր տալիս դրողի քննաձևուր բնութագրությունը, Ա. Չոպանյանը և Ա. Հարությունյանը առաջադրում էին դիմանկարն իբրև քննադատական հետադասություն, որը միջավայրի գրական անցուղարձի, տիրապետող գրական, փելիստիայական, արևատեսագիտական նորմերի հետ գուզընթաց էր գիտում գրողի ստեղծագործական արտադրանքը և դրանով պայմանավորված բնույթը: Ծիշտ է, արևմտահայ այս խոչը քննադատների դիմանկարներում չկան կենցաղային պատկերներ, կյանքի առանձին մանրուքներ և դեպքեր, որոնք պարզաբանում են ներկայացվող դեմքի մարդկային անհատականությունը, բայց, մյուս կողմից, այնքան վերլուծական և հանդամանորին է բացահայտվում գրողի դրական-դեզարվեստական անհատականությունը, որ քննադատություն սահմաններում այն միակցվում է գրողի անձնական ու հասարակական կյանքի ամբողջականությունը: Բայց, այնուամենայնիվ, տեղին է նկատել, որ գրական-քննադատական դիմանկարը, դիմանկարի ժանրի ամբողջականության և առանձնահատկությունների տեսակետից, այսինքն ժանրային իր համադրական խորքով, միակողմանի է, քանի որ չի արտացոլում ավյալ գրողի մարդկային դեմքը, չի ստեղծում կերպար, որը ի վերջո, գրական դիմանկարի ամենազխտավոր խնդիրն է:

* * *

XX դարի առաջին քառորդում, նոր գրականություն ոչ միայն անցյալը իմաստավորվում էր: Ձևավորվում էր հայ գրականություն պատմագրությունը: Քննական-տեսական ակնարկներն ու գրախոսությունները պարզաբանում և վերլուծում էին գրականության առաջընթացի ուղիները, գրական ուղղությունների խնդիրները, գտնում կապը և կապակցությունները

գրական նախորդ շրջանի ավանդների հետ: Մյուս կողմից՝ գրական այն սերունդը, որին վիճակվել էր անցնել զարգացման այդ ճանապարհով և առնչվել նոր գրականության ստեղծած փաստերին՝ ստեղծում էր դիմանկարի հուշանկարային պատմաբան: Ժամանակների հերթափոխությունը, սոցիալ-պատմական իրադարձերը որոշակիացնում էին դիմանկարային ժանրի նպատակները և փոխում բնույթը:

Այս առումով, արևմտահայ դիմանկարիչների շարքում առանձնահատուկ տեղ է գրավում Ասատուրը:

80-ական թվականներից սկսած, Ասատուրը, պարբերական մամուլի էջերում հրատարակել է բազմաթիվ դիմանկարներ՝ նվիրված արևմտահայ ազգային գործիչներին և նշանավոր գրողներին:

Դեռևս 90-ական թվականներին, Ասատուրը խիստ անհրաժեշտ էր համարում վերակերտել դարակետի գրողների և հասարակական գործիչների գործուն պատկերը հայ կյանքի ու մշակույթի մեջ՝ դրողի մարդկային նկարագրի և դեզարվեստական հայացքների հետադուստման խնդրում մեծ տեղ հատկացնելով ժամանակի գրական միջավայրի ուսումնասիրությունը:

«Գրականները,— գրում է Ասատուրը,— անոնք որ ազդեցին ժողովուրդին վրա, Տերոյենց, Մխաբյան, Շահնազարյան, Զորայան, Օսյան, Պեչիկթաշյան, Հեքիմյան, Դուրյան, Պարոնյան, ինչ խանդակաթ հողածուխամբ պետք ունին ուսումնասիրվիլ: Ինչ լույս պիտի սփռեր անոնց կյանքին ու գործերուն քննությունը այն թվականներուն վրա, ուր ապրեցան, պատկերելով մեզ զիրենք շրջապատող իրերն ու անձերը, անոնց ազդեցությունն իրենց վրա, իրենց ալ ազդեցությունը անոնց վրա:

Հիմակվաններն ինչ գուրգուրանքով պետք էին հավաքել խելակներն այն հիշատակներուն, որոնք իրարու միանալով նորերը կանխող գրական դեմքերու գիծերը պիտի ճշդեն, պիտի վերլուծեն այդ ազնիվ ազդանդներուն հողերանությունը և անոնց գործունեություն խորհուրդը պիտի պարզեն մեզ: Այդ հիշատակներն հիմա կը ցանցառին հետզհետե,

քանզի կանհետանա տակալ-տակալ զանոնք պահպանող և ավանդող դրասեր ծերունիներու սերունդը և քանի մը տարիներ ալ ու ժամանակը պիտի թաղե խորասուզե զանոնք հավեա իրարու վրա բարզվոյ իր խավերուն տակ»¹ :

Մոսպոսի կորստից փրկելու այս մտահոգութիւնն էր հենց, որ Ասատուրին ստիպեց 80—90-ական թվականներին դրած իր փոքրիկ զիմանկարներն ամբողջացնելով և լրացնելով՝ հետագայում հրատարակել «Իմաստութենք» դիրքը (1921), ուր ներկայացված են XIX դարի երկրորդ կեսում ստեղծագործած տանկորս արեմտահայ գրողների և հասարակական գործիչների զիմանկարները: Գրանք են՝ Նիկողոս Չորայան, Հովհաննես Հիսարյան, Կարապետ Ութուճյան, Նահապետ Թուփնյան, Գրիգոր Օտյան, Ստեփան Ոսկան, Մամթես Մամուրյան, Գրիգոր Չիլինկիրյան, Սրբուհի Տյուսար, Հակոբ Պարոնյան, Եղիա Տեմիրձիպաշյան, Գրիգոր Չոչբապ, Տիգրան Կամսարական և Սիպիլ: Ասատուրյան զիմանկարում պլիսավորն այն է, որ զիմանկարիչը իր ուսումնասիրութեան կենտրոնը դարձնում է մարդկային անհատականութիւնը, նրա կյանքի ու դործի պատկերումը, որով և դրական ստեղծագործութիւնը, ինչպես նշում էր ուսու հայտնի զիմանկարիչը, չի գիտում այլևս իբրև հասարակական Փոնկիցիա, այլ հանդես է գալիս որպես որոշակի բնութագրի արդյունք²: Այս տեսակետից Ասատուրի մեթոդը, այսինքն կենսագրական մոտեցումը, ներառում է գրողի կամ գործչի կյանքի փաստական վավերագրումը՝ հոգեբանական վերլուծութեամբ և պատմական իրադրութեան բնութագրմամբ: Այսինքն հանդես է գալիս որպես ամենատարբեր ժանրերի ինքնատիպ մի շաղախ, վավերագրական արժանահամար տարեդիրք, ուր առկա են կենսողիւն ու հուշագիրք, և մասամբ քննադատ-գրականագետը: Ճիշտ է, այս մեթոդը մեղանշում է իր սուբյեկտիվութեամբ, բայց, երբ զիմանկարիչը խորապես հաշվի է առնում գրողի տեղն ու դերը իր ժամանակի դրական-

հասարակական մթնոլորտում, արդյունքը լինում է մեծ և նշանակալից: Ասատուր-զիմանկարչին հաջողում է դարաշրջանի ելևէջներում բացահայտել ներկայացվող դեմքի ստեղծագործական անհատականութիւնը՝ հիմնվելով ու տարածվելով անձնական հուշերի ու այն դեմքերի վրա, որոնք նա կարևոր է համարում: Բացի այդ, գրանք առավել տրժեքավոր են այն տեսակետից, որ պարունակում են անցյալի անհայտ փաստեր, գրողի կյանքի ու նրա շրջապատի մասին: Հենց այս կողմով էլ, Ասատուրի զիմաստութենքը տարբերվում են արեմտահայ մյուս զիմանկարիչների գործերից, որոնց մոտ նախապատվութիւնը արվում է գրողի ժառանգութեան քննադատական հետազոտութեանը:

Ասատուրի մոտ, զիմանկարում շեշտը դրվում է գրողի կամ հասարակական գործչի կյանքի գեղարվեստական շարադրանքի վրա: Սա, ավելի հուշանկարային կենսագրութիւն է: Բայց և միաժամանակ, հուշագրութիւնն է, քանի որ բացի գործչի կենսագրական պատկերներից ներառում է նաև գրողի գործի ու դերի հատկանշումները և տալիս դրական առանձին բնութագրումներ: Եվ, անշուշտ, հասարակական միջավայրի ներկայացումը, դրական խնդիրների շոշափումը և բազմաթիվ անհայտ փաստերի բացահայտումը՝ հուշագրային կենսագրութեանը հաղորդում են այնպիսի տրժեք, որ այն դադարում է լուկ կենսագրութիւն լինելուց և, դեղարվեստական կենսագրութիւն լինելով հանդերձ՝ բարձր է կանգնում կյանքի պարզ շարադրանքից: Միմիայն կենսագրական մոտեցումը քիչ է վերաստեղծելու գրական-անհատի ստեղծագործական ետը: Ասատուրի, որպես զիմանկարչի, ստեղծագործական առաջընթացը՝ 80-ական թվականներին դրած զիմանկարներից մինչև «Իմաստութենք», հաստատում է այն փաստը, որ զիմանկարիչը ավելի սերտորեն էր կապում գրողի կյանքը այն հասարակական հանդամանքների հետ, որոնց մեջ այն ներդրվել է կամ որով անցել:

Ասատուրի՝ վաղ շրջանում գրած զիմանկարները, 1910-ական թվականներին արդեն իբրև ատաղձ են ծառայում

1 «Մասիս», 1892, № 3971:

2 А. В. Луначарский, Критика и критики, М., 1938, с. 37.

Հեղինակին, երբ նա փորձում էր այդ զեմքերը ներկայացնել «Դիմաստվերները» մեջ: Այստեղ արդեն դիմանկարի կյանքի և գործի ուրվագծային պատկերումը փոխարինվում է գրողի անհատական և դրական բնորոշ կողմերի բացահայտմամբ:

Եվ այն հանգամանքը, որ Ասատուրի կերտած դիմանկարները կրում են իրենց մեջ դրական-հասարակական առնչություններ, ժամանակաշրջանի ոգին ու տիրապետող միտումները, մեզ իրավունք է տալիս «Դիմաստվերները» ներկայացնել դրականության պատմության ոլորտներում և ոչ թե գրական քննադատության կամ պատմության շրջանակներում, թեև, նույնիսկ վերջինիս համար աշխատությունը անփոխարինելի ատաղձներ է հայթայթում: Գրական այն մեթոդը, որին դիմել է Ասատուրը, յուրահատուկ է, և այդ է պատճառը, որ «Դիմաստվերները», որքան էլ դիտանք այն գրականության պատմագրության ոլորտներում, այնուամենայնիվ, բացառում է գրականության պատմության տեսակետից պահանջվող նորմերի առկայությունը, այն է՝ պարբերացման դիտականություն, գրականության դարգացման օրինաչափությունների բացահայտում, գրական ուղղությունների ու գաղափարական հոսանքների գնահատություն և գեղարվեստական երկերի վերլուծություն: Բայց և այնպես, իր ուրույն ձևով ու բովանդակությամբ՝ ազալորություն թե մանրավեպ, հուշագրություն թե դրական իրողությունների գրություն, «Դիմաստվերները» մի անփոխարինելի գործ է և հավասարի աղբյուր մեր գրականության պատմության համար:

Աշխատությունն ունի առաջաբան, որտեղ Ասատուրը մեր հին և միջին դարերի գրականության քննական սեղմ վերլուծությունը կատարում է աշխարհաբարի սկզբնախորման և տարածման տեսանկյունից: Վ դար, ռամկերեն հատուկ բառեր և առանձին արտահայտություններ միայն: Թախք XII դար՝ հայ գրականության վերածնության շրջան, Ներսես Շնորհալի և Մխիթար Հերացի, որոնց թողած գրական և դիտական արժեքները, ինչպես գտնում է Ասատուրը, ժամանա-

կին օգտագործվող խոսակցական լեզվի գրավոր առաջին մշակումներն էին:

XII—XVIII դդ. թվարկվում են ռամկերեն դրող բանաստեղծները՝ Կոստանդին Երզնկացի, Խաչատուր Կեչառեցի, Առաքել Սյունեցի, Մկրտիչ Նաղաշ, Հովհաննես Քլիուրանցի, Գրիգորիս Աթթամարցի և Նահապետ Քուչակ:

Ասատուրն այստեղ նշում է քերթողների ինչպես լեզվի, այնպես էլ բովանդակության աշխարհիկությունը: Չեն անտեսված նաև արձակի բնագավառում ռամկերեն մատենագրող Վարդան Այգեկցու առակները, Ամիրդովլաթ Ամասիացու բժշկական աշխատությունները, Հովհաննես Հովվի գործը և ուրիշներ:

XVIII դարից սկսած Ասատուրի ուսումնասիրության շրջանակները սեղմվում են, ընդգրկելով միայն արևմտահայ հատվածը, հատկապես պոլսահայ միջնադարը: Եվզովիացի Ավետիք պատրիարքի տաղերը, արձակագիր և տաղասաց Գալուստ Կալձակ պատրիարքի մատյանները, Պաղտասար Գոլիբ, իր օրերի Պոլսի դլխավոր հայագետն ու ուսուցիչը՝ Պետրոս Ղափանցի, Մխիթար Աբբա և ուրիշներ: Ասատուրը հիշում է նաև այն քերականներին, որոնք աշխարհաբարի աստիճանական յուրացման խթաններ դարձան: Սրանց հետևեցին XIX դարի առաջին տարիների աշխարհաբարի մշակները, դլխավորապես Մխիթարյանները, որոնք, ինչպես նկատում է Ասատուրը, կանոնավորեցին, դասեցին, և կուկեցին նոր հայերենը:

Մխիթարյանների հրատարակած գրականության ազգացությունն էր ոչ հեռավոր Պոլսի վրա, ուր դարդացավ պոլսահայ լեզուն և ստալ բերեց գրական շարժում, որն ըստ Ասատուրի սկզբից XIX դարի առաջին ջատորդից հետո: Գրականության պատմաբանը չէր անտեսում նաև նորաստեղծ պոլսահայ մամուլի դերը, որը դարի երկրորդ կեսից արդեն մեծ լուծա էր ներդրում աշխարհաբարի յուրացման գործում:

Ամբողջ հայ գրականության ստեղծումն ու դարդացումը դիտելով որպես աշխարհաբար լեզվի բնձեռած հնարավորությունների արդյունք ու հետևանք, և գրականության պատմու-

թյունը, մինչև XIX դարի կեսերը, դիտելով միայն այդ տեսանկյունով, Ասատուրը հաշվի չի նստում դարերի ընթացքում աշխարհարարի կողքին ստեղծված դրաբար արժեքների հետ: Այս տեսակետից էլ նա միայն աշխարհարար լեզվով ստեղծված գրական արտադրանքն է վերաքննում և դիտում իրրև անհրաժեշտ սկիզբ XIX դարի երկրորդ կեսին առաջացած գրական շարժման համար:

Աշխարհարարի տեսանկյունից հայ գրականության դարպասման առանձին պատմաշրջանների թեկուզ և համառոտ վերանայումը, հատկապես, այսպես կոչված գրականության պատմության ձեռնարկի ներածականում ներդրվող դրույթների իմաստով, թերևս ոչ գիտական է: Բայց, կարևորն այստեղ ոչ թե գրականության պատմության այս թուուցիկ պատկերումն է իր ընտրած դիտակետից, սրբ մասնում է հեղինակի ինչ-ինչ գրական նախասիրությունները, այլ դեմքերի այն շարքը, ուր նա ներկայացնում է արևմտահայ մի շարք հրապարակախոսների ու գրողների կյանքի ու գործի միահյուսված գեղարվեստական պատումը, որոնք դործել են XIX դարի երկրորդ կեսից մինչև XX դարի առաջին քառորդն ընդգրկող ժամանակաշրջանում:

Աշխատության ներածականում նա պարզում է գրականության պատմադրի իր սկզբունքները՝ ուսումնասիրվող դեմքի վերաբերյալ. այն է՝ «ճշմարիտ ու անփոփոխ ծառայություններ» նրանց կյանքի և գործի մասին, մանրամասն, հիշողություններ, տպավորություններ: Ասատուրը նպատակ չի ունեցել մանրամասն պատմել այդ հեղինակների կյանքը, ոչ էլ հանդես դալ քննադատի ու վերլուծողի դերում, այլ պարզապես բնորոշել մարդ-անհատին՝ իր էական կողմերով ու սրպես դրադետի ունեցած իր առանձնահատկություններով: «Իմաստվերները» ընդգրկում է կեսդարյա մի կյանք, գրական երեք սերունդների գործունեության մի ժամանակաշրջան՝ զարթոնքի և վերածնության ձգտումներով, ազգային սոմանտիկ հույսերի ու պատրանքների փյուզմամբ ու նոր, սեպտիստական աշխարհընկալման հաստատումով: Աշխատությունը չի սահմանում որևէ պարբերացում: Ըստ

էության, հեղինակը գրանից խուսափել է ոչ թե նրա համար, որ ուսումնասիրվող հիսնամյակում անտեսել է դրական երեք շրջանների հերթափոխությունը, կամ ավելորդ է համարել գրականության պատմության մեջ ընդունված ավանդական սկզբունքներն ու կարգը, այլ այն պարզ պատճառով, որ դիմանկարային ժանրի առանձնահատկությունը գրական մեթոդորտի քննության առանձին տարրերը տարբարվածում էր կոնկրետ դեմքի մեջ և վայելուչ հեռավորության մեջ պահում դիմանկարի ժանրը գրականության պատմությունից, թեև, այնուամենայնիվ, դրապատմական իրողությունների դրառումը դիմանկարներից յուրաքանչյուրում ոչ միայն ամբողջացնում է դեմքը տարբեր կողմերից, այլև, գեղագիտական յուրահատուկ մոտեցումով, գեղարվեստական ու պատմական արժեք է հաղորդում դործին: Անշուշտ, միջավայրի և դրական անցուղարձի շոշափումն արվում է գրականության պատմարանի մեծագույն զուշույթյամբ, գրականության զարգացման ընդհանուր պծերի և գլխավոր օրինաչափության պահպանման ձգտումով: Հենց այս առումով է, որ զոհրապյան գեղակերտ դիմաքանդակները տեղի են տալիս Ասատուրի պատկերած դիմաստվերներին: Մեկը շահում է ի հաշիվ գեղագիտականի, մյուսը՝ պատմականի:

Անձնական ծանոթության և տպավորությունների վրա է հիմնվում Գ. Օսյանի դիմաստվերը: 80-ական թվականների սկզբներին, Ասատուրը դանվում էր Փարիզում և բարեկամական մոտ հարաբերությունների մեջ էր այնտեղ բնակվող Օսյանի հետ: Բուլոնյան անտառի դիմաց գտնվող կանաչազարդ առանձնատունը, ուր վարձակալ էր ազգային այդ գործիչը մի քանի ուրիշ օտարականների հետ մեկտեղ, Ասատուրը ներկայացնում է հատուկ մեծարանքով՝ մեծարանք, որը բացատրվում էր արևմտահայ մտավորական շրջաններում 60-ական թվականների ազգային այդ գործչի ունեցած մեծ ազդեցությամբ: Դիմանկարիչը մտտիկից ներկայացնում է Օսյանի կենցաղն ու քնավորությունը, նկարագրում նրան շրջապատող անձանց, իրերը: Օսյանը հե-

տաքըքրվում էր քաղաքական կյանքով, մասնակցում Ֆրանսիայի խորհրդարանի նիստերին: Նրան ծանոթ անձնավորութիւններ էին Ֆրանսիայի մեծ քաղաքադեմոստրացիոնները, Գամբետտան, Ժյուլ Միմոնը և ուրիշներ: Հետաքրքրութեան շրջանակների նկարագրումը հաճախ է ընդմիջվում հեղինակային բնութագրումներով. «Օտյան այն մարդերն էր, որոնք անհուն մեծարանքի հետ կազդեն նաև անհուն համակրանք: Անհնար էր մտերմանալ իրեն հետ, առանց ներշնչելու իր անեղբ քարութենին: Անդրդվելի էր իր համոզմանց մեջ... ուներ տեսակ մը պերճախոսութեան, որ չէր դուրս, այլ կը հրապուրեր. գաղափարները պայծառ էին և որոշ: Լավ գիտեր ինչ որ պիտեր»¹:

Այսուամենայնիվ, հեղինակի ուշադրութեան կենտրոնը Օտյանի գրական և ազգային գործն էր, նրա գրական խառնուրդի ընդունակ կողմերի ընդգծումը: Օտյանի գրական ճաշակի, նախասիրութեանների մասին էր հուշում Ասատուրը, տալով նրա նախընտրած գրական կուռքերի՝ Լամարտինի, Հյուգոյի, Մյուսեի անունները, որոնց հակառակ կողմում նա տեսնում էր բնապաշտ Ջորային: Այստեղից էլ դիմանկարի հեղինակը բխեցնում էր Օտյանի գրական-դեկորատիվ մտադրութի հետևողական հաստատումը, որը նա պարզորեն շարադրում էր Լ. Հալեվիի «Արրա Քոնսթանթին» վեպի առաջարանում:

Գրականութեան պատմարանը դիմանկարում տեղ է հատկացնում նաև Օտյանի ունեցած դերին՝ պոլսահայ և ֆրանսահայ գրական կյանքում, նրա թարգմանական արվեստի հմտութեանը և հանդիմանորեն շարադրում 1850—80-ական թվականների ընթացքում կատարած նրա ազգային-հասարակական աշխատանքները՝ հատկապես Ազգային Մահադրութեան հաստատման տարիներին: Հավասարապես ներկայացվում է և՛ գրական մարզը, և՛ ազգային գործիչը: Եվ մանրամասների շղթայում ներկայացվող դիմանկարի կողքին նկատելի են դառնում Օտյանի ընկերակից անձինք՝

Նիկ. Պալյան, Գրիգոր Աղաթոն, Սաշատուր Պարտիզյան, Նահապետ Ռուսինյան և այլք:

Ընդհանրապես, նկատելի է, որ գրեթե բոլոր դիմանկարների հետ զուգահեռ ներկայացվում են բազմաթիվ դեմքեր, ժամանակի երկրորդական գործիչներ ու հեղինակներ, որոնք առնչվում են ուսումնասիրվողի հետ: Սա առանձնակի արժեք է հաղորդում աշխատութեանը և հարստացնում դիմաստվերը: Գաղափարակից բնկերների մանրամասն ծանոթացումը և միջավայրի բնորոշ հանդամանքների ներկայացումը, հնարավորութեան են տալիս մոտիկից ծանոթանալու ժամանակի գրական-հասարակական իրադրութեանը:

«Դիմաստվերներում» նույնիսկ կան դեմքեր, որոնց մասին առաջին անգամն է գրվում: Սուրբ վերաբերում է հատկապես զարակեսի արևմտահայ գրող-գործիչներին, որոնց մասին թեև խոսվել է հետագայում, բայց նկատի առնելով միայն նրանց գրական վաստակն ու գործը: Նրանց կյանքը, գործունեութեան պատմութեանը, շրջապատող միջավայրը, այնուամենայնիվ, անտեսվել է, մի բան, որ չէր կարող ինչ-որ չտիով չխանդարել այդ շրջանի պատմութեան լուսարանմանը:

40—50-ական թվականների գրական հասարակական իրադարձքին ծանոթանալու համար բավական է կարգու միայն «Նիկողոս Ջորայան» դյուլը, թեև այստեղ, ինչպես և Կ. Ռիսուճյանի դիմանկարում, հենց ժանրի կառուցվածքային սկզբունքի տեսակետից, կարևորութեան է ստանում այն իրատը, թե որքանով է դիմանկարիչը կարողանում կենտրոնական դարձնել կենդանադրվող դեմքը: Սրանից ելնելով էլ, հիշողութեանն են ու մանրամասնաբար, կոմունակի դեմքերն ու դեպքերը ծառայում են միմիայն դիմանկարի ամբողջացմանը, լրացմանը և դեմքի ավելի տպավորիչ բնորոշմանը: Ասատուրը հիմնականում պահպանում է ժանրային այս առանձնահատկութեանը և լրացնող նյութի ամբողջ պաշարը ծառայեցնում դիմանկարի խորութեան ու ներդաշնակութեան բացահայտմանը:

Նիկողոս Ջորայանի անձը, որի մասին խոսվել է միայն նրա հրատարակած մի քանի գրքուկների առիթներով, չէր

1 Հ. Ասատուր, Դիմաստվերներ, Պոլիս, 1921, էջ 76:

լինի այնքան կենդանի ու պարզ, նույնիսկ իր իսկ գործերի բմբուխն տեսակետից, եթե չլինեք «Իրմաստակերներում», այս համապատասխան դուրսը, որտեղ ամփոփվում են կյանքի մանրուքներ ու միջավայրի նկարագրություններ, մասամբ նաև գործի բնութագրություն, մի խոսքով արժեքներ, և ընդ որում, անխոխարիներ:

1844 թ. Չորայանը գնում է Փարիզ և մնում այնտեղ մինչև 1848 թվականը: Այդ թվականներից արդեն հայերը սկսում էին փոքրիկ շրջանակ կազմել եվրոպական այս ստալյունում. բժշկություն էին ուսանում Հարություն Պալյանը, Նահապետ Ռուսինյանը և արիշներ: Այստեղ էին նաև Ս. Ոսկանը, որը սկզբում աչակերտ, ապա ուսուցիչ է դառնում Անտոնիարը Փրանսիական վարժարանում, Մ. Մյուսնիսյանը, Ճանիկ Արամյանը, Նիկ. Պալյանը, Մատթեոս Մամուրյանը, Ստեփան էքզյանը... Իրմաստակերում ներկայացվող այս մանրամասները ի վերջո կարևոր են դառնում ոչ միայն այն տեսակետից, որ տեղեկություններ են տալիս առաջավոր եվրոպական մայրաքաղաքում հավաքված մի խումբ հայերի հետաքրքրությունների, նախասիրությունների, ինչպես նաև այստեղ կազմավորվող գրական կապերի շուրջ, այլև ներկայացվող անձանց վերաբերյալ հեղինակի հազարգած փաստերով, սրանց կապերի և գործունեության ողջ շղթայով: Ներկայացվում են գիմաստավերի հետ գործող անձինք, նրա մտերիմները՝ Սաչատուր Պարտիզյանը և Հարություն Պալյանը: Ասատուրը նշում է, որ Չորայանի հետաքրքրությունները ծավալվում էին տնտեսագիտական, իմաստասիրական և մանկավարժական մտքի ոլորտներում: «Ասոնց մեջ, — գրում է Ասատուրը, — կը գտնես լուրջ ընթերցումներով զարգացած միտք մը, ընկերարանական խնդիրներու ընտելացած արդեն, թարմ, առատ գաղափարներ, զորս դիտե գործնական սպիտակիրարկել ազգին պետքերուն»:

1848 թ. Չորայանը վերադառնում է Պոլիս և Մ. Կարապետի վարժարանում սկսում իր մանկավարժական գոր-

ծունեությունը: Մանկավարժի առաջին մտահոգությունն է դառնում պարզ և մատչելի աշխարհարար դասագրքերի պատրաստումը, որի առաջին փորձն է «Վարք Հիսուսի» դասագրքը:

Միջանկյալ շեղումը՝ «Վարք Հիսուսի» գրքի հրատարակության և արդելման կազմակերպումը, դարակետի հասարակական տեղաշարժերի և կրոնական դասի համոզումների քաղաքականությունն է ներկայացնում: Այստեղ բարձրանում է և՛ լեզվի խնդիրը, որը միսիոներական նպատակների հետ էր կապում հրատարակության թուլլովությունը, քանի որ բողոքականներն էին աշխարհաբար թարգմանել Ավետարանը, և՛ ժամանակի հետամնաց կրոնական ձգտումներն ու նախապաշարմունքները:

Անշուշտ, գիմանկարչի կողմից գրքի վերաբերյալ առաջացած այս ողջ քաջքուկի մանրամասն վերաբառությունը արվում է մի հատուկ նպատակով. մի կողմից՝ տիրապետող հետամնաց իրականությունն ու գաղափարական պայքարը, մյուս կողմից՝ այդ իրականության մեջ գործող Նիկ. Չորայանի հայացքների հակադրությունը բացահայտելու ներքին միտումով:

Չորայանը հրատարակարի անուն է վստահում «Հաստատան» շարժաթերթում լույս տեսած հոդվածներով: Ասատուրն այստեղ հարկ է համարում պատմել շարժաթերթի հիմնադրման և խմբագիրների մասին, սրանք էին Մկրտիչ Աղաթանը և Տերոյենցը: Վերջինս 40-ական թվականներին արդեն հայտնի էր որպես նշանավոր հայկաբան-մատենագետ: Եվ այստեղ արդեն, հեղինակային միջամտությունը բացահայտում է Տերոյենցի լեզվաբանական ու իմաստասիրական ծառայությունների ինչությունը՝ տեսնելով այս ամենի վրա «հետադեմ մտքի մը գործը»:

Տվյալ ժամանակահատվածի տեղաշարժերն ու ներքին միտումները տալու ձգտումը գիմաստակերում՝ տեղ է հատկացնում միջավայրում գործող նշանավոր մտքերին և, միևնույն ժամանակ, ինչ-որ չափով, քննադատական դիրքորոշում պարզում մարդկանց և ղեկավարի արամարանական ընթաց-

1 Նույն տեղում, էջ 6:

քին: Այս են հիմնավորում «Վարք Հիսուս»-ի հրատարակութեան և ապա գրքի բանադրման, արդիւման պատմութեանը, Տերոյննցի դերի և նրա ազգային ծառայութեան գնահատումները, որոնք, բոլոր դեպքերում, Հենկում են օրյեկտիվ պատմական ճանաչողութեան և ոչ սուբյեկտիվ մեկնաբանման վրա:

«Նոր ու օգտակար գաղափարներ չէր ջանար տարածել ժողովուրդին մեջ, — գրում է Հեղինակը, — այլ կորադեր բնազանցական կամ ծիսական խնդիրներով, կրօնական փոռն վեճերով, որոնք օգտաշատ ու զբաղանք միաբերու տաղտուկ կազմեին»: Աստուրը Հենց սա էլ պատճառ է դիտում, որ նրան, 1849 թ. հունվարին, գուրս են նետել «Հայաստանի» խմբագրական կազմից, որից հետո պարբերականը մնում է ժամանակի դարդադատ և խոհուն երիտասարդների ձեռքում, որոնք էին՝ Սերգիւզենը, Գ. Ալաթներ և Ն. Զորայանը: Մրանցից ամենատուչագրավը Նիկ. Զորայանն էր: Այստեղ էր, որ հրատարակվեց Զորայանի «Նկարագիր աղյալին դաստիարակութեան» հոդվածը, որը կրթական գործի սխտեմում փոփոխութեան էր առաջադրում. «Տեղեկութեանը տնտեսադիտութեան վրա» հոդվածաչարը հետադարձում ամփոփվեց առանձին հատորով: Օգտվելով Ֆրանսիական տնտեսագիտական մտքի դրոյթներից, Զորայանը տեղայնացնում էր շատ բան և Հենկելով այս ամենի վրա՝ նյութական ու բարոյական միջոցներ պարզում ազգի տնտեսական դարգացման հետևակարին: «Նկարագիր աղյալին դաստիարակութեան» հոդվածի Հեղինակը երևում է նաև Պոլսի ներսիսյան վարժարանում իր հաստատուն մանկավարժական դիտելիքներով, սղջամտութեամբ և ամենակարևորը՝ ժամանակի տեսակետից գնահատելի իր գործնական ոգով: «Վարժութեանը ընթերցանութեանը», որը եվրոպական նոր մեթոդների հետևողութեան էր, մեծ ընդունելութեան արժանացավ: Աստուրը Զորայանի ամենամեծ և ամենակարևոր արժանիքը համարում էր նրա խիստ ժամանակակից մտածողութեան սխտեմը, որը միմիայն գործնականութեան տեսակետից էր մոտենում թե՛ տնտեսական, և թե՛ մանկավարժական ու լեզվական խնդիր-

ներին: Հենց սրանից էր, որ նա դառնում էր ոչ թե եվրոպական ուսցիտնալ մտքի կրկնող՝ իր հետամտած բնագավառներում, այլ այդ տեսական դրոյթները յուրացնող մեկը: Զորայանը կարողանում էր քաղել իր կարգացած գրականութեանից այն, ինչը ամենից ավելի էր «պատշաճում — իր միջավայրին, իր ժամանակին և մանավանդ իր ցեղին...» — գրում է դիմանկարիչը: Աստուրը խիստ տեղին էր դիտում Զորայանի «Ընթերցասիրութեանը» (1852) գրքի առաջադրած դրոյթները: Դրանք հանձնարարում էին դիտական, պատմական ինչպես նաև բանաստեղծական երկերի ընթերցում, որ ընդլայնում էր մտահորիզոնը, և զգացմունքներ ու ճաշակ նրբացնում: Այս գրքի հատուցած հետաքրքրութեանը և մտքերի աշխուժացումն էլ ավեց մատենադարան և ընթերցարան հիմնելու գաղափարը: Կաղմվեց ընկերութեան, որի մեջ մտան ժամանակի ամենատաղադեմ մտածողները և որոնք դիմադրադրվեցին «լուսավորյալների» բանակին՝ պայքարի մեջ մտնելով «խավարյալների» գեմ՝ Տերոյննցից ստանալով «Դռնամիջյան հերետիկոսներ» անվանումը:

Դիմանկարի ընթացքն ու կողմնորոշումները ի մի է բերում ոչ միայն Զորայան-մանկավարժի ու հրատարակատելիյանքի ուղեղիծը, այլև կենսազբաղական մանրապատում դրրվադներով, լուսավորում է նրա բնութագիրը, հայեցողութեանը:

Զորայանը ընտանիքում, ընկերական միջավայրում, նրա կապը հայտնա Դյուլորիեյի հետ, հիվանդութեանը, մահը: Հեղինակը լուսանկարչական հմտութեամբ է պատկերում այս ամենը և ապա անցնում խառնված Ֆինալին: Պետք է նկատել, որ, արված ամեն մի փաստի, կամ դիմաստիկի կյանքի գեղարվեստական ամեն մի դրվագի ցուցադրման ստիժով, Աստուրը նշում է, թե ով է այն պատմել իրեն, կամ ինչ փաստաթուղթ է եղել իր ձեռքի տակ: Դիմանկարիչը չի ճանաչել Զորայանին և նրա մասին բոլոր ավյալները քաղել է ժամանակակից անձանց հիշողութեաններից: Այստեղ նա ամբողջութեամբ մեջ է բերում Մամուրյանի նամակը Զորայանի մասին՝ ընդունելով այն որպես ճանաչող մարդու կարծիք: Բայց, ըստ ամենայնի, Հեղինակը ներկայացնում է

մի բնութագիր, որն ամեն դեպքում հենվում է իր նուրբ ու լայնահասց դիտողականութան վրա և միաժամանակ պարզում հեղինակային իր հաստատ գիրքորոշումը: «Քեև Ջորայանը գեղապաշտ պրագեա մը չէ, — գրում է նա, — բայց իբր առաջ դադափար տարածող հրապարակագիր, իբր ընկերական դիտությունները ժողովրդականացնող, ավագ տեղ կը գրավի մեր հին և նոր գրողներուն մեջ: Իր լայն իմացականությունը տեսավ իսկայն ազգակիցներն ու կյանքին պետքերը և մտածեց այն միջոցներուն վրա, որոնք ամենն ավելի շատ երջանկություն պիտի տային իր ազգին»:

Աստուրը ներքին շունչ ու կյանք է տեսնում նրա դործերում, ուժեղ արամաբանություն, հասարակութայն հետամնացութայն դեմ ընդվզող իմաստասիրական դավանանք, որով նա ջանում էր մեր կյանքին տալու «ավելի օդաակար, ավելի ազնիվ, ավելի վեհ գործունեություն»:

«Դիմաստվերներում» ոչ գրական լայն կապերի մեջ դիտվող անձինք, որոնք ամփոփում են աշխատութայն հեղինակի ժամանակաշրջանի գրական փունջը, պատկերվում են մտերիմ և նեղ հանգամանքներում, որը խոր տպավորություն է դործում և դառնում ավելի անմոռաց: Հանգամանքն արժեքավորվում է հատկապես, երբ Աստուրը խոսում է այնպիսի գրողի մասին, ինչպիսին Եղիա Տեմիրճիպազյանն է: Մի գրող, որի հայացքների և սկզբունքների համակարգը միշտ եղել է խիստ ալյազան և տարափոփոխ, որից և գրականութայն պատմաբանները որոշ չափով անըմբռնելի և խորքում անճանաչ են դիտել նրան: Այստեղ արդեն կշիռ է ստանում նրա մարդկային հոգու ծալքերի վերհանումը՝ նրա կյանքի առանձին դրվագների ցուցադրումը, որը շատ բանով բացատրելի է դարձնում նրա բնութագրի տարօրինակ և մշուշոտ կողմերը: Աստուրը ներկայացնում է այս արտասովոր մարդու տատանումներն ու ցնորքները, խոր արամութայն մեջ պայծառատեսություն երջանիկ պահերը՝ հողեկան անմեկնելի խորխափումների հետ մեկտեղ: Տող առ տող նա



ԵՂԻԱ ՏԵՄԻՐՃԻՊԱԶՅԱՆ

1 Նույն տեղում, էջ 33:

բացահայտում է Տեմիրճիպաշյանին, հզոր ալիքի նման կանգ-
նեցնում նրան մեր առջև՝ իր հոգեկան ու ներքին բարոյական
կողմերով, դատաբուշելով նրա էության մեջ հավիտենականն՝
առօրյականից, լույսը՝ սավերից:

Դրախտային է պատկերը այն տան, ուր ծնվել է ման-
կություն է անցկացրել թախճոտ եղիան:

Հասցյուղի Ոսկեջուր կոչված վայրում, որը կոստանդ-
նուպոլսի հայության մասվոր զարգացման գլխավոր կենտ-
րոններից մեկն էր, հաստատված էր Տեմիրճիպաշյանների
պապենական օջախը, շրջապատված մի ընդարձակ ու փար-
թամ ալպիով, որտեղ և եղիան անցկացնում է իր մանկու-
թյունը՝ «բույրերու, աղոթքներու, երգերու և օրհնությանց
մեջ»: Եվ բնությանը մերձեցած, հասակ առնող ու քահանա
պապիկի ձեռքը բռնած ժամերգություն լսող թոռան այս ման-
կությունն էր, որ, ըստ դիմանկարչի, պատվաստեց զգա-
յուն ու «հարափոփոխ» եղիայի բնութագրերը: Այս է ենթա-
գրքում գիմանկարի պատկերային մուտքը՝ «զիվահար ոգուն»
մի տեսակ բացատրություն տալու ներքին ձգտումով:

Երազկոտ ու մենասեր, ախուր, ինքնամոփոփ է հիշում
Ասատուրը եղիային դեռևս մանուկ տարիներից, երբ Տեմիր-
ճիպաշյանների հետ մեկտեղ, 1869 թ., հանգստանում էին
Բրուսայի հանքային ջրերում:

«Ես կը խաղայի, մինչ անիկա քիչ մը հեռուն ծառի մը
տակ կը կարդար կամ կերպեր աչքերը սևեռած Պրուսայի
լայնածավալ դաշտերին ու դիմացի սաբերուն: Մենասեր
լսիկ, խորհրդավոր պատանի մըն էր: Մայրը կը խնդրեր
երբեմն որ ալ ձգե գիրքը, քիչ մը պտույտ ընե, բայց ինք
անշարժ կը մնար իր տեղը»:

Տեմիրճիպաշյանն ավարտում է Եաշնապարյան վարժա-
րանը և պաշտոնի կոչվում Բ. Դուռ: Բայց շատ չանցած,
նա մեկնում է Ֆրանսիա կատարելագործվելու:

1876 թ. վերադառնալով Պոլիս, Տեմիրճիպաշյանը որո-
շում է նվերվել գրական-մանկավարժական դործին: Եվ ահա,

այս առիթով, Ասատուրը բավական հանդամանորեն ներկայացնում է ժամանակի գրական-գեղարվեստական և հասարակական կյանքի պատկերը: «Այն տառնները, — գրում է նա, — Պոլսո հայոց մեջ գրական ու կրթական նոր ջանքեր կըլլային. Պերպերյան Գատրոյուզի մեջ կը հիմներ իր մասնավոր վարժարանը և Գուրգեն Օրթագյուզի մեջ հայկական կրթարանը: Արևելյան-Դպրոցասիրաց ընկերությունը, որուն ատենապետն էր Հովհաննես Թորոսյան, կսկսեր գործել լրջորեն և Արարատյան ընկերությունը կը կազմվեր Օրթագյուզի մեջ խումբ մը օրթագյուզի երիտասարդներու կողմէ, որոնց միացած էր նաև Մինաս Չերազ: ... Գալատական գրականություն մը կսկսեր բողբոջիլ: Սրբանձառանց կը հրատարակեր «Գրոց և բրոց», «Շուշան Շավարշանա», «Մանանա» գրքույկները, Տեր Սարգսյանց «Շահենն ի Սիպիլը»: Ուսումնական խորհուրդը ծրագիր կը պատրաստեր վարժարանաց մը հիմնելու և Ակադեմիա մը հաստատելու համար: Կրթական խնդիրը Աղզային ժողովի օրակարգը կանցնէր: Աղզային մասնակարգին կը հիմնվեր և կը կազմվեր ուսուցիչներու քննիչ հանձնաժողով մը...»¹:

Աշխարհարարի պաշտպանություն և հիմնավորման այս 10-ամյակում Տեմիրճիպաշյանը հանգես էր գալիս իրրե Մ. Չերազի «Ընտրողական աշխարհարարի» կողմնակից և գրում բազմաթիվ հոդվածներ, որոնք լիզվի պատճառով չէին հրատարակվում: Լեզվական այդ կանոնները, նկատում է Ասատուրը, բանանում էին Եղիայի «արվեստագետ ողուն վրա», «այդ աշխարհարարը, — գրում է նա, — կը փետրատե, կը ծայրատե իր թևերը, կը պրկե իր լեզուն և իր աղաս շունչը կարգիլէ»: Տեմիրճիպաշյանը շատով թոթափում է «իր արծվի հուլթև ճախրանքին արկելը» եղող այդ աշխարհարարը և, ներդաշնակության խորունկ զգացումով, «Աղատախոհյան» ծածկանվան տակ, հրատարակում փիլիսոփայական բառարանի «նախափորձը» և «փորձը»: Այստեղ արդեն ղիմանկարի հեղինակն անցնում է նվաճ գործերի

ընթացումներ, որտեղ «Աղատախոհյանը» ոչ միայն իրրե սկեպտիկ, այլև «անաստված» է ներկայանում հայ եկեղեցու դավաններին:

Գիմանկարում հիշվում են 80-ական թվականների Եղիայի հանդուզն ու հախուսն էյուլթները՝ ուղղված պատրիարք ներսես Վարժապետյանի դեմ: Համաստ բնութագրվում են «Մախո», «Գրական և իմաստասիրական շարժում», «Թերճիմանը էֆրիար» պարբերականներում հրատարակված նրա հոդվածները:

Ասատուրը, որպես սեպիստ մտածող, ղիմանկարի վերլուծություն մեջ դործադրում է օբյեկտիվ-պոստական չափանիշներ և բոլոր դեպքերում ղիմաստիքը դնահատում ըստ նրա իրական նշանակության: Տեմիրճիպաշյանի նրկատամբ Ասատուրի վերաբերմունքը եղել է առանձնահատուկ: Նրան համարել են փափոխամիտ, անսկզբունք և հակասական անձնավորություն: Բայց և այնպես, ժամանակի մտավորականները միշտ մեծ հուզմունքով են կարգացել նրա յուրաքանչյուր առար, լինի դա իմաստասիրական դարձ, քերթված, թե քաղաքատնտեսական հոդված: Մեծ հուսախաբություն պատճառող նրա էլիկեպիզմը պահանջում էր անհրաժեշտ խորագնություն՝ տարբերելու համար մի Եղիային մյուսից: «Գրական և իմաստասիրական շարժում» և «Երկրագունդ» հանդեսների մասին խոսելիս, ղիմանկարի հեղինակը հիանում է Տեմիրճիպաշյանի գեղագետ ողու գրսևորումներով, նրա ոճի ու մտքի նրբությունը, բայց և մի ներքին դաժնություն հիշում այն հատվածների մասին, «որոնց ընթերցումը ցավ կը պատճառե ղինքը սիրողին»: Տեմիրճիպաշյանի միաքն ունեցել է «անգիտակից» վերացումի «անպատասխանատու» ժամեր: Հենց այստեղ էլ չափի ու հույզի նրբին երանդների զգայնությունը, զաղափարի ու ղղացմունքի ներդաշնակ արտահայտչականերում ցուցաբերած նրա վարպետությունը, հերավի, մեծ կարողություն է, որն Ասատուրը ղիտում է սրգես «առողջ» Եղիայի տրամաբանություն և հուզական աշխարհից բխող արդյունք: Մինչդեռ նրա հայացքների ողջ հակասականությունը «ճոտում ու վերամբարձ

¹ Նույն տեղում, էջ 202:

ոճը», հարափոփոխ գաղափարներն ու հոռեակս մտքերը «հիվանդ» եղիայինն են: Պետք է կարողանալ վերցնել այն ամենը «ինչ որ առողջ եղիային կը պատկանի, վտարելով հիվանդ եղիայի մտածումները», — դրում է ղիմանկարիչը:

Տեմիրճիպաշյանի վաստակի ամենամեծ արժանիքներէն մեկը լեզունն է, որն Ասատուրը որակում է որպէս արեւմտահայ աշխարհարարի հրաշակերտներից մեկը, «աներկբայ՝ ձեռի և ոտի տեսակետով»:

Գեղարվեստական վերհուշի արտահայտչամիջոցը հոգեբանական բարձր անցումներով է ներկայացնում Տեմիրճիպաշյան-անհատին:

90-ական թվականները Ե. Տեմիրճիպաշյանի կյանքի վերջին ամենամանր տարիներն էին: Մար մահից հետո նա տպւում էր բոլորովին մենակ, Հասկուզում գտնվող մի ընդարձակ մենաստանում, անթիվ գրքերով շրջապատված: Ասատուրի վրա տարաբախտ գրողը թողնում է ջրխտոննության առաջին դարերից եկող սրբի տպավորութուն, որն իր ճշմարանի խորքը քաշված ազդեցում է: Տխուր ու մոռալ մըտքերի մեջ թաղված, նա հարմար է դանում այս առանձնատունը, որովհետև, ինչպես ինքն էր ասել, «գերեզմանատան ճամբուն վրա էր»: Մանր հիվանդությանը, անտեսական կարոտ պայմանները ջլախտավոր էին դարձրել նրան: «Տարտամբան մը կար իր ակնարկին մեջ, և խոսքերը անկապակից էին, — դրում է Ասատուրը 1891 թվականի դարնանը, Տեմիրճիպաշյանին կատարած մի այցելության ժամանակ, — Մեկ նյութեն մյուսը կանցներ, առանց զազափարներու զուգորդութան: Կը գանգատեր իր վիճակեն, իր դուզեն, իր ծանոթներեն, ամբողջ աշխարհեն: Զգացի որ նորեն հոգեկան հիվանդության տապնալ մը կանցնե: Նույն օրը Գատրդուղի ուրիշ բարեկամներու ալ այցելեցի, և մեծ եղով դարմանքս երբ լսեցի, թե անիկա Զատկի առաուն, հին հազուստներով, եկեղեցիի դուռը մուրացկաններու քով դացեր կեցեր էր անոնց պես, թիթեղի պնակ մը ձեռքին մեջ...»:

Գերդպալուն ու խոսվահույզ Տեմիրճիպաշյանի հակասականութունը սակայն չի խանգարել Ասատուրին՝ ճիշտ դնա-

հատելու նրա դրական վաստակը: Տեմիրճիպաշյանի բանաստեղծական խոսքը ունեւր և՛ քնարական խորք, և՛ զգացմունքային արտահայտչականութուն, իսկ ամենակարեւորը՝ անկեղծության հուղիչ շունչ: Սրանով էլ նա նվաճում էր սրտեր, իր անվան շուրջ ստեղծում հիացմունք, որ տարիներ շարունակ դրվատվում էր՝ ձուլվելով իմաստասեր եղիայի համայնագիտությանը:

Գեղագետի ուժեղ պոռթկումներն ու կրքերի հախուռն տարերքը զգեստավորված էին ներդաշնակ ու ինքնատիպ ոճով, որին հատուկ էր «հասակության, ճոխության, փափկության, շնորհ, ճաշակ...»: Ըստ ամենայնի, դրում էր Ասատուրը, յուրօրինակ դեմք է Տեմիրճիպաշյանը, ինքնատիպ նույնիսկ իր թերություններով: Չեի ու բովանդակության միանգամայն ուրույն հյուսվածքը, որը հենվում էր բառի, պատկերի կառուցվածքի իմաստավորման վրա, ունեւր ներդաշնակ միտանության, թեև որոշ գեղարվեստում այդ համադրունակ միտանության, թեև որոշ բովանդակության սրտակիթյունը ցուցարարում էր ձեռի և բովանդակության սրտակիթյունը: Ինքնատիպ ներդաշնակության ձգտումն էլ հենց Ասատուրը կապում էր Տեմիրճիպաշյանի քնարերգական էության, նրա բանաստեղծական վաստակի արժանիքներից: Եվ այս տեսակետից, Ասատուրը գտնում էր, որ Տեմիրճիպաշյանի արձակը քնարական է և հաճախ ավելի դրավիչ, քան իր չափածոն: «Եղիան հողիով բանաստեղծ է» և նա, ըստ ղիմանկարչի, ազդում է ոչ թե բանաստեղծական հանդույն և ուրիշով, այլ մի ներքին ներդաշնակ չափավորությամբ, որը միանգամայն «նոր էր» և լավ էր ընկալվում:

Հաճախ Տեմիրճիպաշյանը իմաստին անտարբեր, դեզագիտական կողմի վրա է բեկում իր սղ ուշադրությունը և հակառակ այն իրողության, որ արտահայտված գաղափարները քննադատվում են կամ մերժվում, նա նույնիսկ դոճ է մնում, երբ իր գրվածքը տպավորություն է դործում ձեռի կատարելությամբ:

Դիմանկարիչը Տեմիրճիպաշյանի հայացքների համակարգում չի ճանաչում որոշակի իմաստասիրական ուղղու-

թյուն: Նրա վրա մեծ ազդեցութիւն ունեին Ծոպենհաուսերը, Կոնաքը, Լիտրեն, Բյուրաները: Նա դիտեր Դարվինին, Մանտեքոյոյին, Սպենսերին, Բեկոնին, Դիդրոյին և շատ ուրիշներին, որոնք ազջ իմաստասիրական միտքն էին ամփոփում: Տեմիրճիպաշյանի հայացքների միևնույն համակարգում համատեղվում էին Կոնախի և Լիտրեի պոզիտիվիզմը, Կանտի ու Ծոպենհաուսերի իդեալիզմը: Եզիայի հարափոփոխ միտքը անկարող եղավ կառչելու որևէ սկզբունքի և մշտապես մնաց տարուբերումների մեջ՝ «մերթ հավատացյալ ու մերթ անհավատ»:¹ «Փրիշերաչըլիկի մը պես կանցներ կյանքին մեջէն, — գրում է Ասատուրը, — ղլիկիդր ու կորաքամակ, և անհասկանալի կը մնար տրամարոնող, դրամազաշտ այս ժամանակին մեջ՝ մարդոց ամենաստվար մեծամասնութիւնն»²:

Գիմանկարիչի համար միանդամայն պարզ էր, որ մարդու անհատական ինքնատիպութիւնը իր արտացոլումն է դանում նրա ստեղծագործութիւնի մեջ: Դրանից ելնելով էլ նա Տեմիրճիպաշյանի դիմաստվերում զուգահեռ է անցկացնում անձնականից՝ ստեղծագործականը և մի ներքին մտասեւեռութեամբ ծանրանում՝ Տեմիրճիպաշյան—մարդու առանձնահատկութիւնների և յուրօրինակութիւնի վրա:

«Իր դեմքին վրա հավիտենական սուղի մատնված էակի մը արտահայտութիւնը կար: Տխրութիւնը իր բույնը դրած էր հոն: Երբեք օր մը զվարթ տեսած չեմ գինքը: Իր դուրս ցցված ճակատը, իր թախծալից, խելացի աչուները, որոնք երբեմն երկինք կը նային հուսահատ, երբեմն գետին կը հռետին անհարիւր... Իր դաշկահար ու նիհար դեմքին կու տային մեյամաղձութիւն նուրբ քող մը որով պարուրված էր իր ազնվական հողին ալ: Կյանքին դեմ դառնացած էր թեև, բայց մարդոց հանդեպ փափկանկատ կը մնար: Իր եսով շատ կգրագեր, բայց կուզեր որ ուրիշները երջանիկ ըլլան և իրմէ վիտարանք չտեսնեն: Վեհանձն ու խոնարհ, ազնիվ ու պարկեշտ, թույլ, բայց ի հարկին կորովի էր...»³:

1 Նույն տեղում, էջ 216:

2 Նույն տեղում, էջ 214:

Ասատուրը հարագատի կսկիծով է պատմում Տեմիրճիպաշյանի կյանքի վերջին օրերի դժոխային մղձավանջի և հավիտենականին փարվելու նրա երազանքի մասին, որը, խորանալով, հուսահատութիւնի մի վերջին ջղաձգութեամբ կլանելու էր «... գերդաշուն արձակողիը քերթողը, հե՛ք Եդիան, տարաբախտ երգիչը Նիրվանային»:

Ասատուրի դիմաստվերներից յուրաքանչյուրում առկա է ավելի մարդ անհատը՝ բացահայտված իր ներքին կողմերով և բնորոշ դժերով, քան դրագետ ստեղծագործողը: Այս տեսակետից, ինչպես նկատվեց, շատ ավելի մտերմիկ և ողբեցիկ են Ասատուրի հուշերն ու ապավորութիւնները իր ժամանակակիցների դիմաստվերները կերտելիս, որտեղ նա գործ ունի իր անձին և էութեանը շատ մտա կանգնած անձանց հետ: Այստեղ, ինքը ևս գործող անձ է և իրազարձութիւնների հերոսի հետ միասին բնկնում է դիմանկարի հյուսվածքի ու բնթացքի մեջ: Ստեղծագործական ինքնատիպ մտահոգումներով, Ասատուրն իր ժամանակի, իր միջավայրի մեջ է և ձղտում է դիմաստվերի կյանքը վերձանել և մի բնուհանուր, բայց բնորոշ հայացքով կշտադատել:

Ընդհանրապես, հեղինակի դիմանկարների հուշադրական բնույթը թույլատրում է նրան պատմաբանի ճշտապահութեամբ ներկայացնելու գրական—հասարակական միջավայրը, ժամանակի ոգին, իրազրութիւնը: Գրական դիմանկարները, դրա հետ մեկտեղ, շատ բաներում պարզաբանում են հենց դիմանկարչի անհատականութեան ինքնատիպութիւնը, նախասիրութիւնները, գրականութեան և կյանքի նկատմամբ նրա ունեցած հայացքները:

Այս առումով առանձին արժեք է ստանում Ձահրապի կյանքին վերաբերող ամեն մի գրվապի ցուցադրումը, նրա զեղապաշտ ոգու ներկայացումը, նրան այնքան մտա կանդնած մի անձնավորութեան կողմից՝ ինչպիսին Ասատուրն է:

«Գրիդոր Ձահրապ» դիմանկարում Ասատուրը ներկայացնում է «Մասիսի» վերահրատարակման պատմութիւնը, երբ

1 Նույն տեղում, էջ 218:

1891 թ. Չոհրապը, Կաթարականը և Ասատուրը որոշեցին հրատարակել «Մասիսը», որի խմբագիրը պետք է լիներ Չոհրապը, իսկ տնօրենը՝ Ասատուրը: Հենց «Մասիսի» 2-րդ համարում Չոհրապը հանդես եկավ իր «Մանոթ դեմքեր» շարքով, որի առաջին դիմանկարը Բյուզանդ Քեչյանինն էր:

Դիմանկարի հեղինակը, Չոհրապը գրական-գեղարվեստական հայացքներին ծանոթացնելու նպատակով, ընդարձակ հավաքածներ է մեջբերում «Բյուզանդ Քեչյան» դիմանկարից: Երևում է Հանրաձայնոթ Չոհրապը, նրա գեղարվեստական պատկերների սրությունը, թափանցիկությունը, գունեղ ոճը:

Ասատուրը հիշեցնում է, որ «Մասիսում» հրատարակված «Անբարոյական գրականություն» հոդվածը նույնպես ուղղված էր Քեչյանի դեմ, որտեղ Չոհրապը ընդգիծաբար ունի նրան, առանց անունը տալու: Գրականությունը միայն իր նպատակով կարող է անբարոյական նկատվել, նշում է նույնիստը: Ֆրանսիական գրականության մեջ Ռարլեն իր «Կվարթախոն», հեշտասիրությամբ» երբեք անբարոյական հեղինակ չի համարվել: Ֆենելոնը իր «Տելիմաքով», Մոնտեսքյոն իր «Պարսկական նամակներով» անշուշտ անբարոյական ամբաստանվելուց չպիտի ազատվեն: Կամ Վոլտերը, Գիգրոն, Ժան Ժակ Ռուսոն... Չոհրապը նշում է նույնիսկ Սուրբ Գրքի «Երգ երգոցը» և Ութուճյանի թարգմանած «Գաղանիք հավատաքննությանը»: Եվ այս բոլորից հետո, երբ «Մասիսի» խմբագիրը այսքան ճարտար հմտությամբ պաշտպանում էր իր դատը, և որին կարծեք թե համաժխտ է նաև դիմանկարի հեղինակը, այնուամենայնիվ, Ասատուրի զգուշացող հայացքը նկատում է. «... բայց Քեչյան իրավունք ունի էպոխոս, երբ մեր միջավայրին համար սպաժամ ու փնասկար կը գտներ այդ տեսակ գրված քննություն հրատարակությունը մեր հանդեսներուն և թերթերուն մեջ»: Եվ հենց Ասատուրի այս վեհերոտությունն էր պատճառը, որ «Մասիսի» 4-րդ համարը քիչ մնաց վերջինը լիներ:



ԳՐԻԳՈՐ ԶՈՂՐԱԳ

Չոհրապը մեկնել էր Իզմիր և պատվիրել Ասատուրին այդ համարում հրատարակել Լ. Բաշալյանի «Երազամուր» նորավեպը: «Մասիսի» տնօրենին չի գրավում Ա. Միլվեստրի կամ Գ. Մենտեսի գործերն հիշեցնող այս երկը, ուր «հեշտազրդիտ անսիրտեր կը պատկերանան թափանցիկ, նուրբ քողի մը տակեն»: Եվ Ասատուրը նրբորեն մերժում է նորավեպը հրատարակել, պատճառաբանելով, որ օրաթերթի ունի նորատի ընթերցողներ և ընթերցողուհիներ: «Մասիս» 4-րդ համարը լույս է տեսնում առանց «Երազամուրի»: Մեկ օր հետո վերագտնալով Իզմիրից, Չոհրապը նամակ է գրում Ասատուրին և հրաժարվում օրաթերթի խմբագրապետի պաշտոնից:

Մեծ նովելիստի կարողությունն ու ուժը հենվում էր գրական առաջավոր համոզումների և գրական կայուն դավանանքի վրա: Եվ այս տեսակետից Չոհրապը չէր կարող հանդուրժել տնօրենի գրուչացող մտնրագննությունը և համակերպվել նրա առաջադրած ուղղությանը: «Ինձի համար անհրաժեշտ է իմ քաջվելս, — գրում է նա, — հա՛րկ է ըսել թե ինչու. գրական խղճմտանք մը ունիմ սրուն ամեն վայրկյան հոշտովելուն չեմ կրնար անտարբեր հանդիսատեսը մնալ թերթի մը մեջ որ ինձ պատկանելու երևույթը ունի:

Արդեն երբեք ներդաշնակությունը մեր խմբագրական դործին մեջ չգտնվեցավ... «Երազամուր» արտաքսվելուն հետ ընական է, որ արտաքսվի անոր գովանողը: ... Կաղաչեմ որ հաջորդ թերթին մեջ իմ անունս սրբես «Մասիսեն»¹:

ՅՈ՛ական թվականներին արդեն Չոհրապն այն անհատականություն էր, որն ուներ մշակված համոզումների հիմնավոր համակարգ: Կայուն էր այն աշխարհայացքը, որի դիտակետից նա պատասխանում էր համագրչային հարցերին: Ասատուրի համար այս առավել քան ըմբռնելի էր, քանի որ խմբագրական համատեղ գործակցությունը ավելի էր շեշտում թե՛ մեկի անկաշիանց հայեցությունը, և թե՛ մյուսի կանոնիկ միտքը: Իրազրությունը, սակայն, ազդային-մշակութային

¹ Նույն տեղում, էջ 228:

կյանքի նկատմամբ գրեթե միևնույն նորատակներն ունեցող այս անձանց ձգտումները խաչաձևում էր մի ներքին հավասարակշռությամբ, որը դործակցելու ջանք և միության համերաշխություն էր ստեղծում: Այս էր պատճառը, որ 1892-ին ընդհատված գործակցությունը շարունակվում է 1898-ին, նույն «Մասիս» միջոցով:

Դիմանկարիչը հարկ է համարում բավական մանրամասնորեն անդրադառնալ Ձոհրապի այս շրջանի գրական-հրատարակատեսական գործունեությունը՝ նրա կատարած ջրբանաջան խմբագրական աշխատանքին:

Նա նույնիսկ նշում է այն հոգիավածներն ու նյութերը, որոնք հավանություն էին դնում Ձոհրապի կողմից հրատարակվելու՝ Հ. Մրմրանի «Ս. Միսաքյան» ուսումնասիրությունը, Չ. Յուսուֆյանի հոգիավածները, Հ. Յուսուֆյանի «Արա» ծածկանունով հրատարակված քրոնիկները, Տ. Աամսարականի հոգիավածները «Նեո» ծածկանունով, Հ. Գուրգենի քրոնիկները և այլն: Առանձին-առանձին խոսվում է հոգիավածագիրներից յուրաքանչյուրի մասին և բացի այդ՝ ներկայացվում Ձոհրապի «Մանոթ դեմքերում» զծագրված տեսքով: Հակառ Գուրգենը, որը Ձոհրապի համանուն դիմանկարներում պատկերված էր որպես «ազատ համարձակ հեռադեմ մը, որ կոնակը մեզ դարձուցած կը քալե իր նղատակին, դեպի հինգերորդ դարը», զգալի չափով մտեցել էր նորերին՝ համոզվելով մեկընդմիջ, որ աշխարհաբարի զարգացումը հարթում է միանգամայն հաստատուն ուղի և հնարավոր չէ ժամանակի գործնական պահանջը շիրագործել: ԳՈ-ական թվականների վերջերին արդեն Հ. Գուրգենի հնորյա, ընդվզող մտքերը փոխվել էին, և նա անցել էր հողթանակած լեզվի կողմը:

«Հալկաթան Գուրգենի» դիմանկարի շարունակումը «Մանոթ դեմքերից» դուրս, Ասատուրը ներկայացնում է թեև ոչ արամբանական ճկուն փաստարկներով կամ զոհրապյան երգիծական տոնով, բայց և պատմական մի անգին էքսկուրսով՝ լեզվապայքարի իրավիճակին վերաբերող փաստերով: Դիմանկարչի նմանօրինակ շեղումները թեև ճշույտ են դիմա-

տովերը, բայց և ազգային գրական մթնոլորտի ընդգրկմամբ, դարավերջի մշակութային անցուղարձի վերհանման իմաստով անգին են, մանավանդ, երբ այս ամենը ծառայում է դրուզի հայացքների որոշելիությանը: Երևում է Ձոհրապի և՛ լեզվական, և՛ գրական դավանանքը, և՛ նորերին դնահատելու նրա վերաբերմունքն ու ճաշակը: Գրիգոր Ձոհրապի դիմանկարում, ուր բնորոշվում է վերջինիս գործունյա ոգին ու հոյբ միտքը, Ասատուրի նկարչական արվեստը ի վերջո խառնում է նրա՝ որպես մարդու և գրույթի էություն մեջ ամենաբնորոշ և ամենացայտուն կողմը՝ «խանդավառ գեղապաշտի» դույները: Իրև գրույ և անահատականություն՝ Ձոհրապին ամենից ավելի բնորոշ է նրա բացառիկ ճաշակը: Նորավեպերում թերևս զգացվում է մեծ արվեստագետի գրապես գրիչը՝ ձևի և բովանդակության ինքնատիպ համաչափությունը ու խորությունը: Բայց, ինչը որ դիմանկարում առավել արժեքավոր է, այդ Ձոհրապի մարդկային խառնվածքի ներքին կողմերն են, որի մասին խոսք ունեն նրան մոտ կանգնած անձինք, որոնց ծանոթ էր Ձոհրապի ներսի ու գրսի կյանքը, դրա բովանդակությունն ու երանդները:

«Գրականության մեջ ինչպես ներքին կյանքի մեջ Ձոհրապ խանդավառ գեղապաշտ մըն էր: Երբ տեսներ սիրուն գեղոր մը, գեղարվեստական շենք մը, արվեստագետի նկար մը, չէր կրնար անտարբեր աչքերով անցնիլ անոնց առջև...» — դրում է Ասատուրը: Տան կահույքը և իրերի դասավորությունը նույնիսկ Ձոհրապի ճաշակի կնիքն էր կրում: «Իր ընդունելության սրահին կահերը նրբարվեստ ու ճոխ էին, և կը սիրեր փոխել զանոնք՝ նորաձևության հետևելով... Իր գեղորները, իր կաղամարը, իր գրիչը արժեքավոր առարկաներ էին հաճախ, որոնցմե կը սիրեր շրջապատվիլ: Ճաշի սպասները ճոխ էին և, իր սեղանին վրա համադամ խորտիկներու հետ, կը դանիլը ծաղիկներ ալ, դորս շատ կը սիրեր»:

Օղտադործելով դիմանկարային կենդանազման ձևերը և անհատականացնելով դրոզի ճաշակն ու վարքագծի բնորոշ կողմերը, Ասատուրը կանգ է առնում Ձոհրապ-ստեղծագործողի յուրօրինակ դժեքի բնութագրման վրա:

Դիմանկարիչը դանում էր, որ իրական կյանքն է Չոհրապի պատկերավորման նյութը, որով նա «արդիական շունչ» էր ներմուծում արևմտահայ գրականությանը՝ «անակնկալ բազմաառաջնությունով, հոգեբանական վերլուծումներով...»: Հասարակական տարրեր խավերի մեջ խորամուխ լինելու զոհ-բազան տարերքը կյանքը դարձրել էր «հերչնչարան» ու տվել իրականության ստույգ վավերագրեր, ժամանակի իրական շունչն արտահայտող սեպտիստական պատկերներ:

Իդուր չէր Ասատուրը շնչում Չոհրապի գրելակերպի պատկերավորությունն ու նրա ստեղծագործությունն ամենագլխավոր մյուս առանձնահատկությունը՝ հոգեբանական խորությունը: Այստեղ Չոհրապն ուներ իր կերպը, սրբ և նկատի ուներ դիմանկարի հեղինակը: Հերոսի վարքագծով կամ դործողություն ընթացքով նովելիստը վարդապետներն տալիս էր հոգեբանական այնպիսի խորություններ, որոնք տեսանելի էին դարձնում մարդուն ու նրա ներքին աշխարհը: Ստեղծագործական կարողություն էր այս, որը հենվում էր Չոհրապի, որպես հմուտ արվեստագետի, սենցամ ուժի վրա՝ հիմք ունենալով կյանքի ամենօրյա իրադարձերը, միջավայրի ու մտավոր կյանքի պայմանները: Ի վերջո, Ասատուրի համոզմամբ, Չոհրապին ներհատուկ գեղադիտական ճաշակից և կյանքի ու գրականության կապի խորամուխ ըմբռնումից էր բխում այն, որ նա դարձավ նորարար՝ գեղադիտական նոր ըմբռնումներով, սճով և գեղարվեստական նորաստիպ ձևերով:

Չարմանալի գործունյա էր Չոհրապը: Նա իր հողվածներն ու նորավեպերը գրում էր որտեղ պատահեր. տանը, խմբագրատանը, գրատնակում, որտեղ որ նրան հետապնդելիս լինեի «գրականության սատանան»: «Նրբ տունը աշխատեք, — գրում է Ասատուրը, — ընդհանրապես կը կրեի իր գիշերանոցը, բանվածքներով գիշերանոց մը, և ծաղկենկար կլիլակի մը ծխամորճը իր շրթունքին կպցուցած՝ անոր ծուխին նայելով կը սիրեր թօխ տալ իր բոցաթե և րեակայությունը»:

1 Նույն տեղում, էջ 244:

Չոհրապը հաճախ խմբագրատանն էր գրում մամուլին հանձնելիք նյութը և թերթ-թերթ տալով գրաշարին, տեղում սրբագրություններ էր կատարում: Յավոք, նա հնարավորություն չունեի ամբողջապես գրականությանը նվիրվելու: «Օրեր եղած են, — գրում է Ասատուրը, — որ գրապետը կը մոռնար թե ամեն բանն առաջ փաստարան մըն է. կը հետաձգեր աղբրագրի մը խմբագրությունը կամ իրավագիտական խորհրդակցություն մը, և ժամերով կողպացներ հաճախորդը լրագրի մը խոստացված դրվածքը ավարտելու համար»: Նա մամուլին էր հասցնում և՛ իրար հետևից հրատարակվող նովելներն ու հողվածները, և՛ վերաքննիչ ասյանի իր բաղմամբիվ դատախարությունները:

1893 թ., մի գիշեր, հրդեհը այրում, սչնչացնում է Գատը գյուղի իր տունը: Միչև լույս, անքուն և հուզված, Չոհրապը լուսաբացին տպարան էր եկել «Մասիսի» առաջնորդող գրելու և ներկայացել վերաքննիչ ասյանի գրասենյակին՝ աշխատելու:

Ասատուրը հետաքրքիր գրվածքներ է պատմում նաև մեծ նովելիստի կնոջ և երեխաների մասին:

1915 թ. մայիսին, երբ հետևում էին մուսուլման իրենց մտերմություն և համատեղ դործակցություն տարիները, Ասատուրը փողոցում հանդիպում է Չոհրապին և գրուցում նրա հետ: Չոհրապը տխուր էր, չունեի իր սովորական կորովը, իր «խորխա ձևերը», իր տիրական ձայնը: Մեծ աղետի վտանգը զգացող քաղաքագետը ցանկություն է հայտնում հրատարակել «Ազատամարտում» լույս տեսած իր «Եջեր ուղևորի մը օրագրեն» նոթերը, որտեղ նա «ներդրել էր իր կյանքի բոլոր իմաստասիրությունը»: Հիշում են անցյալը, ընկերներին և հրատեղտ տալով՝ սեղմում միմյանց ձեռք: «Նայեցա ետեվեն, — գրում է հեղինակը, — որքան տեղ որ աչքովս կրցա հետևել իրեն: Ջղուտ քայլերով ու արագ շարժումներով կը հեռանար: Վերջին անգամ էր որ կը տեսնեի դինքը»:

1 Նույն տեղում, էջ 245:

2 Նույն տեղում, էջ 250:

Ասատուր—դիմանկարչի արվեստում ներդաշնակորեն միա-
ձուլվում են գեղանկարչի և քննադատի լավագույն գործերը:

Թերևս դեմքի համադրական բնութագիրը չէր լինի ամ-
բողջական, եթե որպես կառուցվածքային ելակետ չընդուն-
վեր դիմանկարի արտաքին նկարադրությունը: Սա սնունդ
լրացուցիչ տարր է, որը, սակայն, դիմաստվերի սեղմված
կառուցվածքում որոշակի նշանակութուն ունի և աղերս՝ նրա
ներքին կողմերի հատկանշումների հետ: Սա, ըստ էության,
զառնում է ժանրի առանձնահատկություններից մեկը և
հիմնական տարբերությունը՝ քննադատական ու գրապատմա-
կան բնութագրումներից: «Ձարմացա տեսնելով այդ հին մար-
դը,— գրում է Ասատուրը Հրսարյանի մասին,— որ ժամա-
նակին հետ ընթացի էր, և հատարելապես նոր մըն էր հիմա,
թե՛ խորքի և թե՛ ձևի տեսակետով:

Աշխարհիկ մարզու մը բարեշուք երևույթը կար իր վրա-
հագուստը, խոսվածքը, նստվածքը, ուշադրավ վայելչու-
թյան մը ունեին, և տարիները չէին մարած գեւ հաճելի
երևալու իր տենչը:

Իր ճերմակ մազերը կը հակասեին իր երիտասարդի
ավյունին հետ և կորովը, որով կը պաշապաներ իր կարծիք-
ները, իր մաշած պատյանին տակեն ի հայտ կուղար էլիկ-
արական բարդի մը պես որ խարխուլ տան մը մեջեն լույս
կարձակե՞:

Ասատուրը հաճախ նկատում է դիմանկարի ներքին և
արտաքին հակադրությունը (Կամարական), կամ այդ եր-
կուսի ներդաշնակությունը (Չոհրապ):

Կամարականի մասին գրում է. «Լայն ճակատ մը որուն
վրա վրձնածև ամբարձիկ մաղերը իրենց մետաքսի փայ-
լունը կը տարածեին, թանձր ու թուխ հոնքեր, որոնք կստվե-
րեին իր խոշոր, աղվոր աչուները, սնդուսե լայնչի փողկապը
որ կիջներ կուրծքին վրա կը տարածվեր և որուն մեջեն աղա-
մանդե ասեղ մը կը փայլելեր լուսաշող... այս երի-
տասարդ գրագետին կուտային աշխարհիկ մարզու անստ-

1 Նույն տեղում, էջ 42—43:

դուտ երևույթ մը՝: Գրողի արտաքին նմանօրինակ ներկա-
յացումը հակադրվում է ներքին մարզու էությանը, որը ըստ
Ասատուրի «... սկեպտիկ մը, խստապահանջ մը, հոռետես
մը, և ահարկու հոպերան մըն էր»¹:

Գրականության պատմարանը ճիշտ դիտանկյունից է
նայում ներկայացվող դիմանկարի հայացքների հաշվեկշռում
ժամանակի գրական—հասարակական փոստերի ու երևույթ-
ների արտացոլման խնդրին: Մրանից էլենելով էլ դեմքերից
յուրաքանչյուրը միանգամայն սեղին բնութագրումներով է
հատկանշվում:

«Կարճահասակ, բայց, երկայնամիտ...» (Չոհրապ),
«լավ գիտեր ինչ որ դիտեր» (Օտյան), «մշակված ու խորհող
միտք մը, հզոր նկարագիր մը, զգայուն սիրտ մը...» (Տյու-
սար)...

Կ. Ութուճյանի «Մատիսի» խմբագրության վերաբերյալ նա
պրում է. «Հանրային խնդիրներու վրա երեսնամյա «Մատիս-
ներուն» մեջ շատ հազվագեպ են իր ինքնագիր առաջնորդո-
ղները, որոնք կորովի և ուժեղ աղի մը արձագանքը ըլլան-
ինք այլևի ազդված է Պատրիարքարանի շրջանակներուն մեջ
ազգեցիկ եզոզ գրական մարդերու կարծիքներեն, քան թե
ազգած է անոնց վրա, և չէ ուղած պարզել անանկ տեսու-
թյուններ, որոնք հեղաշրջին իր ժամանակին սովորարար
ընդունված բարձունքներն ու համոզումները»²:

Մտեցումն ինքնին բացահայտում է գրական դիմա-
նկարը, իրեն գրողի կամ հասարակական դորձչի նրա ունե-
ցած զազափարական ելակետերը և արժանիքների տեսա-
կետից դնում տեղի ու գերի որոշման խնդիրը:

Թոսելով Ն. Թուսինյանի տարածում շտապած և չժողո-
վրդականացած գրական ժառանգության մասին, Ասատուրը
նկատում է. «Ինք իր մեջ ամփոփված, իր մտքի կորովին վրա
վստահացած, իրեն հատուկ տեսություններ, մասնելու եղա-

1 Նույն տեղում, էջ 202:

2 Նույն տեղում:

3 Նույն տեղում, էջ 168:

նակներ ունեցած է թե՛ գիտության, թե՛ գրականության համար:

Ռուսինյանի հանցանքն էր չափազանց կապվել եվրոպական բմբուսամեղրու և օտար փորձառությանց արդյունքին: Օրենսգրքը իր միջավայրեն մանավանդ պետք է ներշնչվի և օտարեն առնե միայն այնքան, որքան անհրաժեշտ է:

Իբր գրապետ և հայ լեզվի աշխատավոր, Ռուսինյանն նույն կորովի, արամարանող, խորհրդածող, բայց նաև նույն անգործնական միտքը եղալ՝:

Ասատուրի «Իմաստվերներում», ուր առկա է հոգեբանի, փիլոզոֆի, պատմաբանի և նկարչի մանրագնին վերլուծության միախառնված շաղախը, այնքան էլ ընդարձակ տարածություն չի թողնվում ներկայացվող դեմքերի զեղարվեստական վաստակի քննության համար:

Մա արդեն գայիս է գրականության պատմաբանի՝ իր բնորած ուղղության առանձնահատկությունից:

Գրողի կամ հրատարակիչի կյանքի ու գործի հետ դուրընթացաբար ներկայացվող նրա գրական վաստակը այստեղ չի վերլուծվում. նշվում են միայն հիմնական պարագրաֆներն ու այդ վաստակի կարևորությունը: Ասատուրի, իբրև գիմանկարչի, արվեստը ի հայտ է գայիս որպես դիմաստվերի կյանքի ու գործի գեղարվեստական փաստագրման պրոցես, որի մեջ թեև գրական վերլուծությունը ձուլվում է գրողի կյանքի շարադրանքին, բայց և յուրահատուկ գույն է հաղորդում դեմքին, այնպես որ վերջինս հատկանշվում է որպես միմիայն գրական գիմանկար:

Եթե աշխատության մեջ առանձին ստեղծագործություններ կամ գրական-գեղարվեստական գործեր չեն վերլուծվում անհրաժեշտ խորությամբ, որն այս կարգի ուսումնասիրության մեջ խիստ տեղին է, ապա գրողին հետաքրքրող մշակույթի բոլոր ուղղությունները այստեղ ցուցադրվում են: Համատեսակի, ավելի զնահատման իմաստով, արվում են ոչ միայն գրական, պատմական կամ լեզվաբանական գործերը,

որոնք անմիջապես առնչվում են գրականության պատմության խնդիրներին, այլ ներկայացվում են նաև ոչ անմիջապես գրական կամ պատմական թեմաների շուրջ կատարվող ուսումնասիրությունները՝ ինչն էլ գրանք տեսես պիտական, փիլիսոփայական, ճարտասանական թե օրենսգրական: Գնահատելին այստեղ ոչ թե ընդգրկման լայնությունն է, այլ ամենատարբեր թեմաներին առնչվող խնդիրների բնական արծարծման ու արժեքավորման միտումը: Օրինակ. բնորոշելով Նիկ. Զորայանի տեսեսագիտական և կենցաղագիտական գործերը՝ Ասատուրը գրում է. «Ինք է որ առաջին անգամ գիտական ուղղությամբ ուսումնասիրած է մեր կենցաղին դանազան երևույթները, բնկերաբանական տեսակետով: ... Մանկավարժը, բարոյախոսը, տեսեսագետն է, որ կը ճանե իմաստասերի կորովով, հրապարակախոսի աշխուժով. ինչ թերի կողմ, որ ունի դասախարակությունը մեր մեջ, ինչ որ պետք է տարածելու համար կրթությունը, բնթերցատիրությունը, առևտուրը, արհեստը, ինչ որ կը պահանջե իր ազդակիցներուն նյութական ու բարոյական դարդացումը»:

Գրականության պատմաբանը զեղարվեստական արժեքավորման տեսանկյուն է դարձնում գրողի լեզվի, աշխարհայեցողության և ոճի խնդիրները: Այս տեսակետից, Ասատուրն ավելի հանդամանորեն է շոշափում աշխարհաբարի խնդիրը: Նա շատ ուշադիր և մանրագնին ներկայացնում է աշխարհաբարի պատմությունը վերաբերող փաստեր՝ սկսած 50-ական թվականների արևմտահայ առաջին գրող-գործիչներից:

Անշուշտ, արևմտահայերի կյանքում աշխարհաբարի խնդիրը՝ քննարկվող ժամանակաշրջանում ունեց հրատապ նշանակություն: Համազգային այս պայթյալում ունեցած մասնակցությունը չափով էլ Ասատուրը որոշում է գիմանկարի կտտարած դերը աշխարհաբարի կազմության հարցում:

Ասատուրը որոշակի նպատակաուղղվածությամբ է քննում գեղարվեստական ոճի հարցերը՝ չափանիշ ընդունելով «պատվելիական խրթնությունից» հետո գրելակերպը: Ըստ

նրա համարման, ոճը արտահայտում է ոչ միայն ձևի առանձնահատկություններն ու ներհատուկ կողմերը, այլև ամենապլևափորը՝ ստեղծագործությունից բովանդակությունը: Ներկայացվող գիժմանկարի ոճը Ասատուրը դիտում է ոչ միայն միջավայրի, ժամանակի տրամադրությունների բարդ հանդույցներում, այլև կախման մեջ է գնում հենց իրենից՝ ստեղծագործող կեղանկարից, նրա ներքին զգայական և կեղադրական խառնվածքից: «Ճիշտ հրեթիւ մըն է, — գրում է Ասատուրը Չոչբապի մասին, — իր ոճն ալ պատկերներուն մեջ հսկարտ, շատ անգամ հրապուրիչ, որ միշտ վեր կը նայի, որ ձգտումներ ունի, նազանքներ ալ, հմայքներ ալ, որոնք նույն իսկ իր սայթաբումներեն, իր աննպատակ ու անիմաստ ընթացքին արժանի են թերևս...»: Դիտելով ոճը որպես պիմաստվերի ներքին սակզմագործական ինքնություն արդյունք, որով բնորոշվում են ամեն մի գրական արտադրանքի առանձնահատկությունները, Ասատուրը ճիշտ անգամ է գտնում ոճի և աշխարհայեցողության կապը և մեկի կոխումը մյուսից: Գրականությունը պատմաբանը փորձում է գրողի զավանած աշխարհընկալումից բխեցնել նրա մնացած սկզբունքները (Տե՛միրճիպաշյան, Օտյան, Ռսկան և ուրիշներ):

Գիժմաստվերի շրջապատը ներկայացնող գրական-հասարակական երևույթների, նրա ժառանգության առանձին արժեքների համառոտ ուրվագծման ու գնահատման փորձերի կողքին շատ ուշադրավ է, և միտածանակ խիստ շահեկան դիժմանկարի խառնված վերջաբանը: Կես կամ մեկ էջի սահմաններում գրականությունը պատմաբանը անում է դիժմաստվերի վրա իր վերջին լուսարձակումը. սկզբունքներ, իրական-պատմական գործոնների ազդեցություն, այդ խնդրի վրա առաջացած միահյուսում՝ շրջապատի և ուսումնասիրվող դեմքի գաղափարների միջև, կամ կոնֆլիկտի նկատում: Այս ամենը, տնչուշա, կոնկրետացնում է կերպարը և դարձնում կուռ անհատականություն, որի բնորոշ առանձնահատկությունների վերհանումը կատարվում է նրբանկատորեն, իսկ ներկայացնելու տեսակերտից՝ մեծ արվեստով:

* * *

Հ. Ասատուրի «Գիժմաստվերներում», ամբողջապես, առաջին անգամ ներկայացվող կենսագրությունների (Ն. Չորայան, Կ. Ռեթուճյան, Մ. Նուպարյան և այլն) կողքին բազմաթիվ են նաև ավելի ժամանակի կենսագրական նորությունները, մանավանդ փաստական ճշգրտումները, հանգամանք, որ բարձրացնում է դործի վավերագրական արժեքը:

Ահա մի քանի բնորոշ օրինակներ:

Ստ. Ռսկանի անձը, նրա գաղափարներն ու որպես հրատարակարի ունեցած նկարագիրը, միշտ էլ պրավել են արևմտահայ գրականություն, բնդհանրապես հայ հասարակական մտքի մշակների ուշադրությունը: Ռուսումնասիրվել են նրա գաղափարախոսությունը, կրած ազդեցությունները, գրական-մանկավարժական գործը: Սակայն հրատարակողին ուսումնասիրողներին և ոչ մեկը չի տվել նրա կյանքն աչյակես հանդամանորեն, ինչպես Ասատուրը:

Անվանի գործչին տեսնում ենք մերթ փարիզյան ուսումնասիրության շրջանում, մերթ «Արևելք» և «Արևմուտք» պարբերականների հրատարակություն ետուն օրերին, մերթ իստանուկան իրագարձերի կենտրոնում, մերթ Իզմիրում՝ Մեսրոպյան վարժարանի տեսչության տարիներին, մերթ էլ «La Réforme»-ի հրատարակության հողսերի մեջ: Եվ այս ամենը՝ տարբերվելով, հասարակական միջավայրով, մանրավերջերով: Փաստերի այսպիսի լայն ընդգրկումն ինքնին դիտական ներգրում է՝ բոլորովին կամ դրեթե անհայտ ավյաների հայանարերումով:

Մ. Ռսկանի գործունեությունը գրողությունից ոչ ոք, օրինակ, էջը հիշատակում նրա ծննդյան տարեթիվը. հավանաբար դա կապված է եղել որոշ դժվարությունների հետ: Առաջինը Ասատուրն է շրջանառություն մեջ գնում 1825 թվականը, թեև որևէ փաստարկով չի հիմնավորում իր լուրյայն ընդունումը:

Այնուհետև. Ոսկանը, 1858 թվի հոկտեմբեր ամսին, թողնում է «Արևմուտքի» խմբագրությունը և մեկնում Սարգիսի և Տուրինում խմբագրում Փրանսերեն «L'Italie» լրագիրը, որտեղ հրատարակած իր հոդվածներով գրավում է Քափուրի ուշադրությունը: Այս պարբերականի մասին առաջինը Ասատուրն է հայտնում: Հավանաբար Ոսկանը այդ թերթը խմբագրել է մեկ տարի, կամ թերևս ավելի պակաս, որովհետև 1860-ական թվականների վերջերին նա դառնում է Քափուրի զավակների Փրանսերենի ուսուցիչը՝ միաժամանակ կատարելով քարտուղարի պարտականություններ: Ոսկանը, 1861 թ., Քափուրի մահից հետո, թողնում է Իտալիան և անցնում Փարիզ: Այս փաստն անշուշտ բաց է անում հրատարակախոսի գործունեությունն անհայտ մի շրջան, որը հնարավորություն է ընձեռում քննելու մինչև իտալական իրադարձերը և դրանից հետո, Ոսկանի հայացքների զարգացումը, դադափարներն ու նպատակը՝ քաղաքական այդ խառնակ տարիներին:

Մի այլ օրինակ:

Հայանի է, որ Եփրեմ Պոպոյանը, Հակոբ Աղասյանը և սովետահայ գրեթե բոլոր բանասերները Հ. Պարսյանի ծննդյան թվականն ընդունել և ընդունում են 1841 կամ 1842 թ. Ասատուրն ընդունում է 1843 թվականը (այդ թվականը հետագայում ընդունում են նաև Հ. Օշականը և այլք):

Ասատուրի այս ճշտումն արդեն հիմնված է ծանրակշիռ փաստերի վրա: Մեծ երգիծարանի մահից հետո նա պատրաստվում էր դրել նրա կենսագրությունը: Այդ նպատակով նա ավյալներ է հավաքում զրոզի հարազատներից ու մտերիմներից: Եվ ահա Ադրիանուպոլսից ստացված Մանասյանի նամակը պարզում է և՛ Պարսյանի ծննդյան թվականը, և՛ նրա հայրանունը: Անվանի բանաստեղծի հետագա պրպտումները հանդիպում են նոր հաջողության: Աղբիանուպոլսի

հայրական եկեղեցու մարգահամարի տոմարում նա բավական զգալիություններով կարողանում է ձեռք բերել Պարսյանի ծննդյան թվականը հավաստող արձանագրությունը:

Ասկայն բանասիրական բաղամթիվ հաջող ճշտումների կողքին Ասատուրը երբեմն ընդունված փաստերի նկատմամբ դրսևորել է մեծ վստահություն և առանց պրպտումների ու հետազոտության ներկայացրել աշխատություն մեջ:

Իայց հիմնականում աշխատություն մեջ իշխում է Ասատուր-բանասերի զրպատ և հետաքննող հայացքը՝ կենսագրական առանձին փաստերից ձգվելով դրական-պատմական ավելի ընդարձակ ոլորտները:

«Իմաստվերներ» ուսումնասիրությունը փափերական ազդյուր է նաև ծածկանուններ բացահայտելու իմաստով:

Սուլթանական պետություն վարած քաղաքականությունը փոքր ազգերի նկատմամբ ստիպում էր հայ մտավորականներին զիմելու քողածածկ պաշտպանական միջոցների, հատկապես 80-ական թվականներից հետո, երբ ստեղծվեց դրաքննություն և բույրովին արդեվեց իշխող դադափարախոսություն դեմ ուղղված խոսքը: Պատրիարքարանի համակերպվող և հետագեմ քաղաքականությունն էլ մյուս կողմից էր սղանում, ստիպելով արևմտահայ մշակներին ու աղջային զսրծիչներին թաքնվել ծածկանունների տակ: Այս երևույթը շարունակվեց նաև հետագա տասնամյակներում, դրական հաջող սերնդի կողմից, որովհետև հայահալված միտումը զնայով ուժեղանում էր: Ծածկանունների գործածությունը ոչ սակավ զեղչերում էլ պարպապես տուրք էր ծամանակի սոփորայթին: Այսպես թե տյնպես, ծածկանուններ օլտադործեցին արևմտահայ դրեթե բոլոր դրոյները, ընդ որում, հաճախ միևնույն անձնավորությունը ստորադրում էր մի քանի ծածկանուններով: Ժամանակի ընթացքում ավելի ու ավելի մեծանում էին այդ ծածկանուններից շատերի վերժաման զժվարությունները: Ահա այստեղ է, որ Ասատուրի «Իմաստվերներ» երբեմն անփոխարինելի ծառայություն է հատուցում բանասիրությանը: Օրինակ. պարզվում է, որ 1852 թ. «Մատիսի» էջերում հայտնված Օ. Բ. ստորագրու-

1 Այս մասին ավելի հանդամանքեն է խոսվում Հ. Պարսյանին վերաբերող հատվածում:

թյունը նրի. Չորսյանինն է («Պղնձական Բանասերի» ծածկանվան սկզբնատուներն են), որն այդ տարիներին աշխատակցում էր «Մասիսին» և ուր բացահայտվում են նրա իրրև անձի ու մասնագի ինքնատիպ գծերը: Կամ. եթե «Վրուլը» կամ «Շահնուր» ծածկանունները հանրահայտ էին և հուշում էին նրա հեղինակին, ապա, առաջին անգամ «Դիմաստվեներին» ենք իմանում, որ 1882 թ. «Մասիսում» «Վահրամ» ստորագրությամբ հրատարակված նամակաշարը, որը մեծ ոգևորություն և հիացմունք էր ներշնչել բնթեքցողներին, պատկանում է Գ. Օտյանի գրչին:

Առաջին անգամ Ասատուրն է հայտնում նաև, որ Ստ. Ոսկանի «Արևելքում» (1855) «Վահե», «Հրանտ» և «Հարմա» ստորագրությունները իր իսկ ծածկանուններն են: Կամ. արևմտահայ իրականության մեջ երգիծական բնույթի գործեր թվելիս, Ասատուրը հիշում է նաև Թ. Կրկրոնիկյանի «Ընդունելություն ընծայի» գրքուկը, տողատակում նշելով, որ Թ. Կրկրոնիկյան ծածկանվան տակ թաքնված են Ս. Մրսաքյանը և Ճ. Արամյանը:

Աշխատության մեջ բավական հարուստ տվյալներ կան Տ. Կամսարականի ծածկանունների վերաբերյալ: Ասատուրի հաղորդած փաստերը վերաբերում են միայն պոլսահայ մամուլում Կամսարականի օգտագործած ծածկանուններին, որոնք հինգն են. «Օվրիտե» են ստորագրված 1899 թ. «Արևելքում» հրատարակված նրա թատերական քրոնիկները, «Ասեղ և «Շողկերիչ»՝ 1891 թ. «Հայրենիքում» հրատարակված քրոնիկները:

«Գրիգոր Զոհրապ» դիմանկարում Ասատուրը հայտնում է, որ Տ. Կամսարականը եզրկատուում ապրած տարիներին

1 Այս մասին ավելի հանդամանորեն տե՛ս Հ. Մարգարյան, Տիգրան Կամսարական, Երևան, 1964, էջ 10—13:

2 Միայն «Մոլորակ» ծածկանունն է, որ առաջին անգամ հիշատակում է Ե. Արմենը իր կազմած «Հայ գրողների ծածկանունը» ցուցակում (Թեադիկ, Ամենուն տարեցույց, 1913, էջ 336), նախքան Հ. Ասատուրի «Դիմաստվեներին» հրատարակությունը:

«Մասիսի» խմբագրությունն է ուղարկում «Պղնձի տոմսեր» վերնագրով և «Նեա» ծածկանունով ստորագրված՝ «արվեստով և սրամտությամբ» զբված հոգվածները: Բայց այստեղ Ասատուրը մի փոքր սխալվում է: Ընդհատված կապը Ասատուրի և Կամսարականի միջև վերականգնվում է «Դիմաստվեներին» հրատարակումից հետո և Կամսարականը նրան է ուղղում իր հուզիչ խոսքն ու մի փոքր ճշտում՝ «Նեա» ծածկանվան հետ կապված: Պարզվում է, որ նրա «Պղնձի տոմսեր» վերնագրով հոգվածները լույս են աեսել «Արևելքում», «Անցորդ» ծածկանվան տակ: Ինչ վերաբերում է Տ. Կամսարականի այս ծածկանուններին հավաստիությանը, այդ երևում է Ասատուրին ուղղված իր նամակից, քանի որ Կամսարականը չի հերքում գրանցից և ոչ մեկը:

Արևմտահայ մամուլի էջերում հաճախ հանդիպում են նաև անստորագիր հոգվածներ, որոնց հեղինակների բացահայտումը կապվում է մեծ դժվարությունների հետ: Այս իրողությունը հաճախ անդի է տվել շատ թյուրիմացությունների ու սխալ վերագրումների: «Դիմաստվեներում» հեղինակը փորձել է բացահայտել ու ճշգրտել անմեկնելի թվացող այդպիսի բացմամբիվ փաստեր՝ դիմելով անթիվ նամակների ու արխիվային նյութերի: Աշխատության Գ. Օտյանի վերաբերող համոզմունք, ներկայացնելով Օտյանին որպես «Մեղվի» «դիմավոր աջակիցը և աշխատակիցը», Ասատուրը հայտարարում է. «Հոն հրատարակված անստորագիր հոգվածներն ոմանք իր գրչին ելած են և իր ոճին գրոշմը կը կրեն... Առաջին թիվերն մեկուն մեջ «Մեղու» կարտասպե թաշտուր Պարտիզպանի վրա «Մասյաց Ալավնիի» մեջ տպված Օտյանի դրութենե մաս մը, առանց հեղինակին անուներ հիշատակելու»: Իմանում ենք նաև, որ Գ. Օտյանի գրչին է պատկանում նրի. Պալյանի մահվան առթիվով գրված հոգվածը, որը «Մեղուն» հրատարակում է իրրև հավելված:

Շատ հազվագեպ էր Ս. Ոսկանը ստորագրում «Արևելքում»

1 ԳԱԹ, Թ. Աղաթանի Փոնդ, Տ. Կամսարականի 1921 թ. դեկտեմբերի 25-ի նամակը՝ Հ. Ասատուրին:

քում» հրատարակված իր հոդվածների տակ: Դրանք լույս էին տեսնում կամ ծածկագրով կամ անստորագիր: Անստորագիր են Ոսկանի 1855 թ. «Արևելքում» հրատարակված՝ Ծ. Լամբների, Ա. Դյուժայի, Ժան Ժակ Ռուսոյի և Ալեհանդրե պատրիարքի մասին դրած հոդվածները:

«Դիմաստվերների» հեղինակը պարզում է նաև դրական առանձին նորահայտ փաստեր, որոնք նշանակութուն են ստանում դրականության պատմությունը ուսումնասիրողների համար: Դրա փայլուն օրինակը կարող է դառնալ Մ. Մամուրյանի, «Հայկական նամականիի» երկրորդ մասի առաջնահինգ դիմանկարների զազանանունների բացահայտումը:

Ասատուրը նամակագրական կապ և բախական մոտ հարաբերություններ ունի Մամուրյանի հետ, որը և հնարավորություն է տվել նրան իմանալու, ովքե՞ր են թաքնվել այդ անունների տակ, թեև այդ դեմքերի ցայտուն ու պատկերավոր բնութագրությունը բանալի էր Ասատուրին՝ ճանաչելու նրանցից շատերին:

«Մերվիչենն է Արբունը, — դրում է նա, — և մեջ բերում Մամուրյանի նկարագրությունը, — առփ մ'ունի իր ձեռքին, ջթախոտի սուսի մը, թեև հայ քաղաքադես օրենսդիր, ստենարան, մեծ մարդ է ան...»: Թաշմանը՝ «Հայոց Պերանժեն է»՝ Մկրտիչ Պեչիկեթալյանը, Արզամբ՝ Բարունակ Բեյը: Մա XIX դարի 30—40-ական թվականների գործիչ է, որի կյանքն ու զործունեությունը Ասատուրը հարկ է համարում համառատակի ներկայացնել, դանելով, որ ազգային-հասարակական այս գործիչը կարող է անձանոթ լինել XX դարի մատուցողականությանը: Ասատուրը Մամուրյանի դիմանկարների մեջ նուրճան-Օտյանին հաջողվածներից է համարում: Վրույրը պարահանդեսում հանդիպում է նաև Եղուսին, որը «Մեղվի» խմբագիր Հարություն Սվաճյանն է. այստեղ են Լուսանյան-Ս. Ոսկանը, Եսանխնուր—ն. Ռուսինյանը, և «եկեղեցական ու աշխարհական» այլ անձինք:

* * *

Աշխատությունն ընդգրկող մեկ տասնյակից ավելի այս դիմանկարները հենվում են իրական-պատմական և կենսագրական փաստերի վրա. թվական, մտերավիպ, տպավորություն, կյանքն ու բնագծով այլ կողմեր՝ բոլորն էլ հաստատ, «խղճամիտ ստուգությամբ երաշխավորված»: Ասատուրն օլտողործել է փոքրիկ ղեպքերի, դրվագների և անհատական տպավորությունների ու հիշողությունների իր սղջ պաշարը, որոնք հատկանշական կազմից լույս են նետում մարդկանց ամենից պարզ, բայց նկարագիրը բնորոշող կողմերի վրա:

Պատմական և անձնական մասունքների փրկության այս մեթոդը ներկայացվող դեմքերն օժակ է իրական, կենդանի կյանքով և մարմնավորել նրանց մեջ ժամանակի շունչը: Միջադեպերի և մանրավեպերի հարստությունը արժեքավոր է մանավանդ նրանով, որ Ասատուրի անձնական տպավորություններից ու ծանոթություններից է բխում դիմաստվերի այդ տեսանկյունները և ոչ թե թերթերի ու զրգերի պայմանական վկայություններից: Տարեկից և ընկերակից շատերին՝ Ասատուրը պրեթե միշտ կարողացել է ինքնաբերու ու հարուզատ մի քանի դեբրում տեսանկյուն դարձնել պատկառելի այդ անձանց կյանքի ուղին: Իսկ այնտեղ, որտեղ բացակայում է սեփական տպավորությունը, Ասատուրը դիմում է կենդանի վկաների, դրական ու պատմական հուշերի, հաճախ աննշան թվացող փաստերի, որոնք նպատակ ունեն ամբողջանելու դիմանկարը:

«Դիմաստվերների» արժանիքներից է նաև, որ աշխատություն մեջ առկա են հեղինակի ինքնությանը վերաբերող կենսագրական որոշ փաստեր: Այստեղ թեև դիմաստվերը ներկայանում է գրեթե առանց հեղինակային միջամտություն կամ գրեթե ուրումների, բայց, այնուամենայնիվ, Ասատուրն է դրանց մեջ՝ իր մտքերով, զազափարներով և նույնիսկ իր անձին վերաբերող փաստերով, հատկապես երբ նա նկատի ունի իր ընկեր-զազափարակից բնորդին: Ասատուր-դիմանկարչի դեմքը անշուշտ չի պարզվում այնպիսի պարզություն, ինչպիսին ներկայանում է քննազատ-դիմանկարչի

դեմքը, որի դավանած ուղղութիւնը և դիմանկարի վերլուծման կերպը ցուցադրում են իր իսկ հայացքները, սկզբունքները, կոնկրետ խնդրի կապակցութեամբ նրա սենեցած կողմնորոշումը: Սակայն, նույնիսկ այս գեղարված հարգածը արժեք է ստանում, քանի որ արվում է հենց իր՝ Հեղինակի կողմից, որպէս հավաստի փաստ, հավաստի սպրաւ:

Հ. Ասատուրի «Դիմաստովերներէ» թերես ամենամեծ արժանիքը գրողի կյանքի իրական և կենդանի պատկերման մեջ է, որը լինելով հանդերձ կյանք-կենսադրութիւն, միաժամանակ տարբեր և նույնիսկ շատ ավելի է գրանից:

Ասատուրի դիմաստովերը կենդանի և կոնկրետ անձնագործութիւն է՝ անխուսափելի հակասութիւններով, իբրև անձ ու ստեղծագործող:

«Նորավեպի իշխանը» (Ձոհրաղը) իր դիմանկարներում փորձել է մի քանի դժերի մեջ կյանք ներկայացնել, բառերի դույնով ու խաղով դիմադիմ նկարել: Այս անսակեանց նրա դիմանկարները հասան գեղարվեստի բարձրութեան՝ բնորոշն ու առանձնահատուկը բնատիպում ընդդէմու սպեկտրոցիչ հնարավորութեամբ: Բայց Ձոհրաղը մնալով գերադասեցապես սպաւորութեան ոլորտներում, չհարողացաւ կենդանացնել ու շարժում հաղորդել դիմանկարի կյանքի ուրվադիմ:

Ասատուրի դիմանկարային յուրահատուկ արվեստը անսակելի է դարձնում ներկայացվող անձը՝ իբրև խոնկածք, որոշ չափով գործունեութիւն, ձգտում, իրագործում, հուզում, և ի վերջո՝ կյանք: Այս իմաստով Ձոհրաղի նկարչական կերպը տեղի է տալիս Ասատուրի քանդակագործական հմտութեանը: Վերջինս խուսափում է վառ և ցայտուն դույներից: Դրա փոխարեն, ականատեսի անկրկնելի հայացքով իր ներկայացրած դեմքը դիտում է բոլոր կողմերից՝ ներառելով նրա ներքին ու արտաքին աշխարհը, նրա մտա կանդնած մարդկանց ու իրերը, կենսագրականից անցնելով մանրավեպի, դործից՝ խոնկածքի, դրական վերլուծումից՝ հասարակական անցուղարձի...: Սա մասամբ հիշեցնում է Անատոլ Ծրանսի և Ռեմի դը Պուրմոնի «Գրական գրոսանքները», որոնք կյանքի ուրվագծումից հասնում են գործերի վերլուծութեանը:

Ասատուրի դիմանկարները չեն շփոթվում միմյանց հետ, քանի որ ոճի և մտածողութեան ինքնատիպութեամբ հեղինակը կիրառում է բնավորութիւնների քանդակման յուրահատուկ միջոցներ, կառուցվածքային բազմաթիւ տարբերակներ՝ դիմանկարի նախատիպութիւնների շրջադիմը, նրա կյանքի ու պայքարի թեման բյուրեղացված հտակութեամբ արտացոլելու համար:

«Դիմաստովերներում» շատ մոտիկից ու պարզորեն անգրագանում է XIX դարը՝ իր մտաւոր կյանքով, իր ձգտումներով, կրած ազդեցութիւններով, տենդով ու տագնապներով, վերջապես, անկումներով ու վերելքներով արտփուն կեսդարյա մի շրջան, երբ սպրում ու դործում էր ինքնատիպ դեմքերի մի ամբողջ շարք, մարդկային մտքի ու խոնկածքների յուրահատուկ մի պատկերասրահ: Հենց այս էլ Ասատուրի դործի գլխավոր արժանիքն է:

«Դիմաստովերներէ» հրատարակութիւնը հասարակական մեծ արձագանք գտաւ դրական շրջաններում: Այս առթիւ դրվեցին բազմաթիւ գրախոսականներ արեւմտահայ մամուլի էջերում («Ճակատամարտ», «Ժողովուրդի ձայն», «Արևելյան մամուլ», «Կոչնակ», «Հայ կին» և այլն), որտեղ Ասատուրի դործը բարձր դնահատութեան էր արժանանում՝ Ժանրային իր ինքնատիպ բովանդակութեան առումով: «Քիչ մը աղտանչուլտ, — գրում է Հ. Յշականը, — քիչ մը շատ զգուշավոր ու խելոք, բայց իր համեստութեան մեջ երբեք սափակ չեղող այս ոճը ևս կը հանձնարարեմ մանավանդ բոլոր անոնց, որոնք փառասիրութիւններ ունին դրականութիւն դնելու, բայց դրագետ չեն ծնված:

Մեր գրականութեան մեջ քիչ չեն գիրքեր, որոնք հավակնութիւն ունին գայն պատմելու: Սակայն ոչ մեկը այդ հաստատիւր հատորներեն, — եղբակացնում է դրախոսը, — պիտի չունենա սպաւդային առջև այնքան արժեք, որքան այս կցկտուր, թերես թերի, բայց հասկանչական տարբերով լեցուն հատորը» («Ճակատամարտ», 1921, նոյ. 20):

«Դիմաստովերներէ» մեծ ընդունելութեան դրավականը հատկապես այն էր, որ հայկական մահաչունչ իրադարձերից

հետո զբոված այս դիրքը մի տեսակ հուշամատյան էր դառնում՝ արևմտաճայ մեր ասարարխա գրողների ու պոետաճայ օջախի մտավորականութեան ետուն գործունեութեան ու պայքարի անցյալ հուշերը անմոռաց պահելու համար:

* * *

«Դիմաստվերներում» ամփոփված դիմանկարներից զատ, Ասատուրը գրել է նաև արևմտաճայ բողոքաբան ալլ գրողների ու գործիչների մասին (Թ. Թևրոյան, Պ. Գուրյան, Մերենց, Թյուրբանցի, Պ. Ղափանցի, Հ. Նալյան, Գ. Կոստանդյան, Ա. Արփիարյան, Մ. Չերաղ, Բ. Քեչյան, Մ. Օրմանյան, Մ. Գարագաշ և ուրիշներ), որոնք նախպես ստեղծագործել են անցյալ դարի երկրորդ կեսում, իսկ մի քանիսը միջնադարյան գրականութեան դեմքեր են:

Ի տարբերութեան «Դիմաստվերներ» հատորում բնագրերով աված հեղինակների, այս դիմանկարները ամբողջացված չեն: Մասնաբաժնի փոքրածավալ դիմանկարային նոթագրումներ են, որոնք հրատարակվել են պարբերական մամուլի էջերում, անցյալ դարի վերջերին: Մակայն հիմնական տարբերութեանն այստեղ ոչ այնքան ծավալի, որքան բնույթի մեջ է: Այս դիմանկարներում հիմնականում բնութագրվում է գրողի ստեղծագործական դեմքը՝ նրա կատարած դերի գնահատմամբ: Այս շարքում առանձնահատուկ տեղ է գրավում «Բեթեոս Պերպերյան» դիմանկարը:

Ասատուրը պատմում է մանկավարժ-գրագետի կյանքի, նրա մանկութեան մոտյլ տարիների մասին: Հուշերով ու մանրակարգերով համեմատված կյանք-կենսագրութեանը ներկայացնում է ստացած պատվիտական կրթութեան գաժան կողմերը, սիրելի ուսուցիչներին՝ Ներսես Վարժապետյանին և Մատաթիա Գարագաշյանին ու գրական-մանկավարժական կյանքից շատ թանկարժեք մանրամասներ:

1881 թ., ծանոթանալով Պերպերյանի հետ և մոտիկից ճանաչելով նրան, Ասատուրը փորձում է կերտել իր ժամանակակից դեմքը: Նա դիմանկարում վերլուծում է 1883 և 1884 թթ. «Երկրպագուհու», «Մարգիկ և իրը» վերնագրով և «Հրաշ-

յա» ծածկանունով հրատարակված նրա քրոնիկները և հանդում մի վերջնական կարծիքի. այստեղ «Սո՛ք և հուշքի» հեղինակը ներկայանում է «իր նկարագրի տեր մարդ, իր սկզբունքներուն հավատարիմ. հայանած կարծիքները առողջ միաբեր մը զբոլջմը կը կրեն, արամբանութեան մը, որ չի սայթաքիր երբեք, պարզութեան մը, որ չի տկարանար...»:

Գրական-պատմական խնդիրների լուսարանման և բացատրութեան տեսակետից, մեծ է հայ մշակութի հատկապես այս գործիչների դիմանկարների նշանակութեանը, որոնց մասին բնութագրող ու գնահատող էջեր է թողել դիմանկարիչը: Դրանցից են՝ «Գալուստ Կոստանդյան», «Տիրոս Զուխան», «Տուրո. Սորասանճյան», «Նիկ. Պալյան», «Հարութեան ձիվանյան», «Աստանիկ Մարգարյան» և այլն:

Հ. Ասատուրի գրական դիմանկարները գլխավորապես վերաբերում են անցյալ դարի 10-ական թվականներից մինչև XX դարի 10-ական թվականներն բնագրերով ժամանակաշրջանում գործող արևմտաճայ հեղինակների և հասարակական գործիչների կյանքին ու գործունեութեանը: Եվ այս տեսակետից, կապիկով մի բնագնահատող շղթայով, նրանք փոխադարձաբար լրացնում են միմյանց՝ կազմելով դիմանկարային մի ամփոփ հատոր:

Այս շարքից գուրս են մնում սրտը դեմքեր, որոնց կյանքն ու ստեղծագործութեանը կապվում է գրական ավելի վաղ շրջանների հետ: Դրանք են XVIII դարի բանաստեղծներ Պետրոս Ղափանցին և Հակոբ Նալյանը: Դարավերջի բանասիրութեան մեջ նոր-նոր էր միայն հետաքրքրութեան արթնանում XVIII դարի հայ գաղական բանաստեղծութեան նշանավոր դեմքերից մեկը՝ Պետրոս Ղափանցու նկատմամբ: Ն. Քարամյանի հոգովածից հետո, Ասատուրի այս դիմանկարը «Մոռացված բանաստեղծ մը» խորագրով, նպատակ ուներ ծանոթացնելու արևմտաճայ հասարակութեանը այդ շնորհալի բանաստեղծի ստեղծագործական նկարագրին:

«Ներդաշնակութեան զգացում, որ այնքան կարևոր ձիրք

1 «Արևելյան մամուլ», 1904, № 1:

մըն է քերթողին համար, Ղափանցիի մեծության հասկու-
թյունն է, — դրում է Ասատուրը: — Տեսակ մը երաժշտություն
դրած է շատ մը քերթվածներու մեջ և բառերու ղեկեցիկ
զուգորդություններ, որոնք կրնան մրցիլ նույն իսկ ԺԹ դարու
ամենն նուրբ հայ բանաստեղծներուն հետ: Ձեի տեսակետով
այս բանաստեղծը մեր առավելագույն տաղերգուներուն ամենն
ճարտարներն է»:

Հ. Նալյան պատրիարքի 142-րդ տարեդարձի առթիվ,
Ասատուրը ընդարձակ հողված է տպագրում «Բյուզանդիո-
նում» և համառոտակի վերլուծում նրա դրական ժառանգու-
թյունը: «Իր դրվածքներն մեծ մասն այսօր, — դրում է նա, —
հետաքրքրությամբ կրնան կարդացվիլ, և երբ մեր աչքին
առջև պատկերացնենք իր ապրած ժամանակին մյուսս գրող-
ները, պիտի տեսնենք թե անոնց մեջ Նալյան գուրս կցցվի
ինքնուրույն հանգամանքներով, և բարոյագետի այն անվի-
ճելի գրոշմով որ իր ղլխավոր հատկանիշն է»¹:

Նալյանի դործերից «Քրիստոնեականը», «Գանձարան
ծանուցմանցը» և «Ձեն հոգևորը», որոնք մասսայական ըն-
թերցանության համար դրված գործեր են, Ասատուրի կար-
ծիքով «կարևոր վավերագիրները կկազմեն ժամանակին բար-
քերուն և լեզվին նկատմամբ»:

Նալյանի գրական ողջ ժառանգության մեջ Ասատուրը
ամենից ուշադրավր համարում է «Գանձարան ծանուցմանցը»,
տպագրված 1758 թ., ընդունելով այն իբրև մի տեսակ
հանրագիտարան, ուր ներկայացվում են ժամանակի պոլսա-
հայ բարքերը: «Լեզուն և ոճը նպատակ մը չէ իրեն համար,
այլ միջոց մը. ինք գրադետ մը չէ բառին զեղազիտական
իմաստով, այլ պարզ գրող մը, սակայն որուն չեն պակսի
հորգ գաղափարներ, ղեկեցիկ բողոքատություններ»:

* * *

Դիմանկարիչ-կենսագիրը 1890-ական թվականների ըս-
կըզմներին, գրել է «Աշխարհաբար մատենադրության պատ-
մություն» ընդարձակ աշխատությունը, որը նա հետագայում

հրատարակեց հրատարակելու մտքից: Բանն այն է, որ այս
գործը թեև վերնագրված է որպես աշխարհաբար մատենա-
դրության պատմություն, բայց ի վերջս չի յուրացնում հա-
մանման աշխատություններին ներհատուկ բովանդակու-
թյուն: Սա կենսագրականների շարք է, որը ձգվում է հին
ժամանակներից մինչև իր օրերը:

Ասատուրը հայ գրականության պատմությունը ժամանա-
կակարգում է ըստ աշխարհաբար լեզվի զարգացման: Ու
թեև ինչ-որ պարբերացում ձևակերպված կա, սակայն, դի-
տական անսովորակ կատարյալ չէ, քանի որ երևում է ոչ թե
գրականության բովանդակությունից, այլ լեզվից: Սրա-
նից էլ նյութի սխառեմալորման ոչ դիտական բնույթը,
բացառելով գրական արժեքները պատմական զարգացման
ընդհանուր շղթայի մեջ դնահատելու հնարավորությունը,
առաջադրում է աշխատության արժեքը և նշանակությունը
գրականության պատմության ոլորտներից գուրս փնտրելու
խնդիրը:

Աշխատությունը բաղկացած է հետևյալ բաժիններից. V—
XVII դդ. մատենադրություն՝ «Նախնայաց սամկորենը» (ար-
ձակ և չափածո), XVIII դար՝ «Մեր նոր լեզվի գավառաբար-
բաները», «Արևմտյան հայոց աշխարհիկ գրականությունը»,
«Վենետիկի Միխիթարյանները (1840—1860)» և «Պոլսահայ
գրագետները»:

Հին շրջանի աշխարհաբար առանձին հրատարակություն-
ների վերաբերյալ ընդհանուր ակնարկից հետո, Ասատուրը
ներկայացնում է այն անձանց, որոնք V դարից սկսած և միջ-
նադարում գրել են աշխարհաբար լեզվով, այսպես կոչված,
«նախնայաց սամկորենով»: Դրանք են Միխիթար Հեթանգի,
Սմբատ Գունդստարը, Վարդան Արևելցի, Մաղաթիա արեղա,
Գրիգոր Անտվարդեցի, Վարդան Այգեկցի, Ամիրզոդյաթ
Ամասիացի, Բունիաթ Սեբաստացի, Հովհաննես Հոլով, Գա-
լուստ Կայծակ: Չափածուի ենթարժանում ներկայացվում
է մոտ երկու տասնյակ դեմք՝ Ն. Շնորհալի, Կ. Երզնկացի,
Հովհ. Երզնկացի, Խ. Կեչառեցի, Ա. Սյունեցի, Ա. Բաղիչեցի,
Մ. Նաղաչ, Հ. Թլուրանցի, Գ. Աղթամարցի, Չրիկ, Ն. Քու-

1 «Բյուզանդիոն», 1906, հունիս 19:

չակ, Մ. Թոխատեցի, Գ. Կայծակ, Խասպեկ երեց, Ավետիք Եվդոկիացի: Ասատուրը խիստ համառոտակի հաղորդում է սրանցից յուրաքանչյուրի մասին կենսագրական տվյալներ, նշում ամենակարևոր դժեբրը, մեկ-երկու նախադասութեամբ բնութագրում դրանք և կատարում մեջբերումներ:

Առաջին երկու գլուխներում ընդհանրապես ամեն ինչ վերանայվում և ներկայացվում է միայն աշխարհաբարի տեսանկյունից. դրանից է, որ նա առաջ է քաշում անուններ, որոնք թեև կապ չունեն գրականութեան հետ, բայց թողել են զործեր, որոնք, այնուամենայնիվ, սրտը դեր են խաղում աշխարհաբարի զարգացման տեսակետից:

Ինչը որ աշխատութեան մեջ ուշադրութեան է արժանանում, դա տվյալ դեմքով դրողով անձանց հիշատակութեանն է և դրան վերաբերող մատենագրական աղբյուրների արձանագրումը: Կարևորն այն է, որ հեղինակը ամեն անգամ նշում է կենսագրական փաստի վկայակոչման աղբյուրը, տեղը՝ լինի այն պարբերական թե ուսումնասիրութեան, բացահայտում աշխարհաբարի պատմութեան մեջ դեմքերից յուրաքանչյուրի բերած նորույթը, խոսում քերականական նորանոր մեկերի օգտագործման և սճի մասին: Եվ այն ամենը կատարում ընդամենը մեկ-երկու էջի սահմաններում: Իսկ հաճախ, որոշ դրույթների հիմնավորման կապակցութեամբ, Ասատուրը հենվում է տվյալ դեմքով դրողով կամ տվյալ ուսումնասիրութեանը դրախոսող մեկ այլ անձի թեղերի վրա, եթե, իհարկե, դրանք համարում է ընդունելի: Այս իմաստով, աշխատութեան հեղինակի ինքնուրույն բնութագրումները միջնադարյան տաղերգուների մասին շատ քիչ են, որովհետև նա մեծ մասամբ հենվում է այլ ուսումնասիրողների կարծիքների վրա:

«Աշխարհաբար մատենագրութեան պատմութեան» դործում տաղերգուներից յուրաքանչյուրին նվիրված ուսումնասիրութեանը խորութեամբ ու ծավալով հաճախ համապատասխան չէ գրականութեան պատմութեան մեջ նրանց ունեցած իրական արժեքին: Նահապետ Քուչակին հատկացված է նույնքան, ինչքան Մինաս Թոխատեցուն կամ Պասպեկ Երեցին:

Ուստի և կորչում է տաղերգուի մեծութեան, նրա գրաված պատմական տեղի և դերի իսկական զնահատման չափանիշն ու սկզբունքը, մի տեսակ հավասարութեան է ստեղծվում անհավասար արժեքների միջև: Աշխատութեան մեջ նախընտրված լեզվական սկզբունքը բացատրելի է դարձնում հեղինակի նման մոտեցումը: Բայց այդպիսի մոտեցումը միակողմանի է, քանի որ գրականութեան պատմութեան շղթայում արժեքները զնահատվում են առաջին հերթին իրենց զեղարվեստական նշանակութեամբ:

Մինչև XVIII դարի գրականութեան բաժինը ընդգրկող հատվածը, այսինքն առաջին երկու գլուխներում, խիստ մակերեսային է ներկայացվում դեմքը. կենսագրական մի քանի տվյալ, գործերի թվագրում, նշումներ սրանց հրատարակութեան վայրի և թվի վերաբերյալ ու գրականութեան նրա մասին: Մեկ-երկու պարբերութեան՝ բնորոշում և մեջբերումներ: Ահա բոլորը: Այսինքն տվյալներ, որոնք նշանակութեան են ստանում միայն մատենագրութեան տեսակետից:

«18-րդ դարի գրականութեան» գլխում հարցերի քննութեանը համեմատաբար խորանում է: «Պայտի հայերը և պարբերիկները» ուսումնասիրութեան կապակցութեամբ, անշուշտ, Ասատուրը ավելի մտախիչ և ավելի խորն է ուսումնասիրել պոլսահայ միջավայրը, ժամանակի գրող-գործիչներին: Այս գլխում ընդգրկվում են հետևյալ հեղինակները. Պաղատասար Գպիր, Պետրոս Ղափանցի, Մարտիրոս Ղրիմեցի, Հովհաննես Եպիսկոպոս, Գաբրիել Սալաճորեցի, Հակոբ Արծկեացի, սրա եղբայրը՝ Ղազար Արծկեացի: Թվարկված հեղինակներից ավելի մանրամասն են ներկայացված Պաղատասար Գպիրը և Պետրոս Ղափանցին:

Ասատուրն ավելի հանդամանորեն է պատմում XVIII դարի այս նշանավոր դեմքերի կյանքը. ներկայանում է և՛ արձակագիրը, և՛ տաղերգուն:

Աշխատութեան երրորդ՝ այն է «Մեր նոր լեզվին դավառարարառները» գլխում, Ասատուրը, հիմնվելով Այսնյանի ուսումնասիրութեան վրա, խոսում է աշխարհաբար լեզվի

բարբառների ու սրանց գլխավոր ճյուղերի մասին: Խմբերից յուրաքանչյուրի վերաբերյալ ամփոփ տեղեկություններ տալուց հետո, հեղինակն անցնում է դավառարարբառների մասին եղած գրականության ու այս առթիվ նշում հայ և օտար հետազոտողների գործերը:

«Արևմտյան հայոց աշխարհիկ գրականությունը» գլխից սկսած հեղինակի ուշադրությունը կենտրոնանում է արևմտահայ աշխարհաբարի դրական մշակների վրա, որոնցից գլխավորը նա դասում է Մխիթար Աբրային: Տրվում է նրա կենսագրությունը, օգտագործած աշխարհաբարի քերականության քննությունը, խոսվում նրա կազմած՝ գրաբարից աշխարհաբար բառագրքի և ուսումնական ու կրոնական գրքերի մասին: Ասատուրը Մխիթար Աբրային համարում է դրաբար մատենագրության ստարաններից մեկը և նույն դերն էլ հատկացնում նրան աշխարհաբարի տեսակետով, նշելով միաժամանակ, որ նրա այդ աշխատությունները մնացել են անձանթ, որովհետև Մխիթար Աբրայն ավելի ջանադիր է եղել դրաբար, քան թե ժողովրդական լեզվի տարածմանը:

Առանձին հատվածներ են նվիրված Սարգիս Դպիր Հովհաննիսյանին, Ղուկաս Ինճիճյանին, Հովհաննես Զոհրապյանին, Հովակիմ Օղուլուխյանին, Գարբեի Ավդերյանին, Գրիգոր Գապարաճյանին, Մանվել Զախլախյանին, Մեսրոպ Ազաջրադյանին, Մինաս Բժշկյանին, Մեսրոպ քահանային, Գրիգոր Փեշտիմալճյանին, Միքայել Բեստենին: Այս գլխում են ընդգրկված նաև «Կ. Պոլսո ստաջին հայ թերթը», «Բողոքականները և աշխարհաբարը», «Ղուկաս Պալզադյան և Իզմիրի «Արշալույսը» ենթարժեքները: Գլուխն ավարտվում է Մեսրոպ Թաղիադյան, Հովսեփ Թավուզճյան, Հովհաննես Տերոյանց, Դոկտոր Սերվիլեն և Հակոբ Կրճիկյան դեմքերով: Թեև բերված անուններից շատերը գրել են միայն դրաբարով, բայց և այնպես, եթե ներկայացվող հեղինակը ունի մեկ կամ մի քանի աննշան աշխարհաբար գործ, ապա ուսումնասիրողը նպատակահարմար է համարում տեղադրել նրան աշխատության մեջ:

Ընդհանրապես այս աշխատությունը կարևորություն է

ստանում մի այլ տեսանկյունից ևս. այստեղ ներկայացվում են հեղինակի ոչ միայն արդեն հրատարակված գործերը, այլև ձեռագիր աշխատությունները: Բացահայտվում են նաև դրական բազմաթիվ անցուղարձերի հնացած ու կորած ծալքեր, որոնք խիստ կարևոր են XVIII և XIX դարերի աշխարհաբար մատենագրությունը ներկայացնելու առումով՝ արժեքավորելով գործը փաստագրական տեսակետից: Հ. Ասատուրը կարևոր ավյալներ է հայտնում նաև 1812 թ. վենետիկում աշխարհաբար լեզվով հրատարակվող «Միտակ Բյուզանդյան» երկշարաթափերի մասին, թերթի խմբադիր Գրիգոր Գապարաճյանի և նրան հաջորդած խմբադիրների վերաբերյալ: Ինքը՝ Գապարաճյանն էր, որ թարգմանեց ևդնիկի «Եղծ աղանդոցը» Փրանսերեն և 1884-ին հրատարակեց Փարիզում: Նա գրում է նաև «Ընծա» խորագրով (1856) աշխարհաբար մի դիրք, որին պատասխանում է ձ. Արամյանը «Ընդունելություն ընծայի» գործով, որն Ասատուրը հայ առաջին երգիծական հրատարակությունն է համարում արեմբտահայերի մոտ: Արժեքավոր են նաև Կ. Պոլսի հայ ստաջին «Լրագիր մեծի Տերության Օսմանյան» հայերն թերթի մասին Ասատուրի հաղորդած ավյալները՝ պարբերականի անունների վերաբերյալ:

«Բողոքականները և աշխարհաբարը» ենթավերնադրի տակ Ասատուրը տալիս է առաջին քարոզիչների պատմությունը Պոլսում և թվում սրանց հրատարակություններն ու հանդեսները: Այս հրատարակությունների մեջ հեղինակը բողոքականների ամենակարևոր գործը համարում է «Աստվածաչի» աշխարհաբար թարգմանությունը 1848թ., և հայտնում հետաքրքիր մանրամասներ այս գրքի հրատարակության մասին՝ կապված ամերիկացի միսիոներ Իլիաս Ռիգս կոչվող հայադեպի հետ: «Եթե այդ անցնենք համառոտ ցուցակը բողոքական տպարաններու հրատարակության, — գրում է Ասատուրը, — մինչև 1860 թիվը, պիտի տեսնենք թե բոլոր ատոնք տարունակության տեսակետով զուրկ են որևէ կրոնական

կարևորութենն, բայց աներկբայ նոր լեզվին զարգացման անսակետով, իրենց անուրանալի դերը ունեցած են»¹ :

Ամեն մի գրքի հրատարակութեան առիթով հեղինակը աշուղին պատմութիւնն է հյուսում գրքի թեմայի, հրատարակութեան, տեղի, թարգմանչի, տարրանի հետ կապված : Ու թեև այս փաստագրական հյուսվածքն ունի խիստ մակերեսային բնույթ, բայց գուրկ չէ դրական-պատմական արժեքից : Այստեղ նշանակութիւնն է ստանում Իզմիրի և Պոլսի հայ գաղթօջախների պատմութեանը, որը միահյուսված բարձրանում է աշխարհաբար գրքի հրատարակութեան պատմութեան հետ մեկտեղ : Գրական, պատմական, մշակութային հեռուհեռ տարածվող ցանցը՝ սկսած գեռես հին շրջաններից, փաստ ու թշի, գեմք ու դեպքի այս հենքը շատ հետաքրքիր և արժեքավոր երանգ է հաղորդում գործին և բարձրացնում նրա արժեքը : Տպարանի պատմութեան, մամուլի պատմութեան, գրքի պատմութեան, աշխարհաբար լեզվի թե մատենագրութեան զարգացման պատմութիւնն՝ բոլորն էլ ներկայացված խզմամբ կերպով, թեև առանց խորութեան :

Արևմտահայ գրական-մշակութային կյանքի պատկերն ու անդաշտերը բավական ծավալուն և խորն են ներկայացված «Ղուկա Պալղաղարյան» և Իզմիրի «Արշալույսը» գլուխներում : Այստեղ հետաքրքիր է հատկապես «Արշալույս Արարատյանի» տպագրութեան, 1841 թ. Իզմիրում կազմակերպված Սյունյաց տիումբի պատմութեանը, որի ասենապետն է դառնում Ղ. Պալղաղարյանը և որը, ըստ Ասատուրի, ներկայացվում է որպես «հայ նոր լրագրողներուն ճշմարիտ նահապետը» : «Պալղաղարյանի գլխավոր հատկանիշը եղավ հարատևութեանը, — գրում է Ասատուրը : ... Ինք հարատևեց երկար տարիներ, գրադելով միշտ ազգային կյանքով, գրելով ժողովրդին պեղերուն վրա, քաջալերելով օգտակար ձեռնարկները» : Բայց միաժամանակ Ասատուրը գրում էր, որ Պալղաղարյանը չէր տիրապետում «հրատարակչի դա-

դափարի» այն խորութեանը, ինչպես այն ըմբռնում էին Ռուսոյանն ու Սփանյանը : Պալղաղարյանի համար այն պայքարի ապարեզ չէր, այլ «հանդարտ ծովակ մը որուն վրա խաղաղութեամբ կուզէր առաջնորդել իր նավը» : «Այս տեսակետով, — շարունակում է նա «Արշալույս Արարատյանի» խմբագրի մասին, — Ռեթուսյանի զգրոցին կը պատկանէր բոլորովին, և թեև անուն մը կը թողու իր աշխարհաբարի առջին մշակներեն մեկը և իր հարատևութեան ցուց տվող խմբագիր, կարելի չէ ըսել թե մեծ ազդեցութիւնն ունեցած ըլլա մեր նոր մատենագրութեան ճակատագրին վրա» :

Յաջատուր Ռուսոյանի «Աղղարի» կապակցութեամբ ներկայացվում է 30-ական թվականների Պոլսի գրական-մշակութային ուշադրով շարժումը : Նոր զարոցների (Մայր վարժարան, Ներսիսյան վարժարան, Միլուտարի ճեմարան), ընկերութիւնների հիմնադրութեան պատմութեան հանգամանքները :

Ասատուրի աշխատութիւնն իր սիմետրիկ բնույթով իսկ պարզում է արևմտահայ աշխարհաբարի զարգացման և բնագրիկման սահմանները, ամեն մի տասնամյակում տիրապետող գրական, կրօնական, մշակութային հետաքրքրութիւնների հիմնադրման պատմութեան հետ : Հրատարակված գրքի թեև արևմտահայ հասվածի հետաքրքրութիւնները, նրա գրադեցրած խնդիրները և ցուցադրում նրա աստիճանական զարգացման ընթացքը, գրական առաջնութեան կենսունակութիւնը : Այս գործը թեև գրականութեան պատմութիւնն է, բայց և այնպես հայթայթում է գրականութեան պատմութեան համար այն անհրաժեշտ տարրերը, որոնք հետադարձում հիմք պետք է դառնան պատմութեան հյուսվածքի համար :

Հեղինակը աշխատութեան մեջ տեղ է տալիս նաև վեհապետի և Վիեննայի Մխիթարյաններին և ծանոթացնում է այն գործիչներին, որոնք 1840—1860-ական թվականներին գեր են կատարել արևմտահայ աշխարհաբարի պատմութեան մեջ :

¹ ԳՍԹ, Թ. Աղապանի Փոնդ, բաժին 1, դորժ 17, 2. Ասատուր, Աշխարհաբար մատենագրութեան պատմութիւն, էջ 99 :

«Աշխարհաբար մատենագրութեան պատմութեան» հիմնական բովանդակութեանը և ժանրային պատկանելիութեանը վերջնականապես հասկորոշում է աշխատութեան «Պոլսահայ դրագեաններ» վերջին գլուխը, որը լինելով ամենամալալուն հատվածը՝ ներկայացնում է մտա հիսուն դեմք: Այստեղից արդեն աշխատութեան մատենագիտական բնույթը փոխվում է, և թվի ու փաստի հենքը դառնում է հիմք՝ այնքան արժեքավոր կենսագրականներ տալու համար: Գրականագիտութեան մասնագիտող դարձած կենսագրական ժանրի անհրաժեշտ տիրապետումը Ասատուրին հնարավորութեան է ավել ուսումնասիրել կենսագրվող անձի ժամանակաշրջանը, միջավայրի գրական-հասարակական կապերը, տվյալ դեմքի որոշ հայացքներ և նույնիսկ տոբոյա մանրուքներ: Այստեղ չկա հուշագրական մոմենտը և միայն գրողի կամ գործչի կյանքի ուղին է դառնում հեղինակի դիտավոր գործը:

Կենսագրականներ արևմտահայ գրականութեան մեջ դրել են Ղ. Այլիշանը, Հ. Մրմբյանը, Շարասանը, Ռ. Զարգարյանը և շատ ուրիշներ: Այն, այստեղ, ըստ ամենայնի տարածված ժանր է եղել: Բայց որանք իրենց էութեամբ, մասամբ և հետապնդած նպատակներով տարբեր են: Կա կյանք-կենսագրություն, որը ուղեգիր է միայն (Ռ. Զարգարյան, Շարասան), իսկ Ասատուրի այս շարքը տարբերվում էր վերոհիշյալից, որովհետև այն, ինչ ներկայացնում էր նա, հեռու էր միայն ուղեգիր լինելուց, անվանումների ու թվերի փաստադրում կոչվելուց: Դեմքն այստեղ ներկայանում է կյանքի մանրամասների ծանրութեամբ (նկատի է առնված աշխատութեան երկրորդ, ամենամալալուն հատվածը), գրական-հասարակական միջավայրի և մշակութային այլ կապերին վերաբերող բազմաթիվ մատենագրական փաստերով, տվյալներով, որոնք ժամանակի ազգային կյանքն են պատկերում և մի տեսակի ֆոն ստեղծում տվյալ գրողի կամ հասարակական գործչի համար: Հանգամանքը խորացնում է կենսագրվող դեմքը և բարձրանում՝ վերահիշյալ կենսագրությունների ուրվագծային մակարդակից: Բայց սա էլ իր հերթին հեռու է դիտական-

քննախոսական կենսագրություններից, որտեղ դեմքը ներկայանում է կյանքի ու գործի վերլուծական պատկերներում:

Ասատուրի կենսագրականներում, այնուամենայնիվ, առկա է դիտական հետազոտութեան մոմենտը:

Սա հաստատվում է Միսաքյանի կյանքը շարադրելիս հեղինակը անում է Մյուսհենոսյան և Արապյան տպարանների հիմնադրման պատմությունը, բերում է առանձին գրական իրադեպեր, բանավեճեր: Օրինակ, 1872-ի «Փունջի» և «Մասիսի» միջև մղվող բանավեճը, որի մասին գրեցին՝ Գարապաշը, Տերոյենցը և Միսաքյանը: Հիշվում են Ստ. Ոսկանյանի դեմ գրված Միսաքյանի հողավածները և հողավածների մի ուրիշ շարք՝ «Տեղութեանը» խորագրով: Ասատուրը պատմում է նաև Փարիզում Միսաքյանին մոտ կանգնած անձանց՝ Լամարտինի և Թեոդոր դը Պանվիլի մասին: Գրական-պատմական փաստերի այս արձանագրումը ի վերջս հանդում է մի սեղմ բնութագրի, որի մեջ արտացոլվում է հեղինակ-կենսագրի դադափարական և մասավոր զարգացման աստիճանը, ժամանակն զրպու և անցյալը բնութհու նրա բնույունակությունը: «Միսաքյանի գլխարձանիս եղած էր, — դրում է նա, — հեղնոպ ու կասակարան: Իր հողավածներուն մեջ ծաղրանքը ահարկու դենք մը եղած է իր ձեռքը: Ոճը դունապեղ էր, լեզուն գրարարի խորունկ հմտութեամբ և աշխարհաբար ձեռքու ճաշակավոր կիրարկութեամբ ճոխացած...»

Իր աշխարհաբար անուպարտ պահած էր ժողովրդական լեզվին ուղին և քերականությունը»:

Հեղինակի տեղի և դերի այս հատկանշումներն էլ հենց որոշում են գործի պատմական ճշտութեան որակը, որովհետև կենսագրական ժանրի դիտավոր զիծը ձգտումն է իրականութեանը, բնականին, ճշտութեանը՝ առանց վերափոխումների, կոնկրետ ցուցումներով: Ասատուրն այստեղ չի ձգտել բազմապատկերի գծագրելու գրողի բնութագրերը ու ստեղծագործու-

1 ԳԱՔ, Թ. Աղասյանի ֆոնդ, բաժին 1, դործ 17, 2. Ասատուրի աշխարհաբար մատենագրութեան պատմություն, էջ 211:

թյունը, որն ինքնին դուրս էր մնում իր ընտրած ժանրի սահմաններից:

Իսկ Ասատուրի մասնավոր ընտրչումները, էթն, այնուամենայնիվ, սուբյեկտիվ էլ են, բայց և այնպես, հասկացող ու գնահատող մաքի, ասորիների հեռավորութունից բխող համադրման արգասիք են, որը դրեթե բոլոր դեպքերում օբյեկտիվ տպավորության վրա էր հիմնվում:

Տ. Կամսարականը, Խ. Մխաբյանի մահից հետո «Արեվելքում» հրատարակում է «Պաշտուր Մխաբյան» դիմանկարը¹, որի մասին Ասատուրը գրում է. «Այս հոգվածը դրեթե կուրանար Մխաբյանի գրական արժեքը, թեև շատ նկարագեղ ոճով կը ներկայացներ ներքին մարդուն տարօրինակութունները»: Կամսարականը մերժում էր Մխաբյանի գրական մանկավարժական փաստակը և նույնիսկ լեզվի հարցում ժխտում նրա կարողութունները:

Այս կարծիքն անշուշտ, սխալ էր: 90-ական թվականներին և դարասկզբին, ի պատասխան Կամսարականի այս հոգվածի, Խ. Մխաբյանի մասին հրատարակվեցին մի շարք դիմանկարներ (հեղինակներ Գ. Ֆնուլյան, Հ. Մրժրյան, Ա. Չոպանյան)², սրտեղ վեր էին հանվում նշանավոր գրագետի արժանիքները: Հետագայում Տ. Կամսարականը ևս, ավելի մոտիկից ծանոթանալով Մխաբյանի գրական կարողութուններին, բժրոնեց իր տված գնահատականի միակողմանիությունը և, Ասատուրի բառերով ասած, գարձավ «հիացող մը անոր օճին»: Այս տեսակետից Ասատուրի, որպես ճշմարիտ բանասերի, յուրջ և հավասարակշռված միտքը դերձ էր համանման տարուբերումներից, որը հավասարում է նրա տված բազմաթիվ գնահատականների ճշմարտությունը: Կենսագրի գրելը փաստագրության առումով թերևս երբեմն գրանցում էր ոչ ճիշտ և չհաստատված տվյալներ, բայց Ասատուրի կողմից գրական արժեքներին ու հասարակական կյանքի իրավիճակին արված գնահատականները՝ հեղինակ-

1 «Արևելք», 1891, № 2196:

2 «Մասիս», 1898, № 1—14, «Անահիտ», 1903, № 10:

ներից յուրաքանչյուրի մասին, հենվում էին տվյալ գրողի փաստակի խոր ճանաչողության վրա:

«Աշխարհաբար մասնադրութան պատմութան» կենսագրականների այս շարքում պետք է առանձնացնել մի քանի դեմքեր, որոնց մասին առաջին անգամ և բավական ծավալուն գրել է հեղինակը: Իրանը են՝ Հարություն Սվաճյան, Սահփան Ռսկան, Հովսեփ Վարդանյան, Նահապետ Ռուսինյան, Մամթեոս Մամուրյան, Արմենակ Հոյգունի և ուրիշներ:

Ի դեպ, Ասատուրն առաջինն էր, որ աշխատութան մեջ բացահայտեց, թե հայատառ թուրքերենով հրատարակված և մեծ անուն վայելած «Ազապի» վեպի հեղինակը՝ Հովսեփ Վարդանյանն է:

Բազմաթիվ գրական-պատմական փաստերի հայտնաբերումը և բոլորովին անհայտ դեմքերի ներկայացումը խլատ բարձրացնում է այս աշխատութան արժեքը իբրև փաստագրական աղբյուրի՝ արևմտահայ մշակույթը հետազոտողների համար:

Հ. Ասատուրը համարվում է նաև Հայ մեծ երգիծարան Հակոբ Պարոնյանի կյանքն ու ստեղծագործությունը ուսումնասիրողներից մեկը:

Պարոնյանի մահվան տարելիցի կապակցությամբ Թիֆլիսի հայ հրատարակչական ընկերություն կողմից Ասատուրին հանձնարարվում է գրել ուսումնասիրություն երգիծարանի մասին՝ հանդամանալից հետազոտության ենթարկելով նրա ստեղծագործական ողջ ժառանգությունը: «Աշխատութունը բավական ընդարձակ պիտի ըլլա — գրում է նա հրատարակչական ընկերության նախադահ Ալիքսանդր Գալանթաթին — քանզի Պարոնյանի կյանքին առիթով հարկ պիտի ըլլա խոսել իր ժամանակին կարգ մը իրողությանց մասին, որք մեծ լույս պիտի սփռեն ժամանակակից գրական պատմության դրութան, ծագրապատկերին հայոց մեջ (թուրքեր) ունեցած դերին վրա: Ասկե զատ, Պարոնյանի վրա իրականում ուսումնասիրություն մը կուզեմ ի վեր հանելու համար ոչ միայն մարդը, այլև դրագետը, իբրև հրագրական, իբր աստվածաբան, իբր երգիծարան, իբր կատակերգու-Պարոնյանի»:

բությունս հոգեբանական և գեղարվեստական տեսակետով պիտի ընեն «Ազգային ջոջերու» հեղինակը, եվրոպական քննադատութեան արդի սկզբանց հետևողութեամբ:

Պարոնյանի ծնունդը, ազգարանութեանը, մանկութեանը, Պոլիս հաստատվելը, ճամփորդութեանները, վարած գանազան պաշտոնները և իր կյանքի զանազան պարագաները հատուկ ուսումնասիրութեանն առարկա ըրի: Իր նկարագիրն ի վեր հանելու համար ամեն կողմէ տեղեկութեաններ քաղեցի, և կը հուսամ, թէ պիտի հաջողիմ երևան հանել կարգ մը անեղծաններ իր կյանքին վրա, որք մտան պիտի ճանչցենն այդ սրամտ երգիծարանին ինքնատիպ բնույթը:

Ձեռք ձգեցի իր առաջին գործը՝ «Երկու տերանց ծառա մը» ձեռագիր կատակերգութեանը և ուրիշ ձեռագրեր ալ, գծրախտարար չամբողջացած, «Շողոքորթն», «Պառլզ», «Ամուսնութեանն իրրե գեղ»:

Ձեռք ձգեցի «Մեղուի» ամբողջ հավաքածուներն, զորս կուսումնասիրեմ խնամքով, ի վեր հանելու համար Պարոնյանի գրական գործունեութեանն 1872-են, 1877, որ Պարոնյան լրագրական աստղարեզին մեջ գրեւորած է անկախ ողի, նուրբ երգիծանք և ազգային կյանքի բնագրծակ հմտութեան, ձագկեցով անինս ազգային և բնամանական ղեղձումներն:

«Սրեկեյան ատամարույթն», «Լույսը», «Ազգային ջոջերն», «Պառլզ մը Պոլսո թագերու մեջ», «Միծագ», «Միկար», «Պաղտասար ազար», «Տարեդարձը», «Մեծապատիվ մուրացկանները», նաև «Փորձի», «Փարսի», «Ճերիտեյի Շարդիյե», «Մասիսի» մեջ հրատարակված հոդվածներն հատուկ ուսումնասիրութեանն առարկա ըրած եմ, ամփոփ ու հակիրճ կերպով ցույց տալու համար Պարոնյանի ազգային ու բնամանական խնդրոց մասին հայտնած կարծիքները, որոնք միշտ շահեկան են»:

Նամակը, որը գրել է Ասատուրը 1891 թ. դեկտեմբերի 15-ին և որը ծանոթացնում է աշխատութեան ծրագրին ու ընդգրկմանը, վկայում է այն մասին, որ հեղինակը նպատակ ունեցել իր ամբողջութեան մեջ ներկայացնելու Պարոնյանի կյանքը և ստեղծագործութեանը, ինչպես նաև մի քանի անհայտ ձեռագիր գործեր («Լույսը», «Տարեդարձը»), որոնց

հիշատակումը չենք գտնում պարոնյանագետներից և ոչ մեկի մոտ:

Հակոբ Պարոնյանի մասին հրատարակվել են միայն Ասատուրի գրած ոչ ծավալուն երեք հոդվածները¹: Այս հոդվածների վրա հիմնվելով էլ, նա հետագայում «Իմականութեանը» գրքում տեղագրում է Հակոբ Պարոնյանի գրական դիմանկարը, մեծ երգիծարանի կյանքի ու ստեղծագործութեան պատմութեանը հասցնելով մինչև 1877 թվականը: Պարոնյանի կյանքի վերջին, ավելի քան տասը տարիների մասին Ասատուրի մոտ պահպանվել է միայն ձեռագիր մի ձեռագրութեան, որն, անկասկած, «Հակոբ Պարոնյան» մեծագրութեան մի հատվածն է, նրա կյանքի վերջին շրջանի (1877—1891) համառոտ ուրվագիծը:

«Հակոբ Պարոնյանի մուտքը լրագրութեան մեջ» հոդվածում Ասատուրը համառոտակի պատմում է Պարոնյանի թվականներին Պարոնյանի մանկավարժական աշխատանքն ու նրա կյանքի ծանր հանգամանքների մասին: Նրա ծարանի համար հրատարակատեսակի արժեքները սկիզբ է դրանում «Նիքոսի» խմբագրութեանը (1877 թվականի վերջերին), որի էջերում էլ երևան է քայլա Պարոնյանի գրական նկարագիրը՝ իրրե «անգույն ու աննրբ» երգիծարանի: Ըստ հրատարակված հոդվածների, Ասատուրն ավելի հանդամանայից է ուսումնասիրել Պարոնյանի գրական գործունեութեան վաղ տարիները և հատկապես «Մեղուի» և «Թատրոնի» խմբագրութեան մասնակաշրջանը:

«Մեղուի» խմբագրութեան տասնչորս ամիսների ընթացքում, — գրում է Ասատուրը, — մարդ կը տեսնե այդ առնվան մեր եկեղեցականներու կյանքին, Ազգային վարչութեան, լրագրութեան, զրականութեան, կյանքին, թատրոնին, բնամանական կենցաղին համայնապատկերները: Պարոնյան կընդգրկե ամեն խնդիր, և փեթակեն թուշուր, վաղվաղիցս մեղուները կերթան խալթիլ անխտիր ջոջն ու բարեկեցիկը, եկեղեցականն ու թա-

¹ «Մեղուն» Պարոնյանի խմբագրութեան օրով» («Մասիս», 1892, № 3972, էջ 275), «Հակոբ Պարոնյանի մուտքը լրագրութեան մեջ» («Մասիս», 1904, № 1, էջ 3) և «Հակոբ Պարոնյան «Թատրոնի» խմբագիրը» («Պարկյանի տարեցույց», 1906, էջ 111):

զականը, զերասանն ու խմբագիրը: Երբ մոլության մը դեմ կը խոսի, երբ թերության մը մատնանիչ կընեն, կը հարվածեն միշտ ինչ որ իրեն մնաստակար կերևա, չարք, աղեղը, ազեալը, ծաղրելին: Իր հեղնությունը, ուժգին է: Իրապաշտ մըն է բառին կատարյալ իմաստով¹: Կյանքի սեպիստական արտացոլման պահանջներով և դեղարվեստական խոր ընդհանրացումներով բնութագրվող երգիծարանի գրական ելույթները պարբերականի էջերում, ըստ Աստուրի, երևան էին բերում է. Պարոնյանի քննադատություն և երգիծանքի մեծ ուժը, նրա դրչի ինքնատիպությունը: Նա նշում է, որ պարոնյանական ծաղրի ու քննադատության սուր խայթերը չեն խնայել ո՛չ եկեղեցականներին, ո՛չ ժամանակի մամուլի լիբերալ օրգաններին և ո՛չ էլ պոլսահայ քաղքենի հասարակությունը՝ «իբր ընտանեկան կյանքի զեղծումներով» և եվրոպական կենցաղի ընդօրինակման դատապարտելի փորձերով: Աստուրը գտնում է, որ հիմնականում «Մեղուի» էջերում, նրա «Զվարճալիքների», «Պայթիվածների» և «Մանր լուբերի» մեջ է որ ձևավորվում է Պարոնյանի «գրական և երգիծական» ինքնատիպ տաղանդը, որը հետագայում զարգանալով պետք է հասներ «Ազգային ջոջերի» և «Որսի» զեղարվեստական գունդին: Այն զգացումը, որ կը ներշնչե խընդուքն է, որ հաճախ ատելություն կը հանդիպի անոր դեմ, որուն խնդացնել կուտա...»: «Մերթ էր ծաղրանքը անվնաս է, բայց իր ատած բարքերուն ու իր թշնամիներուն դեմ անդուլ է, անպաշտ է և արդար գայրույթ մը կը պոռթկա միշտ...»: Պոլսահայ էսնաֆ դասի կյանքը, տիպարներն ու լեզուն է, որ Պարոնյանին հնարավորություն է տվել կենդանություն և սրամտություն հաղորդել իր դավելչաթղթերին. այս դասակարգի կյանքի ներքին պատկերները, գոփությունները, կատակները՝ կենդանի կերպարներով և Պարոնյանի դրոչին հատուկ երգիծանքի ուժով: «Պարզ լեզու մը, ժողովրդական բառեր, ամեն օր խոսված, բնական բարբառով միայն...», —

1 «Մասիս», 1892, № 3972;
2 «Մաղիկ», 1904, № 1:

գրում է նա: — Իր գրականությունը պերճանքե չախորժիր, ձևեն ալելի նյութին է որ դինք կը գրողեցնեն:

Եվ սակայն որչափ նոր է այդ անխառն պարզության մեջ. ի՞նչ շենչող բնություն մը խնդալու ու խնդացնելու պատրաստ միշտ, ի՞նչ առողջ տեսություններ ամեն խնդրի վրա, ինչ արամարտություն, որ միշտ կանգուն կը հսկե ամեն մեկ տողին վրա²:

Քննադատի համար միանշամայն պարզ է, որ Պարոնյանի համոզումները ուղղված կեղծիքի և անիրավության դեմ, ունենին գեմոկրատական, սեպիստական նպատակաւորություն, որը և պայմանավորում էր նրա երգիծանքի ուժը:

1874 թ. ապրիլին Պարոնյանը հրատարակում է «Թատրոն» երգիծաթերթը, որի նշանաբանն է դառնում «մոլորությունների ձալկումը» և «կեղծիքի դատապետումը»: Եվ նորից Պարոնյանը սուպարեզ է նետվում, շոշափելով ազգային, գրական և հասարակական կյանքը շահագրգռող ու հետաքրքրող թեմաներ՝ մի «անսպառ զվարթամտությունը»: Նա հարվածում է «Մանգումեի» խմբադրին, բուժ սլաքներ ուղղում «Մասիս» դեմ, «Օրագիր», «Մամուլ», «Միմոս», «Փունջ» պարբերականների խմբադիրներին ենթարկում ծաղրի՝ քննադատելով նրանց տպիտությունը: Վեր են հանվում հույեոր դասի խորագիտությունները, պատրիարքարանի և ազգային իշխանությունների կեղծիքն ու խաբեբայությունները, ինչպես նաև գավառի մարդկանց ծանր իրավիճակն արտացոլող պատկերներ: Եվ եթե «տեղ-տեղ կուտակացական ողին» և «անձնական բարեկամությունները», Աստուրի կարծիքով, ինչ-որ չափով ազդել են Պարոնյանի «դատաստաններուն վրա», ապա, ամենուրեք և ամեն դեպքում, երգիծարանի բնագաղատությունը հաստատված է ուժեղ և հստակ արամարտություն և ողջամտություն վրա, մի բան, որը շատ արժեքավոր էր հատկապես այն ժամանակ, երբ արևմտահայ

1 «Մասիս», 1892, № 3972:

քննադատութիւնը այդ հասկութիւններով այնքան էլ աչքի չէր ընկնում:

Քննադատը խոսում է նաև պարոնյանական ծաղրի մահանքի, որը սպանող է, նրա սկզբունքայինութիւնի և ժողովրդականութիւնի վերաբերյալ: «Ներք բանի մը վրա կը խնդա, — դրում է նա, — երբեմն զայրույթ ունի, երբեմն դառնութիւն, քիչ անգամ ասելութիւն, երբեք չարութիւն, իսկ անկեղծութիւն՝ միշտ: Մեծ հարգանք ունի հանրութեան համար, որուն կը խոսի: Իր կարծիքներուն մեջ միութիւն ունեցած է և սկզբունք փոխած չէ: Կարելի չէ բնել թե բնով հակասութեան մեջ ինկած չէ, բայց ապահովարար, զլիսավար խնդիրներուն մեջ, իր գաղտնիքները հստակ, սրտչ և անփոփոխ եղած են»¹:

* * *

Անխոնջ գրականագետ ու բանասեր Հրանտ Ասատուրը հայ գրականութեան մեջ կամա իրբն ութսունականներէ իրապաշտ փաղանդի արժանավոր ներկայացուցիչներէց մեկը: Նա տասնյակ տարիներ անձնփիրաբար ծառայեց հարապատ ժողովրդին՝ ուժ տալով արեւմտահայ գրականութեան սուղատար ակունքներին, քրքրելով նրա պատմութեան խունացած էջերը, կոկելով ու հզկելով աշխարհարար լեզուն:

Նա անցավ գրական կյանքի բավական երկար ուղի, շուրջ հիսուն տարի և, նորի ու առաջավորի ջատագով՝ կրթեց ու դաստիարակեց սերունդներ, որոնք հիացմունքով են հիշում «բծախնդիր պրպտումներու, բանասիրական անփոխարինելի ճիգերու տեր մարդուն»:

1 Հ. Ասատուր, Գիտաստիճաններ, Կ. Պոլիս, 1921, էջ 187:

Արթուրյան Խ. —118	Բաղրատունի Ա. —123, 132
Աղաժյան Գ. —22, 150, 151	Բալզակ Թ. —94, 95, 98, 112, 122
Ազատյան Թ. —6, 30, 31	Բայրոն Զ. —88, 110
Ալանանյան Հ. —41	Բաշալյան Լ. —19, 68, 81, 88, 92, 96, 106, 115, 195
Ալեքսանյան Գ. —41	Բեկոն Թ. —192
Ալթունայուրի —144	Բերգսոն Ա. —65
Ալիշան Ղ. —67, 153, 162, 163, 224	Բժշկյան Մ. —220
Ալշոյանյան Ա. —153, 164, 167	Բյուրեղեր Լ. —62, 64, 65, 192
Աղաթոն Գ. —181, 183, 184	Բուրբուր Է. —65
Աղայան Ղ. —71	Գոգանձյան Հ. —24, 55, 133
Աղաչարալյան Մ. —220	Գալանտ Կղեմես —160
Աղասյան Հ. —206	Գալեթ Քյարյան Գ. —153
Աճեմյան Հ. —144, 145, 148	Գալուստ Կայծակ Ամասիացի —177, 218
Աճեմյան Մ. —22, 67, 77, 134	Գամբետտա —180
Աճերիկյան Մ. —150	Գաղարարձյան Գ. —220, 221
Այվազովսկի Հ. —17	Գարսեալ Կ. —22
Այսնյան Ա. —129, 130, 131, 137, 219	Գարսեալյան Ե. —141, 142, 151
Այսնյան Մ. —144	Գարսեալյան Մ. —8, 23, 127, 128, 132, 134, 214, 225
Անդրեան —108	Գյուլի Ի. —110
Անտոնյան Ա. —23, 27	Գրիգոր Անավորեցի —217
Անցորդ —ՏԵՍ Կամարական Տ.	Գրիգոր Նարեկացի —136
Առաքել Սյունեցի —177, 217	Գրիգորիս Ախթամարցի —177, 217
Ասատուր Հակոբ —11	Գրիգորյան Գ. —42
Ասեղ — ՏԵՍ Կամարական Տ.	Գրիգորյան Թ. —7
Ավդերյան Գ. —220	Գուրգեն Հ. —127, 128, 132, 134, 188, 196
Ավետիք Եվզակիացի, պատրիարք —177, 210, 218	Գուրման Թ. —210
Ատրպետ —121	Գեորգյան Ա. —7
Աբամյան ձ. —182, 208, 221	Գանթե Ա. —110
Աբրուս —ՏԵՍ Սերգիլեն	Գավթյան Մ. —53, 134, 143
Աբձրունի Գ. —70, 71	Գավթի Սալամբուրցի —219
Աբշահյան Հ. —155	Գարգին —192
Աբշահունի Հ. —15	Գեֆու Գ. —122
Աբուսյակ —141	Դիւրո Գ. —192, 194
Աբփիարյան Ա. —6, 17, 19-21, 23, 32, 68, 77, 81, 86-88, 92, 96, 106, 108, 115, 116, 152, 214	
Աբփիարյան Տ. —27, 69	

Դյուլորիկ է. —17, 185
 Դյուլուս Ա. —139, 210
 Դուդե Ա. —20, 98, 99
 Դուրջան Ե. —15
 Դուրջան Պ. —16, 173, 214

Եանսինուր —Տե'ս Ռուսինյան Ն.
 Եզնիկ Կոչարացի —221
 Եղուժ —Տե'ս Սվանյան Հ.
 Եսայան է. —142
 Երեմիա Չելերի —164
 Երեմյան Ս. —6

Ջարբանուլյան Գ. —38, 153,
 162
 Ջարդարյան Թ. —24, 224
 Ջուր է. —89, 94-96, 98, 99,
 105, 107, 117, 180
 Ջոհրայ Գ. —6, 19, 21-23, 44,
 68, 78, 79, 82, 88, 89, 92,
 96, 115, 119, 128, 135, 140,
 168, 170-172, 174, 193-199,
 204, 208, 210
 Ջոհրայան Հ. —220
 Ջորայան Ն. —49, 173, 174, 181-
 186, 202, 205, 208

Էմին Մ. —38
 Էսայան Մ. —26
 Էսքիլես —124
 Էլբրիդիդես —124
 Էբշյան Ս. —144, 148, 149, 182

Թաղիադյան Մ. —220
 Թալման —Տե'ս Պեչերկիթալլան Մ.
 Թալուղճյան Հ. —220
 Թեոդիկ —6, 208
 Թեոդոսյան Մ. —6
 Թերզյան Թ. —35, 67, 77, 127,
 134, 142, 144-145, 151, 214
 Թիեթ —180
 Թլկասինցի —24, 214

Քալլան Ս. —142, 147, 151
 Քյուլպենուճյան Ն. —41
 Քոխատեցի Մ. —Տե'ս Միճաս
 Քոխատեցի
 Քորոսյան Հ. —26, 188
 Քրյանց Դ. —142, 144, 150
 Քուլբունջյան Ս. —154

Իբսեն Հ. —107, 108
 Իզմիրլյան Մ. —12
 Ինճիճյան Ղ. —163, 220
 Ինար —155

Լամարտին Ա. —76, 88, 112,
 113, 180, 225,
 Լամբնե Ֆ. —210
 Լեո —72, 121, 139
 Լիլ Կ. —114
 Լիարե է. —62, 192
 Լիկցի Գ. —145
 Լուսաշարոկի Ա. —174
 Լուսանյան —Տե'ս Ռսկան Սա.

Խաչատուր Կեչառեցի —177, 217
 Խաչատուր Պարտիզյան —181,
 182, 209
 Խաչկեցի Երեց —218
 Խոճատարյան Օ. —41
 Խորասանճյան —215
 Խրիմյան Հալիլի —15

Մաղիկյան Մ. —148
 Մերենց —22, 35, 75, 78, 79,
 120, 214

Կամարահան Տ. —19, 21, 22, 24,
 27, 65, 68, 71, 75, 76, 79, 88,
 97, 99, 100-101, 103-105, 115,
 119, 132, 133, 168, 170, 174,
 194, 196, 200, 208, 209, 228
 Կարո Բ. —61
 Կարրեթր Օ. —17

Կրկրսիկյան Թ. —Տե'ս Միճաս-
 յան Կ.
 Կյուլյան Հ. —15
 Կյուրճյան Մ. (Հրանդ) —68, 115
 Կոնո Օ. —64, 65, 192
 Կոզլի Թ. —114
 Կոսեյլ Պ. —110, 124
 Կոստանդին Երզնկացի —177, 217
 Կոստանդյան Գ. —24, 35, 214, 215
 Կոստանյանց Կ. —163
 Կրճիկյան Հ. —220

Հալիլի Լ. —113, 132, 180
 Հակոբ Արծկեացի —219
 Հակոբ Նալլան —166, 214-216
 Հաճյան Ա. —26
 Հալիուհի Ա. —118, 144, 227
 Հարմա —Տե'ս Ռսկան Սա.
 Հարությանյան Ա. —24, 76,
 155, 170, 172
 Հեթիմյան Ս. —11, 35, 142, 144,
 149-151, 173
 Հիսարյան Հ. —22, 35, 118,
 174, 200
 Հյուսիս Վ. —10, 16, 76, 87, 109,
 112-114, 124, 139, 145, 180
 Հյուսյան Մ. —170
 Հյուրմուղյան Ե. —126
 Հորո Թ. —64
 Հոմերոս —110, 123
 Հովակիմ Օղուլլուխյան —220
 Հովհաննես Եղիսկուսոս —219
 Հովհաննես Թլիսուբանցի —177,
 217
 Հովհաննես Կոլոս Բաղիլեցի —
 161, 165, 166
 Հովհաննես Հոլով —177, 217
 Հովհաննես Մամիկոնյան —136
 Հովհաննիսյան —77
 Հրաչյա —141, 151

Ղաղար Արծկեացի —219

Ղևանդյան Տ. —53

Ճեճիզյան Հ. —8
 Ճիվանյան Հ. —215

Մալեգյան Վ. —11, 24, 155
 Մաղաթիա Արեգա —217
 Մաղարյան Պ. —137, 144, 148-
 150
 Մամուրյան Մ. —22, 37, 41, 76,
 78, 114, 117, 120, 134, 168,
 174, 182, 185, 210, 227
 Մանասյան Ս. —145, 149, 151
 Մաթ Նվարդ —151
 Մասթեսու Ռուճաբեցի —136
 Մարզարյան Հ. —170, 208
 Մարզարյան Ռ. —215
 Մարտիրոս Ղրիմեցի —219
 Մեղավար Հ. —102
 Մեհան Գ. —195
 Մեհրոպ Երեց —165
 Միլտոն Զ. —110, 123
 Մինաս Քոխատեցի —218
 Միսաքյան Խ. —131, 158, 173,
 196, 208, 225, 226
 Մխիթար Աբրա —177, 220
 Մխիթար Հեթացի —136, 176,
 217
 Մխիթար Սեբաստացի —160
 Մխիթարյան Գ. —6
 Մկրտիչ Նազաշ —177, 217
 Մյուսեմիսյան Մ. —182
 Մյուսե Ա. —88, 112, 180
 Մնակյան Մ. —137, 144, 148
 Մուխեթ —110, 147,
 Մանտերեն Բ. —110
 Մանեսյան Շ. —192, 194
 Մուղոսան Գ. —20
 Մուսիկյան Հ. —15
 Մրմրյան Հ. —24, 153, 159, 196,
 224, 226
 Մուշեղյան —77

Մուրացան —121

Յուսուֆյան Չ. —27, 196
 Յուսուֆյան Հ. —25, 69, 196
 Յուսուֆյան Տ. —69

Նազարյան Հ. —155
 Նալբանդյան Մ. —145, 149
 Նալյան Հ. —ՏԵ՛ս Հակոբ Նալյան
 Նաճապետ Քուչակ —177, 218
 Նեոս —ՏԵ՛ս Կամարազյան Տ.
 Ներսես Ենթրճալի —136, 176
 Ներսես Վարժապետյան, պատրի-
 արք —15, 189, 214
 Նորատունկյան Հ. —25
 Նուպարյան Մ. —205
 Նուրճան —ՏԵ՛ս Օտյան Գ.

Շահապետյան Ս. —38
 Շահնազարյան —173
 Շահնուր —ՏԵ՛ս Մամուրյան Մ.
 Շամտանճյան Մ. —24, 67, 96
 Շանթ —77, 121
 Շատուրբեան Ռ. —122
 Շարասան —143, 224
 Շեքսպիր Վ. —110
 Շիլլեր Ֆ. —110
 Շիշմանյան —ՏԵ՛ս Ծերենց
 Շիրժանյան Ռ. —153
 Շիրվանզադե Ա. —71, 72, 121
 Շնորհքյան Հ. —15
 Շոթի Ս. —114
 Շոպենհաուեր Ա. —192

Ռսկան Հ. —22
 Ռսկան Սա. —22, 35, 131, 174,
 182, 204-206, 208-210, 223,
 225, 227
 Ռսկանյան Ռ. —223
 Ռրբերյան Ռ. —24

Ջամուռճյան —ՏԵ՛ս Տերոյենց Հ.

Չեքոզ Մ. —9, 10, 15, 35, 44,
 50, 130, 188, 214

Չեքուշե Հ. —144

Չիլինկիրյան Գ. —35, 117, 174

Չոպանյան Ա. —22, 42, 68, 74,
 76, 77, 80, 81, 88, 94, 96,
 107, 108, 143, 153, 168, 170,
 172, 226

Չրաքյան Տ. —ՏԵ՛ս Ինտրա
 Չուխաճյան Տ. —10, 24, 215

Պալլազարյան Ղ. —41, 42, 220,
 222

Պալյան Հ. —182
 Պալյան Ն. —181, 182, 209, 215
 Պալլոդյան Լ. —113
 Պաղտատար Դպիր —161, 166,
 177, 219

Պառավյան Ա. —29
 Պարոնյան Հ. —22, 28, 40-42,
 76, 79, 134, 168, 171, 173,
 174, 206, 207, 227 - 231

Պարոնյան Ս. —23
 Պարտիզյան Ռ. —ՏԵ՛ս Խաչատուր
 Պարտիզյան
 Պեղիբճյան Ա. —142
 Պելիկասի Ս. —145
 Պենկյան Ս. —137, 144, 148
 Պեչիկթալյան Մ. —67, 113, 144,
 145, 151, 173, 210
 Պետիկյան —53, 134
 Պետրոս Ղափանցի —166, 177,
 214-216, 219
 Պերպերյան Ա. —155
 Պերպերյան Ռ. —11, 15, 44, 67,
 78, 115, 127, 131, 188, 214
 Պոզաճյան Բ. —134
 Պոզոսյան Ե. —206
 Պոռյան Պ. —38, 71, 72, 118
 Պրեյն Ա. —122
 Պրեյն Մ. —112

Ջախջախյան Մ. —220
 Ջեյմս Ռ. —65

Ռարիե Ֆ. —122, 194
 Ռասին Ժ. —110, 124
 Ռենան է. —110
 Ռիդա Ի. —221
 Ռիչլեն Ժ. —114
 Ռիչլե Բ. —140
 Ռոյունի Գ. —151
 Ռոթա —144
 Ռոչֆոր Վ. —114
 Ռուսինյան Ն. —130, 174, 181,
 182, 201, 202, 210, 227
 Ռուսո Ժան-ժակ —110, 122,
 194, 210

Սամեն Ա. —114
 Սայաթ-Նովա —126
 Սանդ Ժ. —10, 109
 Սանտալճյան —206
 Սեթյան Տ. —67, 77
 Սենտ-Բյով —169, 170
 Սեռեֆճյան Ռ. —144, 151
 Սերվանտես Մ. —122
 Սերվիլեն —184, 210, 220
 Սիամանթո —155
 Սիլվեստր Ա. —195
 Սիմեոն Երևանցի, կաթողիկոս
 —164, 166
 Սիմեոն Զուգալեցի —165
 Սիմոն Ժ. —180
 Սիպիլ —6, 23, 27, 28, 30, 31,
 54, 68, 77, 133, 134, 168, 174
 Սիրանուշ —151
 Սիրունի Հ. —167
 Սմբատ Գունդուսարի —217
 Սյու է. —110
 Սոֆոկլես —124
 Սպենսեր Հ. —62, 110, 192
 Սվաճյան Հ. —40, 131, 145, 210,
 223, 227

Ստեղծարար Մ. —94, 95, 98, 112,
 122
 Սրվանձոյանց Գ. —15, 23, 188
 Սունդուկյան Գ. —58, 71, 72,
 140, 141
 Սուչով Բ. —104
 Սևակ Ռ. —155

Վաղներ Ռ. —107, 108
 Վահե —ՏԵ՛ս Ռսկան Սա.
 Վահրամ —ՏԵ՛ս Օտյան Գ.
 Վարդան Այդեկցի —177, 217
 Վարդան Արևելցի —217
 Վարդանյան Հ. —42, 227
 Վարդավյան Հ. —148, 150
 Վարժապետյան Ներսես, պատ-
 րիարք —ՏԵ՛ս Ներսես Վարժա-
 պետյան
 Վարժապետ Գ. —155
 Վեռլեն Պ. —114
 Վիրգիլիոս —110, 123
 Վոլտեր Ֆ. —110, 124, 139, 147,
 194
 Վրուր —ՏԵ՛ս Մամուրյան Մ.

Տաղավարյան —63
 Տալյան Հ. —153
 Տասոս Տ. —110, 113, 123
 Տեմիրճեղալյան Ե. —41, 42,
 128, 134, 174, 186-193, 204
 Տերոյենց Հ. —158, 173, 183-185,
 220, 225
 Տեր-Անդրեասյան Գ. —23
 Տեր-Սարգսենց —35, 120, 188
 Տյուսար Մ. —56, 75, 78, 120,
 174, 201
 Տոլստոյ Լ. —107, 108

Բեսան Մ. —220

Ռեթուճյան Կ. —15, 41, 42, 86,
 117, 128, 131, 134, 174, 181,
 194, 201, 205, 223

Ունձյան Ա. —26

Ուուրֆ Ա. —114

Փանոսյան Ա. —77

Փանոսյան Կ. —11, 41, 42

Փազաոս Բուզանդ —165

Փափաղյան Աղաֆնի —145, 148

Փափաղյան Արուսյակ —145, 148

Փափաղյան Գ. —113

Փափաղյան Սա. —81

Փափաղյան Վ. —6, 31, 121

Փեշարժալձյան Գ. —220

Քալանթար Ա. —227

Քարաձյան Ե. —215

Քեղեկյան Տ. —89, 105

Քեչյան Բ. —10, 42, 156, 194,
214

Քոսյան Հ. —153

Քուզեն Վ. —63

Պզուլլուխյան Հ. —Տե՛ս Հովակիմ

Պզուլլուխյան

Պշակոն Հ. —6, 206, 213

Պայան Գ. —17, 19, 83, 113,

131, 132, 155, 158, 173, 174,

179, 180, 201, 204, 208-210

Պայան Ե. —88, 96

Պրժանյան Մ. —11, 26, 214

Պատուլյաձյան Թ. —137, 142,

148

Պեղեկյան Հ. —67, 142

Պենկյան Ե. —194

Պլարեր Գ. —20, 95, 98, 112,

122

Պնտղյան Գ. —81, 88, 226

Պրիկ —217

250

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ Գ ԿՐԹԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ
ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

13

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Երկուսուսք	5
Կյանքը, հասարակական դործունեությունը	7
Հրապարակախոսը	32
Ասատուրի գրական-քննադատական հայացքները	66
Ասատուրը՝ գիժանկարիչ և կենտազիր	168
Անվանացանկ	233

Հայաստանի Գրադրական Կենտրոն
Los Angeles, Calif. U.S.A.

SRBOUHI P. HAIRAPETIAN

ՍՐԲՈՒԷԻ ՊԵՂՈՍԻ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

ՀՐԱՆՏ ԱՍՏՏՈՒՐ

Ելամբր և գործունէութիւնը.

Պիտրիկեանի ձեռագրութիւն

Ա. Փանոյանի

Gramartik Publishing Co.
Los Angeles, Calif., U.S.A.